Ն. Կ. Մ. ՄՈՀԱՄՄԱԴ ՌԵԶԱ ՇԱՀ ՓԱՀԼԱՎԻ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ

9(55)
Փ-12

«ՀՈՒՐ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 1

Ն. Կ. Մ. ՄՈՀԱՄՄԱԴ ՌԵԶԱ ՇԱՀ ՓԱՀԼԱՒԻ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ

2537
29/28

ՏՊԱՐԱՆ «ՆԱՅԻՐԻ», ԹԵՀՐԱՆ
1973

Թարգմանեց պարսկերենից՝

ԿՈԼԻԱ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

دفتر مخصوص شاهنشاهی

۱۲۳۷۵۹
۱۳۵۰/۲/۲۶

آقای دکتر گاگیگ هواگمیان نماینده مجلس شورایملی وصاحب امتیاز مجله هـــــور

عریضه ای که به پیشگاه مبارك اعلیحضرت همایـــون شاهنشاه آریامهر تقدیم داشته وبرای ترجمه وچاپ کتاب ((ماموریت برای وطنم)) بزبان ارمنی استدعای کسب اجازه نموده بودیـــد ازشرفعرض گذشت ومورد تصویب ذات مبارك ملوکانه قرارگرفت ٠ك

رئیس دفترمخصوص شاهنشاهی

(ԱՐՔԱՅԱԿԱՆ ԹԱԳ)
ԱՐՔԱՅԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ
ԳՐԱՍԵՆԵԱԿ

123759
26/2·/1350

Պրն. Դոքտ. ԳԱԳԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Խորհրդարանի պատգամաւոր եւ
Արտօնատէր «ՀՈՒՐ» ամսագրի.

Ն. Կ. Մ. Արիամեհր Արքայից-Արքային ներկայացրած Ձեր խնդրագիրը որով խնդրամատոյց էիք եղել արտօնութիւն ստանալու հայերէնի թարգմանելու եւ տպագրելու «Առաքելութիւն հայրենիքիս համար» գիրքը, արժանացաւ Ն. Կ. Մ. Արքայի ուշադրութեան եւ Վաւերացումին։

Արքայական Յատուկ
Գրասենեակի պետ
(ստորագրութիւն)

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Տարիներ շարունակ իրագործման անհրաժեշտութիւնը զգացող մի նպատակի համար է գրուել այս գիրքը։ Որքան տեղեակ եմ, Իրանի կայսրութեան հիմնադրման քսանհինգ դարի պատմութեան մէջ ես առաջին Շահնշահն եմ, որ կանոնաւորապէս ու պատմական հետևողականութեամբ գրի եմ առել իմ կեանքի պատմութիւնը։

Իհարկէ ԺԶ. դարում, այսինքն Իրանի կայսրութեան հիմնադրումից երկու հազար տարի յետոյ, Շահ Թահմազ Ա. արքան իր կեանքի մասին գրել է մի համառօտ կենսագրական և երկու հարիւր տարի յետոյ Շահ Թահմազ Բ.-ի թագաւորութեան օրօք մի ֆրանսիացի քահանայ հրատարակեց յիշեալ արքայի կենսագրութիւնը, նպատակ ունենալով ապացուցել, որ նա ֆրանսիացու զաւակ է եղել։

ԺԹ. դարում ևս Նասրէդդինշահը, Եւրոպա կատարած ուղևորութեանց, ինչպէս նաև արևմտեան եր-

կրքների՝ իր տեսանկիւնից ու մտահորիզոնից ունեցած յառաջադիմութեանց շարժառիթների մասին գրեց ճանապարհորդական ուշագրաւ նոթեր. այնուամենայնիւ իմ երկրի թագակիր պարագլուխներից և ոչ մէկը չի տուել կանոնաւոր ու հետևողական ինքնակենսագրութիւն։ Դա էր, որ մօտ տասնհինգ տարուայ թագաւորութիւնից յետոյ որոշեցի, որ այս անհրաժեշտը առաջին անգամ արի իմ ձեռքով։ Նպատակը սոսկ այն չէր, որ այս երկրի Շահնշահների մէջ առաջատարը լինեմ ինքնակենսագրութիւն հրատարակելու գործում, այլ զգալի էր, որ մի այսպիսի գրքի հրատարակումը մեծապէս անհրաժեշտ է ճանաչելու համար Իրանի անցեալը և ցոյց տալու ապագայի ուղղութիւնները։

Անցնող դարում, մենք՝ Միջին Արևելքում ապրողներս, զլացել ենք ճանաչելու և զգալու մեր իրական արժանիքները և մեծ մասամբ կաղացել ենք մեր երկրների ապագայ վերելքին նպաստող նոր ծրագիրների մշակման խնդրում։ Երբեմն ունեցել ենք անորոշ տեղեկութիւններ երկրի անց ու դարձի մասին, բայց թերացել ենք խորանալու յառաջադիմութիւնը կասեցնող կազմակերպչական և այլ արգելքների մէջ։ Ինչպէս նաև թուլութեամբ ենք վերաբերուել մեր ապագայի համար այնքան կարևոր՝ նոր նպատակների և ուղղութիւնների ճշտորոշմանը։ Տեսալ պատճառներից ելնելով, պահն էր, որ Իրանի Շահնշահը ձեռնարկէր լրացնելու այս էական բացը։

Սոյն գիրքը սկսեց գրել 1337 թ-ին և 1339 թ-ի[1] վերջերին աւարտեց։

Այս ընթացքում, թէև այլևայլ դժուարին պարտականութիւնները գրաւում էին իմ ժամերը, բայց չէր լինում մէկ շաբաթ, որ ի բաց առեալ համբորդութեան օրերից, մի քանի ժամ չզբաղուէի գրելով։ Նոյնիսկ ուղևորութիւնների ընթացքում չէի մոռանում գրելիք նիւթերի դասաւորելու միտքը։

Այսու՝ հրատարակուող գիրքը շատ բաներով է տարբերուում ինքնակենսագրական թեմայով գրուած գրքերից կամ օրագրութիւններից։ Որովհետև դա չի սահմանափակուում լոկ իմ կեանքի պատմութեամբ, այլ ինքնըստինքեան մի երկրի պատմութիւն է։

Գրքի առաջին գլուխը յատկացուել է Իրանի պատմական փառաւոր անցեալի և զարմանահրաշ ժառանգութեանց համառօտ նկարագրութեանը։ Յաջորդ գլխում անդրադարձել եմ Միջին Արևելքի վերջին իրադարձութիւնների ամենակարկառուն դէմքերից՝ հօրս իմ տեսանկիւնից ու ըմբռնումից ունեցած բնութագրին և նրա կատարած հոյակապ գործերին։ Ապա նկարագրել եմ մանկութեանս և Եւրոպայում անցկացրածս ուսանողութեան տարիները և հօրս ցուցաբերած հոգատար խնամքն ու ուշադրութիւնը իմ դաստիարակութեան խնդրում, որ պիտի նպաստէր ներկայի ծանր պարտականութիւնների ստանձնման գործին։ Նկարագրել եմ Բ. Համաշխարհային պատերազմի հետևանքով առաջացած տագնապալի դրու-

---

1) 1959—1961 (Ծ. Թ.)։

թիւնը, Իրանի բռնադրաւումը և այն՝ թէ ինչպէս քսանամեկ տարեկան հասակում հօրս փոխարէն ստանձնեցի արքայական պարտականութիւնները։

Գրքում արտացոլուած են այն տարիների դէպքերը։ Թէ ինչպէս Մոսադեղ անունով մէկը իր ուրոյն ձևով պտտեցնում էր երկրի ղեկը, նաւթի արդիւնաբերութեան անորոշ կացութիւնը, տնտեսութեան քայքայումը և այն՝ որ մարելու վրայ էր Իրանի անկախութեան ջահը։ Պատմւում է այն մասին, թէ ինչպէս վերականգնեցինք ազատութիւնը և դրանից յետոյ մեր երկիրը դարձաւ սառը պատերազմի օջախ։ Այն երևոյթն է լուսաբանում, թէ ինչպէս այս դառը փորձութիւններից յետոյ իմ մէջ ծնուեց դրական նացիոնալիզմ։

Գրքում խօսւում է արևմտեան մշակոյթի (կուլտուրա) հետ ունեցած շփումների և այն յոյսի ու հաւատքի մասին, թէ Արևելքի ու Արևմուտքի միջև կարելի է հնարել յարաբերութեանց նոր եղանակներ։ Երկրի տնտեսական աճի ու զարգացման չափանիշների, դեմոկրատիայի եռակի փուլերի մասին իմ մօտեցումների և իրական դեմոկրատիա ստեղծելու գծով տարուող միջոցառումների մասին ևս նշել է ըստ կարելւոյն։ Հպանցիկ կերպով խօսւում է նաև կալւածային բարենորոգչական աշխատանքների, Իրանի յիսուն հազար գիւղերում բնակւող երկրագործներին օժանդակելու նպատակով կիրառւող քայլերի։ կանանց՝ նոր Իրանի նկատմամբ ստանձնելիք պարտականութիւնների մասին։ Պարզաբանւում են իմ

տեսակէտները Իրանի կրթադաստիարակչութեան մասին։ Քննարկւում է նաւթի խնդիրը քաղաքական, տնտեսական և տեխնիկական առումներով։ Միջին Արևելքում գրաւող Իրանի դիրքի ինչպէս նաև աշխարհի այս և բոլոր կէտերում խաղաղութեան ամրապնդման անհրաժեշտութեան մասին, որ իմ սրտագին ցանկութիւնն է, տրւում է լուսաբանութիւն։ Եւ վերջապէս գրքում արտացոլուած է իմ կենցաղը, քաղաքաշինարարական գործունէութիւնը և մեր պատմական երկրի հանդէպ արքայական կոչմանը սերտօրէն առընչւող պարտականութիւնների ինչպիսին լինելը։

Գրքի համարեա բոլոր գլուխների մէջ, ջանք եմ թափել սոսկ ակնարկներով կամ յապաւումներով չանդրադառնալ որոշ դժւարութիւնների ու արգելքների վրայ։ Օրինակ, թէ՛ պետական կազմակերպութիւններից ներս, թէ անձնական կամ աշխատանքային ըջիջներում և թէ հաւաքական կեանքում անհատականութեան բարեփոխումը, այնպէս էլ մնում է մեր դժւարութիւններից մէկը։ Թէև վերջին տարիներին կառավարչական կազմակերպութիւնները բարելաււել են անցեալի համեմատութեամբ, այնուամենայնիւ նորից շատ վարիանտներում հին են ու յետադիմական։ Դեռևս մեր երկրում արմատախիլ չի եղել աղքատութիւնը, տգիտութիւնը, հիւանդութիւնները։ Սակայն չպիտի մոռանալ, որ մեր նպատակն է կարճ ժամանակամիջոցում հասնել զարգացման մի այնպիսի մակարդակի, որը յառաջադէմ երկրներում ձեռք է բերւել մի քանի սերունդների,

նոյնիսկ մի քանի դարերի երկարատև ու յամառ ջանքերից յետոյ։

Այսօր, իր հակասական գծերով, Միջին Արևելքը աշխարհի բոլոր ժողովուրդների ուշադրութեան առարկան է, որովհետև եթէ հնագոյն ժամանակներում հսկայ ազդեցութիւն է ունեցել մարդկային քաղաքակրթութեան վրայ, ներկայումս համաբու�է իրադարձութիւնների և քաղաքական վայրիվերումների օրրան։

Կարծում եմ, որ Միջին Արևելքի վերակենդանացման համար դրութիւնը նպաստաւոր է և պատճառ չկայ, որ Իրանը, ինչպէս եղել է վաղագոյն ժամանակներից, այնպէս էլ հիմա՝ անզօր լինի առաջ բերելու նոր յեղաշրջումներ։

ԻՐԱՆԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ

Իմ թագաժառանգ եղած ժամանակ ուսանողութեան օրերից, որ անց էի կացնում Շուեցարիայում, մտքիս մէջ դրոշմուել է մի յուշ։ Մի օր մեր դպրոցը սայլակով կաթ բերող կաթնավաճառը հետաքրքրուեց, թէ ո՞ր երկրից եմ եկել Շուեցարիա։ Պատասխանեցի՝ Փըրժիայից (Իրան)։

«Այո, — ասաց նա, — լաւ եմ ճանաչում Փըրժիան, դա Ամերիկայի քաղաքներից մէկն է»...

Տարիներ անցան այս դէպքից։ Վերջերս պալատի երիտասարդ ծառայողներից մէկը ճամբորդեց Ամերիկա և վերադարձին պատմեց իր հետ պատահած մի զարմանալի դիպուածի մասին։

Նախ քան Ամերիկա ճամբորդելս, ասում էր նա, — ցանկութիւն ունէի մօտիկից տեսնելու ամերիկեան մի կարմրամորթի։ Տեղ հասնելուն պէս՝ այդ մասին ասացի հիւրընկալին։ Նա հաւաստիացրեց, որ դա շատ դիւրին է, քանի որ իմ ծրագրի մէջ է

մտնում կարմրամորթների բնակավայրերից մէկի այցելութիւնը։ Բայց երբ հասանք տեսալ կէտը, ես թեւաթափ եղայ,— այնտեղ ապրող կարմրամորթները չէին կրում Հոլիվուդեան ֆիլմերում ցուցադրուող փետուրաւոր գլխարկներից։ Ինչևիցէ հիւրընկալողս յաջողեց ինձ ներկայացնել նախշած երեսով, փետրաւոր գլխակալով և տեղական տարազով հագնուած մի կարմրամորթի։ Վերջինս կոտրուած անգլերէնով անմիջապէս հարցրեց որտեղացի լինելս։ Ասացի գալիս եմ մի հեռաւոր երկրից, որ կոչւում է Փերժիա կամ Իրան։

Իրանի անունը լսելուն պէս ուրախութեան երանգներ յայտնուեցին կարմրամորթի դէմքին և նոյնիսկ կոտրտուած պարսկերէնով ասաց.

«—Սալամ ալէյքում, ի՞նչպէս է ձեր առողջութիւնը»։

Այս հանդիպումը ինձ շշմեցրեց։ Յետոյ պարզուեց, որ նա համաշխարհային երկրորդ պատերազմին ամերիկեան զօրքերի հետ հասել է Պարսից Ծոց և Իրանի վրայով աւելի քան եօթ միլիոն տոն պարէն ու ռազմամթերք է տեղափոխել Ռուսիա, որով նպաստել է Հիտլերեան զօրքերի ջախջախմանը, դիւրացնելով դաշնակիցների գործը։ Այս ժամանակամիջոցում նա ոչ միայն սովորել է պարսից լեզուն, այլև դա սովորեցրել է իր համերկրացիներին։ Նաև շօշափելի տեղեկութիւններ է ձեռք բերել պատմական Իրանի քաղաքակրթութեան ու մշակոյթի մասին։

Երանի արևմտեան ժողովուրդները այս կարմրամորթի չափ ճանաչէին իմ երկիրը։ Տեղեակ լինէին, որ Իրանը ինչ ծառայութիւններ է մատուցել մարդկային քաղաքակրթութեանը և ապագայում ևս,— որի նկատմամբ լցուած եմ մեծ հաւատքով, դեռ պիտի ծառայի համամարդկային կուլտուրային ու զարգացմանը։ Երբեմն այն մտքից թէ ինչու Իրանը Միջին Արևելքի երկրների մէջ ճանաչուած չէ սրանից աւելի՝ շարում եմ, որովհետև Միջին Արևելքի քաղաքակրթութեան ամենամեծ բաժինը ընկնում է Իրանին։ Անհերքելի է նաև փիլիսոփայութեան, արուեստի ու գիտութեան բնագաւառներում Իրանի ունեցած հսկայ ազդեցութիւնը Արևմուտքի վրայ։ Այնպէս, ինչպէս ներկայումս Ամերիկեան կառավարութիւնը Զորրորդ Կէտի գծով տեխնիկական օգնութիւններ է ցուցաբերում աշխարհի շատ երկրներին, մենք ևս ամենավաղագոյն ժամանակներից ի վեր արուեստ ու մշակոյթ ենք մատակարարել մարդկութեանը։

Այսուհանդերձ պիտի նշել, որ վերջին տարիներին, երբ Միջին Արևելքի երկրները կարևոր տեղ են գրաւել համաշխարհային քաղաքականութեան բեմի վրայ, աշխարհի տարբեր ծայրերում ապրող ժողովուրդների մօտ աւելացել է Իրանի և իրանական պատմութեան հանդէպ օր աւուր աճող հետաքրքրութիւնը։

Աշխարհի կամ Միջին Արևելքի աշխարհագրական քարտէզների վրայ ցայտուն կերպով նշմարւում է Իրանը կամ Փերժիան։ Իրանը մեծ է Ալասկայից, ունի Թեքզաս Նահանգի երկու տարածութիւնը և աւելին է քան Ֆրանսիայի, Շուեցարիայի, Իտա-

լիայի, Սպանիայի, Փորթուգալիայի, Բելգիայի և Լիւքսեմբուրգի տերիտորիաները միասին վերցուած։ Աշխարհագրական դիրքի շնորհիւ՝ հնագոյն դարերից եղել ենք աշխարհի կարևոր ճամբաների հատման կէտը կամ քառուղին։ Եւ դա որքան էական էր այն ժամանակներում, երբ մարդիկ ճանապարհորդում էին կարաւաններով, այսօր՝ ջեթ օդանաւերի ու հերմետիկ հրթիռների դարում ևս համընկնում է ճշմարտութեանը։

Քիչ է Իրանի ազգաբնակութիւնը իւրաքանչիւր քառակուսի կմ. տարածութեան համեմատ։ Այսուամենայնիւ իր քսան միլիոն բնակչութեամբ հաւասար է մայր ցամաք յիշեցնող Աւստրալիայի բնակչութեան հետ։

Իմ ամբոռանիստ Թեհրանը մէկն է աշխարհի այն քաղաքներից, որ աճել ու զարգացել է արագ օրէն, այնպէս որ Համաշխարհային Բ. Պատերազմի օրերից (հաշուում էր հինգ հարիւր հազար), մինչև այսօր աճել է երեք անգամով հասնելով մէկ ու կէս միլիոնի 1)։

Ճիշտ է, Թեհրանի բնակչութեան արագ աճի գլխաւոր շարժառիթը կայանում է նրանում, որ շրջանների բնակչութիւնը թողնելով իր ծննդավայրը՝ հաստատւել է այստեղ, մի երևոյթ, որ բացառութիւն չի կազմում նաև այլ երկրներում, բայց առ-

1) Ծ. Խ. Այժմ մայրաքաղաք Թեհրանն ունի 3·300·000 բնակիչ։

հասարակ աճել է բնակչութեան թիւը։

Երկրի տարածութեան մեծ մասը չորային է և զուրկ բուսականութիւնից։ Դրա փոխարէն ուրիշ վայրերում տարեկան անձրևը հասնում է այնպիսի չափերի, որ աճում են խիտ անտառներ, կամ նպաստաւոր պայմաններ բրինձի տնկարանների (պլանտացիա) համար։

Համեմատաբար չորային տարածութիւնների ջուրը մատակարարւում է լեռնային շրջաններից, որոնք օղակաձև շրջապատել են Իրանի բարձրաւանդակը, յաճախ խաչաձևելով իրար հետ։ Չհաշուած անապատային տարածութիւնները, լեռներից մեծ հեռաւորութեան վրայ գտնւող կէտեր համարեա չկան։ Դրանով իսկ, լեռներից հոսող վտակները փորած ջրանցքներով առաջնորդւում են դէպի դաշտերն ու առուները։ Վերջերս ձեռնարկել ենք նաև խոր հորերի կառուցման աշխատանքների։ Համաձայն մասնագէտների ասութեան, Իրանում եղած ջուրը կը բաւականացնի ներկայ ազգաբնակչութիւնից երեք անգամ աւելի մի ժողովրդի պահանջներին։

Իրանի կլիման փոփոխական է տարբեր կէտերում և տարբեր եղանակներին։ Իմ կարծիքով դա ինքնըստինքեան մի ազդեցիկ ուժ է։ Իմ ժողովուրդը օժտուած է մարմնական մեծ ուժով և զուր չի որ ծանր սպորտի զանազան ճիւղերում՝ ինչպիսիք են ըմբշամարտ կամ ծանր ատլետը, մեր մարզիկները միշտ էլ փայլել են միջազգային չափանիշով։

Մտքի և արագ կողմնորոշման առումով, որի

մասին կ'անդրադառնանք հետագային, Իրանի ժողովուրդը հռչակված է ըստ կարելւոյն։ Ուստի պիտի յուսալ, որ ստիպողական կրթութեան ընդլայնումը կը նպաստի երկրի գիտութեան, արուեստի, գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան և առևտրի է՛լ աւելի զարգացմանը։

Իրանի ընդերքը հարուստ է հանքերով։ Առհասարակ մենք համարւում ենք աշխարհի նաւթի ամենամեծ արդիւնաբերողներից մէկը։ Նաւթի արդիւնաբերութիւնը Միջին Արևելքում սկսել է Իրանից։ Գիտական նորագոյն տեսակների համաձայն՝ Իրանը մի մեծ նաւի պէս լողում է նաւթի ծովի վրայ։ Ուրիշների համար անյայտ մնացած իրողութիւններից մէկն է և այն, որ երկրի ընդերքը հարուստ է նաև քարածուխով, երկաթով, պղնձով, մանգանեզով, քրոմով և այլ քիմիական աղերով՝ օրինակ՝ բորատ, սուլֆատ և այլն։ Դրանց շահագործմանը առնչուող աշխատանքները դեռ գտնւում են նախնական փուլերում։

Բացառեալ Քաւիր Նամաք անապատից, որ Աւստրալիայի պէս զբաղեցնում է երկրի կենտրոնական մասը, Իրանի հողը ամենուրեք արգաւանդ է։ Ուր հասնում է ջուրը, մշակւում է ցորեն, գարի, եգիպտացորեն, բամբակ, գետնախնձոր, մաշ, կորնդան, ճակնդեղ, շաքարեղէգ, ծխախոտ (թութուն), թէյ և զանազան տեսակի բանջարեղէններից օրինակ՝ կաղամբ, սոխ, լոլիկ, վարունգ և այլն։

Ովքեր այցելել են Իրան, հաճոյքով են վայելել մեր երկրի հիւթեղ ու ընտիր պտուղները՝ դեղնաշլորն ու խաղողը, թուզն ու ծիրանը, տանձն ու նուռը, լիմոնը և նարինջը, ձիթապտուղն ու արմաւը։ Նշանաւոր է Իրանի սեխն ու պիստակը (ֆստա), նուշն ու պնդուկը (ֆնդրզ)։ Անասնաբուծութիւնը զարգացել է մեծ չափերով։ Մեր երկրի գիւղացիութիւնը և լեռնաբնակները տեղական տարազներով լեռներում ու դաշտավայրերում զբաղւած են խաշնարածութեամբ ու անասնաբուծական այլ ճիւղերով։ Վերջին տարիներում մեքենայացել է գիւղատնտեսութիւնը։ Յաջորդ գլուխներում կ'անդրադառնամ երկրի կալւածները գիւղացիութեան ու երկրագործութեան մէջ բաժանելու ծրագրին, որ արդէն իսկ սկսել է գործադրւել։

Համեմատաբար քիչ է սննդամթերքի ներմուծումը մեզ մօտ, իսկ արտածումը հասնում է բաւարար չափերի։

Շատ է մրգի, նուշի և պիստակի արտահանումը երկրից։ Աշխարհի շուկաներում ռուսական ձկնկիթ անւան տակ վաճառուող ձկնկիթի (խաւիար) մեծ մասը իրանական է, որ արտահանւում է Ռուսիա և Ամերիկա։ (Ոմն ասել է, որ խաւիար ձուկը փոխելով կարծիքը՝ Կասպից ծովի հիւսիսային մասերից գաղթել է հարաւ։ Բայց իրականութիւնը այն է, որ դեռ Ռուսիայի յեղափոխութիւնից դարեր առաջ, այս ձուկը նախընտրել է Կասպից ծովի հարաւային տաք ջրերը աճի ու բազմացման համար)։ Մեր ձկնարդիւնաբերութիւնը օժտւած է հարուստ աղբիւր-

ներով, որոնք ցայժմ մնացել են անձեռնմխելի։

Վերը նշածներից դալիս ենք այն եզրակացութեան, որ թէև մեր ներկայ արտադրողականութիւնը հաւասար չափերով օգտակար ու արժէքաւոր է ոչ միայն մեր երկրի՝ այլ և ուրիշ երկրների ժողովուրդների համար, այսուամենայնիւ դեռ նոր ենք սկսել մեր բնական ու մարդկային հարստութիւնների շահագործումը։ Անգլիայում հրատարակուած մի պաշտօնական զեկուցման մէջ ասւում է.—«Իրանը թերևս Միջին Արևելքի միակ պետութիւնն է, որ օժտուած է զարգացման ու յառաջադիմութեան ամենամեծ տեսալներով»։

Վաղագոյն ժամանակներից Իրանը եղել է Եւրոպայի և Միջին Արևելքի հատման կէտը։ (Շատերը մինչև անգամ մոռանում են, որ Իրանը պատկանում է ասիական ցամաքամասին)։ Հետևաբար հռչակուած Մետաքսի ճանապարհով Չինաստանի ու Եւրոպայի միջև երթևեկող կարաւանները հասնելով Իրան, հիմնում էին կենտրոններ։ Հեռաւոր Արևելքից գնուած մետաքսը, թանկագին քարերն ու այլ առարկաներ լաւ գներով վաճառւում էին հարուստ Իրանում և այստեղից առաքւում էին այլ երկրներ, մասնաւորաբար Եւրոպա։

Նոր ցամաքամասի յայտնաբերումից դարեր առաջ, երբ եւրոպական ժողովուրդները կերակուրը լցնում էին գետնի վրայ և ուտում էին ձեռներով, իրանցիները օգտագործում էին կաւի յղկած զարդարուած ամաններ, գդալ ու դանակ։

Հիշատակ չինականը՝ աշխարհի ամենահին շարունակական ու անընդմէջ քաղաքակրթութիւնը պատկանում է մեր ժողովրդին։ Եթէ նոյնիսկ ասենք, որ մեր մշակոյթն ու զարգացումը շատ բնագաւառներում գերազանցել է չինականին, չպիտի համարել չափազանցութիւն։

Անհերքելի է այն պարագան, որ Իրանի քաղաքակրթութիւնը առաւել մօտիկ ու հարազատ է արևմտեանին, քան՝ չինականը կամ մեր հարևան արաբներինը։ Իրանը Արիա ցեղի հին հայրենիքներից մէկն է։ Ամերիկեան ու եւրոպական շատ ժողովուրդներ ևս սերում են այս ցեղից։ Ցեղային առումով մենք միանգամայն տարբերւում են Սամի ցեղից սերուող արաբներից։ Նոյնն է նաև պարսկերէնի խնդրում, որովհետև մեր լեզուն պատկանում հնդեւրոպական լեզուների ընտանիքին։ Դրա մէջ են մտնում նաև անգլերէնը, ֆրանսերէնը, գերմաներէնը և արևմտեան շատ ուրիշ լեզուներ։

Անշուշտ, դարերի ընթացքում մեր ժողովուրդը որոշ չափով մերուել է այլ ցեղերի հետ։ Արաբների գերիշխանութեան օրօք մեծ թուով արաբական բառեր են թափանցել մեր լեզուի մէջ, բայց այնուամենայնիւ պահպանւել են մեր ցեղական ազնուութիւնն ու լեզուական յատկանիշները։

Յիշում եմ, երբ լսեցի, թէ կակաչն ու հողմաղացը Հոլանդիա են տարուել Իրանից, կարի զարմացայ։ Այդ մասին ինձ ասաց Հոլանդիայի մշակութային կապի կցորդը՝ մի գիտնական անձնաւորու-

թիւն։ Կարծում եմ եթէ որևէ հոլանդացի երբևիցէ բացայայտի այս խնդիրը, դրա մէջ ամենափոքրիկ կասկածն անգամ չպիտի ունենալ։ Յիշեալ գիտնականը մի շարք ուսումնասիրութիւններից յետոյ յանգել էր այն եզրակացութեան, որ հոլանդական կակաչը պատկանում է Իրանում աճող մի տեսակ վայրի կակաչի ցեղին։ Հողմաղացները ևս Հոլանդիայում պատրաստել են Իրանի հարաւային շրջաններում շատ վաղուց օգտագործուող հողմաղացների ձևի ու արտաքին տեսքի վրայից։

Նարդի խաղը հնարել են իրանցիները։ Առաջին անգամ Իրանումն է խաղացել մկունդախաղը և մեր արքաները յատուկ սէր են ցուցաբերել դրա նկատմամբ։ Ֆստան (պիստակ) իրանական է, նոյնն է և կորնգանը, որ առաջին անգամ մշակել է Իրանում, որպէս ձիերի կեր։ Դեղձը դարեր առաջ բերել է Չինաստանի վայրի անտառներից ու ընտելացել և յետոյ դեղձենու տունկը տարել է Միջերկրականի ափերն ու Եւրոպա։ Կարմիր վարդը, որ դարեր շարունակ զարդարել է Իրանի այգիները, առաջին անգամ տնկել է Իրանում։ Իրանից են տարուել նարգիզը, շուշանը և կապոյտ յասմիկը՝ պահպանելով իրենց իրանական անունները զանազան երկրներում։ Օշարակը որ Իրանում գործածւում է հեղուկ վիճակում, իսկ Ամերիկայում կամ այլուր ստացել է պաղպաղակի ձև՝ վայելել են մեր նախապապերը։ Շերի հանրածանօթ օշարակի անունը գալիս է Շիրազ բառից։ Դա նոյն ըմպելին է, որ միջին

դարերին արաբները տարածեցին Սպանիայում և սովորեցրին պատրաստելու եղանակը։

Արուեստի ու գիտութեան բնագաւառներում իրանցիները փայլել են ստեղծագործական տարերքով։ Արևի ժամացոյցի գիւտը պատկանում է իրանցիներին։ Առաջին աստղադիտարանը ևս շահագործել է Իրանում։ Թէև առաջին հայեացքից անհաւանական է թւում, որ Իրանի հռչակաւոր գիտնական և բժիշկ Իբն Սինան ծանօթ և եղել պենիսիլինի յատկութիւններին, և դա օգտագործել է հիւանդների ապաքինման համար, այսուամենայնիւ կան ապացոյցներ, որոնք վկայում են այս իրողութեան մասին։ Իբն Սինայի համաշխարհային հռչակ վայելող, միջին դարերում Եւրոպայում բժշկական լաւագոյնը համարուող գրքի մէջ նշուած է այն մասին, որ հացի բորբոսը կարելի է օգտագործել վէրքերի բուժման համար։ Նա խորհուրդ է տալիս բժիշկներին՝ թաց հացի վրայ պատրաստել բորբոս և ապա զգուշութեամբ հաւաքել ու դնել վէրքի վրայ։ Մի քանի դար նրանից յետոյ անգլիացի գիտնական Սը Ալեքսանդր Ֆլեմինգը յիշեալ բորբոսը անուանելով Պենիսիլիում, ուսումնասիրեց ու փորձարկեց դրա բնական յատկութիւնները և ապա պատրաստեց պենիսիլինը, որ այսօր հսկայ քանակութեամբ մատակարարւում է աշխարհի շուկաներում, ստոյգ մահից փրկելով հազարաւորների կեանքը։

Արևմտեան ժողովուրդների մեծ մասը չգիտէ, որ Իրանը հռչակած է որպէս կառավարչական սիս-

տեմների գործադրման ու տարածման՝ առաջատար։ Երկրի բաժանումը նահանգների և դրանց կառավարումը նահանգապետների (քաղաքագլուխ) միջոցով վաղագույն ժամանակներից կիրառել է Իրանում, քանի որ առանց դրա՝ հնարաւոր չէր մի լայնածաւալ երկրի կառավարումը։

Ճանապարհային ցանցերի կառուցման խնդրում ևս Իրանը առաջադոյնն է։ Հռոմէական կայսրութեան հիմնադրումից դեռ շատ առաջ երկրի տարբեր կէտերի միջև գոյութիւն ունեցող կապը կատարւում էր սուրհանդակների միջոցով (չափար)։ Որոշ տարածութիւնների վրայ հիմնւած էին կայաններ (չափարխանաներ), ուր հանգրւանում էին արքայական սուրհանդակները փոխելու յոգնած ձիերը՝ նորերով։ Այսպիսով հնարաւոր էր դառնում տասնևհինգ օրւայ ընթացքում լայնատարած Իրանի մէկ ծայրից միւսը առաքել նամակներ։

Մի քանի հարիւր ֆարսախ տարածութեան վրայ լուրերի փոխանցումը կատարւում էր պայմանական աշտարակների, խարոյկների և այլ ազդանշանների միջոցով։

Իրանը մէկն է առաջին այն պետութիւններից, որ կտրել է մետաղադրամ. Դարեհ Մեծի ոսկեդրամը հին աշխարհի գործածական ու տարածւած փողերից մէկն էր։ Հետաքրքիր է այն իրողութիւնը, որ դրա ծանրութիւնը հաւասար է անգլիական մէկ ոսկէ լիրայի հետ։ Հաւասար են կշռում նաև Դարեհի արծաթադրամն ու անգլիական մէկ շիլլինգը։

Ձափերի սիստեմի կիրառումը, որ դիւրացնում էր առևտրի գործը լայնատարած Իրանի թէ ներսում և թէ դրսում, մենք որդեգրել ենք շատերից առաջ. նոյնպէս գործածական էին դարձրել հաշւապահական մի կանոնաւոր և միատեսակ եղանակ, որից ընդօրինակեցին ուրիշ երկրներ։

Դարձեալ Իրանն էր, որ առաջինը ապացուցեց որևէ լայնածաւալ կայսրութեան կառավարման հնարաւորութիւնը։ Գրքիս ընթերցողների մեծ մասը անշուշտ կարդացել է Հռոմէական կայսրութեան պատմութիւնը. դրանից դարեր առաջ Իրանի Շահընշահութիւնը գտնւում էր իր ոյժի և փառքի գագաթնակէտին, դա էր որ ճշգրտօրէն և կանոնաւորապէս հետապնդում էր տուրքերի գանձումը, բարեգործական աշխատանքները, զինւորական կազմակերպչականութիւնը և ներկայում երկրների ղեկավարմանը հիմք ծառայող կառավարչական կազմակերպութիւնների գործունէութիւնը։

Իմ երկիրը եղել է ոչ միայն գրադաշտական մեծ կրօնի օրրանը, այլև այստեղ են գործել բազմաթիւ այլ կրօններ, դրանց թւում իսլամական ամենամեծ աղանդներից՝ Շիան, որի հաստատակամ ու հաւատարիմ հետևորդներից մէկն եմ ես և այս մասին բազմիցս պիտի անդրադառնամ գրքի յաջորդ գլուխներում։ Զրադաշտական կրօնը Իրանում հաստատւել է Զ. դարում (Ք. Ա.), Զարդոշտի ձեռամբ։ Կրօնների զուգորդութեան գիտութեան լաւագոյն գիտնականներից Ուիլիամ Ջէկսընը այս մասին նը-

շում է. «Մովսիսականութիւնից ու Քրիստոնէութիւնից յետոյ, հին աշխարհում դժուար է գտնել ուրիշ մի դաւանանք, որ զրադաշտութեան չափ լինի այնքան ճշմարիտ, այնքան մաքուր ու մեծաբարոյ, կարողանայ այնքան յստակօրէն պարզաբանել հանդերձեալ կեանքը, հոգու յաւիտենականութիւնը, մարդկութեան ազատարարի գալուստը, լաւի ու վատի հատուցումը, որ արտացոլել է Աւեստա գրքում»։

Իրանում տարածում գտած դաւանանքներից մէկն է Մանաւի կրօնը, որը դաւանել է Մանին Գ. դարում։ Մանիի նպատակն էր ընդհանուրի բերել իրենից առաջ գոյութիւն ունեցող այլ դաւանանքների կարևորագոյն ճշմարտութիւնները, հետևաբար նրա կրօնի հիմունքները կազմում էին Զարդոշտի, Բուդդայի և Քրիստոսի քարոզչութիւնները։ Թերևս նա առաջին անձնաւորութիւնն է, որ կրօնագիտութեան մէջ բաղդատել է տարբեր կրօնների ցայտուն կէտերը։

Բացի այն դերից, որ ունեցել է Իրանի հոգևորականութիւնը կրօնական ուսմունքների տարածման խնդրում, իրանցիները փայլել են նաև աշխարհիկ, մասնաւորաբար խորհրդապաշտական գրականութեան բնագաւառում։

Խորհրդապաշտական գրականութեան երկերը արժանացել են արևմտեան արևելագէտների բուռն ուշադրութեան։ Նրանք դրատանքով են անդրադարձել դրանց ոչ միայն գեղեցիկ ոճաբանութեանը, այլև մարդկութեան հանդէպ ցուցաբերած սիրոյ ու

խանդաղատանքի այն երանդներին, որ արտացոլած է այդ երկերում։

Հարկաւ՝ մեր հարուստ գրականութեամբ, մասնաւորաբար հռչակաւոր բանաստեղծներ՝ Ֆերդովսիի, Հաֆեզի, Սաադիի, Մոլաւիի, Խայեամի և ուրիշների թողած գրական ժառանգութեամբ ճանաչած ենք ամենուր։ Քեմբրիջ համալսարանի գիտուններից մէկը նշում է. «Պարսկերէն լեզուի հարստութիւնը՝ գրական երկասիրութիւնների հսկայ ծաւալի շնորհիւ՝ չկայ ուրիշ ոչ մի լեզուի մէջ»։ Իրանական գրականութեան ծանօթ արևմտեան բանասէրները անշուշտ լիովին համակարծիք են նրա հետ։

Այստեղ, թերևս, տեղին է համառօտակի անդրադառնալ իմ երկրի դարաւոր պատմութեանը։

Քարէ դարում մարդիկ բնակւում էին Կասպից ծովի հարաւային եզերքներում, որ այսօր մըտնում է Իրանի տերիտորիայի մէջ։

Իմ երկրի մայրաքաղաք Թեհրանի մերձակայքում նշմարւում են աւերակներ, որ համաձայն պատմաբանների վկայութեան, ունեն չորս հազար տարեայ հնութիւն։

Իրանի կենտրոնական մասի քաղաքներից Քաշանում պեղել է Սիլաք կոչւող աւանը, որ մասնագէտների կարծիքով գոյութիւն է ունեցել մեզանից աւելի քան 7000 տարի առաջ։ Յայտնի է դառնում, որ հին քարէդարեան ժամանակաշրջանում, Իրանի բնակիչները աստիճանաբար թողնելով վայրենի ու թափառական կեանքը և որսի ու ապրուստի համար

տեղից տեղ քոչելու վաղեմի սովորությունը, հաստատուել են աւաններում զբաղուելով երկրագործությամբ ու խաշնարածությամբ։

1337 թուին (1959 թ.) իրանցի և ամերիկացի մի շարք հնաբաններ Հասանլու աւանում, որ գտնուում է Իրանի հիւսիս արևմտեան նահանգ՝ Ատրպատականում, յաջողեցին յայտնաբերել մի առանձին հետաքրքրութիւն ներկայացնող ոսկեայ թաս։ Մասնագէտների կարծիքով դա կարելի է համարել երկրի շերտերից ցայժմ պեղուած ամենամեծ յայտնագործութիւններից մէկը։ Ոսկեայ թասը և այն շէն ամրոցը, ուր գտնուել է թասը, վկայում են մի ժողովրդի գոյութեան մասին, որի պատմութիւնը անծանօթ է բոլորին։ Թուում է, որ Թ. դարում (Ք.Ա.), հարևան ցեղերի ասպատակութիւնների հետևանքով իսպառ բնաջնջուել է յիշեալ ժողովուրդը։ Իմ կարծիքով այս դիպուածը գալիս է ապացուցելու, որ անտիկ մշակոյթի մասին ունեցած մեր տեղեկութիւնները թերի են ու աղքատ։

Հաւանաբար Քրիստոսի ծնունդից հազար հինգ հարիւր տարի առաջ նորաստեղծ Արիա ցեղը մուտք գործելով Իրանի բարձրաւանդակը, միացել է բնիկներին։ Ճիշտ է, սա չի ապացուցել վերջնականապէս, բայց կան տուեալներ այն մասին, որ Արիա ցեղը Իրան է գաղթել Ռուսիոյ հարաւային շրջաններից։ Ինչևիցէ, այս ժողովուրդը իր անունով կնքեց իմ երկիրը՝ կոչելով Իրան, այսինքն արիաների բնակավայր։ Արիաները Իրանում բաժանուեցին երկու ցեղի՝ Մադեր և Փարսեր, որի մասին նշուած է Հին Կտակարանում։

Մադերի մեծամասնութիւնը հաստատուեց Իրանի հիւսիս արևմտեան շրջաններում. հարաւային շրջաններում բնակուեցին փարսերը։ Քաղաքակրթութեամբ և մշակոյթով մադերը գերազանցում էին փարսերին։ Նրանք ունէին ձիեր, նախիրներ, ոչխարի ու այծի հօտեր, պատերազմական կառքեր և պահապան շներ։ Կարողանում էին գրել ու կարդալ։ Զ. դարում (Ք.Ա.), կամ Հռոմի հիմնադրումից աւելի քան հարիւր յիսուն տարի առաջ, մադերը կազմելով մի լայնատարած կայսրութիւն, հպատակեցրին փարսերին և բազմաթիւ մանր ցեղերի։ Կառուցեցին Հեքմաթանէ (Եկբատան) գեղեցիկ մայրաքաղաքը, որը գտնուում է ներկայիս Համադան քաղաքի մերձակայքում։

Փարսերը թէև համարուում էին մադերի հպատակները, այսուամենայնիւ ունէին թագաւոր։ Դրանցից մէկն էր Սիրուս կամ Կիւրոս առաջինը, որը հիմնեց Հախամանեշի թագաւորութիւնը։ Կիւրոսը թագաւորեց 559-ից մինչև 529-ը (Ք. Ա.), և ճանաչուեց աշխարհի պատմութեան գործունեայ և կորովի այրերից մէկը։ Գրաւելով մադերի մայրաքաղաքը և վերացնելով նրանց կառավարութիւնը, նա հիմք դրեց աշխարհի (ըստ ոմանց կարծիքի ամենաառաջին) անկախ պետութիւններից մէկին։ Իրանին վերջնականապէս տիրելուց յետոյ, Կիւրոսը ընդլայնեց իր երկրի սահմանները և ստեղծեց ընդարձակ մի տիրապետութիւն։ Պատմութիւնը վկայում է, որ նրա

և իր որդու Քամբոջիէի թագաւորութեան օրօք Իրանի կայսրութիւնը աշխարհում ամենամեծն էր ու ծաւալունը, այնպէս որ նախքան այդ թւականը մարդկութիւնը չէր տեսել նման մի բան։ Այս մասին «Կաբաւան» խորագրով գրքի մէջ Դր. Քանը գրում է. «Հախամանեշեան կայսրութիւնը ամենահնագոյնն է և իսկականը, որովհետև դրա մէջ էին մտնում ինքնիշխան բազմաթիւ պետութիւններ և հպատակւում էին մէկ Շահնշահի։ Թէև Էնիոլիթեան (քարէ-պղնձէ) դարում Եգիպտոսում, Սումերում և Բաբելոնում գոյութիւն ունէին մանր ու խոշոր տէրութիւններ, սակայն դրանց պակասում էր այն կազմակերպչականութիւնը, որ ստեղծել էին իրանցիները կապի և հաղորդակցութեան խնդրի դիւրացման շնորհիւ։ Ինչ խօսք՝ մի այսպիսի լայնատարած կայսրութիւն ղեկավարելու համար անհրաժեշտ էր նման հաստատուն կազմակերպչականութիւն։ Չինաստանում դա ստեղծուեց աւելի ուշ՝ Հախամանեշեան թագաւորութեան հիմնադրումից երեք հարիւր տարի յետոյ»։

Իրանի կայսրութիւնը, որի հիմնաքարը դրուեց Կիւրոս Մեծի ձեռքով, ոչ միայն չէր կրում աշխարհակալական բնոյթ, այլև դրա բաղկացուցիչ տարրերն էին միջազգային արդարութիւնն ու խաղաղութիւնը։ Յարգւում էին հպատակ երկրների իրաւունքները, սովորութիւններն ու օրէնքները։ Հետևաբար կարելի է ասել, որ մեր առաջին կայսրութեան հանդամանքը նոյնն էր, ինչ որ՝ Միաւորուած Ազգերի Կազմակերպութեանը այսօր, որ վերստին հիմնել է

աշխարհում, 2500 տարի յետոյ։

Քամբուջիէին յաջորդող արքաների մէջ նշանաւոր են՝ Դարեհ Ա.-ն և Խշեաեարշան։ Իրանի ընդարձակ տերիտորիան կառավարելու խնդրում նրանք դրսևորեցին այնպիսի տաղանդ, լուսամտութիւն և արժանաւորութիւն, որ քաղաքակիրթ աշխարհը դա կարող է վերագրել սոսկ Իրանի ժողովրդին։ 500 թ. (Ք. Ա.) Իրանի Շահնշահութիւնը հասաւ իր հզօրութեան գագաթնակէտին։ Նա իր մէջ էր ընդգրկում ներկայիս Միջին Արևելքի խոշորագոյն մասը (բացի Արաբական թերակղզուց) և ուրիշ մեծ տարածութիւններ։ Նրա արևելեան սահմանները հասնում էին Հնդկաստանում Սենդ գետին, հիւսիսային սահմանները՝ Ռուսիոյ հարաւային շրջաններին, իսկ արևմուտքում ընդգրկում էր Միջերկրական ծովի առափնեայ երկրները, Յունաստանի հիմնական մասը, ամբողջ Թուրքիան և Եգիպտոսը։

Իրանի Շահնշահութեան սահմանները, ինչպէս Հռոմէական Կայսրութեանը, որ հզօրացաւ 115 թ. (Ք. Ա.), ժամանակի ընթացքում թէև կրում էր փոփոխութիւններ, այսուամենայնիւ երկու յաջորդական դարեր տարածւում էր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի ամենամեծ տարածքի վրայ։ Շահնշահութեան իրական խորհուրդն ու իմաստը ամենացայտուն կերպով դրոշմած է Դարեհ Ա.-ի՝ պատմութեան հռչակաւոր վետերանի (521—485 թ.) (Ք. Ա.) դամբարանի փորագրած քարերից մէկի վրայ։ Այնտեղ կարդացւում է.—«Ես, Դարեհս, Իրանի մեծ արքան եմ

և Շահնշահն եմ զանազան ազգերի և թագաւորում եմ հեռուները տարածուող այս մեծ աշխարհի վրայ», 331 թ. (Ք. Ա.), Ալեքսանդր Մակեդոնացին գրաւեց Իրանը։ սակայն ութ տարի յետոյ, երբ վրայ հասաւ նրա մահը, յոյները չկարողացան պահպանել նորատեղծ իշխանութիւնը։ Մակեդոնացու իշխաններից Սելևկոսին յաջողուեց Շահնշահութեան մասերից մէկում, որի մէջ էր մտնում նաև Իրանը, ստեղծել անկախ թագաւորութիւն, որը յարատևեց մէկ ամբողջ դար։ Թէև տևեալ իշխանութեան կազմաւորմանը հիմք էր ծառայում Իրանի բռնագրաւումը յոյների ձեռքով, բայց իրականում այդ յոյներն էին, որ ընդունեցին իրանական սովորոյթները, ամուսնացան իրանցի կանանց հետ, երկիրը կառավարելու համար դիմեցին իրանցիների օգնութեան և վերջապէս լուծուեցին իրանական մշակոյթի ու քաղաքակրթութեան մէջ։

Մօտաւորապէս 248 թուին (Ք. Ա.), արիական քաղաքակիրթ ցեղերից փարթերը (պարթև), որ բնակուում էին Իրանի հիւսիս-արևելեան շրջաններում, տապալելով Սելևկոսի յետագայ ժառանգների տիրապետութիւնը, աւելի քան չորս դար իշխեցին Իրանի վրայ։ Սրանց ևս վիճակուած էր ընկնել իրանական մշակոյթի ազդեցութեան տակ։ Կարճ ժամանակում նրանք իւրացրին իրանական բարքերն ու սովորոյթները, պաշտեցին իրանական չաստուածներ և կիրառեցին Հախամանեշեան շրջանի շատ ու շատ օրէնքներ։

Փարթերի տիրապետութեան շրջանը Իրանում

համարուում է նացիոնալիզմի ոգու կենսագործման շրջան։ Այս շրջանում տեղի ունեցած Իրան-Բիւզանդիա պատերազմները, որ երեք դարի տևողութեամբ շարունակուեցին անընդմէջ։ Բիւզանդիոնը կամենում էր Հռոմէական Կայսրութեան սահմանները տարածել դէպի արևելք և հանդիպում էր փարթերի ուժեղ դիմադրութեան։ Սրանք օժտուած լինելով ծանրազէն այրուձիով, որ յետագային օրինակ ծառայեց Միջնադարի ասպետներին, լիովին գերակշռում էին հռոմէական ոյժերին։ Ի վերջոյ նրանք ստիպուած եղան ընդօրինակելու փարթերի մարտական հնարքներից։ (Հարկաւ սա առաջինը չէր,—յոյների դէմ մղած մարտերի ընթացքում, Խեշաեարշան օգտագործեց նաւակներից կառուցուած ծովային կամուրջ, որպէս հետևակ ոյժերի փոխադրական միջոց,—դրանից չորս դար յետոյ Աննիբալն ու Կեսարը ևս շահագործեցին տևեալ եղանակը)։Ինչևիցէ, Իրան-Հռոմ Կայսրութեանց սահմանը ճշտորոշուում էր Եփրատ գետով, որ այսօր հոսում է Սուրիայի և Իրաքի տերիտորիաներում։

Հռոմի ճնշումների դէմ լոկ իրանցիներն էին, որ դիմացան դարեր շարունակ և Բիւզանդիոնի բոլոր փորձերը, Իրանին վերջնականապէս տիրապետելու խնդրում, մնացին ապարդիւն։

224 թուին փարթերի հպատակութեան տակ գտնուող Իրանի հարաւային նահանգներից՝ Ֆարսի արքայ Արդաշիրը ապստամբեց նրանց դէմ և երեք մեծ ճակատամարտերից յետոյ, որ տևեց մինչև 226 թիւը, սպանելով փարթերի թագաւոր Արդաւանին՝

հիմնեց Սասանեան հարստութիւնը։Դա յարատևեց աւելի քան չորս հարիւր տարի, այսինքն Միացեալ Նահանգների պատմական շրջանի երկու անդանը և կամ Անգլիայի Էլիզաբեթ թագուհու թագաւորութիւնից ցայժմ։

Սասանեանների օրօք վերականգնուեց Հախամանեշեան շրջանի փառքը։ Իրանի մշակոյթն ու արուեստը մի անգամ ևս հասաւ իր մեծութեան գագաթնակէտին, ստեղծելով այն բոլոր վերելքներն ու գիւտերը, որ մեզ տուել են ճանաչում և հռչակ։ Այս շրջանում Իրանի պաշտօնական կրօնն էր զրադաշտականութիւնը։

Սասանեանները հիմնում էին ամուր և դիմացկուն կառոյցներ, և դեռևս երկրի շատ կէտերում նշմարւում են այս շրջանում կառուցած պալատների, տաճարների և բերդերի աւերակներ։

Սասանեանների մեծ արքաներից մէկն էր Խոսրով Անուշիրուանը (531—579)։ Նրա թագաւորութեան օրօք շինարարութիւնը զարգացաւ թէ՛ Իրանում և թէ՛ Իրանից դուրս։ Կառուցուեցին ճանապարհներ, կամուրջներ, քարուանսարաներ, ուր հանգրւանում էին յոգնած կարաւանները. ջրի ամբարտակներ, որ նպաստում էին գիւղատնտեսութեան ընդլայնմանը և այլն։

Հռոմ-Իրան պատերազմներում յաղթանակի նրժարը յաճախ թեքւում էր Սասանեանների կողմը. Շապուհ Ա.-ն պարտութեան մատնելով Վալերիան կայսեր՝ գերեվարեց ու բանտարկեց նրան։ Սակայն

ընդհանրապէս անփոփոխ էր մնում Իրանի սահմանը Հռոմի հետ,որ ճշտուել էր փարթերի ժամանակից։Այլ էր Իրանի միւս սահմանների վիճակը։Անուշիրուանը հիւսիսից մտաւ Ռուսիա, իսկ արևելքում տիրացաւ ներկայ Աֆղանիստանին։ Ապա արշաւելով Արաբիայի վրայ և պարտութեան մատնելով արաբական զօրքերին, առաջացաւ մինչև ներկայ Եմանի սահմանները, այսինքն արաբական թերակղզու վերջաւորութիւնը։

Դ. դարում Բիւզանդիան քրիստոնեայ դառնալուց յետոյ, Իրան-Հռոմ բաղխումները ստացան կրօնական բնոյթ, որով Հայաստանը դարձաւ երկու կայսրութիւնների կուռածաղիկը։

Այս միջոցում, աստիճանաբար ուժեղացող թիւրք ցեղերը բարեկամութեան դաշն էին կնքում մերթ Իրանի, մերթ Բիւզանդիայի հետ։ Երկարատև պատերազմները ի վերջոյ չլատեցին երեքի ոյժերն էլ, իսկ Իրանի ներքին կազմակերպչականութեան,ինչպէս նաև զրադաշտ հոգևորականութեանմէջ երևան եկան ապականութիւն ու խռովարարութիւններ։ Հետևանքը եղաւ այն, որ 641 թուականին, իսլամ արաբները մտնելով Իրան պարտութեան մատնեցին Իրանի շահնշահական զօրաբանակին։

Ուրիշ նաճողների պէս՝ արաբների համար ևս, և աւելի մեծ չափանիշով, պարզ դարձաւ այն իրողութիւնը, որ իրանցու ոգին անսասան է և անպարտելի։ Եթէ հիմովին ոչնչացաւ զրադաշտական կրօնը և դրան հաւատարիմ մնացին սոսկ մի բուռ իրանցիներ, ապա ամեն դէպքում Իրանի մշակոյթն

ու քաղաքակրթությունը յաղթական դուրս եկաւ։ Հետևաբար բնական էր, որ կառավարությեան, գիտության, արվեստի և այլ բնագաւառներում իրանցիները դառնային գլխաւոր գործօններ։ Դա ինքնըստինքեան գալիս էր վաւերացնելու արաբ գիտնականներ՝ Իբն Խելդունի և Մասուդիի այն արտայայտությունը, թէ իրանական քաղաքակրթությունը գերակշռում է արաբականին։

Ազգայնական մօտիւները խնդրում էս իրանցիները չյանձնեցին արաբներին։ Դրա լաւագոյն ապացոյցը նրանց միակամ ըմբոստացումն էր սոննի աղանդի դէմ։ Շիա իրանցիները չէին բաժանում սոննիների այն տեսակէտը, թէ Մուհամմեդի յաջորդներն են առաջին երեք խալիֆաները, այլ պնդում էին (և հիմա էլ պնդում են), որ իսլամ մարգարէի իրական ժառանգորդը նրա փեսան՝ Ալի էբնէ Աբի Թալէբն է։ Սրա որդին համարւում է շիաների երրորդ իմամը և ամուսնացել էր արաբական արշաւանքի ընթացքում զոհւած պարսից շահի դստեր հետ։

Ընդհանուր առմամբ իմ ժողովրդի մեծագոյն մասը պատկանում է Շիա աղանդին։ Մենք աշխատում ենք կարևորություն չտալ իսլամ աղանդների տարաձայնություններին, ընդհակառակը՝ մեզ համարում ենք անդամ 400 միլիոնանոց իսլամական ընտանիքի, որ ամենամեծն է քրիստոնէությունից յետոյ։

Վեց հարիւր տարի շարունակ՝ 651-ից մինչև

1258 թիւը արաբները իշխեցին Իրանի վրայ։ Իրանցիների ըմբոստացումը արաբ գերիշխողների դէմ սկսւեց աստիճանաբար և ստացաւ համերկրային բնոյթ։ Այստեղ ու այնտեղ երևան եկան ինքնիշխան պարագլուխներ, որոնք եթէ առերես ենթարկւում էին արաբներին, ապա օր աւուր ընդլայնում էին սեփական անկախությունը։ Դրանով իսկ իրականում արաբական գերիշխանությունը Իրանում տևեց ոչ աւելի քան երկու հարիւր տարի։ Այս շրջանի ամենամեծ թագաւորություններից մէկն էր Ղազնաւի հարստությունը, որ նոյնիսկ խորացաւ Հնդկաստանի տիրապետության մէջ։ Ժամանակի արքաները քաջալերիչ դեր ունեցան պարսիկ գրականության ծաղկման խնդրում, վեց դարի ընթացքում երևան եկան մեծ թւով բանաստեղծներ ու վիպագիրներ, որոնցից նշանաւոր է Իրանի հռչակաւոր բանաստեղծ՝ Ֆերդուսին։

Իրանը իր ամբողջականությունը վերստացաւ ԺԱ. և ԺԲ. դարերին Սելջուկների թագաւորության օրօք (տես՝ կենտ. Ասիայից)։ Սելջուկները տիրացան Եգիպտոսին ու Սիրիային և Իրանի Շահնշահությունը հասցրին իր նախկին մեծության ու փառքի մակարդակին։ Սելջուկների օրով մեծ չափերով զարգացան գիտությունն ու արվեստը։ Նշանաւոր բանաստեղծ, մաթեմատիկոս, աստղագէտ Հեքիմ Օմար Խայեամը մէկն է այս շրջանի բազմաթիւ այն գիտնականներից, որոնք վայելում էին շահերի սէրն ու հովանաւորությունը։

Սելջուկների իշխանությունը ընկաւ մոնղոլ-

ների սանձարձակ ասպատակութիւնների հետևանքով։ Այս իրադարձութիւնը կարելի է իրաւամբ կոչել մեր և Միջին Արևելքի այլ երկրների պատմական ամենամեծ աղէտը։ Երբեմն զարմանում եմ, թէ ինչո՞ւ մոնղոլական առաջնորդ Չինգիզխանը (1220 թ-ին գրաւեց Իրանը) մարդկութեան աչքում համարւում է առասպելական մի անձնաւորութիւն։ Արդե՞օք հնարաւոր է մոռանալ նրա և իր արիւնարբու զօրաբանակների ոչ մարդկային և անգութ կոտորածներն ու կողոպուտները։ Մեր յառաջադէմ քաղաքները վերածուեցին աւերակոյտերի, չխնայուեցին անմեղ ու անպաշտպան հազարաւոր կանայք ու երեխաներ։

Մոնղոլների գերիշխանութիւնը Իրանում տևեց մէկ դար։ Դրան յաջորդեց Թեմուր Լէնգի արշաւանքը։ Սա էլ որ Կենտ. Ասիայի Թուրքմէններից էր և սերում էր մողոլ ցեղից, իր գազանային ոճիրներով պակաս չլինելով Չինգիզխանից՝ պատմականօրէն դարձել է լեգենդար անձնաւորութիւն...

Թեմուրի և իր յաջորդների իշխանութիւնը շարունակուեց մինչև նոր ցամաքամասի յայտնաբերումը Քրիստափոր Կոլումբոսի կողմից։

Բարբարոս ցեղերի կոտորածների հետևանքով երկրի ժողովուրդը նւազեց միլիոններով, բայց հրաշքով գոյատևեցին մեր քաղաքակրթութիւնն ու մշակոյթը, անցնելով նոյնիսկ զարգացման շատ փուլեր։ Այսպէս՝ հիմնուեցին աստղադիտարաններ, մաթեմատիքական գիտութիւնը նւաճեց փայլուն յաջողութիւններ, երևան եկան բազմաթիւ բանաստեղծներ յանձինս Սաադիի, Հաֆեզի և այլոց, որոնք գրական աշխարհին պարգևեցին անմահ ստեղծագործութիւններ։ Այս բոլորը շարժառիթներ էին, որ մի անգամ ևս մեր մշակոյթն ու քաղաքակրթութիւնը յաղթէ նւաճողներին. դեռ աւելին, քաղաքակիրթ դարձնելով նրանց ստիպէ, որ կատարած ոճիրների ու աւերածութիւնների յանցանքը քաւեն՝ գիտնականներին սիրաշահելով, նոր ու գեղեցիկ ապարանքներ կառուցելով և այլ բարեգործական աշխատանքներով։ Մեր գիրն ու գրականութիւնը տարածուեց Հնդկաստանում ևս։ Մօտ հինգ դար պարսկերէնը դարձաւ Հնդկաստանի գրական լեզուն և մեր գրական գլուխգործոցները արժանացան հնդիկ ժողովուրդի լայն ընդունելութեանը։ Այս վիճակը յարատևեց մինչև անգլիական ազդեցութեան տարածումը Հնդկաստանում։ Օրդու լեզուն, որով ներկայումս խօսում են միլիոնաւոր հնդիկներ, մօտիկ է պարսկերէն լեզուին և հարստացել է դրանով։

877 թ-ին (Հեջրաթի), իրանցի հերոսները վերջ տալով օտարների իշխանութեանը՝ հիմք դրին Սեֆեան թագաւորութեան։ Որոշ պատմաբաններ այն կարծիքին են, թէ Սեֆեանները սերում են մեծ մարգարէի ընտանիքից։ Ինչևիցէ, նրանք հէնց հիմնադրման օրերից Իրանի պետական կրօնը հռչակեցին շիա աղանդը և մեծ եռանդով տարածեցին ժողովրդի մէջ։

Սեֆեան ընտանիքի ամենանշանաւոր դէմքերից է Շահ Աբբաս Մեծը, որ թագաւորեց 965 թ-ից

մինչև 1007-ը (1585 – 1629)։ Սրա օրով Իրանում սկսեց անդորը ու խաղաղ կեանք, որից զուրկ էր ժողովուրդը երկար դարեր։ Համայն աշխարհում տարածուեց նրա հոյակապ մայրաքաղաք Իսպահանի հրաշակը։ Շահ Աբբասը երկրի դրսից ու ներսից համախմբելով հմուտ արհեստաւորների, զարկ տուեց գորգագործութեանը, ջուլհակագործութեանը և այլն։ Սեֆեան շրջանի մետաքսէ գորգերը, ոսկեգործ թաւիշը, մետաղէ, խեցիէ և մոզայիկի ձեռագործները, մասնաւորաբար այս շրջանի ճարտարապետական ինքնատիպ ոճերը անմրցելի են մնացել աշխարհում։

Շահ Աբբասը կառուցեց ճանապարհներ, կամուրջներ և Կիւրոս Մեծի պէս, նրանից առաջ, և հայրս նրանից յետոյ, աւազակութիւնն ու անարխիան արմատախիլ արեց ողջ երկրում։ Նա անգլիացի Շերլի եղբայրների օժանդակութեամբ ստեղծեց Իրանի նոր զօրաբանակը, որով ընդմիշտ ոչընչացրեց մանր ու խոշոր իշխանութիւնների սիստեմը։

Կարող թագաւոր էր Շահ Աբբասը, բայց ցաւօք սրտի քինախնդրութեամբ էր տրամադրուած հանդէպ իր իսկ հարազատ ընտանիքի և դա արտայայտում էր անգթօրէն ու անողոք։ Հետևանքը եղաւ այն, որ նրա զաւակները չդաստիարակուեցին ըստ կարելոյն Իրանի գահ ու գայիսոնի արժանի ժառանգորդները լինելու խնդրում։ 1119 (1722 թ.) թուին աֆղանները մտան Իրան։ Ճիշտ է, կարճ տևեց նրանց իշխանութիւնը, և անմիջապէս վտարուեցին Իրանից, բայց այդ կարճ ժամանակն էլ բաւական էր յարաբերական յետադիմութեան ու թերացումների համար։ 1113 թուից ի վեր հասարակ ընտանիքից սերած մի իրանցի իշխան օգտուելով Սեֆեանների թուլութիւնից՝ ապրստամբեց նրանց դէմ և Նադիր Շահ անունով հիմնեց Աֆշարեան հարստութիւնը։

Նադիր Շահը յայտնի է որպէս Իրանի Նապոլէոն։ Երկրից դուրս վտարելով որոշ տարածութիւններ բռնագրաւած աֆղաններին, թուրքերին և ռուսներին, նա կազմեց կենտրոնական ազդեցիկ կառավարութիւն, որով մի անգամ ևս հաստատեց մեր երկրի ամբողջականութիւնը։ Նադիր Շահը արշաւեց Հնդկաստանի վրայ, խորացաւ մինչև Դեհլի և փառաւոր յաղթութիւններից յետոյ վերադարձաւ Իրան։

Աֆշարներին յաջորդեց Զանդիէ թագաւորութիւնը։ Սրանց օրով Իրանը վայելեց խաղաղ ու անդորը մի ժամանակաշրջան։ 1172 թուին (Հեջրաթի) Կասպից ծովի արևելեան մասերից գլուխ բարձրացրեց թուրք ծագումով իրանցի մի իշխան՝ հիմնելով Կաջար իշխանութիւնը,

Մինչև 1304 թիւը յիշեալ իշխանութիւնը կացութեան տէրն էր։ Այս թուին տեղի ունեցաւ նրանց անկումը՝ հօրս ձեռքով։ Իրանի պատմութեան թերևս ամենաթոյլ թագաւորութիւններից մէկն է Կաջարիէն։ Օտարների ազդեցութեան դէմ նրանք հանդէս եկան անփոյթ ու թոյլ քաղաքականութեամբ, որի հետևանքով աւելացաւ օտար միջամտութիւնները երկրի ներքին խնդիրներում։ Պետական հարցերում նրանք լայն ասպարէզ շնորհեցին հոգևորա-

կանութեան, բայց անկարող եղան զսպելու աւազակութիւնն ու լեռնաբնակներին։ Վերջին թագաւորներից ոմանք չունենալով քաղաքական լուրջ ուղղութիւն ու նպատակ և դեռ աւելին լինելով՝ շայտ ու վատնող, մասնաւորաբար հսկայ ծախսերի գնով արտասահման կատարած անօգուտ ճանապարհորդութիւնների հետևանքով երկիրը մատնեցին աղքատութեան և ստիպած եղան դիմելու օտարների կրկնակի նիւթական աջակցութիւններին։

Չեմ ցանկանում սրանից աւելի սրութեամբ ու անողոքաբար արտայատել Կաջարների մասին, որպէսզի չստացւի այն տպաւորութիւնը, թէ մտադիր եմ պաշտպանելու հօրս որդեգրած վերաբերմունքը նրանց հանդէպ։ Իմ կարծիքով, Կաջար թագաւորներից ոմանք կարկառուն անձինք էին։ Օրինակ՝ Աղա Մոհամմադ Խանը, որ թէև ճանաչել է որպէս արիւնարբու և դաժան անձնաւորութիւն, այսուամենայնիւ արի ու արժանաւոր մարդիկ էր, որ կարողացաւ պահպանել երկրի ամբողջականութիւնը։

Նասրեդդին Շահը Իրանի առաջին արքան էր, որ ճամբորդեց Եւրոպա։ Ուշադրաւ են նրա Ճանապարհորդական նոթերը։ Օրինակ, երբ առաջին անգամ տեսաւ շոգեքարշը ընթացքի պահին, ինքն իրեն մտածեց, որ ձի են թաքցրել դրա մէջ։ Հետագային շոգեքարշի տեխնիկական կառուցւածքի մասին դաղափար կազմելով, համոզեց այնքան, որ հրաւիրեց Բելգիացիներին՝ Թեհրանի ու Ռէյի միջև հիմնելու 9 կիլոմետր երկարութեամբ երկաթուղագիծ. նոյնպէս

կարգադրեց որ պալատական կանայք հագնուեն բալետի պարուհիների տարազով, որը հարկաւ ընդունելութեան չարժանացաւ։

Որքան գիտեմ, Արևելքի և Արևմուտքի պատմաբանները չեն արժէքաւորում Կաջարների շրջանը, բայց չպիտի անտեսել այն իրողութիւնը, որ այս ժամանակաշրջանը զուգադիպում է Ռուս-Անգլիա դաղութարարային քաղաքականութեանց մրցակցութեանը։ Ի հարկէ չի կարելի հերքել, որ Ռեզաշահը առաւել հմտութիւն ու ողջմտութիւն ցուցաբերեց իմպերիալիստական սպառնալիքների չէզոքացման խնդրում։

Պիտի նշել նաև, որ Կաջար թագաւորութեան երկարատև ժամանակաշրջանում, երբ Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու Եւրոպան հսկայ քայլերով անցնում էին զարգացման ու յառաջադիմութեան փուլերից, Իրանը տեղքայլի մէջ էր։ Կաջար արքաները լիովին թերացան իրենց պարտականութիւնների մէջ. նոյնիսկ այն օրերին, երբ Իրանը բնականաբար պիտի ներդաշնակէր գիտութեան ու տեխնիկայի նոր նուաճումներին։

Հայրս, Փեհլևի թագաւորութեան հիմնադիրը (այս անունը դալիս է պարթերից, այսպէս էր կոչւում նաև պարսկերէնը հնում), անդրադառնալով վիճակի անմխիթար լինելուն՝ մեծ յեղաշրջումներ մտցրեց Իրանի տնտեսական և հասարակական կեանքի մէջ։ 1320 թւին, հօրս գահն ու գայիսոնը ժառանգելուց յետոյ, ես ևս հետապնդեցի նոյն քաղաքականութիւնը կարևոր փոփոխութիւններով, որոնց պիտի անդրա-

դառնամ հետագային։

Այսօր իմ երկրում զուգորդված է արևելեան և արևմտեան քաղաքակրթությունը։ Երբ Ալեքսանդր Մակեդոնացին հրդեհում էր Պերսեպոլիսը նրա բանակները խորանում էին երկրի մէջ, դարեր էին անցել Իրանի առաջին Շահնշահությեան հիմնադրումից։ Այսօր Պերսեպոլիսի աւերակների մօտ, որ անհերքելիօրէն աւելի փառաշուք են ու հնամենի քան Հռոմի աւերակները, նշմարւում են ներկայ Իրանի յառաջադիմությեան ու զարգացման փաստացի նմոյշները։

Պերսեպոլիսից քիչ հեռու փռված Իրանի հարաւային քաղաքներից Շիրազում, նստում էք խայտաբղէտ մարգագետինների եզերքում և հոգեկան զմայլանքով ունկնդրում վեց հարիւր տարի առաջ ստեղծված՝ բայց դեռ թարմությունը պահած՝ Հաֆեզի հոգեպարար քառեակները, մինչ լազուր եթերում մեղմօրէն տարածւում է դարեր շարունակ իրանցի պոէտներին ներշնչող շիրազեան սոխակի դայլայը։

Եթէ բնությեան հրաշալիքները հոգեկան սնունդ են պարգևում այցելուներին, ապա դրանց զուգընթաց նշմարելի է Միջին Արևելքի ամենահոյակապ հիւանդանոցներից մէկը, ինչպէս նաև ջրի արդիական զտարանը, որ հիմնել ենք Շիրազում (հարկ է նշել, որ յիշեալ երկու հաստատությունները կառուցել են մի իրանցի բարերարի նիւթական աջակցությամբ, որ հարստությունն է կուտակել Նիւ-Եորքում և դա մատուցել է հասարակական կեանքի բարելաւման

խնդրում տարուող ծրագրներին)։ Մտադիր ենք Շիրազում հիմնելու նաև մի արդիական համալսարան իրանական տարազով, ուր պիտի գործադրուի ամերիկեան սիստեմ։

Շահ Աբբասի շքեղ մայրաքաղաք Իսպահանում դեռևս ցորենը աղում են չորքոտանիների միջոցով (հին սովորությեան համաձայն, աշխատանքի պահին փակում են տաւարի աչքերը, որպէսզի աղօրիքի պտոյտի հետևանքով գլխապտոյտ չունենայ)։ Հին արծաթագործների արուեստի նմոյշներ կարելի է տեսնել նոյն քաղաքում։ Շահ հրապարակը, ուր Շահ Աբբասը ականատես էր լինում ճոկանախաղերի, իր ճարտարապետական անմրցելի համալիրով հիացմունք է յարուցում դիտողների մօտ։ Այսօ Իսպահանում գոյությունն ունեն մանուածեղէնի ու գործուածքեղէնի բազմաթիւ գործարաններ, որոնք կառավարւում են օտարազգի ինժիներների ու մասնագէտների ջանքերով։ Դիտողի սուր աչքից չեն վրիպի նաև քաղաքի բարեզարդման համար տարուող աշխատանքները։ Դեռևս ուղտի կարաւաններ են տեսնւում Թեհրանի արուարձաններում. դրանք երկրի հեռաւոր կէտերից զանազան ապրանքներ են փոխադրում քաղաք։ Լուսնեակ գիշերներին որքան զմայլելի է կարաւանների երթը, միախառնուած զանգերի միալար ղողանջին։ Թեհրանի մերձակայ այգիները գերում են զբօսանքի դուրս եկած մարդկանց սրտերը։ Թովիչ է դրանց բնությունը, առուակների խոխոջիւնը, երկնալայց բարդիները, որոնց արանքից նշմարւում են

Ալբորզ լեռնաշղթայի ձիւնապատ կատարները։ Իսկ քաղաքում յառնում է հօրս ջանքերով կառուցած Թեհրանի համալսարանը, 11000 ուսանողութեամբ, հեռուստատեսի պաստառի վրայ կը տեսնէք համալսարանի յարակից հիւանդանոցում տեղի ունեցող վիրահատութիւնը։ Ծանօթ հարազատի դիմաւորելու համար երբ գնում էք Թեհրանի շքեղ ու արդիական միջազգային օդանաւակայանը, ուր հանդրւանում են ջեթ տեսակի վիթխարի ինքնաթիռները անցնում էք լայն պողոտաներով, որոնց աջ ու ձախ կողմերին հանդիպում են նոր ու գեղեցիկ վաճառատները, Փարիզի վերջին նորաձևութիւնների համաձայն հագնուած կանայք կամ ծածկոցով պարուրուած խանումները։

Յետագայ գլուխներում որոշակիօրէն պիտի անդրադառնամ իմ այն յոյսին ու նպատակին, որ փայփայում եմ՝ մեր նոր ժամանակաշրջանի վերելքները և հինաւուրց մշակոյթն ու արուեստը միաժամանակ պարունակող մի երկրի ստեղծման ճանապարհին։

Ինչպէս նշել է նախօրօք, մենք օժտուած ենք աշխարհի ամենահին ու անընդմէջ քաղաքակրթութեամբ։ Մեր ժողովուրդը ցեղային ու լեզուական առումներով կապուած է արևմտեան ժողովուրդներին. շատ կէտերում, առանց չափազանցութեան կարելի է ասել, արևմտեան նորագոյն քաղաքակրթութիւնը պարտական է մեր մշակոյթին։

Այսօր ամենայն ուշադրութեամբ հետևում ենք արևմտեան նոր քաղաքակրթութեան նուաճումներին,

աւելացնելով դրանք մեր երկրի հարուստ դանձարանին։ Եւ թող զուր չթուայ այն յոյսը, որ կը յաջողենք բաղդատել արևելեան ու արևմտեան կուլտուրան։ Իրանը ոչ միայն աշխարհագրական դիրքի շնորհիւ է յայտնուել Արևելքի և Արևուտքի խաչմերուկում, այլ շատ ուրիշ շարժառիթներ են նպաստել տեսալ դրութեան գոյացմանը։

Բ. ՄԱՍ

ՀՈՐՍ ԶԵՌՔՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՅԵՂԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ

تحولاتی که پدرم در ایران ایجاد کرد

Երբ հայեացք եմ նետում մեր երկրի պատմական և արժէքաւոր անցեալին, ցայտուն որոշ կէտեր են գրաւում ուշադրութիւնս։ Օրինակ, իրանցիները յայտնի են եղել իրենց անհատական ազատութեամբ։ Ես դէմ չեմ նրանց, ովքեր Թեհրանի թաքսիների վարորդների սանձարձակ վերաբերմունքի մէջ են որոնում տեսալ ազատութեան խորհրդանիշը։ (Այն օրը, երբ թաքսիների վարորդները գործադուլ յայտարարեցին, Թեհրանը թողնում էր լուութեան և ամայութեան մէջ թաղուած քաղաքի տեսք)։ Բայց կասկած չկայ, որ մեր երկրի հազարամեայ պատմութեան մէջ անհատական ազատութիւնը շատ դէպքերում արտայայտուել է առաւել խորութեամբ։ Պատմական արշաւանքները և օտարների ժամանակաւոր տիրապետութիւնները ի վիճակի չեղան ընկճելու իրանցու ոգին։ Յիշեալ բնորոշումով մենք մօտ ենք ֆրանսիացիներին (նրանց թաքսիի վարորդները անհատական ազատութիւնը ցուցադրելու խնդրում յետ չեն մնում մեր վարորդներից), ուստի՝ զուր չէ որ Իրանը համարւում է «Ասիայի Ֆրանսիան»։ Այսպիսի նմանութիւն ունենք նաև ամերիկեան ժողովուրդի հետ, ըստ որում իրանցիներն ու ամերիկացիները մերում են դիւրութեամբ։ Հարիւրաւոր իրանցի ուսանողներ, որ ամեն տարի մեկնում են Ամերիկա, առանց բացառութեան գոհ են ու երջանիկ իրենց վիճակից, նոյնպէս Իրանում աշխատող ամերիկացիները ազատօրէն մասնակցում են մեր երկրի ժողովրդի հաւաքական կեանքին։

Իրանցիները հոչակուած են հիւրասիրութեամբ։ Այս յատկանիշը ուսումնասիրելու համար, բաւական է այցելել աշխարհի ամենամեծ գրադարանները, որոնք լցուած են Իրանի մասին գրուած գրքերով (օրինակ՝ Բրիտանիայի թանգարանի գրադարանը, կամ Ամերիկայի Կոնգրեսի գրադարանը), և բազմաթիւ օտարազգի զբօսաշրջիկների օրագրութիւններից նկատելի է Իրանցու այս բնութագիրը։ Այսօր երջանիկ ենք, որ ժամանակի ընթացքում դա ոչ միայն

չի ոչնչացել, այլև նախկինից առաւել ցայտուն կերպով տարածւած է մեր հայրենիքի նոյնիսկ գիւղերում և աւաններում։

Իրանի և Ամերիկայի նմանութեան տարբերակներից մէկն է և այն, որ Իրանը դարեր շարունակ զերծ է եղել դասակարգային և ցեղային խտրականութիւնից. երևոյթ, որ առկայ է շատ երկրներում։ Ճիշտ է, մեր երկրում ոմանք օժտւած են աւելի լայն առաւելութիւններով, ոմանք զուրկ են դրանցից և դա ստեղծում է ինչ որ զգալի տարածութիւն, այդուամենայնիւ ինչպէս Ամերիկայում, այնպէս էլ Իրանում միշտ էլ եղել է այն հնարաւորութիւնը, որ արժանավայել անհատները ելնելով հասարակութեան խոնարհ խաւերից, նւաճեն բարձր կոչում և դիրք։ Դրա լաւագոյն օրինակը՝ հայրս է։ Դեռ աւելին, Իրանի պատմութեան էջերը լի են ուրիշ փաստերով, որոնք գալիս են ապացուցելու, թէ բազմաթիւ մեծ արքաներ, նախարարներ, գիտնականներ, բանաստեղծներ և գրողներ բարձրացել են հասարակ խաւերից, հասնելով ոյժի և հռչակի գագաթնակէտին։

Մենք երբևիցէ չենք համակրել ցեղային կամ կրօնական խտրականութիւններ. տարբերութիւն չենք դրել մարդկանց գոյնի մէջ։ Ընդհակառակը, հռչակւել ենք՝ տարբեր ցեղերի և կրօնների պատկանող զանգւածների մէջ համակերպութիւն և խաղաղութիւն ստեղծելու ուղղութեամբ։ Մեր երկիրը ապահով ապաստան է եղել տարբեր ազգութիւնների տուժած հպատակների համար։ Կիւրոս մեծը 539 թւին Բաբելոնը նւաճելուց յետոյ, ազատ արձակեց Նաբուգոդոնոսորի միջոցով Երուսաղէմից գերւած ստրուկներին, որպէսզի նրանք հաւաքելով իրենց սրբազան մասունքները՝ վերաշինեն կործանւած սրբավայրերը։ Ազատագրւած ստրուկները, ինչպէս նշւած է Թալմուտի մէջ (Թուրաթ) նւէր ստանալով Կիւրոսի գանձարանից՝ վերստին կառուցեցին աւերւած տաճարները։

409 թւին Յազկերտ Ա.-ի հրովարտակով ազատութիւն շնորհւեց քրիստոնեաներին՝ Իրանի Կայսրութեան բոլոր սահմաններում խաղաղութեամբ կատարելու իրենց կրօնական սովորութիւններն ու ծիսակատարութիւնները։ Յաջորդ շրջանում, երբ բիւզանդացիները գրաւեցին Հայաստանը, մեր երկիրը դարձաւ հայ գաղթականների ապահով հանգրւանը։ Շատ աւելի ուշ, 1917 թւականի Հոկտեմբերեան Յեղափոխութեան օրերին և դրանից յետոյ բոլշևիկեան տերրորի ու սարսափի շրջանում, հազարաւոր քրիստոնեայ ռուսներ թողնելով իրենց ծննդավայրը՝ գաղթեցին Իրան և արժանացան մեր հայրենակիցների ընդունելութեան։

Թէև անցեալում որոշ անպատասխանատու անձանց ծայրայեղ հակումների հետևանքով կրօնական փոքրամասնութիւնները ենթարկւել են անիրաւութիւնների, բայց, ընդհանրապէս, կարծում եմ, արևմտեան պատմագիրները համակարծիք պիտի լինեն ինձ հետ, որ կրօնական և ցեղային փոքրամասնութեանց հանդէպ ցուցաբերւած մեր լաւ վերաբեր-

մունքով ու խաղաղ համակեցութեամբ, աւելի փայլուն անցեալ կարող ենք ունեցած լինել արևմտեան շատ երկրներից։ Ըստ իս, այլ կրօնների և ազգութիւնների նկատմամբ որդեգրած բարի ու խաղաղասէր այս ընթացքը նպաստել է մեր մշակոյթի ու քաղաքականութեան զարգացմանը։

Ինչպէս նշեցինք նախապէս, թէև Իրանը դարերի ընթացքում հռչակուել է որպէս պատերազմող երկիր, սակայն անհերքելի է, որ մեր հռչակը աւելի է համամարդկային քաղաքակրթութեան ու մշակոյթի վրայ ունեցած ազդեցութեան խնդրում։ Այս առումով միշտ էլ յաղթել ենք մեզ նուաճողներին՝ դարձրել ենք նրանց քաղաքակիրթ, առել մեր մշակոյթի ազդեցութեան ներքոյ։ Միով բանիւ եթէ երբեմն պարտուել ենք ոսոխներից, ապա բարոյական յաղթանակը մնացել է մեզ։

Դեռ աւելին։ Դարերի ընթացքում, կեանքի այլազան բնագաւառներում, լինի դա երկրի կառավարութեան, առևտրի, տնտեսութեան, գիր ու գրականութեան, նուրբ ճարտարարուեստի թէ ճարտարապետութեան մէջ, եղել ենք ղեկավարող ոյժը։ Մի կողմից մեր մեծ արքաները ղեկավարել են Իրանի մեծ կայսրութիւնը՝ միւս կողմից զարկ են տուել ներքին բարեսիրական աշխատանքներին։

Հարկաւ չպիտի անտեսել, որ տեսալ բնութագրի հիմքն է կազմում մեր կրօնական, ստեղծագործական և իմացական ոյժը։ Իրանի մեծ մարգարէ Զրադաշտը իսլամութիւնից առաջ, ինչպէս ակնարկել

եմ առաջին գլխում, երբ խօսել է հոգու յաւիտենականութեան, լաւի ու վատի յարատև պայքարի մասին, ինքնըստինքեան դաւանել է քրիստոնէութեան որոշ հիմունքներ։ Նա իր հետևորդներին քարոզել է առողջ մտածելակերպի, գեղեցիկ խօսքի և լաւ վերաբերմունքի երեք սրբազան պատուիրանները։

Դարեհ Մեծը քաջալերել է ճշմարտութիւնը և պախարակել սուտը։ 521 թ-ին (Ք.Ա.), նա սրբագործեց հետևեալ խօսքերը.—«Ես սիրում եմ արդարութիւնը, ատում եմ յանցանքը և գոհ չեմ բարձր խաւերի բռնակալական ընթացքից՝ հանդէպ ցածր խաւերի,

«Առանց զօրքի,—ասել է Սասանեան թագաւորութեան հիմնադիր Արդաշիր Ա.-ն,—ոյժ չի ստեղծուում, առանց դրամի զօրք չի կարող գոյութիւն ունենալ, առանց երկրագործի դրամ չի գոյանայ և առանց արդարութեան երկրագործութիւնը չի զարգանայ։

Սասանեան հարստութեան մեծ արքաներից Խոսրով Անուշիրաւանը ևս, թէև երբեմն խստապահանջ էր չափից աւելի, բայց արդարութեան մէջ այնպիսին էր, որ պատմութիւնը անուանեց նրան «Ադել» (արդարադատ Ծ.Թ.) տիտղոսով։ Շատերն են լսել այն հեքիաթը, թէ ինչպէս պալատի դրսում նրա հրամանով կախ տուին արդարութեան զանգը ամբաստանուածների ու հարստահարուածների համար և թէ ինչպէս ինչ որ մի չորքոտանի իր տիրոջ անիրաւութիւններից դադրած՝ դիմեց արդարութեան զան-

գին... Անուշիրաւանը բարութեամբ էր տրամադրը-
ւած քրիստոնեաների հանդէպ։ Նրա արդարադատ հո-
վանաւորութեանը ապաւինեցին յոյն արևելագէտ փի-
լիսոփաները, որոնք մեծապէս տուժել էին հռոմէա-
կան կայսեր բռնութիւններից։ Տեղաւորելով իր իսկ
պալատում և հիւրասիրելով ըստ կարելւոյն, Անու-
շիրաւանը լոկ այն ժամանակ համաձայնեց վերա-
դարձնել նրանց Հռոմ, երբ կայսրը խոստացաւ նրանց
հանդէպ լինել բարի ու արդարամիտ։

Ելնելով այս ամենից, ըստ իս, բացայայտ-
ւում է այն ճշմարտութիւնը, որ մենք՝ իրանցի-
ներս դարերի ընթացքում ցուցադրել ենք մարդկու-
թեան համար անհրաժեշտութիւն ներկայացնող յատ-
կանիշեր ու արժանիքներ։

Սակայն պիտի նշել, որ հօրս թագաւորու-
թեանը նախորդող շրջանում մեր հայրենիքը ապ-
րում էր ճգնաժամ։ Հետք անգամ չէր մնացել երկրի
իմաստուն կառավարման, գիր ու գրականութեան և
արուեստի շնորհիւ՝ Իրանի ունեցած վիթխարի ազդե-
ցութիւնից աշխարհի վրայ. այլևս չէինք վրդով-
ւում բարձր դասակարգերի անիրաւութիւններից,
մոռացել էր հայրենասիրութիւնը, քաջութիւնը և
մաքուր զգացումները։ Սուտն ու կեղծիքը մեզ չէին
սարսափեցնում և ճշմարտութիւնը արհամարհւել էր։
Հետևաբար դրութեան խորքը թափանցելու և զգա-
լու համար այն բոլոր դժւարութիւնները, որ կանգ-
նած էին հօրս ճանապարհին, հարկադրւած եմ յետա-

դարձ հայեացք ձգելու այդ շրջանի իրադարձութիւն-
ների վրայ։

Ժամանակի պարագլուխների վարած թոյլ
քաղաքականութեան և անփութութեան հետևանքով,
տագնապալի այն օրերին, մեր հայրենիքը ենթարկ-
ւել էր օտար հոսանքների օր-աւուր աճող ներթա-
փանցումներին։

1185 (1807) թ-ին, Ֆաթալիշահը Ֆրանսիայի
կառավարութեան հետ կնքեց մի դաշնագիր։ Նապո-
լէոնը յոյս ունէր սոյն դաշնագրի շնորհիւ Իրանի
վրայով գրաւել Հնդկաստանը։ Դաշնագրում ասւում
էր, որ Ֆրանսիան պատրաստ է զինամթերք տալ
Իրանին և վարժեցնել սպայութիւնը, որպէսզի կա-
րողանային դիմագրաւել ցարական Ռուսիային, որը
վեց տարի առաջ Իրանից անջատել էր Վրաստանը։
Պետրոս Մեծի թագաւորութեան օրերից (1682 – 1725)
ռուսական կառավարութիւնը շահագրգռւած է եղել
Ռուսիոյ սահմանները տարածել մինչև Պարսից ծոցի
տաք ջրերը և տիրանալ նրա նաւահանգիստներին։
Սակայն՝ Նապոլէոնը հաշտութեան դաշինք կնքեց Ռու-
սիոյ հետ և հրաժարւեց Հնդկաստանը գրաւելու
մտքից։ Այս միջոցում Վրաստանը յետ գրաւելու մի-
տումով ձեռնարկեցինք մի անիմաստ արշաւանքի,
որի հետևանքները եղան կործանարար. 1813 թ-ին
կնքւեց Գոլեստանի դաշնագիրը, ըստ որի ոչ միայն
Վրաստանը վերջնականապէս բաժանւեց Իրանից, այլև
ձեռքից տւեցինք ութ ուրիշ նահանգներ, ինչպէս
նաև Կասպից ծովի ջրերում նաւատորմիղ ունենա-

լու իրաւունքը։

Ռուսները ևս աչք ունէին Հնդկաստանի վրայ։ այս պարագան անգլիացիների ուշադրութիւնը դարձրեց Ռուսաստանի ռազմագիտական բնական ճանապարհը համարուող Իրանի վրայ։ Հետևաբար՝ Ռուսիոյ ազդեցութեան դէմ վերջնականապէս կանգնելու նպատակով՝ 1814 թ-ին Անգլիան մեզ հետ կնքեց Բոմբէի դաշնագիրը։ Ըստ այս դաշնագրի՝ Բրիտանական կառավարութիւնը խոստանում էր ռազմական կամ նիւթական օժանդակութիւն ցոյց տալ Իրանին՝ ռուսական ոտնձգութիւնների պարագային։

1826 թ-ին, մի անգամ ևս պատերազմ բռնկուեց Իրանի և Ռուսիային միջև։ Բրիտանիան խուսափեց պէտք եղած օժանդակութիւնը ցուցաբերելուց և բաւականացաւ միջնորդելու խաղաղութեան համար։ Իրանը զուրկ լինելով ռազմական պատրաստութիւններից՝ հարկադրուած եղաւ դադարեցնելու պատերազմը և 1206 (1828) թ-ին ստորագրեց Թուրքմէնչայի անպատաւաբեր պայմանագիրը։ Դրա հետևանքով Իրանից բաժանուեցին ուրիշ տարածութիւններ և կցուեցին Ռուսիային։ Որոշուեց՝ Իրանը որպէս տուգանք, հսկայ գումարներ վճարի ռուսներին և զրկուի առևտրական և այլ արտօնութիւններից։

ԺԹ. դարում ռուսները համեմատաբար աւելի մեղմ ու խաղաղասիրական ընթացք որդեգրեցին մեր նկատմամբ, և երևութապէս մեզ օժանդակելու անուան տակ քաջալերեցին պատերազմի մտնել Աֆղանների դէմ։ Դա եթէ հիմք պիտի ծառայէր Իրանի արևելեան սահմանները ընդարձակելու խնդրին, ապա յանգեց Իրան-Անգլիա յարաբերութեանց ժամանակաւոր լարմանը, որովհետև Աֆղանստանը համարուում էր Հնդկաստանի պաշտպանողական յենակը։ Ի դէպ, ռուսները Թուրքմէնչայի պայմանագրով ոչ միայն հաստատուեցին Իրանի հիւսիսային շրջաններում, այլև իրենց ազդեցութիւնը տարածեցին արևելեան շրջանների վրայ։

Մենք աւելի շատ տուժեցինք Ռուս-Անգլիա առևտրական և քաղաքական մրցակցութիւնից. պիտի խոստովանել, որ այս խնդրում մեղքը ծանրանում է մեր վրայ։ Ղաջար արքաները պալատի շռայլ ծախսերը հոգալու համար առևտրական բազմաթիւ մենաշնորհներ էին պարգևում օտարներին։ Ամենաարտառոց մենաշնորհներից մէկը տուեց 1872 թ-ին՝ անգլիական հպատակութիւն ընդունած Բարոն Ջիւլիոս Դը Ռոյթերին, ժամանակի Սուլթանի կողմից, համաձայն որի Բարոն Ռոյթերը եօթանասուն տարով արտօնութիւն էր ստանում Իրանում հիմնելու երկաթուղագիծ և տրամուայ (ելեքտրաքարշ), ինչպէս նաև ջրաբաշխութեան, հանքերի, գործարանների, հեռագրական գծերի և մաքսային տուրքերի գանձման բնագաւառներում ձեռք է բերում որոշ իրաւունքներ։ Բայց հանրութեան գաղափարային պոռթկումները մի կողմից և ռուսների ճնշումները միւս կողմից՝ ստիպեցին Շահին լուծարքի ենթարկելու այն։ Շահը Ռոյթերին սիրաշահելու համար, նրան թոյլ-

տրուութիւն շնորհեց անգլիական դրամագլխով հիմնելու դրամատուն, որը երկար ժամանակով տիրացաւ թղթադրամ հրատարակելու մենաշնորհին։ Նաւթի և այլ հանքերի արտահանման խնդրում ևս նրան տրուեցին արտօնութիւններ, որոնք սակայն չարդարացրին նրա նիւթական ակնկալութիւնները։

Անգլիացիները հիմնեցին և կառավարեցին Իրանի հեռագրագիծը։ Քարուն գետի նաւարկութեան մենաշնորհը ևս տրուեց նրանց։ Ոմն անգլիացի ստացաւ ծխախոտի արտօնութիւնը, բայց անմիջապէս լուծարքի ենթարկուեց ժողովրդի լուսամիտ խաւերի, մասնաւորաբար հոգևորականութեան բուռն ընդդիմութեան շորհիւ։

Ռուսները այս ընթացքում շարունակում էին տարածել իրենց ազդեցութիւնը։ Նասրեդդին Շահի թոյլտուութեամբ նրանք կեանքի կոչեցին կոզակներից կազմուած մի բրիգադ՝ ռուս սպայութեան ղեկավարութեամբ։ Օտար կառավարութեան ենթարկուող այս Բրիգադը կարճ ժամանակում դարձաւ Իրանի զինուորական ամենաազդեցիկ ոյժը ... 1888 թուին ռուսներին տրուեց Կասպից ծովի հիւսիսային եզերքների ձկնորսութեան իրաւունքը։ 1891 թուին, Թեհրանում բացուեց ռուսական դրամատունը, որը անգլիացիների պէս տիրացաւ թղթադրամի հրատարակման արտօնութեանը։ Ռուսները չբաւականանալով այսքանով, վարկեր տրամադրեցին Իրանի Շահին՝ առաւել ևս ամրապնդելով իրենց ազդեցութիւնը այն իմաստով, որ շահագործելով տեսալ հանգամանքը, հետագային

յաջողեցին վաստակել առևտրական մենաշնորհներ։ Այն օրերին, նախ ռուսները և յետոյ այլ կառավարութիւններ, Իրանին պարտադրեցին կապիտուլացիան, որով Իրանը զրկուեց օտար տարրերի գործած անկաշկանդ կամայականութիւնները պատժելու իրաւունքից։

Ղաջար արքաների ինքնագլուխ և սանձարձակ ընթացքը ի վերջոյ լցրեց ժողովրդի համբերութեան բաժակը։ Կազմուեց սահմանադրական դաղափարականների միութիւն։ 1906 թուի թիր ամսին, աւելի քան տաս հազար հոգի առևտրականներ և սահմանադրականներ ամրացան անգլիական դեսպանատան այգում և այս քայլով, իրականում, ընդվզեցին Ղաջար թագաւորութեան և պալատի ապականութեան դէմ։ Նոյն օրերին, մի շարք լուսամիտ հոգևորականներ մայրաքաղաքից հեռու՝ Ղոմ քաղաքում կազմեցին իրենց ճակատը։ Շահը ստիպուած էր խոստումներ տալ բարենորոգչական իմաստով և երկու ամիս յետոյ հրատարակել սահմանադրութեան հրամանագիրը։ Սահմանադրականները, բացի ներքին կեանքի բարելաւումից, պահանջեցին ռուսական ազդեցութեան և հրահրումների անմիջական զսպումը։ Ոմանց տրամաբանութեամբ անգլիացիները զօրավիդ հանդիսացան սահմանադրականներին լոկ այն պատճառով, որ նրանք դէմ էին ռուսներին, բայց ըստ իս անգլիացիները նաև անկեղծ ցանկութիւն ունէին Իրանում հաստատելու սահմանադրութիւն։ Դրանով հանդերձ, շատ չանցած՝ 1907 թուականին ռուսների և անգլիացիների միջև կնքուած մի դաշնագրով որոշուեց իւրաքանչիւրի գոր-

ծողութեան սահմանը Իրանում։ Աֆղանիստանում և Թիբէթում։ Ակներև էր, որ այս դէպքը շարժեց սահմանադրականների վրդովմունքը։

Թէպէտ յիշեալ դաշնագրում կողմերը խոստացել էին յարգել Իրանի հողային ամբողջականութիւնն ու անկախութիւնը, բայց դա իրականութեան մէջ Իրանը բաժանում էր օտար ազդեցութեանց շրջանների։ Անգլիան երաշխաւորում էր Իրանի հիւսիսային շրջաններում որևէ արտօնութիւն չպահանջել և այս ուղղութեամբ արգելք հանդիսանալ ուրիշ պետութիւններին։ Ռուսները փոխադարձաբար խոստանում էին հրաժարուել Իրանի հարաւ-արևելեան շրջանի մի փոքրիկ մասից, որը յայտնապէս պիտի դառնար անգլիական ազդեցութիւնների շրջանը։

Նշած երկու շրջանների միջև ընկած տարածութեան մասին ոչինչ չէր ասուել դաշնագրի մէջ, որով՝ նախապէս տրուած բոլոր մենաշնորհները (դրանցից կարելի է մատնանշել աւստրալիական հպատակութիւն ընդունած Դ'Արսի անունով մի անգլիացու շնորհուած՝ նաւթի կարևոր արտօնութիւնը) մնում էին իրենց ոյժի մէջ։ Սակայն գործնականապէս՝ չէզոք համարուող այս շրջանում, անգլիական ազդեցութիւնը աւելին էր քան ռուսականը։

Ռուս և բրիտանական կառավարութիւնները, որ հետագային դաշնակցեցին Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքում, անտարբեր չէին կարող մնալ հետզհետէ ուժեղացող Գերմանիայի սպառնալիքի հանդէպ։ Նրանք յոյս ունէին, որ 1907 թուականի դաշ-

նագրով նուազի իրենց միջև գոյութիւն ունեցող մրցակցութիւնը և դա կը նպաստի միացեալ թշնամու դէմ առաւել սերտօրէն հանդէս գալու հանգամանքին։ Սակայն իրանցիների մօտ դա մեկնաբանուում էր որպէս՝ Իրանն կուլ տալու նպատակով նիւթուած մի դաւադրութիւն։ Ինչևիցէ, պայմանագիրը չարդարացրեց կողմերի յոյսը և Ռուս-Անգլիա մրցակցութիւնը այնպէս էլ շարունակուեց։

1906 թուին կազմուած Ազգային Խորհրդարանը, Իրանի ազգայնականների միջև ծագած անհամաձայնութիւնների հետևանքով՝ լուծուեց։ Եթէ Մոզաֆերդին Շահը թոյլ համակրանք էր տածում սահմանադրութեան նկատմամբ, ապա նրա որդին դրա ոխերիմ թշնամին էր։ Նա վճռեց ռուսների օգնութեամբ վերականգնել միապետութիւնը և այս նպատակի իրագործման համար երեք անգամ դաւադրութիւն կատարեց սահմանադրականների դէմ։ Առաջին անգամ սահմանադրականները գինուած դիմադրութեամբ ի դերև հանեցին նրա ծրագրները։ 1908 թուին, կազակային բրիգադի ռուս հրամանատարը ռմբակոծեց Խորհրդարանի շէնքը, որին յաջորդեց Շահի հրամանը՝ Խորհրդարանի լուծման առընչութեամբ։ Թուում էր Շահն ու նրա ռուս արբանեակները քամահրանքով էին տրամադրուած իրանցի ժողովրդի ոյժերի նկատմամբ։ Սահմանադրականները յաջորդ տարուայ մէջ ջախջախեցին կազակային բրիգադը։ Մոհամադ Ալի Միրզան փախաւ Ռուսաստան և նրա տասնամեակամեայ որդին՝ Ահմադ Շահը ժառանգեց արքայական գահը։

Մոհամմադ Ալի Միրզայի վերջին ճիգը՝ Կասպից ծովի ափերով Իրան սողոսկելու համար, 1911 թ-ին պակուեց անյաջողութեամբ և պարտութեամբ։

Այսպիսով սահմանադրականները ժամանակաւորապէս յաղթական դուրս եկան, բայց ռուսները ինչպէս Համաշխարհային Բ. Պատերազմից յետոյ, այնպէս էլ այդ օրերին իրենց բանակները յետ չքաշեցին մեր երկրի հիւսիսային շրջաններից։

Իրանի դրամական անմխիթար վիճակը բարւոքելու նպատակով, 1911 թ-ին Իրանի կառավարութեան նշանակումով երկրի ընդհանուր գանձապետի պաշտօնը ստանձնեց ամերիկացի Մորգան Շուստերը։ Նրան յաջողուեց շահել ժողովրդի լայն խաւերի վստահութիւնը և մօտ էր հասնելու գործի վերջաւորութեանը, երբ ռուսների կողմից Իրանին տրուած վերջնագրի (ուլտիմատում) այլ կէտերի շարքին, պահանջուեց նաև Շուստերի անյապաղ հեռացումը։

Ակներև էր, ռուսները չէին կամենում պարզուած տեսնել իրերի դրութիւնը Իրանում։ Ռուսական ոյժերը մտան հիւսիսային մի շարք քաղաքներ և խլեցին մարդկային զոհեր։ Թէև Ազգային Խորհրդարանը մերժեց ռուսների վերջնագիրը, բայց նախարարաց խորհուրդը ստիպուած եղաւ ընդունել դա։ Այս դրուագների մասին մանրամասնօրէն նկարագրուած է Շուստերի «Իրանի խեղդումը» խորագրով նշանաւոր գրքի մէջ։

Հակառակ այն իրողութեան, որ Համաշխարհային Ա. Պատերազմին Իրանն յայտարարել էր իր

չեզոք լինելու հանգամանքը, այդուամենայնիւ գերմանացիները, թիւրքերը, ռուսներն ու անգլիացիները ձեռնամուխ եղան ծաւալուն գործողութիւնների։ Գերմանացիներին օգնելու նպատակով դէպի Թեհրան շարժուող թուրքական բանակը պարտուեց ռուսներից։ Գերմանացի գործիչները ձեռ ու ոտ ընկած սկսեցին հրահրել լեռնաբնակներին և մինչև իսկ փորձեցին զինուորական ոյժ կազմակերպել Աֆղանիստանում, սակայն չյաջողեցին։ Իրանի հարաւում Սըր Փերսի Սայքսի ջանքերով ստեղծուեցին ոստիկանական ջոկատներ, ընդ որում նա տէր դարձաւ այս շրջանի կացութեանը։

Ա. Աշխարհամարտից յետոյ երկրի դրութիւնը հասել էր իր խառնաշփոթութեան գագաթնակէտին։ Ի դէպ, 1917 թ-ին, ռուսական յեղափոխութեան օրերին, Իրանի հիւսիսային շրջաններում բանակած ռուսական զօրքերը ենթարկուեցին անգլիացիների յարձակմանը, որը անցաւ ապարդիւն։ 1919 թ-ին անգլիացիները առաջարկեցին մի նոր պայմանագիր։ Դրա կարևոր կէտերից էին՝ վարկեր տրամադրել Իրանին, բերել կառավարական խորհրդականներ, հիմնել ճանապարհներ, երկաթուղագիծ և այլն։ Սակայն ելնելով այն հանգամանքից, որ մի այսպիսի պայմանագրի ստորագրումը առաւել ևս պիտի ընդլայնէր օտար ազդեցութիւնը Իրանում, հանրութիւնը ծառացաւ դրա դէմ։ Ճիշտ է, ժամանակի կառավարութիւնը ընդառաջեց անգլիացիներին, բայց Խորհրդարանը դա երբէք չվաւերացրեց։

Երկրի թուլությունն ու տկարությունը հասել էր այնպիսի փուլերի, որ հայրս և մեծ թվով հայրենասէրներ վհատած ու զայրացած՝ ականատես էին մեր հնամենի երկրի տխուր ճակատագրին։

Հայրս ծնել է 1256 թվին, Կասպից ծովի եզերքին տարածված Մազանդարան նահանգում։ Հակառակ Ղաջար արքաների, որ ինչպէս ասացի, սերում էին Թրքական ցեղից, հայրս իրանցի տիպիկ ընտանիքից էր։ Նրա հայրն ու պապը սպայի կոչումով ծառայել էին Իրանի զօրաբանակում։ Պապը՝ Իրանի և Աֆղանիստանի մէջ տեղի ունեցած մարտերից մէկի ընթացքում դրսևորել էր քաջություն և անձնազոհություն· հայրը՝ Մազանդարան Նահանգի վաշտերից մէկի հրամանատարն էր։ Դեռ քառասուն օր չանցած հօրս՝ Ռեզա խանի կեանքից, վախճանվում է հայրը և մայրը որոշում է իր փոքրիկ զաւակին փոխադրել Թեհրան։

Ճանապարհին ձմեռային սաստիկ ցուրտը մօտ էր խլելու մանկան կեանքը։

Հայրս տասնևչորս տարեկան հասակում ծառայության է անցնում կազակների բրիգադում, որ կազմվել էր իր ծննդեան թվին։ Նա այդ օրերին լրիւ անգրագէտ էր, որովհետև կրթությունը վերապահված էր հարուստ և ազդեցիկ անձանց, կամ հոգևորականության զաւակներին։ Ելնելով սեփական շահերից, բարձր խաւը արգելք էր հանդիսանում հասարակ ժողովրդի մէջ լուսաւորություն տարածելու գործին, որպէսի շահագործելով երկրում տիրող տգիտությունն ու խաւարամտությունը, անեն այն, ինչ ցանկանում են, այլ խօսքով՝ լինեն լիիրաւ տէրեր։

Երբ կատարվում էր հօրս թագադրությունը, համաձայն Իրանի պատմական և աւանդական սովորության, նրան տրվեց «Շահնշահ» (Արքայից Արքայ-ծ. թ.), «Զելօլլահ» (Աստուծոյ ստվեր), «Մոայեդէ բեթայիդաթ էլահի» (Աստուածային շնորհների արժանաւոր), «Ղեբլէ Ալամ» (Նա՝ որի վրայ ուղղված է աշխարհի հայեացքը) տիտղոսները· սակայն իր թագաւորության օրերին, թէ այն դէպքում, երբ օտար հիւրեր էր ընդունում պալատում, թէ ինձ հետ խօսելիս, սիրում էր իրեն համարել հասարակ զինուոր։

Հօրս արագ վերելքին ու յառաջադիմության նպաստում էին նրա բնատուր ընդունակությունները ու բարձր անձնականությունը։ Այն օրերին Իրանի զօրաբանակը զուրկ էր փոխարինող սպաներից, ուրիշ խօսքով, հասարակ զինուորի էտապից աստիճանական տեմպերով բարձրացած սպաներից։ Հետևաբար ծառայության ընթացքում հասարակ զինուորը կարող էր միանգամից ոստնել սպայության աստիճանի։ Սովորաբար, այսպիսի մի բարձրացում նախընթաց չի ունեցել Իրանի զօրաբանակում, բայց գալով հօրս՝ չպիտի անտեսել նրա ցայտուն անձնականությունը։ Նա ունէր լայն ուսեր, սլացիկ հասակ, առնական դիմագծեր ու արտայայտություն, բայց ամենից աւելի տպաւորիչ էին նրա խորաթափանց աչքերը, որոնք ազդում էին բոլոր նրանց վրայ, ովքեր դէմ առ դէմ էին կանգնում նրա հետ, սարսում էին նոյնիսկ ուժեղ

անձանց։ Լսել եմ, որ Իրանի կոզակ բրիգադի ռուս հրամանատարները խուսափում էին նրանից և գործնականապէս սարսափում։

Մի այլ հանգամանք, որ նպաստեց հօրս արագ վերելքին, նրա ընթերցասիրութիւնն էր։ Նա չէր ամաչում այն բանից, որ բարձր տարիքում էր սկսում կրթուել ու գրաճանաչ դառնալ։ Ամեն օր զինուորական աշխատանքներից յետոյ, նա մեծ համբերութեամբ, զօրանոցի աղօտ լուսաւորութեան տակ, իր ընկերներից մէկի օգնութեամբ գրում էր և կարդում։ Յոգնած պահերին դուրս գալով իր փոքրիկ սենեակից, դիտում էր հեռուում առկայծող Թեհրանի լոյսերը։

Այն օրերին ոչ ոք տրամադրուած չէր դէպի զինուորական կեանքը։ Կառավարութիւնը ի զօրու չլինելով գանձել սովորական տուրքը, անկարող էր կանոնաւորապէս վճարելու պետական շրջանակների ռոճիկը։ Դա էր, որ զինուորութիւնը ստիպուած էր իր և իր ընտանիքի ապրուստը հոգալ՝ մերթ ձուեր վաճառելով, մերթ զբաղուելով փայտահատութեամբ կամ նման աշխատանքներով։ Պետութեան կողմից, հազուադէպ պարագային, ռոճիկի անուան տակ տրուող նպաստը սահմանափակուում էր աղիւսներով և այլ շինարարական նիւթերով, որովհետև սովորաբար պետական գանձարկղը դատարկ էր լինում կանխիկ դրամից։ Հայրս պատմում էր, որ արտաքին գործոց նախարարութիւնը մի օր պիտի հիւրընկալէր ինչ-որ կարևոր մի անձնաւորութեան։ Զուներնալով և ոչ մի

շահի, նախարարութիւնը հարկադրուած է լինում անհրաժեշտ պատրաստութիւնների համար պարտք հայցել շուկայի մանր առևտրականներից...

Զօրաբանակի կազմակերպութիւնը հին էր ու խախտուած։ Հնաոճ ու մաշուած էին զէնքերն ու պիտոյքները (ողջ զօրաբանակում գոյութիւն ունէին լոկ մի քանի հին թնդանօթներ)։ Ընկած էր զինուորութեան ոգին։ Բայց հօրս վրդովում էր աւելի այն հանգամանքը, որ օտարների ձեռքին էր զօրաբանակի հրամանատարութիւնը։ Կարելի է դիւրին ենթադրել, ինչ հոգեվիճակ է ապրել հայրս, երբ զգացել է, որ իրեն տրուող հրամանները առաքուում են ոչ թէ Իրանի մայրաքաղաքից, այլ Ռուսիոյ մայրաքաղաքից։ Ըստ իս, հօրս մէջ բուռն հայրենասիրութիւնն ու նացիոնալիզմը զարգացել էր նրանից, որ լիովին ըմբռնել էր օտարների տիրապետութեան ճշմարիտ իմաստը...

Իր զինուորական ու սպայական կեանքում հայրս մասնակցել էր բազմաթիւ, մասնաւորաբար զանազան կէտերում քաղաքներն ու աւանները կողոպուտի ու աւերածութեան մատնող ինքնագլուխ և անսանձ լեռնաբնակների դէմ մղուող մարտերին։ Իրանի պատմութիւնը վկայում է, որ երբ թոյլ ու անկարող է եղել կենտրոնական կառավարութիւնը, լեռնաբնակները անցել են սպանութեան ու կողոպուտի և ընդհակառակը՝ լիարժէք շինարարներ են եղել երբ պետութիւնը ի վիճակի է եղել զսպելու և խաղաղացնելու նրանց։ Հայրս լեռնաբնակների դէմ ոյժով հանդէս գալու առաջադրանքից բացի, յաճա-

խակի բախումներ էր ունեցել բանակներ կազմած աւազակների հետ, որոնք խախտում էին ընդհանրական անդորրութիւնն ու ապահովութիւնը, իսկ ռուսական յեղափոխութիւնից յետոյ միանալով բոլշևիկներին՝ կամենում էին տիրանալ երկրին։

Յիշողութեանս մէջ անջնջելիօրէն տպաւորւել է հօրս այն պատմածը, թէ ինչ ապրումներ է ունեցել աւազակների դէմ մղւող մարտերից մէկի ընթացքում։ Կուի թէժ պահին, պատմում էր հայրս, այնպիսի խորշանքով է լցւել երկրի քաոսային վիճակի նկատմամբ, որ դիտաւորեալ կերպով կանգնել է սուրացող գնդակների տարափի տակ։ Սպիտակ ձիու վրայ նստած հայրս լաւ թիրախ կարող էր ծառայել աւազակներին, բայց արձակւած գնդակներից և ոչ մէկը չէր դիպել նրան։

Պէտք է ճշտել, թէ որոնք էին հօրս այդ ապրումի շարժառիթները։

Այսօր հոգեկան աչքերով տեսնում եմ նրան, նստած սպիտակ ձիու վրայ, երկրի վրդովեցուցիչ վիճակի ամօթը դրոշմւած առնական դէմքին։ Յիրաւի, այդ օրերին երկիր անունը չէր պատշաճի Իրանին, քանզի դարաւոր այս հողը զուրկ էր պետութեան կոչմանը արժանի՝ կենտրոնական կառավարութիւնից։ Երկրի շրջանների մեծ մասը ճզմւում էր տեղական տէրերի արիւնոտ թաթի տակ, որոնք եթէ առերեւութապէս Շահի պատուից ելնելով հաւատարիմ էին նրան, ապա գործնականապէս ոչ այլ ինչ էին, քան լիիրաւ ինքնագլուխներ, որ կանգ չէին առնում ամեն

տեսակ անարդարութիւնների և ճնշումների առջև։ Զկար կանոնաւոր և նոր միջոցներով օժտւած բանակ, եղածն էլ չէր կարող փայլել հպատակութեամբ ու հաւատարմութեամբ։ Ապահովութիւնն ու կարգ ու կանոնը լքել էին Իրանի հողը։ Լեռնաբնակ խանների և կրօնական պարագլուխների ձեռքով էր դառնում արդարադատութիւնը։ Ամենուրեք տիրում էր ուժեղի իրաւունքը թոյլի վրայ։ Ով ուժեղ էր՝ կողոպտում էր ու չարչարում, ով թոյլ էր՝ տուժում էր ու լռում։

Հասարակական ապահովութիւնը հասել էր մի այնպիսի անմխիթար դրութեան, որ մինչև իսկ Թեհրանում՝ երկրի մայրաքաղաքում՝ մթնելուց յետոյ, բնակիչները յայտնւում էին փողոցներում կամ շուտափոյթ բժիշկ հրաւիրելու նպատակով, որ դժւար իրագործելի էր, և կամ նման անհրաժեշտութիւններից դրդւած, քանզի թաղերում թրև էին գալիս տեղական սրիկաներ ու գողեր։ Կապի և փոստային միջոցները, Դարեհի ժամանակւանից, օր աւուր վատթարանում էին և դարձել էին այնքան անվստահելի, որ Թեհրանից Մեշեդ ուղևորւող ճանապարհորդները աւազակներից խուսափելու նպատակով, հարկադրւած էին անցնել Ռուսիոյ վրայով։ Նոյնն էր հարաւային նահանգ՝ Խուզիստան մեկնող ուղևորների վիճակը, որոնք նախընտրում էին Թուրքիայի և Իրաքի ճանապարհները։

Ինչպէս ասացի, կապիտուլասիոնի հետևանքով օտարահպատակները, (դրանց թւում բոլշևիկները, որ մեծ խմբով թափանցել էին Իրան) զերծ էին մնում

գործած յանցանքների դիմաց Իրանի դատարաններում դատելու հանգամանքից։ Իրականությունն էլ այն է, որ գոյություն չունեին այսպիսի մի պարտականություն ստանձնող ազդեցիկ և բանիմաց անհատներ։ Եւ բնականաբար օտարների մոտ դա զօրաւոր խթան կարող էր հանդիսանալ կապիտուլյասիոնը շարունակելու օգտին։ Էկոնոմիկայի մէջ չունէինք լրիւ անկախություն, քանի որ Ղաջար արքաները տնտեսական այլազան մենաշնորհներ էին պարգևել օտարներին։ Արտաքին ոյժերն ու ներքին սանձարձակ աւազակային խմբերը բովանդակ երկրում վարում էին իրենց ցանկությունների համաձայն։ Երկրով մէկ թագաւորում էին աղքատությունն, հիւանդությունն, տգիտությունն, անճարությունն և դժգոհությունն։ Ժողովրդի և երկրի այս բոլոր դժբախտություններն անտեսած, ժամանակի Սուլթանը մտահոգված էր սոսկ նրանով, թէ ինչպէս դասաւորի իր մեծածախս ճանապարհորդությունները, իւրայատուկ հաճոյքներն ու անվայել արարքները Եւրոպայում։ Հայրենասէր անհատը տեսալ դրությամբ ուրիշ ի՞նչ կարող էր զգալ, եթէ ոչ ամօթ ու ճնշածություն։

Ընդունված է, որ ժամանակի լուծը, իրադրությունների անհրաժեշտությունը և ժողովրդի հակումները պահանջում են որ որոշեալ պահին երևան գայ կարող մի անձնաւորություն՝ փրկելու համար կացությունը։ Նա շրջում է երկրի ճակատագիրն ու փոխում է պատմության ուղին։ Կան ապացոյցներ, որոնք վկայում են, որ հայրս այդ օրերին պիտի

լինէր ասված անձնաւորությունը։

1298 թ-ին, կոզակային բրիգադը դեռևս գեկավարում էր ռուս սպաների ձեռքով։ Դրանք անունով սպիտակ ռուսներ էին, բայց ոմանք իրենց վաճառել էին բոլշևիկներին։ Դաւաճանությունը ի յայտ է գալիս այն պահին, երբ բրիգադը առաջադրանք է ստանում մարտի բռնելու երկրի հիւսիսային նահանգները մտած կարմիր ռուսների դէմ։ Հօրս նացիոնալիստական ոգին նրան անդառնալիօրէն համոզեց, որ Իրանը պիտի ազատագրել բոլոր ռուս սպաներից։

1298 թ-ի Մորդադ ամսին, հայրս անսալով իր սրտի ձայնին, ձեռնարկեց ռուս սպաների մաքրագործմանը և ստանձնեց բրիգադի հրամանատարությունը։ Իրանի կառավարությունը անմիջապէս հաստատեց ու վաւերացրեց հօրս քայլը։ Հայրս չթաքցրեց իր այն կարծիքը, որ պէտք է նաւազատոյնի հասցնել օտարների ամեն տեսակ գործողությունները։

Այնուհետև, հայրս արագօրէն անցաւ զարգացման և ոյժի փուլերը և տիրացաւ կատարեալ հզօրությեան, որին նպաստեց նաև նրա միացումը ակտիւ խմբագիր Սէյեդ Զիաէդդին Թաբաթաբայուհետ։ Սա, որ հոգևորականի զաւակ էր, ամենայն համարձակությամբ բազմաթիւ քննադատական յօդուածներով հանդէս էր գալիս կառավարության պասիւ գործունէության և երկրի ցաւոտ խնդիրների դէմ։ Լինելով յեղափոխական հայեացքների տէր, նա կարող էր քաղաքական յարձակումներով ճնշում գործա-

դրել երկրի ղեկավարների վրայ այն պահին, երբ հայրս զինու զորութեամբ սպառնում էր երկրի մայրաքաղաքին։

Հօրս ոյժերի յառաջխաղացը դէպի Թեհրան սկսեց Իրանի հիւսիս-արևմտեան շրջանի քաղաքներից՝ Ղազվինից և 1299 թ-ին պետական հարուածով, որ հեռու էր արիւնոտ լինելուց, վերացրեց Իրանի թոյլ ու խախուտ կառավարութիւնը։ Սէյէդ Զիաէդդինը դարձաւ նախարարաց խորհրդի պետ, իսկ հայրս ստանձնեց ռազմական նախարարի փոստն ու ընհանուր ոյժերի հրամանատարութիւնը։

Շատ չանցած՝ երկրի մոնոպոլիստական և պահպանողական տարրերը լաւեցին Սէյէդ Զիաէդդինի դէմ, նրա ծայրայեղական գործողութիւնների հետևանքով։ Ինձ թւում է՝ հայրս հակառակ էր Սէյէդ Զիաէդդինին ոչ թէ քաղաքական կամ էկոնոմիկայի խնդիրներում, այլ նրա սխալ կողմնորոշման ու ժամանակավրէպ վարելակերպի խնդրում։ Դա էր, որ հայրս դէմ չեղաւ, երբ պետական հարուածից երեք ամիս անց Ահմադ Շահը նախարարապետ նշանակեց մի այլ անձնաւորութեան։

Յաջորդական կաբինետներում, հայրս շարունակում էր վարել ռազմական նախարարի փոստը և միաժամանակ, հարկաւ, միակ ազդեցիկ անձնաւորութիւնն էր։ 1301 թ-ին նշանակուեց երկրի վարչապետ, որից անմիջապէս յետոյ Ահմադ Շահը անորոշ ժամանակով մեկնեց Եւրոպա։

Հօրս վարչապետ դառնալուց մէկ տարի առաջ,

թիւրքերը վերջ տալով խալիֆայական հին վարչակարգին Քեմալ Աթաթուրքի առաջնորդութեամբ հիմնել էին հանրապետական իրաւակարգ։ Թիւրքիայի իրադարձութիւններից ազդուած՝ որոշ շրջանակներում ծայր է առնում Իրանում ևս հանրապետական իրաւակարգ ստեղծելու միտքը։ Համոզուած եմ, որ հայրս ևս, մի որոշ ժամանակ յարում էր նոյն կարծիքին։ Բայց հասարակութիւնը հաւատարիմ մնալով հազարաւոր տարիների սովորութեան, հանդէս էր գալիս թագաւորական սիստեմի օգտին։ Աւելին. զանազան նահանգներում սահմանադրականները տենդօրէն պաշտպանում էին միապետական սահմանադրութիւնը։

1303 թ-ին, Իրանի պառլամենտը չեղեալ յայտարարեց Եւրոպայում դեգերող Ահմադ Շահի թագաւորութիւնը և հօրս հռչակեց որպէս Իրանի Շահընշահ։ 1304 թ-ի Օրդիբեհեշտ 4-ին տեղի ունեցաւ հօրս պաշտօնական թագադրութիւնը, որի ընթացքում ինձ շնորհուեց թագաժառանգի կոչումը։

Տեղին է համեմատել Իրանի այդ օրերի ընդհանուր վիճակը մեր հարևան Թիւրքիայի հետ, ուր մեկնեց հայրս 1312 թ-ին՝ կատարուած յառաջադիմութիւններին մօտիկից ծանօթանալու. ինչպէս նաև երկու երկրների քաղաքական ու մշակութային յարաբերութիւնները ամրապնդելու նպատակով։ Խալիֆաթի անկումից յետոյ Թիւրքերը մօտիկ շփման մէջ լինելով արևմտեան երկրների հետ և ընդօրինակելով քաղաքակրթութեան նորագոյն նուաճումները, արդէն իսկ առաջ էին անցել մեզանից։ Գերմանա-

կան դաստիարակութիւն ստացած նրանց զօրաբանակը կանոնաւոր էր, օժտուած զինուորական համալսարաններով ու վարժուած սպայակոյտով։ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանք դրսևորել էին քաջութիւն, և պարտութեան էին մատնել դաշնակից ոյժերի ամենալաւ զօրաբանակներին։ Հակառակ ապակենտրոն իրաւակարգի, որ գոյութիւն ունէր Իրանում հօրս իշխանութիւնից առաջ, թիւրքերը ունէին կենտրոնական ուժեղ կառավարութիւն։ Աւելին. նրանք հիմնել էի երկաթուղագծեր, նաւահանգիստներ, գործարաններ և այլն. մինչդեռ մեզ մօտ համարեա՛ զէրօ էին քաղաքակրթութեան նորութիւնները. և բնականաբար դրան հասնելու համար Իրանի ուղին շատ աւելի երկար էր ու դժուարին, քան Թիւրքիայինը։

Հայրս զգուշական քայլեր վերցնելիս, համամիտ չէր ամենափոքրիկ զանցառութեան և իր իւրաքանչիւր որոշման կիրառման փուլին, արագութեանը, զուգորդում էր խնդրի իրական ու բազմակողմանի ուսումնասիրութիւնը ամենայն ուշադրութեամբ ու սառնասրտութեամբ, հեռու որևէ ազդեցութիւնից։ Օրինակ, պետական հարուածից միայն հինգ օր յետոյ, Իրանը և Ռուսիան ստորագրեցին դեռևս Իրանում նախընթաց չունեցող մի պայմանագիր, որը երկար ժամանակ կազմաւորման մէջ էր. այդուամենայնիւ, հայրս, ինչպէս սովոր էր վարել ռազմական գործողութիւնների ընթացքում, այնպէս էլ այստեղ դրսևորելով կտրուկ տակտիկա, պայմանագիրը յանձնեց

վերջնական վաւերացման։

Համաձայն պայմանագրի՝ Ռուսիան հրաժարւում էր իր բոլոր պահանջներից ու իրաւունքներից, որ ձեռք էր բերել Իրանում։ Իրանին յանձնուեցին ռուսական շատ հաստատութիւններ, դրանց թւում՝ Ռուսական դրամատունը, սահմանային Ջուլֆա քաղաքից Թաւրիզ ձգուող երկաթուղագիծը, Կասպից ծովի ափին գտնուող Էնզելի (ներկայում Փեհլևի) նաւահանգստային սարքաւորումները, մայրուղիներ ու հեռագրագծեր։ Թուրքմանչայի պայմանագրով Իրանից խլուած Կասպից ծովի առևտրական նաւարկութեան իրաւունքը հաւասարապէս բաժանուեց երկու երկրների միջև։ Աւելին. լուծարքի ենթարկուեց ժողովրդի խորշանքին արժանացած կապիտուլյասիոնը։ Սոյն պայմանագրի ստորագրումը իրանցիների մօտ ընկալուեց որպէս ցարական Ռուսիայի քաղաքականութեան փոփոխութիւն, որը հետագային որդեգրեց նաև Խորհրդային Միութիւնը։

Նոյն օրերին հայրս և կառավարութիւնը չեղեալ յայտարարեցին Իրանս-Անգլիական 1927 թւի պայմանագիրը։ Ինչպէս ասել է նախօրօք յիշեալ պայմանագիրը թէև ստորագրել էր ժամանակի Սուլթանի կողմից, սակայն Ազգային Խորհրդարանը մինչև վերջ էլ հրաժարուեց դրա վաւերացումից։ Անգլիացի և օտարազգի մի շարք խորհրդականներ արդէն սկսել էին իրենց գործողութիւնները պայմանագրի համաձայն. Իրան էին մուտք գործել նաև անգլիացի մի խումբ ճարտարապետներ, որ զբաղուած էին երկաթուղագը-

ծերի նախագծերը կազմելու աշխատանքով։ Բայց հայրենասէրների բուռն դիմադրութիւնը ի վերջոյ յանգեց պայմանագրի լուծարքին։

1301 թուին անգլիական ոյժերի վերջին մնացորդները հեռացան Իրանից։ Ռուսական ոյժերի մի մասը, այնուամենայնիւ, հակառակ մեր ցանկութեան ու իրաւունքի, այնպէս էլ մնաց Իրանում, որով չաւարտուեցին Ռուսիայի զինուորական միջամտութիւնները մեր երկրում։ Այս կարևոր կէտի մասին մանրամասնօրէն պիտի անդրադառնամ յաջորդ գլխում։

Վերոյիշեալ իրադարձութիւններին համընթաց, հայրս իր ամբողջ ոյժով լծուել էր երկրի ներքին խնդիրների բարելաւմանը։ Նրա վաղ երազանքն էր միաւորելու Իրանի քայքայուած ու մասնատուած շրջանները, և իր առաջին գործը եղաւ անցնելու տեալ խնդրի իրագործմանը, որի համար, հարկաւ, անհրաժեշտ էր հզօր ու կանոնաւոր զօրաբանակ։ Ընդհանուր ոյժերի հրամանատարութիւնը ստանձնելու հէնց առաջին օրից, նա նպատակադրեց միաւորելու կոզակային բրիգադը, հարաւի ոստիկանական ոյժերն ու ժանդարմերիան և զօրաբանակի այլ տարրերը։ Զինուորութեան ուսեստը, ռոճիկների կանոնաւոր վճարումն ու զինուորական արդի դաստիարակութիւնը դարձան նրա գլխաւոր հոգսն ու ուշադրութեան առարկան։ Մեծ ջանքեր գործադրեց բարձրացնելու զինուորութեան ոգին, և այն, որ իւրաքանչիւր զինուորի մէջ երևան գայ հպարտութեան հետ միախառնուած հայրենասիրութեան զգացում։

1304 թուին Իրանի զօրաբանակը կազմուած էր հինգ հիմնական դիւիզիաներից, մէկ անկախ բանակից, ինչպէս նաև զինուած աւազակութեան, ճանապարհների և ընդհանուր առմամբ երկրի ապահովութեան համար պայքարող կազմակերպութիւնից։ (Ճամբաների վտանգաւոր կէտերում հայրս շինել տուեց աշտարակներ, որտեղից ժանդարմները յարատևօրէն հսկում էին շրջապատին)։ Հետագային Իրանի զօրաբանակը վերաճեց նաև ծովոյժով ու փոքրիկ օդոյժով։ 1305 թուին, վաւերացուեց զինակոչութեան օրէնքը, որը վերանայուեց 1306 և 1311 թուերին։ Հիմնուեցին երկու զինուորական դպրոցներ։ Զինուորական կրթութիւն ստանալու գծով Ֆրանսիա մեկնեցին իրանցի երիտասարդներ, և փոխարինաբար հրաւիրուեցին Ֆրանսիացի զինուորական խորհրդականներ՝ պաշտօնավարելու համար Իրանի զօրաբանակում։

Հօրս մտերիմ ընկերներից մէկը պատմում էր, որ երբ հայրս իր ոյժերով հաստատուեց Թեհրանում, մի օր, ինչ-որ անհանդիստ քրթմնջում էր քթի տակ, և յետոյ յանկարծ բարձրաձայն գոչեց. «Երանի ուներնայի հազար հատ միատեսակ հրացան»։ Պարզ է, որ այդ օրերին նա մտահոգուած էր ապահովութեան ու դիսցիպլինի ստեղծումով։ Ինչևէ հօրս այս կարճ նախադասութիւնն էլ բաւական է զգացնել տալու, թէ որքան թերի էին ռազմական միջոցները այդ օրերին։ Պատահական չէ որ շատ չանցած, նա ձեռնարկեց հիմնելու գործարաններ, որոնք պիտի թողարկէին հրացաններ, գնդացիրներ և թեթև զէնքերի գնդակներ։

Մինչև այսօր էլ նրա ջանքերով հիմնված յիշեալ գործարանները աշխատում են երկրի այլ ռազմաթեքաշինական գործարանների շարքին։

Զուգընթաց ասված աշխատանքներին, հայրս բազմաթիվ զօրաշարժերով հանդէս եկաւ երկրի ապահովութիւնը ամրապնդելու օգտին։ Ի դէպ, նա պարտութեան մատնեց և ցրեց Միրզա Քուչէք Խանի ոյժերը, որոնք յարելով համայնավար խմբաւորումներին և մինչև 1301 թւականի պայմանագրի ստորագրումը վայելելով ռուսների հովանաւորութիւնը, իրենց թաթն էին դրել Կասպից ծովի առափնեայ նահանգների վրայ։ Նոյն ճակատագրին ենթարկուեցին նաև անգլիացիների հրահրումներով Ֆարս, Խուզիստան և Բալուչեստան նահանգներում տէրութիւն անող «իլերն» ու լեռնաբնակները։

Երբ հայրս սպայական կոչումով ծառայում էր կողակային բրիգադում, մի օր իր վաշտով Թեհրանից գործուղուել էր Համադան։ Վաշտն ունէր միայն մէկ ձի, որ օգտագործւում էր հիւանդների փոխադրման համար։ Ճանապարհները այնքան դժուարանցանելի էին, որ երբեմն քայլելն անգամ դառնում էր անհնարին։ Տառապանքներում կոփուած և հազար ու մէկ դժուարութիւններ տեսած հայրս հասնելով տեղ՝ թուլացած ընկնում է անկողին՝ ապաքինելու համար վիրաւոր ու տանջուած ոտքերը։ Փորձը իր դրական արդիւնքը ցոյց տուեց հօր՝ Իշխանութեան գլուխն անցնելուց յետոյ։ Լիովին ըմբռնելով ճանապարհների ու կապի անհրաժեշտութիւնը, նա անմիջապէս ձեռնարկեց ճանապարհաշինութեան, որով հնարաւոր պիտի դառնար ապահովութեան ամրապնդումը երկրում։

Ճարտարագէտների վկայութեամբ, 1305 թւից մինչև 1317 թւի ժամանակամիջոցում կառուցուած Իրանի ընդհանուր երկաթուղագիծը թերևս միակն է, որ պատրաստուել է մի այսպիսի արագութեամբ։ Իր ճարտարապետական տեսակներով, Իրանի ընդհանուր երկաթուղագիծը նշանակալից է աւելի, քան Շուեցարիայի յայտնի երկաթուղագիծը։ Դա անցնում է 54 մղոն երկարութեամբ՝ աւելի քան 4100 կամուրջների վրայով և 224 թունելների միջով։ Դրանցից մէկի երկարութիւնը երկու մղոն է, ուրիշները տեղադրուել են ամուր ժայռերի ոլորտներում, ընդամին իրենց ընթացքում ունենալով բազմաթիւ պտոյտներ ու կեռմաններ։ Աւելի քան 900 մղոն երկարութեամբ՝ բուն գծի ծախսերը (այսօր դրանից ճիւղաւորուում են նորահիմն գծեր, որոնք ձգւում են երկրի այլ շրջանները) հոգացուել են շաքարի, շաքարաւազի և թէյի մաքսային եկամուտներից։ Ճիշտ է, դա մեծապէս ծանրանում էր գիւղացիութեան ու բանւորութեան վրայ, որոնց կանխիկ եկամուտը յաճախ տրամադրուում էր թէյի ու շաքարի սպառմանը։ Ընդհանրապէս հայրս թերահաւատ էր օտար օգնութիւնների նկատմամբ և չէր մոռանում այն վնասները, որ կրել էին իր նախորդները օտարների շնորհած պարտքերից։ Դրանով հանդերձ, երկաթուղագծերի շինարարութիւնը է՛լ աւելի արագացնելու նպատակով, նա անկողմնակալօրէն վարձել տուեց օտարազգի մասնագէտներ։

Հայրս հիմնեց կարևոր մայրուղիներ, Կասպից ծովում և պարսից ծոցում՝ նաւահանգիստներ, օդային ներքին և արտաքին տրանսպորտ։ 1309 թուին իւրացուեց անգլիական «Հնդեւրոպական հեռագրային Ընկերութիւն»-ի ինւենտարը։

Հանդէս գալով Իրանի ֆինանսի և դրամի անկախացման օգտին, նա ազգայնացրեց դրամի հրատարակումը և հիմնեց Իրանի Ազգային Դրամատունը (Բանկէ Մելլիյէ Իրան), որի կառավարումը յանձնարարեց իրանցի արժանաւոր պաշտօնեաների։ Պաշտօնեաների վիճակի բարւոքման ուղղութեամբ կառուցեց ակումբ, լողաւազան, հանգստի վայր, մարզարան, հիւանդանոց և արդիական տպարան։ Շատ չանցած՝ երկրի զանազան կէտերում բացուեցին Բանկէ Մելլիի ճիւղերը։ Կազմուեց երկրի ել ու մուտքի առաջին բիւդջէն։ Ֆինանսը կարգաւորելու նպատակով հայրս հրաւիրեց ամերիկացի հմուտ մասնագէտ՝ Դր. Էրթէր Սի Միլիսպոյին։ Հինգ տարի Իրանում պաշտօնավարելուց յետոյ, նա կրկին վարձուեց նոյն պոստի համար։ Այս երկու այցելութիւնների ընթացքում Իրանից ստացած իր տպաւորութիւնների մասին Միլիսպոն հրատարակել է երկու գիրք։

Երբ հայրս դարձաւ երկրի կացութեան տէրը, Իրանը բացառեալ մի քանի էլեկտրակայաններից, մէկ լուցկու գործարանից և նաւթի զտարանից, որոնք պատկանում էին օտարներին, զուրկ էր արդիւնաբերութեան այլ ճիւղերից։ Հայրս նպատակադրել էր և աշխատում էր, որ Իրանը, առանց օտարների օգնութեան, ի վիճակի լինի հայթայթելու արդիւնաբերական պէտքերը երկրից ներս։ Նրա թագաւորութեան օրօք երկրում շարք մտան բամբակի, բրդի, մետաքսաշինութեան, կաշւի, կօշիկի, կոճակաշինութեան, բրնձի, շաքարի ու շաքարաւազի, թէյի, գլանիկի, բուսական իւղի, պահածոյի, թղթի, ցեմենտի, աղիւսի, ապակու, դեղաշինութեան և ինչպէս ասւեց՝ զէնքի ու ռազմամթերաշինութեան գործարաններ։ Գործարաններից ոմանք հիմնուեցին պետական կապիտալով, ոմանք պետութեան և իրանցի կապիտալիստների միատեղ մասնակցութեամբ, ոմանք զուտ իրանցի կապիտալիստների ներդրումներով։ Դրանց համընթաց հայրս հաստատեց մի շարք պետական սահմանափակումներ արտաքին առևտրի խնդրում, որով ի դէպ կասեցուում էր Խորհրդային Միութեան ներմուծումների հոսանքը դէպի Իրան, որոնք հնարաւոր էր իրենց ժանութեամբ վնասէին իրանական շուկաներին։ Հիմնեց առաջին բազարը, ինչպէս նաև տարածուեց դրամի միաւորն ու նորագոյն չափերի սիստեմը։ Վերցուեցին հին չափերը, որոնց առջև դժուարանում էին մինչև անգամ սուֆիները։

Հօրս կարգադրութեամբ, օտար պետութիւնների հետ կատարուող նամակագրութիւններից ու կապերից ընդմիշտ վերացուում էր «Փերժիա» բառը և գործածութեան մէջ էր մտնում «Իրան»ը։ Յիշում եմ, համաշխարհային Բ. պատերազմի ընթացքում Ուինսթըն Չըրչիլը ինչ որ անհանգիստ՝ բայց և թեթեւակի ակնարկելով նշել էր, որ ոչ ոք չի կարող նրան

ստիպել Փերժիայի մասին խոսել առանց գործածելու «Փերժիա» անունը։ Վերջերս երկրի մտաւորականութեան խնդրանքով համաձայնուեցի «Փերժիա» և «Իրան» երկու անուններն էլ օգտագործուեն ըստ այնմ։

Ելնելով հօրս երիտասարդական օրերի շրջապատից, թերևս ստացուի այն տպաւորութիւնը, որ նա անտարբեր պիտի մնար հասարակական և մշակութային խնդիրների նկատմամբ, սակայն իրականում դա միանգամայն հակառակն էր։ Նրա ջանքերով, 1305 թ-ին, Իրանում կիրառուեց արդարադատական նոր օրէնսդրութիւն, որի սկզբունքները համապատասխանում էին Եւրոպական շատ երկրների՝ մասնաւորաբար Ֆրանսիայի արդարադատական օրէնքներին։ Այսպիսով բոլոր դատերն ու քրէական հարցերը, որ ընդհանրապէս լուծում էին գտնում հոգևոր դատարաններում, դրուեցին բնականոն հունի մէջ։ Յաջորդ տարուայ ընթացքում, հայրս վերջնականապէս լուծարքի ենթարկեց կապիտուլասիոնը։ Չնայած այն հանգամանքին, որ երկրի ուսուցչութեան թիւը բաւարար չէր, այնուամենայնիւ երկրում, Եւրոպական այլ երկրների պէս, ստիպողական յայտարարուեց ձրի դրաճանաչութիւնը և անմիջապէս զարկ տրուեց տարրական և միջնակարգ նոր դպրոցների կառուցման աշխատանքներին։

1312 թ-ին հիմնուեց Թեհրանի համալսարանը, որը գրաւում էր մի հսկայ տարածութիւն և օժտուած էր արդիական յարմարութիւններով։ Նրա թագաւորութիւնից առաջ, քչերին էր յաջողւում կրթութեան

նպատակով մեկնել Եւրոպա, սակայն իր օրերին վաւերացուեց արտասահման մեկնող ուսանողութեան օրէնքը և յանձնուեց գործադրման, որով իւրաքանչիւր տարի հարիւրաւոր իրանցի երիտասարդներ էին ուղևորուում Եւրոպա, լրացնելու ուսման թերին։

Սա համառօտ մի ակնարկ էր այն բոլոր հիմնական ու ծաւալուն բարեփոխումների վրայ, որ կենսագործուեց հօրս ձեռքով, իր մէջ ընդգրկելով երկրի բոլոր խնդիրները։ Հետագային վերցրած իմ բոլոր քայլերի ամուր ու հաստատուն հիմքն էր կազմում նրա գործունէութիւնը։ Նպատակս այն չէ որ շեշտած լինեմ, թէ հայրս իր թագաւորութեան օրերին հեռու է մնացել սխալներից, քանզի մարդ-արարածը՝ ինչ էլ լինի՝ սխալական է, և ամեն մի առաջնորդ՝ մասնաւորաբար եթէ հօրս պէս ակտիւ է ու գործունեայ՝ զերծ չի մնայ սխալանքներից։ Օրինակ, հօրս համակրող ու երախտապարտ որոշ անձինք գտնում էին, որ հայրս գիւղատնտեսական խնդիրների բարելաւման առընչութեամբ, չի ցուցաբերում այն ողջմտութիւնն ու ուշադրութիւնը, ինչ որ անհրաժեշտ է երկրի արդիւնաբերութեան զարգացմանը։ Նոյնպէս, իր թագաւորութիւնից յետոյ նա Ազգ. Խորհրդարանին պարտադրեց իր իշխանութիւնը, թէև երբէք չձեռնարկեց դրա լուծարքին։

Այնուամենայնիւ, հօրս՝ երկրին մատուցած ծառայութիւնները չափելու պարագային, պիտի նկատի ունենալ այն իրողութիւնը, որ տեսալ ժամանակաշրջանի Իրանը մեծապէս տարբերուում էր այսօր-

ւայ Իրանից, և եթէ հայրս իր ուշադրութիւնը կենտրոնացրել էր արդիւնաբերութեան վրայ աւելի, քան գիւղատնտեսութեան վրայ, պատճառն այն էր, որ Իրանում այն օրերին եթէ հետքն անգամ չկար արդիւնաբերութեան ու գործարանների, ապա մեր երկրագործների հազարաւոր տարիների զբաղումն է եղել գիւղատնտեսութիւնը։

Ինչպէս նաև, եթէ հայրս անտեսում էր դեմոկրատական և պարլամենտական վարչաձևը, անշուշտ նկատի ունէր այն երևոյթը, որ օրէնդրական մի ազդեցիկ ապարատ ընտրելու համար պակասում էր կրթած քէարկողների անհրաժեշտ զանգուածը։ Իրականում հայրս ընդլայնելով կրթական շրջանակը և զարկ տալով գրաճանաչութեանը՝ ճանապարհ բացեց իրական դեմոկրատիայի աճի ու զարգացման համար։

Չպիտի անտեսել նաև այն, որ հօրս անձնականութիւնը մեծապէս տարբերւում էր ինձանից։ Նրա բնատուր յատկանիշները նպաստում էին իր կայացրած որոշումների կիրառմանը, յատկանիշներ, որոնք մեր օրերի դրութեան մէջ չեն կարող նպաստաւոր դեր ունենալ։ Համոզուած եմ, եթէ այն օրերին ես լինէի հօրս դերում, չպիտի կարողանայի իրագործել այն բոլորը, ինչ որ արեց հայրս ամենայն վարպետութեամբ. բայց թերևս իմ անձնականութիւնը Իրանի ներկայ դրութեան համար աւելի նպաստաւոր է հօրս ունեցած անձնականութիւնից։

Ամեն դէպքում պիտի նշել, որ ժամանակն ու իրադրութիւնները անհատներին դաստիարակում են

առկայ պայմանների և պահանջների կողմից։ Թէև անհատը ըստինքեան չի ծնւում ու արդիւնաւորւում անպատճառ ժամանակի հետ և կան տարբեր ազդակներ ևս, որոնք նշանակալից դեր են ունենում նրա կեանքում։

Ինչպէս պիտի նշեմ յաջորդ գլխում, այն շրջապատը, ուր աճել ու զարգացել եմ ես, մեծապէս տոգորուած էր հօրս անձնականութեան շնչով։ Հակառակ տեսալ իմացական և խորը ազդեցութեան՝ մեր երկուսի բնութագծերը նոյնը չեղան։ Եթէ ես ծնուած լինէի հօրս ծննդեան օրը (այսինքն լինէի նրա երկուորեակը) և ապրէի նոյն պայմաններում ու դրութեամբ, վստահ եմ, որ դարձեալ մեր երկու անձնականութիւնները շատ տարբերութիւն պիտի ունենային իրարից։ Տեղին է նշել, որ պատմական զուգադիպութիւնը իր դրոշմն է դրել մեր երկուսի կեանքի վրայ. որքան նպաստաւոր էր հօրս բնութագիծը այն օրերի Իրանի համար, հօրս հանդէպ ունեցած սիրոյ և ակնածանքով հանդերձ պիտի նշեմ, որ նոյնքան նպաստաւոր է իմ բնութագիծը Իրանի ներկայի համար։ Համոզուած եմ, որ եթէ նա այսօր կենդանի լինէր, կը հաստատէր այս իրողութիւնը։

Ինչպէս, հայրս արևմտեան քաղաքակրթութիւնից խուսափելու փոխարէն, որ պիտի յանդէր Իրանի յետամնացութեանը, մեզ ծանօթացրեց արևմտեան աշխարհի հետ. նա էր, որ իրանցիներին առաջնորդեց դէպի ազգային կեանքի նոր հորիզոններ, և իր յեղափոխութեամբ եկաւ նոր պատասխանատուութիւնների առջև դնելու Իրանի երկու հազար հինգհարիւր տարիների կայսրութեան թագաւորութիւնը։

Գ. ՄԱՍ

ԻՄ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի բոլոր ծագերում հայրը նպաստում է զաւակի բնաւորութեան ու մտայնութեան կազմաւորմանը։ Ես հեռու չեմ եղել այս ընդհանրական կանոնից և հայրս աւելի քան որևէ տարբեր գործօն ազդեցութիւն է ունեցել իմ անհատականութեան կազմաւորման վրայ։ Հարկաւ ինչպէս նշեցի նախապէս, և պիտի նշեմ, ես երբէք չդարձայ հօրս բնաւորութեան հայելին, սակայն նա շատ կողմերով գրական ու բացասական ազդեցութիւն ունեցաւ իմ վրայ։ Ուստի սոյն գլուխը ստիպւած եմ սկսել նրա անձնականութեան և բնաւորութեան մի շարք յատկանիշների նկարագրութեամբ։

Անժխտելիօրէն բոլորը, նոյնիսկ հօրս թշնամիները, խոստովանում էին, որ նա օժտւած էր տարբ-

բինակ ու գերմարդկային անհատականութեամբ։ Աշխարհի ամենաբարի անձնաւորութիւնը համարելու հետ միաժամանակ, նա կարող էր հանդէս գալ աշխարհի ամենասարսափազդու անհատի դերում։ Որքա՜ն ուժեղ ու կամքի տէր անձինք են դողացել նրա լոկ մի նայւածքից։ Նրա մէջ զարմանալիօրէն գարգացել էր մարդկանց բնաւորութիւնները անմիջականօրէն արժէքաւորելու յատկանիշը։ Առաջին իսկ հանդիպումից, նա այնքան ճշգրտօրէն էր բնորոշում դիմացինի խոցելի և առաւել կողմերը, ուղղամտութիւնն ու չարամտութիւնը, որ ասես աչքերից խորհրդաւոր ճառագայթներ էին թափանցում մարդկանց սրտերի ամենահեռաւոր անկիւնները, որով ոմանք չէին կարողանում ուղիղ նայել նրա խորաթափանց աչքերին։

Հայրս հակառակ հանրութեան կարծիքի, բարի էր ու փափկասիրտ։ Դա լաւագոյն կերպով մասնաւորւում էր ընտանեկան շրջապատում. այստեղ նրա դաժանութիւնն ու խստապահանջութիւնը տեղի էին տալիս մարմնաւորւած սիրոյ ու խանդաղատանքի առջև։ Գորովագութ ու բարեսիրտ էր մասնաւորաբար իմ նկատմամբ, որովհետև ինձ ընտրել էր իր թագաժառանգը։ Երբեմն նոյնիսկ երգում էր կամ խաղում էր ինձ հետ. այդուամենայնիւ երբեէ չեմ յիշում, որ դա տեղի ունենար ուրիշների ներկայութեամբ։

Նրա գատորոշ յատկանիշներից մէկն էր պարզութիւնը և բուռն հակակրանքը շքեղութիւնների նկատմամբ։ Անձնական հնարաւորութիւններով բարձր դիրքեր նւաճած բազմաթիւ անձինք միշտ էլ ցանկացել են կառչելով նիւթական տւեալներին, ապացուցել իրենց գերակշռութիւնը, ընդորում՝ արևելեան արքաները ընդհանրապէս աչքի չեն ընկել ինչ-որ պարզութեամբ ու ժուժկալութեամբ, սակայն հայրս յայտնապէս խուսափում էր Ղաջար արքաների շռայլ պահանջներից՝ իր թագաւորութեան ողջ շրջանում գերադասելով զինւորական հասարակ հագուստը։ Նրա գուլպաները տեղական էին, իսկ սապոգները կարճ էին ու գործածւած։ Գրպանի պարունակութիւնը սովորաբար սահմանափակւում էր մի թաշկինակով և արծաթէ ծխախոտի տուփով, որի մէջ դնում էր նոյնպէս տեղական գլանիկներ։ Պարտաճանաչ ու ուշադիր էր մաքրութեան մէջ։

Նրա ուտելիքը ստամոքսի տկարութեան պատճառով ընդհանրապէս պարզ էր։ Նախաճաշին բաւականանում էր լոկ թէյով և հիմնականում խուսափում էր իւրաքանչիւր իրանցու նախաճաշը կազմող՝ հաց ու պանրից, ձւից ու պտղից։ Փլաւն ու խաշած վառեկը կազմում էին նրա ամենօրեայ ճաշն ու ընթրիքը։ Գործի ընթացքում, որոշ պահերին սովորական բաժակով խմում էր թէյ։ Նրա գրասենեակի կահաւորանքը նոյնպէս պարզ էր։ Դա կազմւած էր մի գեղեցիկ խճանկար սեղանից, որ գործածում եմ նաև ես, մի նստարանից և աթոռից, մի կտոր գորգից և Իրանի մանրամասն քարտէսից։ Տանը հանդստանում էր գետնին փռւած մի ներքնակի վրայ և երբէք չէր մօտենում անկողնուն։ Ես ևս սիրում եմ այս ձևով հանդստացնել նեարդներս։ Նրա օրւայ ծրագիրն ևս

պարզ էր· արթնանում էր կանուխ առաւօտեան ժամը 5-ին, և լոգանք ընդունելուց ու սափրուելուց յետոյ, որ կատարում էր արագօրէն, նստում էր նախաճաշի (եթէ դա կարելի է նախաճաշ կոչել)։ Այստեղ աչքի էր անց կացնում օրուայ լուրերն ու զեկուցագրերը, որոնք կազմուել էին միչև այդ պահը և ճիշտ ժամը 7·30-ին անցնում էր գրասենեակ, ուր ընդունում էր՝ նախ գրասենեակի վարիչին և ապա նախօրօք հրաւիրուած անձանց։ Այնուհետև սկսւում էր բանակցութիւններ նախարարների և զանազան պաշտօնեաների հետ, որը տևում էր մինչև ժամը 11·30-ը։ Ճաշը վայելում էր քիչ յետոյ և ժամը երկուսից յետոյ վերսկսում աշխատանքները։ Երեկոյեան սովորաբար դիտարկում էր զօրաբանակի տարբեր կենտրոնները կամ վարչական ու շինարարական գծով տարուող աշխատանքները։ Նախարարաց խորհրդի նիստերը մեծ մասամբ տեղի էին ունենում կէսօրից յետոյ, իր ներկայութեամբ։ Ժամը 6-ից մինչև 8-ը՝ զբաղուում էր օրուայ ընթացքին կուտակուած զեկուցագրերի վերահասութեամբ։ Ժամը 8-ին ընթրում էր և ժամը 10-ին անցնում քնելու։ Անկողնու մէջ էլ, իր վկայութեամբ, նրան զբաղեցնում էին այլազան ծրագրերի և դրանց գործադրմանը կապուող մտածմունքները։ Այսպիսով կարելի է ասել, որ նա երբէք պարապ չէր մնում։

Նկատի ունենալով վերոյիշեալ ծրագիրը, դիւրութեամբ կարելի է ուրուագծել հօրս յատկանիշներից մէկը, այն է նրա պետանդական ճշտապահութիւնը, որը արտացոլուում էր համարեայ բոլոր խնդիրներում։ Լաւ յիշում եմ, երբ մեկնում էի արտասահման շարունակելու կրթութիւնս, հայրս կարգադրեց, որ իւրաքանչիւր շաբաթ զեկուցեմ պարսկերէն լեզուի դասերիս ընթացքի մասին, որպէսզի հասու լինի իմ յառաջադիմութեան տեմպերին։ Մի անգամ հերթական զեկոյցս ուշացաւ փոստի պատճառով։ հայրս անհանգստանում է այնքան, որ անմիջապէս հեռագրում է ուսուցչիս և բարկանում ուշացման համար։

Հայրս չհաշուած ընտանիքի գրկում անց կացրած պահերը, չունէր հաճոյքի և հանգստի ժամ։ Ողջ տարուայ ընթացքին սոսկ մի քանի ժամ տրամադրում էր որսի։ Նրա մարզանքը կայանում էր քայլելու մէջ և լաւ մտաբերում եմ, որ անդադար քայլում էր գրասենեակում։ Հետիոտն էր անցկացնում նաև զինուորական ու պետական կազմակերպութիւնների դիտարկումը։ Երեկոները ընդհանրապէս ճեմում էր պալատի այգում և դիմողներին ընդունում էր քայլելով, ընդ որում նրանք ստիպուած էին քայլել հօրս յետևից։ Երբ Ռեզաշահը քայլում էր, դա սովորաբար նշանակում էր, որ նա մտածում է։

Կրօնական խնդիրներում ևս հայրս նախընտրում էր պարզութիւնը և խորշում էր աւելորդ ցուցամոլութիւններից։ Հոգևորականութեան դէմ որդեգրած նրա խիստ ընթացքը շատերի մօտ ստեղծել էր այն կարծիքը, որ նա հակուած չէ կրօնին, թէև իրականում այդպէս չէր։ Նրա նպատակն էր զերծ

պահել հոգևորականությանը քաղաքական խնդիրներից, որովհետև ուներ այն սկզբունքը, որ հակառակ պարագային չպիտի կարողանայ անհրաժեշտ արագությամբ իրագործել բարենորոգչական առումով ընթացող ծրագիրները։ Իհարկե սա չի նշանակում, որ նա անօգուտ համարեր հոգևոր դասի գոյությունը, կամ կրոնական հարցերի խնդրում լիներ անտարբեր. ընդհակառակը՝ մեծ էր նրա յարգանքը յառաջադեմ ու ազատամիտ հոգևորականության նկատմամբ։ Կրոնի հանդեպ ունեցած նրա սիրոյ ու ակնածանքի լաւագոյն ապացոյցը, նրա բուռն հաւատքն էր Իմամ Ռեզա Մարգարէի նկատմամբ, ընդորում իր բոլոր զաւակների անունների մէջ օգտագործել էր Ռեզա անունը և եթէ պատեհութիւն էր ունենում այցելում էր ուխտերորդ Իմամի դամբարանը՝ ուխտի նպատակով։ Սովորաբար, ամեն մի ծրագրի իրագործման նախօրեակին ևս հայցում էր Աստծոյ ողորմութիւնն ու օգնութիւնը, մրմնջալով սրբագործուած նշանաբաններ։

Ոչ ոք չունէր այն հաւատքը, որ տածում էր հայրս իր հայրենիքի հանդէպ։ Դա երբեմն հասնում էր ծայրահեղ սիրոյ և նման դէպքերում պնդում էր, որ Իրանի քաղաքակրթութիւնը իր բոլոր կողմերով գերազանցում է աշխարհի քաղաքակրթութեանը, կամ անարժէք էր համարում նորագոյն յառաջադիմութիւնները. իհարկէ դա չէր արգիլում, որ չընդառաջի կրթադաստիարակչական նոր մեթոդների կիրառմանը Իրանում։ Ոչ ոք նրա պէս մտահոգուած չէր

երկրի վերելքներով ու յառաջադիմութեամբ. և ի դէպ, միաժամանակ հպարտութեամբ ու ակնածանքով ընդգծելով իր հայրենիքի փառաւոր անցեալն ու յարգելով պատմական սովորութիւններն ու ծէսերը, տէր էր այն մօտեցումին, որ երկրի ամբողջականութիւնն ու անկախութիւնը, ինչպէս նաև ժողովրդի երջանկութիւնն ու բարօրութիւնը ապահովելու համար, պիտի լրիւ թափով լծուել յառաջադիմութեան ու վերելքի կառքին, որով ժամանակին ընթացել է Արևմուտքը։

Այդ իսկ պատճառով նրա միտքը անվերջ պտտւում էր նոր գործարանների հիմնադրման, էլեկտրոէներգիայի հզօրացման, ջրամբարտակների ու ջրաբաշխական կենտրոնների շինութեան, երկաթուղագծերի ու մայրուղիների ընդլայնման քաղաքաշինութեան և հզօր գործարանակներ ստեղծելու շուրջ։

Յայտնի չէ որո՞նք էին հօրս աղբիւրները գիտութեան ու տեխնիկայի նորագոյն նուաճումների մասին. ինչպէս նա ճշգրտօրէն տեղեակ էր այդ բոլորից։ Կարելի է ենթադրել որ դրանք ձեռք էին բերւում յամառ ուսումնասիրութեան ու հարցասիրութեան շնորհիւ։

Հայրս ոչ միայն ուշիմ էր ու աշխատասէր, այլև նրա մէջ մեծ չափերով զարգացել էր արագ ըմբռնողականութիւնը։ Քիչ էր խօսում աւելի խորհում էր։ Խօսակցութեան պահին, արտայայտւում էր զուսպ, բայց մտածուած. չէր շեղւում նիւթից, խօսում էր տրամաբանական և հակառակ այն իրողութեան, որ մեր օրերի չափանիշով զուրկ էր բաւա-

բար կրթութիւնից, այնուամենայնիւ զարմանալիօրէն հեշտ էր ընկալում որևէ խնդրի զգայուն կողմերը՝ լինեն դրանք տեխնիկայի՝ օրինակ, Իրանի ընդհանուր երկաթուղագծի շինարարութեանը առնչուող, կամ արտաքին քաղաքականութեան բնագաւառներում։ Նրա արտայայտութիւնները տոգորուած էին հզօր կամքով ու պարզամտութեամբ։ Դա էր, որ նրա սրտաբուխ խօսքերը միշտ էլ դրաւում էին ունկնդիրներին։

Տիրապետում էր իր ջղերին բառիս ամենալայն իմաստով. հակառակ որոշ անձանց կարծիքի, իր թագաւորութեան շրջանում երբէք չէր բարկանում ի սրտէ, և եթէ երբեմն բռնկուում էր զայրոյթից, ապա դա բխում էր մեծ մասամբ անհրաժեշտութիւնից. ինչպէս իր ջղերի տէրն էր։

Հօրս բնաւորութեան զարմանալի տեսակներից մէկն էր նաև նրա ճշտապահութիւնը քաղաքականութեան մէջ։ Փորձուած քաղաքագէտի հմտութեամբ, նա կարողանում էր ժամանակին սկսել անհրաժեշտը և ժամանակին խուսափել անկարևորից։ Մէկ բոպէում որոշում կայացնելու կարողութեան հետ մէկտեղ, ի վիճակի էր անհրաժեշտութիւնից մղուած տաս տարի համբերութեամբ սպասել որևէ քայլի իրագործմանն ի խնդիր։ Ընդհանրապէս իր մտքերի ու նպատակների իրականացման նախօրեակին, սիրում էր կշռադատել ու ծանր ու թեթև անել խնդրի բոլոր կողմերը, և որ կարևորն է յաջողում էր որսալ դրա պատեհ առիթը, ընդ որում երբէք չէր սխալւում։

Հայրս ֆիզիքական տոկունութեամբ ու հաստատակամութեամբ գերակշռում էր սովորական անհատներին և ինչպէս ինքն էր եռանդով ու աւիւնով աշխատում երկրի բարօրութեան համար, նոյնն էլ ակնկալում էր ուրիշներից։ Պետական բոլոր կազմակերպութիւններից ներս մտցրած հիմնական փոփոխութիւններին ազդակ ծառայեց նրա կարգապահութիւնն ու հայրենասէր ոգին։ Հօրս մեթոդը կայանում էր նրանում, որ պետական հաստատութիւններն կատարած իր այցելութիւնները անց էր կացնում անսպասելիօրէն և մեծ մասամբ աշխատանքային օրուայ սկզբում, որով հնարաւոր էր դառնում քննելու մինչև անգամ պաշտօնեաների ներկան ու բացակայութիւնը։ Օրինակ մի օր Ռեզաշահը հիմնարկային ժամի սկզբից քիչ անց մուտք գործելով Ելևմտական նախարարութիւն, կարգադրեց փակել բոլոր դռները։ Պաշտօնեաներից ոմանք, ընդորս պատասխանատու նախարարը ուշ հասնելով գործի իրենց գտնում են փակ դռան առջև և անմիջապէս վտարւում։ Սա մէկն է այն հսկայ պայքարից, որ հայրս հետևողականութեամբ մղում էր բոլոր խնդիրների մէջ ներթափանցած ծուլութիւնների, անպատասխանատուութիւնների և աւելորդ ձգձգողականութեան դէմ։

Ռեզաշահը ոչ միայն հիմնեց Իրանի երկաթուղագիծը, այլև ջանադրաբար հետևեց գնացքների երթ և եկի ժամերին։ Այս մասին, նրանից մնացել է մի նկար, որ ամեն անգամ նայելիս բերկրանքով է լցւում հոգիս։ Նկարը պատկերում է նրան մարդատար

մի գնացքի մէջ այն պահին, երբ բաւականութեամբ շողշողացող դէմքը յառել է ժամացոյցին, քանի որ գնացքը ժամանակին է մուտք գործել կայարան։

Իրանի նորագոյն պատմութեան մէջ, հայրս առաջին անձնաւորութիւնն է, որ ժողովրդին վարժեցրել է ճշտապահութեան՝ անդադար շեշտելով դրա կարևորութիւնը։ Պատժի ու քաջալերանքի խնդրում, հայրս աւելի հակած էր դէպի պատիժը, քանի ուներ այն սկզբունքը, որ իր գործը լաւ կատարած անհատը վարուել է իր պարտականութեան համաձայն։ Ընդհակառակը, երբ նրա սուր աչքերից չէր վրիպում մէկի զանցառութիւնը կամ պարտականութեան մէջ թոյլ տրուած անճշտութիւնը, վարուում էր այնքան խստօրէն, որ զանցառուն ստիպւած էր լինում զղջալ իր ողջ կեանքում։ Հօրս որդեգրած ընթացքը այս խնդրում, հիմնուում է արևելեան ժողովրդների բնութագրի մասին ունեցած նրա ճանաչողականութեան և ոյժի տեսութեան վրայ։ Սակայն վերջին տարիներին, երբ մեր հասարակայնութիւնը ծանօթացել է դեմոկրատիայի տեսութիւններին, աւելի ցանկալի արդիւնք են տուել հօրս մեթոդից տարբերուող այլ միջոցառումները։

Ժողովրդի մէջ անձնազոհութիւն ու ոգևորութիւն ստեղծելու համար, հայրս յենուում էր իր իսկ բնաւորութեան ու իմացականութեան ոյժի վրայ։ Դա, հարկաւ, երբէք չհանգեց բացասական արդիւնքի, որովհետև Իրանի ժողովուրդը հօրս նկատմամբ ունեցած իր վախի հետ միախառնուած ակնածանքով, լաւագոյն կերպով ընդառաջում էր նրա նպատակների իրագործմանը։

Թագաւորութեան սկզբնական շրջանում մեծ էր ժողովրդի սէրն ու համակրանքը հօրս նկատմամբ։ Բայց վերջին տարիներին, երբ նա ստիպւած էր երկրի վերելքի ու յառաջադիմութեան օգտին հանդէս գալ ոյժով ու բռնութեամբ, տեսալ սէրն ու համակրանքը փոխուեց ակնածանքի և անձատուութեան։ Ինչպէս մեծ էր հօրս իմացական ներգործութիւնը հասարակայնութեան բոլոր խաւերի վրայ։

Մեր հայրենիքի հեռաւոր անցեալի մեծութեան և պատմական փառքի վերականգնման ճանապարհին, հայրս ներդրեց հսկայ ճիգ ու ջանք։ Նա պահանջում էր իր ժողովրդից բարձր պահել հայրենիքի անունը, ինչ որ վայել է նրա փառաշուք անցեալին։ Առանց ունենալու որոշակի ծրագրեր, ինչպիսին են ներկայի երկրորդ եօթնամեակը կամ երրորդը, որ դեռ նախապատրաստական փուլի մէջ է, նա վերացնելով որևէ բարենորոգչական ծրագիր, անմիջապէս անցնում էր յաջորդին, որպէսզի հնարաւոր դառնայ դրանց միաւորումից ստեղծել մի ամբողջական գործունէութեան պատկեր։ Ճիշտ է, դրանք միշտ չէ որ օգտակար էին, ճիշտ է նրա որդեգրած ընթացքը ժողովրդի հանդէպ միշտ չէ որ զերծ էր մնում կոպտութիւնից, սակայն անժխտելի է, որ հայրս հասաւ անբեւակայելի արդիւնքների։ Երբ հաշուեյարդարի ենք դնում նրա մատուցած ծառայութիւններն ու կատարած վիթխարի աշխատանքը, դժ-

ւար է լինում ընդունել այն իրողությունը, որ նրա թագավորությանը շրջանը տևեց լոկ տասնվեց տարի. կարճ մի ժամանակաշրջան, որի ընթացքին նա յաջողեց հասնել այն բոլոր նվաճումներին ու յառաջադիմություններին, որոնց մասին նշեցի նախապէս։

Բնավորությամբ հայրս կատակասէր էր։ Հարկավ նրա թագավորության շրջանից յուշեր ունեցող անձինք հակառակը պիտի պնդեն, բայց իրողությունը այն է ինչ ասվեց։ Ընտանեկան շրջապատում, մասնավորաբար ինձ հետ կատակում էր պարզամտօրէն ու սիրով։ Ընտանեկան շրջապատից դուրս ևս յաճախ եմ լսել նրա առնական ծիծաղը և կարծում եմ դրա բուն շարժառիթը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի շարք արտաքուստ ծանրամեծար անձանց նոյնքան կեղծ լրջությունն ու շողոքորթանքը, որով քօղարկում էին ճշմարտության դէմքը։

Ինչպէս ասվեց նախապէս, հայրս օժտված էր մարդկային հոգիները մերկացնելու ունակությամբ։ Դէմքի մի արտայայտություն կամ միմիկան բավական էր, որ նա կարողանար բնորոշել դիմացինի ներաշխարհն, որով չէր խաբվում դիվրությամբ։

Նրա ծիծաղն էին հարուցում որոշ պալատականների կամ պետական պաշտօնեաների արտաքուստ շողոքորթանքն ու կեղծությունը և դրա ընկալումը նոյնիսկ բավականություն էր պատճառում նրան։ Ըստ իս բնական, մինչև անգամ անհրաժեշտ ու տեղին էր հօրս խորշանքը, որ առաջ էր գալիս պալատականների և պաշտօնեաների նշված վերաբերմունքից,

ավելորդ չափազանցություններից, անիմաստ արտայայտություններից, որոնք ոչ միայն պատճառ էին դառնում ժամանակի կորստին, այլև դրանց հետևանքով այլազան խնդիրների բուն էությունը զոհվում էր շքեղ ու պճնված արտաքինին։ Ընդ սմին, Իրանում չափից ավելի էր գործածվել՝ «նպատակայարմար սուտը լավ է գլխացավանք յարուցող ճշմարտությունից» նախադասությունը։ Իր կորրեկտությամբ ու պարզամտությամբ դժվար էր հօրս համար տանել շրջապատի կեղծությունը. հետևաբար, երբ տեսնում էր ոմանք դեռևս կառչած են մնում տեսալ մեթոդին ապա չէր հրաժարվում պարզապէս ծաղրելուց։

Ոմանք կարծում են, որ նա զինվորական կեանքին վարժված լինելով, հակված էր կատակելու կամ թույլ տալու կոպիտ արտայայտություններ. բայց դա միանգամայն սխալ է, քանի որ նրա բերանից երբէք չեմ լսել նման արտայայտություններ, ըստ որում, բացի ինձանից և ոչ ոքի հետ չէր զբաղվում ինչ-որ զիջողականությամբ։ Ընդհանրապէս նրան այցելող անհատները կամ սարսափից դողում էին և կամ լցվում էին խորը յարգանքով ու երկիւղածությամբ. երկու դէպքումն էլ երբէք չէր ստեղծվում մասնավոր յարաբերությունների կամ կատակելու պատեհություն։ Դա չէր բացառվում նաև նրա հին ու մտերիմ ընկերների խնդրում։ Յիշում եմ հօրեղբայրներից մէկը, որ շատ մտիկ էր նրա հետ և ունէր նման վերաբերմունք, ընկնելով հօրս ծանրամեծար անձնականության ազդեցության ներքոյ,

խուսափում էր չմտածված շարժ ու ձևից կամ արտայայտություններից։

Այս պատճառով, երբեմն խորհում էի, որ հայրս մի ընթացք, հարկաւ պիտի ունենայ մենակութեան զգացում, բայց շուտով համոզուեցի կարծիքիս անճշտութեանը, քանի որ նրա բնաւորութեան գծերն այնպիսին էին, որ ընդհանրապէս քիչ էր զգում մտերիմ կամ ընկերական յարաբերութիւնների պահանջը. ծանօթներն էլ չէին համարձակւում իրենց մտերիմ համարել նրա հետ։ Հայրս մեծ մասամբ տարուած էր իր իսկ մտքերով ու կարևոր աշխատանքների դասաւորմամբ և դրանք էին նրա ամենալաւ ընկերները։ Այս բոլորով հանդերձ, երբ թագաւորութեան վերջին տարիներին նոսրացաւ պալատական խորհրդականների ու ծառայողների թիւը, դարձեալ նրա ընկերներն էին, որ շարունակում էին հաւատարմօրէն նրան տեղեակ պահել արտաքին աշխարհի անց ու դարձից։

Մօտաւորապէս հինգ տարի առաջ մի համառօտ ակնարկ եմ գրել հօրս բնութագծերի մասին, որը գրքի ձևով հրատարակել և թարգմանել է շատ լեզուներով։ Այս գրքում նկարագրելով հօրս բնաւորութիւնը, ի դէպ, գրել եմ. «Վիայոյս եմ, որ սոյն նկարագրութիւնը պատճառ կը դառնայ, որ Իրանի ժողովուրդը և այս հող ու ջրով հետաքրքրուողները՝ մասնաւորաբար երիտասարդութիւնը խորհեն այն մեծ մարդու մասին, որ իր կեանքը նուիրաբերեց յանուն իր իսկ հայրենակիցների բարօրութեան, զարգացման

ու յառաջադիմութեան նպատակին։ Թող դա օրինակ ծառայի նրանց և լաւ իմանան, թէ ինչպէս կարելի է քաջութեամբ ու հետևողականութեամբ յաղթել վախի ու թուլամտութեան և ճշմարիտն ու իրականը կիրառել կեանքում, թէ ինչպէս խուսափել անպատշաճ սովորութիւններից ու բնաւորութեան թոյլ կողմերից՝ ամաչել ստից ու ալարկոտութիւնից, ինչպէս պատուաւոր գործը համարել բարձրագոյն նպատակ և հպարտութեան արդասիք, որով կարելի լինի ընկալելու այն խօսքը, թէ՝ «Մարդկային ամենագեղեցիկ հոգևոր զարդը գործն է և աշխատանքը, որի շնորհիւ հնարաւոր է դառնում հասնելու կոչման բարձրութեան»։

Սա համառօտ մի ակնարկ էր հօրս բարձր անձնականութեան մասին, որը հսկայ ազդեցութիւն ունեցաւ իմ դաստիարակութեան խնդրում և գրեց, որպէսզի ընթերցողները նախքան իմ մանկութեանը ծանօթանալը, մօտաւոր գաղափար կազմեն այն գործօնների մասին, որոնք իրենց կնիքը դրին իմ բնաւորութեան ու ոգու վրայ։

Ես աչք եմ բացել 1298 թուի Աբան 4-ին, Թեհրանի հին թաղամասերից մէկում գտնուող մի փոքրիկ և անշուք տան մէջ։ Այս թուին Թեհրանը դեռևս օժտուած էր ամրոցով, որը շրջապատուած էր ցամաքած խանդակի գոտիով։ Քաղաքի եզ ու մուտը կատարւում էր բազմաթիւ դարպասներից, որոնք գիշերները փակւում էին՝ քաղաքի անդորրը արկածախնդիրներից ու գինուած աւազակներից ապահովելու

նպատակով։ Հօրս իշխանութեան օրօք, երբ հունի մէջ բարենորոգչական աշխատանքները, ոչնչացուեցին նաև յիշեալ դարպասները։

Մեր ընտանիքի շուտ տեղափոխուելու հետեւանքով, աղօտ ու մշուշոտ են իմ յուշերը այս տնից։ Միակը որ տպաւորուած է մնացել յիշողութեանս պատատի վրայ, դա Ալբորզ լեռնաշղթայի սիգապանծ լեռների վեհաշուք տեսարանն էր, որ ինձ պարգևել է ոգևորութիւն ու ներշնչանք։ Պարզ օրերին, երբ հայեացքս յառում էի քաղաքի հիւսիս-արևելեան կողմին, տեսողութեանս առջև յառնում էր Դեմաւենդի բարձրանիստ գագաթը՝ իր յաւերժական ձիւնով, որից զգում էի հոգեկան մեծ բաւարարութիւն։ Հեռագային իմացայ, որ Դեմաւենդը իր 5671 մետր բարձրութեամբ գերազանցում է Մոնբլանին և մօտաւորապէս մէկ ու կէս անգամ բարձր է Ֆոջի-եամայի հռչակաւոր գագաթից։

Իմ առաջին յուշերի մէջ տպաւորել է նաև հօրս առնական դէմքն ու բարձր հասակը, որ ի դէպ այդ օրերին վարում էր ռազմական նախարարութիւնը և ամեն օր որոշ ժամերին գնում էր աշխատանքի ու վերադառնում։ Ովքեր սիրում են գրական դարձուածքներն ու նմանութիւնները, պիտի ասէին, որ այդ օրերին, երբ բարձր լեռներն էին շարժում իմ զգացումները, հայրս կանգնած Իրանի վարչապետական և շահնշահութեան դիրքերի սեմին, կոչուած էր պայքարելու իր հայրենիքի լեռան պէս հսկայ դժուարութիւնների դէմ։

Իմ կազմուածքը մանկութեանս օրերին թոյլ էր։ Լաւ մտաբերում եմ, թէ ինչպէս մի օր բաղանիքում սայթաքեցի և գլուխս սաստկօրէն դիպչեց սալայատակին։ Յիշում եմ նաև վերջերս մահացած մեր հաւատարիմ ծառայող «Աղա-Հաշեմ»-ի մտահոգ հայեացքն ու ալեկոծ վիճակը, որ ցաւից աւելի ազդեց ինձ։

Մանկութեանս օրերից ամենանշանակալի իրադարձութիւնը հօրս թագադրութեան արարողութիւնն էր, որի ընթացքին հայրս «Ռեզաշահ Փահլաւի» անուամբ շահնշահութեան թագը դրեց գլխին և ես ընտրուեցի որպէս թագաժառանգ։ Պատմական սովորութիւններով ու փառաւոր ծիսակատարութիւններով Գոլեստան ու Թախթէ Թաւուս պալատներում տեղի ունեցող թագադրութեան աննախընթաց ու շքեղ արարողութիւնը իր շքով ու մեծութեամբ, ինձ վրայ, որ նոր էի բոլորում վեց տարիս, ներգործեց զոյգն չափերով։

Նախքան թագաժառանգ լինելս, ապրում էի մօր, եղբայրներիս ու քոյրերիս հետ, սակայն թագադրութիւնից յետոյ հօրս կարգադրութեամբ բաժանուեցի նրանցից՝ ենթարկուելով յատուկ մի դաստիարակութեան, որ հայրս կոչում էր «առնական դաստիարակութիւն»։ Դա ինձ պիտի պատրաստէր ապագայի ծանր պատասխանատուութիւնների ստանձման ուղղութեամբ։ Նոյն օրերին ինձ արձանագրեցին «Նեզամ» դպրոցում, որ իրականում հիմնուել էր իմ ու չորս եղբայրներիս համար։ Մեր դասարանը կազմող աշակերտութեան թիւը չէր անցնում 21 հո-

գուց, որոնք բոլորն էլ բարձրագոյն պաշտօնեաների կամ զօրապետների զաւակներ էին և ընտրուել էին ամենայն բծախնդրութեամբ։ Եղբայրներս ինձանից փոքր լինելով արձանագրուեցին ցածր դասարաններում։ Աշակերտութիւնը հաղնում էր զինուորական տարազ. դժուար էր դասերի ծրագիրը, որոնց զուգորդուած էր նաև զինուորական վարժութիւններ։ Այսպիսով բնականաբար, մանկութիւնս անցնում էր զինուորական մթնոլորտում։ Զբաւարարելով իմ դպրոցական կրթութեամբ, հայրս վարձել տուեց մի ֆրանսուհի դաստիարակչուհի որը դասաւանդում էր ֆրանսերէն և հետևում էր իմ կեանքի ներքին խնդիրներին։ Ցիշեալ կնոջ ջանքերով, որ ամուսնացած լինելով մի իրանցու հետ կոչուում էր տիկին Արֆա, ֆրանսերէնը իւրացրի մայրենի լեզուի պէս. դրա շնորհիւ իմ աչքերի առջև բացուեց արևմտեան աշխարհը տեսնելու և ուսումնասիրելու լուսամուտը։

Այս կինը, որին միշտ երախտապարտ պիտի մնամ, վախճանուեց 1959 թուին Փարիզում։

Թէև մանկութեանս օրերին աչքի չէի ընկնում ամուր կազմուածքով, այսուամենայնիւ զարթ ու թռչկոտուն էի և դադար ու հանգիստ չունէի։ Վազում էի, թռչում, մագլցում ծառերից և ընդհանրապէս անմասն չէի մնում տղայական սովորական զարճութիւններից։ Սիրում էի մեր երկրում ամենամեծ սպորտը համարուող ըմբշամարտը, նոյնիսկ մտաբերում եմ թէ ինչպէս մի օր ճաշից յետոյ ըմբշամարտով զբաղուելուս հետևանքով արժանացայ նկատողութեան։ Ձմեռները չէի կշտանում ձնագնդի խաղալուց։ Իմ սիրած զբաղումներից էր նաև Սասդաբաղ ամառային պալատի առուների վրայ ընկերներիս օգնութեամբ ամբարտակ կառուցելը։Կարելի է ասել դրանք փոքրիկ օրինակներ էին այն վիթխարի ամբարտակների ու հիդրոկայանների, որ այսօր շարք են մտել երկրի շատ կէտերում ապահովելով էլեկտրոէներգիա։ Առուակների եզերքում շինում էին նաև փայտէ և աղիւսէ տներ, կամուրջներ ու պալատներ։

«Նեզամ» դպրոցում օրուայ մէջ երկու ժամ յատկացուած էր հանգստի, բայց դա ևս սպառուում էր մանկական խաղերի ու վազվզոցների մէջ։ Սովորութիւն է Իրանում, որ կէսօրից յետոյ մեծ թէ փոքր վայելում են կարճատև հանգիստ. ես հակած չէի այս սովորութեան, այնպէս ինչպէս հիմա էլ չեմ սիրում յետկէսօրեայ նինջը. չեմ մոռանում, թէ ինչպէս մանկութեանս օրերին միւս դասընկերներիս հետ աղմուկ աղաղակով նետուում էինք խաղի, խանգարելով մեծերի հանգիստը։

Իմ սիրածս խաղերից մէկն էր նաև «գող և ոստիկան» խաղը։ Ընկերներիս սովորաբար բաժանում էի երկու մասի՝ գողեր ու ոստիկաններ և ապա թափանցում էինք պալատի պահեստներն ու խորհրդաւոր նկուղները, սակայն պիտի խոստովանել, որ այն ժամանակ յանցանշաններ յայտնաբերող մեր միջոցները անչափ տարրական էին ու թերի։ Զափահաս տարիքում զբաղուում էի ձիավարժութեամբ ու որսով՝ ընկերակից ունենալով ներկայիս պալատական

որսավար պարոն Աթաբային։ Նորագոյն սպորտներից նախընտրում էի ոտնագնդակն ու կռփամարտը։ Յիշում եմ կռփամարտի մարզիչս կրում էր ակնոց. մի օր մարզումի պահին նրա ակնոցը ընկաւ աչքից. ես անմիջապէս գետնից վերցնելով այն տուեցի նրան և շարունակեցինք մարզումը։ Ընկերներիս հետ երբեմն զբաղւում էինք նաև ճոկանախաղով՝ երիվար ունենալով մեր հեծանիւները։ Դա անչափ հետաքրքրական էր և որքան տեղեակ եմ մենք Իրանում առաջին հեծանուորդ ճոկանախաղացներն ենք եղել։

Թւում է ըստ սովորութեան, թագաժառանգը պիտի լինի որոշ չափով հպարտ և չխառնւի հասարակ ժողովրդի հետ. բայց որքան մտաբերում եմ՝ թագաժառանգ եղածս շրջանում ես այդպէս չէի և յուսով եմ, որ ներկայում ևս այդպէս չեմ։ Այն օրերին իմ ամենամտերիմ ընկերն էր Հոսէյն Ֆարդուստ անունով մի տղայ, որի հայրը շարքային սպայ էր։ Շեբեցարիայում ևս Հոսէյնը իմ դասընկերն էր։ Հետագային նա գնդապետի կոչումով ստանձնեց սպայական Ֆակուլտետի դասախօսի պաշտօն և ներկայում պաշտօնավարում է Արքայական Պահակախմբի մէջ։

Թագաժառանգ եղածս օրերին, հայրս օրական երկու ժամ զբաղւում էր ինձանով։ Ինքը տարեկանս լրանալուց յետոյ, ճաշը վայելում էի նրա հետ։ Հօրս նպատակն էր՝ մօտիկից շփւելով ինձ հետ, անձամբ տեղեակ լինի իմ վիճակից և աստիճանաբար ինձ ևս տեղեակ պահի երկրի անց ու դարձից։

Հօրս թագադրութիւնից շատ չանցած հիւանդացայ տիֆով և մի քանի շաբաթ մաքառում էի մահւան դէմ։ Հիւանդութիւնս խորը անհանգստութիւն ու տառապանք պատճառեց բարի հօրս։ Այդ ծանր օրերին, ինձ բախտ վիճակւեց մուտք գործել հոգեւոր ապրումների անդաստանը, որի մասին չեմ խօսել մինչև այսօր։ Տկարութեանս ընթացքին մի տագնապալի գիշեր, երազիս տեսայ Սրբազնագոյն սուրբը՝ Ալի առաջնորդին, որ իր հռչակաւոր Զուլֆաղարի թուրը դրած գոգին նստել էր իմ մնարին և իր սուրբ ձեռքում ունենալով մի գաւաթ, յորդորում էր խմել գաւաթի պարունակութիւնը։ Ես յօժարակամ ենթարկւեցի։ Յաջորդ օրը տաքութիւնս ընկաւ և արագօրէն սկսեցի ապաքինւել. թէև այդ ժամանակ եօթ տարեկան անդամ չկայի, այդուամենայնիւ ինքս ինձ խորհեցի, որ տեսալ երազի և իմ ապաքինման մէջ ոչ մի կապ էլ կարող է չլինել, սակայն նոյն տարւայ ընթացքին տեղի ունեցան երկու ուրիշ իրադարձութիւններ, որոնք եկան իմ իմացական կեանքի վրայ դնելու կնիք և խորը ազդեցութիւն։

Մանկութեանս օրերին համարեայ ամեն ամառ ընտանիքով գնում էինք Իմամի որդի՝ Դաւուդի դամբարանը այցելութեան, որը գտնւում է Ալբորզ լեռնաշղթայի եղեմական ու կենսախինդ լանջերից մէկի վրայ։ Դրա ոլորապտոյտ ու զառիվայր ճանապարհը ստիպւած էինք լինում անցնել ոտքով կամ ձիով։ Մի այսպիսի ուղևորութեան ընթացքին ես նստել էի սպայական կոչում ունեցող մեր ազգականներից մէկի ձիան թամբի առջևում, երբ յանկարծ ձիու ոտքը

սայթաքելու հետևանքով երկուսս էլ գլորվեցինք ցած։ Աբելի թեթև լինելով՝ սատկօրէն բախվեցի ինչ որ անհարթ մի քարաբեկորի և ուշքից գնացի։ Սթափվելուց յետոյ, նկատեցի որ ուղեկիցներս բոլորն էլ անչափ զարմացել են, որ մի քերծուածք անգամ չեմ ստացել։ Հարկադրուած բացայայտեցի, որ ձիուց վայր ընկնելուս պահին յայտնուեց Ալիի արժանաւոր որդի Հազրաթ Աբոլֆազլը և դահավիժելուս մոմենտին բռնեց փրկելով ինձ ստոյգ վտանգից։ Հայրս ներկայ չէր դէպքի վայրում, բայց յետոյ, երբ պատմեցի եղելութիւնը, նա լրջօրէն չընկալեց իմ հեքիաթը և ես էլ ծանօթ լինելով նրա բնաւորութեան հետ այլևս չպնդեցի։ Հարկաւ, ես ինքս ամենաչնչին կասկածն անգամ չունեցայ Հազրաթ Աբաս էբնէ Ալիի յայտնուելու երևոյթի մէջ։

Երրորդ դէպքը, որի շնորհիւ ես աւելի մերձեցայ իմացական աշխարհի հրապոյրներին, պատահեց մի գեղեցիկ օր, երբ դաստիարակիս հետ ճեմում էինք Սաադաբադ պալատի աղիւսաշար փողոցներից մէկում. եղաւ մի պահ, որ անսպասելիօրէն իմ առջև ուրուագծուած տեսայ հրեշտակային դէմքով մի անձնաւորութեան սիլուէտը՝ գլուխը պարուրուած լոյսի շրջանակով, այն ինչ որ պատկերում են արևմտեան նկարիչները Մարիամի որդի Քրիստոսից։ Մի ներշընչանք ինձ յուշեց, որ կանգնած եմ սրբազան մարգարէի Էմամ Ղայեմի առջև։ Դա տևեց լոկ մի քանի ակնթարթ և ժամանակի վերջին էմամի անյայտացումով ես ընկայ զարմանքի ու մտատանջութեան

մէջ, ուստի ոգևորուած հարցրի ուսուցչիս։ — «Նրան տեսա՞ր»։ Դաստիարակս շշմեց։ — «Ո՞ւմ տեսայ, — հարցրեց նա, — Ոչ ոք չկայ այստեղ...»։ Բայց ես այնքան էի համոզուած տեսածիս ճշմարտութեան ու ազնուութեան մէջ, որ ծերունազարդ դաստիարակիս պատասխանը ամենևին չխախտեց իմ հաւատքս։ Այսօր շատերը, մասնաւորաբար արևմուտքցիները թերևս պիտի մտածեն, որ յիշեալ դէպքի նկարագրութեամբ ես կամ տարուած եմ ցնորքներով, կամ այն ինչ տեսել եմ, եղել է հոգեկան հասարակ ռեֆլեքս, բայց չպիտի անտեսել, որ հոգու, ինչպէս նաև նիւթին չառնչուող երեւոյթների նկատմամբ ունեցած բուռն հաւատքը աբևելեան ժողովուրդների բնութագրի ամենայատկանշական կողմերից մէկն է, այնպէս ինչպէս արևմտեան ժողովուրդներն ևս օժտուած են նոյնանման հաւատքով ու հակումներով։ Բացի դրանից, ես այն ժամանակ պատճառ չունէի այս երևոյթի մասին ստելու ուսուցչիս. ներկայումս էլ նման խնդիրների մասին շաղակրատելու սովորութիւն չունեմ, ընդորում տեսալ դէպքի մասին տեղեակ են մտերիմների մի չնչին տոկոս։ Նոյնիսկ հայրս՝ իմ ամենամտերիմն ու հարազատը երբէք չիմացաւ եղելութիւնը։

Յիշեալ դէպքից յետոյ պատահեց, որ հիւանդացայ կապոյտ հազով, դիֆտերիով, և աւելի ուշ մալարիայով, բայց հիւանդ օրերիս, երբևէ, ոչ երազում, ոչ արթուն դրութեամբ չհանդիպեցի նման երևոյթների։

Ինչևէ, վեց կամ եօթ տարեկանից իմ մէջ

աստիճանաբար ամրապնդեց այն հաւատքն ու համոզումը, որ Ամենակարող Բարձրեալը ինձ առել է իր ողորմածիկ հովանու ներքոյ, և դեռ պիտի պահի։ Այս հաւատքի շնորհիւ զգում եմ սրտի գոհունակութիւն և մտքի անդորը, հետևաբար երբ չափում եմ սեփական կամքս Աստուածային կամքի հետ, խիստ երկմտում եմ և դժուարանում եմ պարզել, որ իմ կամքը նուաճա՞ծ է թէ լիազօր· և եթէ Աստուածային մի ոյժ պահպանում ու հովանաւորում է ինձ, ապա դրա մէջ պիտի որոնել իմաստ ու պատճառ։ Թերևս այսպիսի մտորումները նրանց մօտ, ովքեր իրենց համարում են եփուած ու լաւատեղեակ, ընկալուի տհաճօրէն, բայց իմ տեսակէտով Աստուած միշտ պահել ու պահպանել է ինձ բոլոր վտանգներից ու պատուհասներից, որով ուժեղացել է իմ հաւատքը նրա միակութեան ու արդարադատութեան նկատմամբ։ Այս անհերքելի իրողութիւնը ընդունում են նաև այլ ժողովուրդներ, օրինակ, անգլիացիները չեն խուսափում արտասանել «Աստուած պահապան Արքային» յայտնի քերթուածքը· ամերիկացիներն ևս մետաղադրամների վրայ փորագրել են՝ «մենք հաւատում ենք Աստծուն» նախադասութիւնը։

Մանկութեանս շրջանում պատահած վերոյշեալ դէպքերից բացի իմ կեանքիս ընթացքին տեղի ունեցան չորս ուրիշ պատահարներ, որոնք բոլորն էլ իրենց հերթին նշանակալից էին և պատճառ հանդիսացան, որ իմ մէջ էլ աւելի ամրապնդի բարձրեալն Աստծոյ հանդէպ ունեցած հաւատքն ու երկիւղածութիւնը։

Իսպահանի շրջանում գտնուող Քուհրանդ ջրամբարտակի կառուցման աշխատանքները դիտարկելուց յետոյ՝ վերադարձին պատահեց առաջին դէպքը։ Զօրաբանակի հրամանատարներից մէկի ընկերակցութեամբ նստեցի անձնական ինքնաթիռը, որ կանգնած էր մի նեղ տափարակ շերտի վրայ։ Ունենալով օդաչուի վկայական և սիրելով անձնական կամ ամեն տեսակի օդանաւեր վարելը, անձամբ նստեցի ղեկի առջև· ինքնաթիռը թեթև տեսակից էր և ունէր մէկ մոտոր։ Տասը րոպէ թռիչքից յետոյ, անսպասելիօրէն մոտորը հանգչեց, ուստի և ստիպուած եղայ հարկադրաբար վայրէջքի անցնել լեռնային շրջանում տարածուած մի քարքարոտ ձորակի մէջ։ Ով ծանօթ է ինքնաթիռ վարելու արուեստին իմանում է, որ երբ օդանաւի արագութիւնը նուազում է որոշեալ չափից աւելի, օդանաւը պտտւում է իր շուրջ։ Տուեալ դրութեամբ չէի կարող ինքնաթիռը նեղ ձորակում շեղել այնպէս, որով հնարաւոր դառնար սովորական վայրէջքը։ Հետևաբար ինձ մնում էր միայն պահպանել օդանաւի արագութիւնը հնարաւորութեանս սահմանում և դահավիժել ներքև։ Նախքան այն որ ինքնաթիռը հասնէր գետին քաշեցի բռնակը, որպէսզի ինքնաթիռի առաջամասը չբախուի մեր դիմացում նկատուած ժայռաբեկորին։ Օդանաւի արագութիւնը իջել էր այնքան, որ ենթադրաբար եթէ կարողանայինք ոստնել առաջին ժայռաբեկորի վրայից, այլևս անհնարին էր թւում աւելի խոշոր յաջորդից անցումը։

Կատարեց անխուսափելին. ինքնաթիռը բախեց առաջին քարաբեկորին, որի հետևանքով անիւները թէև պոկուեցին, բայց և պատճառ դարձան, որ կասեցուի օդանաւի արագութիւնը. մինչև յաջորդ բախիւնը ինքնաթիռը սահեց գետնի վրայ և դիպչելով երկրորդ քարաբեկորին ջարդուեց պոռուտակն ու գլխիվայր շուռ եկաւ ու ամեն ինչ հանդարտուեց։ Մենք միանդամայն անվնաս էինք մնացել։ Դա հրաշք էր և այնքան անհաւատալի և հետաքրքրական, որ ակամային ծիծաղեցի. հարկաւ ուղեկիցս մի այնպիսի դրութեան մէջ էր, որ չէր կարող ծիծաղելի բան գտնել այս պատահարի մէջ։

Պէտք է դիտել ինչի կարելի է վերագրել այս դիպուածը՝ պատահականութե՞ն, բախտի՞, թէ մի այլ աներևոյթ ոյժի, որ ստեղծել էր ինչ որ բարեյաջող պատահականութիւն։ Թերևս ընթերցողը աւելի լաւ կարողանայ մեկնաբանել իրադրութիւնը։ Ի դէպ տեղին է աւելացնել, որ աւարտել է Քուհրանդ Ջրամբարտակի կառուցումը վաղուց և յանձնուել շահագործման՝ ոռոգելով շրջակայ հողամասերը։

Երկրորդ դրուագը Ատրպատականի նահանգի ազատագրումն էր օտար ոյժերից։ Յաջորդ գլուխներում մանրամասնօրէն պիտի անդրադառնամ այս տարօրնակ դիպուածին և այն մասին թէ ինչպէս Աստծոյ կամեցողութեամբ և նացիոնալիստական ոգով ազատագրեցինք այն։

Թագաւորութեանս շրջանի երրորդ զարմանալի և դառն պատահարը տեղի ունեցաւ 1327 թւի Բահման ամսին, երբ պիտի մասնակցէի համալսարանի հիմնադրման տարեդարձի տօնակատարութեանը։ Այդ օրը հագնուել էի զինուորական տարազով։ Երբ իջայ մեքենայից և ուզում է մուտք գործել իրաւաբանական ֆակուլտետի սրահը, ուր պիտի կայանար օրուայ հանդիսութիւնը, յանկարծ լսուեց կրակոցի ձայն և գնդակներ արձակուեցին ինձ վրայ։ Թէև առաջին հայեացքից թւում է անհաւանական, բայց արձակուած չորս գնդակներից երեքը ծակել էին զինուորական գլխարկս առանց դիպչելու գլխիս և լոկ չորրորդը աջ կողմից ծակելով այտս, դուրս էր եկել քերծելով վերի շրթունքս ու քթիս ներքևը։

Ահաբեկիչը, որ նկարչի անուան տակ մուտք էր գործել յիշեալ վայրը, ընդամենը երկու մետրով էր հեռու ինձանից՝ ատրճանակի փողը նշան բռնած ուշադրելով ճիշտ կրծքիս։ Ես և նա կանգնած էինք դէմ առ դէմ և մեզ իրարից բաժանող տարածութեան մէջ ոչինչ չկար։ Զգացի, որ նա կարող է կրակել անվրէպ։ Դեռևս մտաբերում եմ իմ ռեֆլեքսը այդ անմոռանալի պահին։ Նախ մտածեցի նետուել նրա վրայ, բայց անմիջապէս գտայ, որ այս ձևով պիտի հեշտացրած լինեմ նրա գործը։ Փախուստի դէպքում էլ պիտի գնդակահարուէի յետևից։ Հարկադրաբար սկսեցի զինուորական ծանօթ տակտիկայով շարժուձևեր անել տեղում, որով պիտի խանգարած լինէի ճիշտ նշանառումը։ Ահաբեկիչը արձակեց ևս մի գնդակ, որ վիրաւորեց ուսս։ Վերջին գնդակը դէմ առնելով խողովակի մէջ չարձակուեց։

Զգացի, որ այլևս որևէ վտանգ չի սպառնում ինձ և որ կենդանի եմ։ Ահաբեկիչը գայրացած ատրճանակը շպրտեց դեպին և փորձեց փախչել, սակայն շրջապատված լինելով իմ ուղեկիցներով, ցաւօք սրտի սպանուեց, որով չպարզուեց իսկական դրդիչների ով լինելը։ Հետագային իմացուեց, որ նա կապ է ունեցել ծայրայեղական կրօնաւորների հետ և միաժամանակ բացայտուեցին փաստեր, որոնք խօսում էին նրա՝ լուծարքի ենթարկուած Թուդէ կուսակցութեան հետ ունեցած շփումների մասին։ Հետաքրքիր էր և այն, որ Թեհրանի անգլիական դեսպանատան այգեպանի աղջիկը նրա սիրուհին էր։

Արիւնը շատրւանի պէս յորդում էր իմ վէրքերից, բայց մտաբերում եմ, որ հէնց այդ դրութեամբ ցանկութիւն ունէի մասնակցելու օրւայ հանդիսութեանը։ Այնուամենայնիւ ուղեկիցներս ինձ փոխադրեցին հիւանդանոց, ուր կապեցին վէրքերս։Շատ չանցած իմ արիւնոտ զինւորական հագուստս ցուցադրուեց Թեհրանի սպայական ակումբում և դեռ այսօր էլ ակումբ այցելողները կարող են տեսնել դա իրենց աչքով։

Այս պատահարն ևս աւելի զօրացրեց իմ հաւատքը Ամենակարող Աստծոյ հանդէպ և ամրապնդեց իմ անքակտելի կապը բարձրեալի հետ։

Չորրորդ դրւագը, որի մասին հանգամանօրէն գրած է այս գրքում, 1332 թւի Մորդադ 28-ի ընդվզումն էր, որ Իրանը ազատագրեց Մոսադեղի ճանկերից։ Դր. Մոսադեղը թերևս դառնար քաղաքական լաւ առաջնորդ, բայց իշխանութեան վերջին տարիներին ընկաւ շրջապատի և իր իսկ ծայրայեղական մտքերի, ինչպէս նաև մի օտար կառավարութեան անուղղակի միջամտումների ազդեցութեան տակ։

Իմ համոզմամբ Դր. Մոսադեղի ռեժիմի կործանումը կատարուեց երկրի հասարակ ժողովրդի միահամուռ ջանքերով, որոնց սրտերում շողշողում էր աստուածային հզօր կամքը։

Համոզուած եմ նաև, որ թագաւորութեանս շրջանի գործունէութիւնը կատարել եմ ինչ-որ աներևոյթ մի ոյժի հովանաւորութեամբ ու օգնութեամբ։ Ես չեմ ծածկում իմ զգացումներն ու սէրը կրօնի նկատմամբ, բայց չպիտի կարծել, որ ցանկութիւն ունեմ հաւակնելու՝ թէ առաքուած եմ Աստծոյ կողմից կամ գործօն եմ աստուածային հրամանների իրագործմանն ի խնդիր։ Փափագում եմ պարզ ու որոշակի շեշտել, որ մի այդպիսի պաշտօն երբեէ նկատի չունեմ իմ համար։

Մանկութեանս վաղ շրջանից իմացել եմ, որ հանգամանքների դասաւորմամբ, կոչուած եմ ստանձնելու մի հինաւուրց երկրի ղեկավարութիւնը, երկիր, որ ունի մշակոյթ և որին պաշտում եմ։ Հետևաբար ինձ է մնում բարելաւելու այստեղ ապրող ժողովրդի, մասնաւորաբար հասարակ դասի վիճակն ու ապրելակերպը։

Զգում եմ, որ Աստծոյ հանդէպ տածած իմ

իրական հաւատքը զօրավիգ պիտի լինի ինձ այս սրբազան առաքելութեանս մէջ. ինքնասէր չեմ այնքան, որպէսզի թոյլ տամ ինձ մտածել, թէ առանց աստուածային ողորմածութեան, յաջողել եմ հասնելու ամեն մի վերելքի ու յառաջադիմութեան։

Դ. ՄԱՍ

ՃԱՀԻ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Արևմտեան աշխարհի յառաջադիմութեանն ու վերելքին ծառայող հիմունքների կիրարկումը Իրանում՝ հօրս որոշումներից մէկն էր, ուստի երբ նա ինձ ուղարկեց Եւրոպա, ոչ ոք զարմացաւ։ Բոլորը գիտէին, որ հայրս ցանկութիւն ունի թագաժառանգին ծանօթացնելու արևմտեան կուլտուրային՝ նրա առջև բացելու արևմտեան երկրների յաջողութեան գաղտնիքները։

Թէ ո՞ր երկրում պէտք է սովորէի, հայրս երկար ժամանակ մտատանջութեան մէջ էր, որովհետև արևմտեան կուլտուրայի մասին ունեցած մեծ համարումի հետ միաժամանակ, մասամբ կասկածամիտ ու յոռետես էր տրամադրուած օտարների հանդէպ։ Վերջապէս երկարատև ուսումնասիրութիւններից յետոյ,

նա կանգ առաւ Շուեցարիայի վրայ։ Ըստ իս՝ տուեալ ընտրութեանը հիմք էր ծառայում այն հանգամանքը, որ նա փափագում էր իմ կրթութիւնն անցնի քաղաքական գոյներից ու հոսանքներից զերծ միջավայրում։ Լինելով փոքր երկիր՝ Շուեցարիան ընդհանրապէս հեռու էր մնում Եւրոպայի քաղաքական քաշքշուքներից, պահելով չէզոք ուղղութիւն։ Հօրս խորհրդականներն ևս շուեցարական միջավայրը համարեա դտան ուսումով շահագրգռող որևէ անհատի համար։

1310 թուի Օրդիբեհեշտ ամսին աւարտեցի «Նեզամ» դպրոցի դասընթացքը և նոյն թուի Շահրիւարին՝ ամառային արձակուրդս անցկացնելուց յետոյ, լիովին պատրաստ էի Շուեցարիա կատարելիք ուղևորութեանս համար։ Հօրս կարգադրութեամբ իմ խնամատարը նշանակուեց Դր. Մուսդաք Նաֆիսին, որը մանկութեանս շրջանում եղել էր իմ հիւանդութիւնների բժիշկը։ Որոշուեց, որ իմ կրթական և անձնական բոլոր խնդիրները Շուեցարիայում տնօրինուի նրա հայեցողութեամբ ու պատասխանատուութեամբ։

Ինձ Շուեցարիայում պիտի ուղեկցէր նաև պարսկերէնիս գրականութեան ուսուցիչ՝ պրն. Մոսթաշարը, պարսկերէն դասերս տեւականօրէն շարունակելու նպատակով։ Ի դէպ, հօրս ցանկութեամբ ինձ ընկերակցում էին եղբայրս և «Նեզամ» դպրոցի երկու դասընկերներս, որոց ընտրութիւնը յանձնարարուեց ինձ։ Առաջարկեցի Հոսէյն Ֆարդուստին (որի մասին նշուել է նախօրօք) և ապա Մեհրփուր Թէյմուրթաշին, որը պալատական նախարարի որդին էր։ Ստանալով

հօրս յօժարութիւնը, այս խմբով ուղևորուեցինք դէպի Շուեցարիա։ (Սակայն մի քանի տարի անց, երբ պալատական նախարարը արժանացաւ հօրս յիշաչար վերաբերմունքին, Մեհրփուրը ստիպողաբար վերադարձաւ հայրենիք)։

Բանդար-Փեհլևի նաւահանգստում, ուր ինձ ճանապարհելու էին եկել մայրս և մեր ընտանիքի բոլոր անդամները, ողջագուրուեցի նրանց հետ և Դր. Նաֆիսիի, պրն. Մոսթաշարի, եղբօրս ու վերոյիշեալ ընկերներիս հետ նաւով ճանապարհուեցինք Բաքու, և ապա Լեհաստանի ու Գերմանիոյ վրայով ժամանեցինք Շուեցարիա, կանգ առնելով Ժընևում։ Աւելորդ է նշել, որ այս ուղևորութիւնը, չորս պատանիներիս համար, որ մինչ այդ չէինք հեռացել մեր ասիական ծննդավայրից, անչափ հետաքրքրական էր։ Ժընևում երկու շաբաթ ապրեցինք Իրանի հիւպատոսարանում և ապա անցնելով Լոզան՝ արձանագրուեցինք մի մասնաւոր դպրոցում։ Լոզանում ես ու եղբայրս բնակութիւն հաստատեցինք շուեցարական մի ընտանիքում։ Մերսիէն՝ ընտանիքի հայրը ունէր երեք տղայ և երկու աղջիկ զաւակներ։ Ինձ համար ախորժելի էր այս ընտանիքի հոգատար մթնոլորտը։ Իրանցի ընկերներս հեռու էին մեզանից և բնակւում էին գիշերօթիկում։

Մէկ տարի Մերսիէների մօտ ապրելուց յետոյ, խնամատարիս առաջարկութեամբ և հօրս կարգադրութեամբ տեղափոխուեցինք Ժընևի և Լոզանի միջև գտնուող «Լեռուզի» գիշերօթիկը։ Դրա շարժա-

ռիթն այն էր, որ հայրս փափագում էր, իմ կրթութիւնը ընթանար սովորական ու կանոնաւոր պայմաններում՝ գիշերօթիկ դիսցիպլինայի տակ։ Նախկին դպրոցը երկսեռ էր և ունէր թւով 150 աշակերտուհիներ, սակայն գիշերօթիկը տղայոց էր և կազմուած էր մէկ ու կէս անգամ աւելի աշակերտներից։ Ի դէպ, յաջորդ տարուայ մէջ միւս չորս եղբայրներս ևս ընդունուեցին այս դպրոցում։

Շուեցարիայում անցկացրածս չորս տարիները իմ կեանքի ամենանշանակալից շրջաններից մէկը եղաւ։ Շուեցարիայի դեմոկրատիկ և մաքուր արևմտեան շրջապատը, հօրից յետոյ ամենից առաւել ազդեց իմ հոգու և բնաւորութեան կազմաւորման վրայ։

Մարմնական արագ աճս այս երկրում՝ զարմանք էր պատճառում թէ ինձ և թէ ուրիշներին, որովհետև ինչպէս ասել եմ նախօրօք, մանկութեանս շրջանում ֆիզիքապէս ուժեղ չէի, սակայն Շուեցարիայում աճեցի արագօրէն և մկաններս զարգացան։ Մարզական տարբեր ճիւղերում՝ օրինակ սկաւառակի նետման, նիզակի նետման, բարձրացատկի, հեռացատկի և 100 մեթր վազքի մէջ դարձայ ախոյեան, արժանանալով մարզական պարգևների։ Դարձայ նաև դպրոցի ոտնագնդակի և թենիսի թիմերի պետը։ Այս շրջանումն էր, որ լիովին ըմբռնեցի սպորտի կարևորութիւնն ու արժէքը՝ երիտասարդութեան դաստիարակութեան խնդրում։

Զեմ կարծում ֆիզիքական արագ աճս կապ ունենար դպրոցի սննդին, որովհետև Իրանում իմ

ֆրանսիացի դաստիարակչուհին վարժեցրել էր ինձ ֆրանսիական կերակրատեսակներին, որոնք այնքան էլ չեն տարբերուում շուեցարիականից։ Կասկած չկայ, որ Շուեցարիայի օդը մաքուր է ու կենսատու, բայց Թեհրանի կլիման ևս նոյնպիսին է։ Ըստ իս՝ մարմնական աճիս արագ վերելքը պիտի վերագրել մտային զարգացման, նոր շրջապատում։

Թեհրանում դասերիս գնահատականները սովորաբար բարձր էին, թէև իրօք չգիտեմ այդ նիշերը, տրուում էին նկատի ունենալով անձնական կարողութիւնս ու իմացականութի՞ւնս, թէ՞ դիրքս ու կարիերաս։ Այնուամենայնիւ, Շուեցարիայում ևս, ուր անհատի հասարակական դիրքը դեր չի կարող ունենալ նրա ուսման նիշերի վրայ, իմ գնահատականները նոյնպէս բարձր էին։ Կաղում էի միայն երկրաչափութեան մէջ և չգիտեմ ի՞նչն էր դրա պատճառը։ Սիրում էի ալգեբրան, եռանկիւնաչափութիւնը, բնագիտական առարկաները՝ օրինակ՝ ֆիզիկան ու քիմիան։ Ինչևէ, դասերիս մէջ ևս արժանացայ գերազանց նիշերի ու պարգևների։ Մեծ էր սէրս աշխարհագրութեան, պատմութեան և բնագիտութեան հանդէպ։ Մեծ յառաջադիմութիւն ցուցաբերեցի ֆրանսերէնի մէջ և հաճոյքով էի ծանօթանում ֆրանսական ճոխ գրականութեան հետ։

Եթէ դպրոցի ուսուցիչները վարպետ էին իրենց գործի մէջ, ապա նրանցից ոչ մէկը յատուկ ազդեցութիւն չունեցան ինձ վրայ և առանձնապէս չմտերմացայ նրանց հետ։ Դեռ աւելին, նոյնիսկ վախե-

նում էի մի քանիսից։ Աշակերտութեան մօտ ունէի յատուկ համարում և դա բղխում էր ոչ թէ իմ ունեցած դիրքից, այլ անձնականութիւնից։ Յիշում եմ, սենեակս կրում էր աշակերտական հաւաքատեղիի բնոյթ։ Այդ օրերին անդրադարձայ արևմտեան դեմոկրատիայի պրոցեսներից՝ պարզ ու անշահախնդիր վերաբերմունքի ու յարաբերութեան կարևորութեանը։ Դա իհարկէ մեծապէս նպաստում էր իմ աշխատասիրութեան ու ուշադրութեան առաւել դրսևորմանը։ Ընթերցումի, խաղի, մարզանքի և նոյնիսկ ընկեր ընտրելու պահերին ըմբոշխնում էի դիսցիպլինայով զուգորդուած ազատութիւնը, որի շնորհիւ կարողացայ լաւագոյն կերպով ընկալել այն ճշմարտութիւնը, որ առանց դեմոկրատական ազատութեան՝ դիսցիպլինան հանդէս կը գայ դիկտատուրայի օգտին և դիսցիպլինայից զուրկ դեմոկրատիան պատճառ կարող է հանդիսանալ անարխիզմի ու անկարգութեան։

Այդ բոլորով հանդերձ՝ իմ կեանքը դպրոցում տարբերւում էր ուրիշ աշակերտներից և աւելի շատ էր ենթակայ ուշադրութեան ու հոգատարութեան, որովհետև նախ՝ իմ ուսման ծրագիրը աւելի ծանր էր նրանցից և բացի դրանից՝ պրն. Մոսթաշարը ուշադրութեամբ հետևում էր պարսից գրականութեան դասերին, որոնք մնում էին հօրս հետաքրքրութեան կենտրոնում։ Երկրորդ, խնամատարս՝ Դր. Նաֆիսին հսկում էր իմ իւրաքանչիւր քայլիս, պահածքին ու աշխատանքին։ Ներկայում Դր. Նաֆիսին ոչ ևս է և ցաւում չեմ կարողացել որոշել թէ հանգուցեալի խբս-

տապահանջութիւնը բղխում էր հօրս հրամաններից, թէ՞ նրա այն բուռն սիրուց ու շահագրգռածութիւնից, որ տածում էր իմ ու իմ դաստիրակութեան նկատմամբ։ Այսպիսով ես նման էի բանտարկեալի. նոյնիսկ թոյլտուութիւն չունէի, բացի մասնաւոր դէպքերից, որոնց ընթացքին խնամատարս անպայման ուղեկցում էր ինձ, թողնել դպրոցի շրջափակը։ Ծընունդեան և ամանօրի արձակուրդներին բոլոր ընկերներս մեծ ուրախութեամբ ու ազատօրէն մասնակցում էին պարերեկոների ու դիշերային հաւաքոյթների, իսկ ես մնում էի սենեակիս միայնակութեան մէջ։ Հաճոյքիս առարկաներն էին կազմում միայն մէկ ռադիո և մէկ գրամաֆոն, որոնք ընկերներիս հաճոյքների համեմատութեամբ անչափ խղճուկ ու չնչին էին։ Իմ կարծիքով տեսալ մեթոդը ճիշտ չէր և եթէ զաւակ ունենամ, անկասկած նրան կը դաստիարակեմ տարբեր եղանակով։ Ինչպէս, ստիպողական կղզիացումը ինձ դարձրեց խիստ, թերևս չափից աւելի խիստ, և դրա ազդեցութիւնը իմ հոգում շարունակւում է մինչև անդամ ներկայում։ Ես հանդիստ ու անտարբեր եմ վտանգների ու արկածների դէպքերում, հազւադէպ են ջղերս դաւաճանում ինձ։ Ենթադրում եմ՝ զուրկ չեմ նաև հիւմորից, թէև դա ինձ մօտ աւելի սահմանափակ է սովորական անհատներից։

Սիրում եմ տեղին կատակները, քաղաքական կարիկատուրները։ Սովորական մարդկանց ու խաւերի հետ շփւելուց, զգում եմ հոգեկան բաւարարութիւն։

Երեխաները իմ սիրոյ ու խանդաղատանքի կենտրոնումն են։ Հրճւում եմ դպրոցների դիտարկումից, մանուկների խօսակցութիւնից, նրանց պարզ ու անկաշկանդ վերաբերմունքից։

Շուեցարիայում եղած օրերին, յաճախ խորհում էի իմ ապագայ պատասխանատուութիւնների մասին։ Հօրս հետ ունէի նամակագրական շաբաթական կանոնաւոր կապ։ Քիչ էի գրում մօրս, քոյրերիս ու եղբայրներիս։ Կարծում եմ, որ ապագայում իմաստութեամբ թագաւորելու, իմ սրտագին ցանկութիւնը ինձ մղեց, որ ուսման ու կրթութեան բնագաւառում լինեմ շատ աւելի ջանասէր ու յամառ, քան այն՝ ինչ որ սպասւում է մի պատանի աշակերտից։ Այդ ցանկութիւնը պատճառ դարձաւ նաև, որ բծախնդրորէն կանգ առնեմ իւրաքանչիւր ճիւղի վրայ, աւելի գերադասեմ բնագիտական առարկաները, որոնք պիտի օժանդակէն երկրի բնական հարստութիւնների ընդլայնման հետևանքով ստեղծւելիք տեխնոլոգիական դժւարին խնդիրների լուծման։

Անցնող գլխում, արդէն խօսել եմ իմ կրօնական սկզբունքների և հոգեկան տւեալների մասին։ Եւրոպայում անցկացրած առաջին երկու տարիներին, նոր շրջապատի հետ ծանօթանալու հետևանքով, պատեհութիւն չունէի տարւելու կրօնական մտքերով։ Շատ չանցած հետզհետէ իմ մէջ վերածնւեցին նախկին հետաքրքրութիւնը, տեղի տալով յաւուր աղօթքի սովորութեան։ Վերջին երեք տարիներին, դա արդէն կատարում էի ամենայն ջերմեռանդութեամբ ու

սրտագին ցանկութեամբ, որովհետև վճռել էի թագաւորութեանս շրջանում առաջնորդւել հաւատքի լոյսով։

Յաճախ խորհում էի քաղաքականութեան և այն սկզբունքների մասին, որոնք պիտի կիրարկէի թագաւորութեանս շրջանում։ Դեռևս այդ օրերին առկայ էր իմ համակրանքը երկրի հասարակ ժողովրդի, մասնաւորապէս երկրագործ տարրի նկատմամբ։ Որոշում ունէի թագաւոր դառնալուց յետոյ վերացնել արքունական կալւածների գիւղացիութեան տուրքը երկուսից երեք տարւայ ժամանակաշրջանով, որը նրանց պիտի հնարաւորութիւն տար տէր դառնալու սեփական տան, երկրագործական գործիքների և հոգալու անհրաժեշտ պէտքերը։ Երիտասարդ օրերիս այս գաղափարը ներկայում մարմնաւորւել է արքունական կալւածների բաժանումի ձևով՝ որի մասին պիտի խօսեմ մանրամասնօրէն։

Հանրային բողոքների արկղ պատրաստելու գաղափարը ևս, այդ օրերին զբաղեցնում էր իմ միտքը։ Դրանով հարստահարւած ու անիրաււած տարրերին պատեհութիւն էր ընձեռնւում ներկայացնելու իրենց բողքները, հաղորդակից դարձնելով ինձ երկրի ժողովրդի կարիքներին ու դժւարութիւններին։ Թւում է, այս գաղափարին հիմք էր ծառայում Նուշիրւանի արդարադատութեան զանգը, որի մասին պատմել եմ նախապէս։

Երկրի դահն ու գայիսոնը ժառանգելուց յետոյ, իմ մէջ ուժեղացաւ աշակերտական օրերիս միտքը։

Սկզբում վճռեցի ժամերիս մեծագոյն մասը տրամադրել հասարակ ժողովրդին, մօտիկից շփուելով նրանց հետ. սակայն դա անիրագործելի էր, որովհետև օրուայ մէջ ութ ժամ պիտի զբաղուէի առօրեայ խնդիրներով ու պաշտօնական հանդիպումներով, ութ ժամ պիտի հասնէի անձնական խնդիրներիս և մնացեալ ութ ժամուայ մէջ բնականաբար հնարաւոր չէր ընդունել տասից տասնհինգ հոգուց աւելի, ընդ որում առանց հրահրելու մարդկանց վիրաւորանքն ու սրտնեղութիւնը։ Այդ իսկ պատճառով որոշեցի մտայղացումս իրականացնել տարբեր միջոցներով. կազմեց «Արքայական Յատուկ Գրասենեակ», որի գծով իւրաքանչիւր անհատ, ինչ դիրքի կամ պաշտօնի էլ պատկանելու լինէր, հնարաւորութիւն էր ունենում նամակագրութեամբ ուղղակիօրէն կապուել ինձ հետ։ Այս մեթոդը շարունակւում է մինչև այսօր, և իմ անունով ուղարկուած նամակներն ու խնդրագրերը, լինեն դրանք հասարակ գիւղացու թէ վարչապետի կողմից, հասնում են իմ ձեռքը։ Ամեն ամիս հարիւրաւոր նամակներ ու խնդրագրեր են ստացւում, որոնք բոլորն էլ Յատուկ Գրասենեակի անդամների կողմից ներկայացւում են ինձ լրիւ կամ համառօտած ձևով՝ կցած ունենալով իսկական պատճէն։ Պատասխանւում է բոլոր նամակներին և եթէ որոշ խնդիրներ պէտք ունենան իմ կամ պետական կազմակերպութիւնների օժանդակութեան, ուղարկւում է առ ի գործադրում։ Պետական հիմնարկութիւնները պարտաւոր են կատարած աշխատանքների մասին զեկուցել ինձ և հնարաւորութեան սահմաններում ապահովել դիմող անձանց խնդրանքը։

Կազմուել է նաև Արքայական Տեսուչների Կազմակերպութիւնը, որի պարտականութիւններից մէկն է նաև հանրային բողոքների ուսումնդրումը։ Ցիշեալ կազմակերպութեան մասին յաջորդ գլխում պիտի անդրադառնամ մանրամասնօրէն։

Ինչպէս, 1315-ի գարնանը յաջողութեամբ պաշտպանեցի թեզս և հասաւ հայրենիք վերադառնալու բաղձալի պահը։ Մեր ընտանիքը Բանդար-Փեհլևի նաւահանգստում, ուր ճամփել էին ինձ տարիներ առաջ, եկել էր դիմաւորելու մի զաւակի, որն առաջին հայեացքից անճանաչելի էր դարձել մինչև իսկ հօրս համար։ Հասնելուս պէս զգացի, որ մեծ փոփոխութիւններ են տեղի ունեցել Բանդար-Փեհլևիի ընդհանուր տեսքի մէջ։ Դա ոչ մի գնով չէր կարելի համեմատել այն օրերի հետ, երբ մեկնեցի Եւրոպա, որովհետև իրանական հասարակ գիւղից աճել ու դարձել էր եւրոպական մի քաղաք։ Հետագային պարզուեց, որ յիշեալ նաւահանգիստը նմոյշ է բարենորոգչական այն ծաւալուն աշխատանքներից, որ կատարուել ու տարածուել է երկրի բոլոր կէտերում։

Ամառային արձակուրդս ընտանեկան շրջապատում անցկացնելուց յետոյ, ընդունուեցի Թեհրանի սպայական համալսարանը։ Հայրս փափագում էր, որ բարձրագոյն կրթութիւնս սպայական համալսարանում լինելուն համընթաց, նրա անմիջական խնամքի ներքոյ իրացնեմ Շահնշահական գաղտնիքները։ Ես դէմ չէի հօրս ցանկութեանը, քանի որ սիրում էի զինուորական վարժութիւնները և յետոյ հօրս զբա-

ղեցնող պատասխանատուութիւնները հարկադրում էին յաճախակի շփումներ ունենալ նրա հետ և նրա որոշումը այս առումով տրուած էր հեռատեսօրէն։

Այն օրերին սպայական համալսարանում, որ կազմուել էր ֆրանսիական «Սեն Սիր» հանրածանօթ սպայական համալսարանի սկզբունքներով, ծառայում էին ֆրանսիացի զինուորական մասնագէտներ։ Ներկայում օգտուում ենք ամերիկացի մասնագէտներից, և մեր սպայական համալսարանը կառավարուում է ամերիկեան «Ուէստ Փոյնթ» համալսարանի մեթոդով, ըստ որի զինուորական կրթութեան ժամկէտը երկու տարուց դարձել է երեք տարուայ։ Սպայական համալսարանում բացի սովորական ծրագրից անցկացրի նաև զինուորական տակտիկայի և ստրատեգիայի մի յատուկ շրջան և վերջապէս 1317 թ-ի գարնանը աւագ սպայի կոչումով աւարտեցի համալսարանը և անմիջապէս տեսուչի պաշտօնով ծառայութեան անցայ Իրանի Շահնշահական զօրաբանակում։ Պաշտօնիս բերումով օրւայ մէջ երկու անգամ՝ առաւօտեան և երեկոյեան դիտարկում էի զինուորութեան և զօրաբանակի միաւորների հաստատութիւններն ու հիմնարկները։ Մասնակցում էի մանեւրների և ուղղակիօրէն հսկում էի զինուորների գործողութիւններին։ Դրանք երբեմն տեղի էին ունենում գիշերով։ Ցիշեալ ծրագիրը ծանր էր և կեանքը դարձնում էր միապաղաղ, բայց յանուն այն սիրոյ, որ տածում էի զօրաբանակի նկատմամբ և յանուն այն գիտակցութեան, որ ինձ էլ պարտականութիւն է տրուած մասնակցելու զօրաբանակի նորացմանն ու կազմաւորմանը՝ յոգնութիւն չէի զգում։ Այդ օրերին էր, որ ամուսնացայ եգիպտացի մի իշխանուհու՝ Ֆովզիէի հետ, որի մասին կ՚անդրադառնամ յաջորդ գլուխներում։

Բացի զինուորական պարտականութիւններից, ստիպուած էի ամեն օր հանդիպելու հօրս հետ, երբեմն առաւօտեան և մեծ մասամբ կէս ժամ մնացած ճաշին։ Շատ անգամ, կէսօրից յետոյ, նա կանչում էր ինձ և խօսում՝ ընթացիկ հարցերի, երկրի ներքին և արտաքին քաղաքականութեան և այլ խնդիրների մասին։ Մասնակցում էի նաև Իրանի զանազան շրջանները ունեցած հօրս ճանապարհորդութիւններին, որովհետև հայրս սիրում էր ինձ տանել երկրի տարբեր կէտերը և ծանօթացնել ժողովրդի ընդհանուր վիճակին, երկրի աշխարհագրական տեւալներին և իւրաքանչիւր շրջանին կապող խնդիրներին։ Ճանապարհորդութիւնների ընթացքում ևս խորհրդակցում էինք խնդրոյ առարկայ հարցերի մանրամասների շուրջ. սակայն պիտի նկատի ունենալ, որ խորհրդակցութիւնը տեւալ դէպքում կորցնում է իր իմաստը, քանի որ սովորաբար պետական բոլոր պաշտօնեաներն ու պատասխանատուները խօսակցութեան պահին այնպէս էին սարսափում հօրից և կամ քաղաքավարութեան ու մեծապատուութեան մէջ հասնում էին այնպիսի ծայրայեղութեան, որ այլևս՝ բառիս բուն իմաստով՝ խորհրդակցելու պատեհութիւնը չէր մնում։ Ես սովորաբար իմ կարծիքներն ու մօտեցումները արտայայտում էի ակնարկներով ու յապաւումներով, որոնք չէին կարող թող-

նել վիճաբանութեան կամ խորհրդակցութեան տպաւորութիւն։ Այս բոլորով հանդերձ, տասնինը տարեկան հասակում, մերթ ընդ մերթ համարձակօրէն խօսում էի որևէ խնդրի մասին ունեցած իմ մօտեցումների շուրջ և տարօրինակ էր, որ նա միշտ էլ ամենայն համբերութեամբ և ուշադրութեամբ լսում էր ինձ մինչև վերջ և հազուադէպ էր մերժում առաջարկներս։ Օրինակ՝ իմ յամառ բարեխօսութիւնների շնորհիւ ազատ արձակուեցին բազմաթիւ քաղաքական բանտարկեալներ։ Թերևս պիտի ափսոսալ՝ դրանցից մէկն էր Դր. Մոսադեղը, որ հետագային իր վարչապետութեան օրօք մօտ էր երկիրը կանգնեցնելու կործանումի եզրին և վերացնելու հօրս հիմնած թագաւորութիւնը։ Թէև Մոսադեղը շատ անգամներ է շեշտել, որ ստոյգ մահից եմ փրկել իր կեանքը, այսուամենայնիւ բոլորն էլ վկայ են, թէ նա ինչ տարօրինակ ձևով ցուցադրեց իր երախտագիտութիւնը... Հայրս Մոսադեղին ձերբակալել էր օտար տարրերի հետ ունեցած համագործակցութեան մեղադրանքով։ Չգիտեմ նրա մտքով ի՞նչ էր անցնում, որ բոլոր հակառակորդներին մասնակից էր համարում օտարների՝ մասնաւորաբար Անգլիացիների խարդաւանքներին։ Մոսադեղը աքսորուեց երկրի հեռաւոր ու վատ կլիմայով օժտուած կէտերից մէկը. լինելով ծեր ու հիւանդոտ, նա հազիւ թէ կարողանար կենդանի վերադառնալ աքսորից։ Իմ բարեխօսութեան հետևանքով ազատութիւն շնորհուեց նրան. յաջորդ գլխում նկարագրելու եմ, թէ նա ինչպէս օգտուեց շնորհուած ա-

զատութիւնից։ Երբեմն երկմտում եմ, թէ արդեո՞ք ճիշտ էր իմ բարեխօսութիւնը, բայց այնուամենայնիւ առանց ուրախութեան ու գոհունակութեան չեմ կարող չմտածել նրանց մասին, ովքեր ազատ կացուցեցին իմ բարեխօսութեամբ ու ջանքերով։

Այդ օրերի հօրս և իմ մտերմիկ յարաբերութիւնների մի դրուագ է տպաւորուել յիշողութեանս մէջ։ Տեսալ դէպքում հայրս իրաւացի էր, ես՝ սխալական։ Մի օր նրա ընկերակցութեամբ դիտարկում էինք Քլարդաշտ շրջանը. երբ հանգստանալու նպատակով առանձնացանք յատուկ վրանի մէջ, նա սկսեց քայլել և խօսելու պահին ասաց։ «Ուզում եմ երկրի պետական շրջանակները լինեն այնպէս, որ եթէ մի օր հեռանամ այս աշխարհից, ապա առօրեայ խնդիրները ընթանան բնականօրէն, առանց վերի շրջանակների ուղղակի միջամտութեան»։ Հօրս այս խօսքը այդ օրերին, որ զգայուն երիտասարդ էի և մտքով դեռ չէի զարգացել ըստ կարելոյն, խոցեց ինքնասիրութիւնս այն առումով, որ կարծում էի հօրս նպատակն է թերագնահատելու իմ կարողութիւնս, կամ այն, որ նրանից յետոյ ի վիճակի պիտի չլինեմ կատարելու պարտականութիւններս։ Այդուամենայնիւ 1320 թուի Շահրիվարի իրադարձութիւնների բերումով, երբ հայրս ստիպողաբար յանձնեց իր հրաժարականը և մեկնեց, պետական կազմակերպութիւններից ներս սկսեց մի անօրինակ անարխիա։ Այստեղ էր, որ յիշեցի նրա ճշմարիտ նախատեսութիւնն ու անհանգստութիւնը. և այն որ նրա նպատակները չիրագործ-

ւեցին կանոնաւոր կազմակերպութիւններ ստեղծելու ուղղութեամբ, անչափ տխրեցի։

Համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին՝ Իրանի բռնագրաւման մասին, տարածւել են երկդիմի և անճիշտ կարծիքներ։ Խնդրի անցեալի մասին գաղափար կազմելու համար պիտի նշել, որ հայրս Գերմանիոյ կառավարութեան հետ ստեղծել էր տնտեսական և մշակութային մօտիկ յարաբերութիւններ և մինչև 1317 թիւը, այսինքն Երկրորդ Աշխարհամարտին մէկ տարի մնացած, Գերմանիան Իրանի արտաքին առևտրի մէջ գրաւում էր առաջին, իսկ Ռուսիան երկրորդ տեղը։ Գերմանացիները մեծ մասամբ գնում էին անմշակ բուրդ ու բամբակ և վաճառում էին տեխնիկական սարքաւորումներ ու մեքենաներ։ Ի դէպ մեծ թւով գերմանացի մասնագէտներ ու ինժեներներ պաշտօնավարում էին մեր երկրում։ Նրանք օժանդակում էին ճարտարարուեստի ու տեխնիկայի զարգացմանը, երկաթուղու, նաւահանգիստների ու գործարանների շինարարութեանը։ Այդ պատճառով երկրի մեծ թւով տեխնիկական հաստատութիւնների մէջ շահագործւում էին գերմանական արտադրանքներ։ Թեհրանի ռադիոկայանում ևս զետեղւել էին գերմական ձայնացիրներ։ Գործարանների թողարկումից յետոյ գերմանացի մասնագէտները որոշ ժամանակով մնում էին Իրանում և ղեկավարում տեխնիկական միաւորների գործունէութիւնը։ Այսպիսով գերմանական շատ գործարաններ ու առևտրական հաստատութիւններ կային Իրանում։ Իրանի երիտասարդները մեկնում էին Գերմանիա ուսանելու, իսկ գերմանացի դասախօսները դասաւանդում էին Թեհրանի համալսարանում, ընդ որում գիւղատնտեսական և անասնապահական ֆակուլտետների վարիչները նոյնպէս գերմանացիներ էին։

Նացիները հսկայ քանակութեամբ գրքեր ու պրոպագանդային գրականութիւն նւիրեցին Իրանի ազգային գրադարանին։ Քարոզչական գործունէութիւն ծաւալեցին նաև Թեհրանի ռադիոկայանում, ուր նրանց պաշտօնական գործակալութեան պատւիրակը մատակարարում էր իրանեան մամուլի օրւայ նորութիւնները։ Թէ ինչու հայրս տնտեսական մօտիկ յարաբերութիւններ էր ստեղծել Գերմանիոյ հետ, շատ պարզ էր։ Նախ գերմանական արտադրանքներն ու գերմանացի մասնագէտների վարպետութիւնը հռչակ էին վայելում աշխարհում, և միաժամանակ նրանց առևտրական օրէնքները պարզ էին ու դիւրամատչելի։ Երկրորդ՝ Գերմանիան ոչ մի գաղութարարային անցեալ չէր ունեցել Իրանում։ Չէր միջամտել մեր երկրի ներքին խնդիրներին և հակառակ էր իմպերիալիստական երկու պետութիւնների հետ, որոնք տարիներ շարունակ չարաշահել էին մեր համբերութիւնը։

Գերմանական քարոզչութեան կենտրոնումն էր Իրանի և գերման ժողովուրդների արիական միասնական ծագում ունենալու տեսութիւնը։ Իրանի ժողովուրդը վարժւել էր ուժեղ պետականութեան մեթոդին և լիովին անտեղեակ էր, որ Հիտլերը նմա-

նապէս, մարդկային ազատութիւնը ոտնահարելու խնդրում ետ չի մնում Ստալինից։

Միւս կողմից, հայրս իր բարենորոգչական ու տնտեսական նպատակները կիրարկելու և Իրանի զօրաբանակը հզօրացնելու համար, կարիք ունէր տեխնիկական միջոցների և գերմանացի փորձուած մասնագէտների օժանդակութեանը։ Երբ դաշնակիցների իշխանութիւնը հաստատուեց ծովերի վրայ և նուազեց գերմանական արտադրանքների մուտքը դէպի Իրան, անգլիացիները ներկայացրին վարկատրման առաջարկներ, որոնց շնորհիւ պիտի կարողանային հոգալ մեր անհրաժեշտը դաշնակից պետութիւններից։ Բայց ելևմտական նախարարութիւնը մերժեց դրանք նկատի ունենալով այն հանգամանքը, որ դաշնակիցները իրենք ևս պէտք ունէին այն բոլորին, ինչ որ պահանջում էինք մենք։ Այդ իսկ պատճառով, մինչև մեր երկրի օկուպացումը դաշնակիցների կողմից, ցամաքի ճանապարհով շարունակւում էր գերմանական ապրանքների հոսանքը։

Հակառակ որոշ պատմագիրների վկայութեան, հայրս չէր համակրում Հիտլերին։ Նա 1934-ին Թիւրքիա կատարած ուղևորութեան ընթացքին լսել էր գերմանացիների գոռոզամտութեան մասին, որոնք Ա. աշխարհամարտին դաշնակից էին Թիւրքիոյ հետ։ 1930 թւից ի վեր, զգալի էր նոյն ակնյայտ ընթացքը Հիտլերի և իր հետևորդների կողմից։ Դեռ աւելին, Հիտլերի աշխարհակալական քաղաքականութիւնը Եւրոպայում և այն պարագան, որ Իրանը թերևս մի օր

կ'ընկնի գերմանական տիրապետութեան տակ, հօրս սառեցնում էր նրանց նկատմամբ։ Եւ վերջապէս օժտուած լինելով դիկտատորական հակումներով, հայրս չէր կարող հանդուրժել Հիտլերի նման մի այլ բռնապետի գոյութիւնը։

Երբ բռնկուեց Համաշխարհային Բ. պատերազմը, Իրանը անմիջապէս յայտարարեց իր չեզոքութիւնը, որովհետև հայրս ոչ մի գնով չէր ցանկանում երկիրը մատնել հրի ու սրի։ Համաձայն յայտարարութեան, Իրանի կառավարութիւնը ի զօրու էր պաշտպանելու իր չեզոքութիւնը իւրաքանչիւր ոտնձգութեան դէմ, լինի դա առանցքի թէ դաշնակից պետութիւնների կողմից։ Հօրս քաղաքականութիւնը կարելի է համառօտել այն իմաստով, որ չեզոքութիւնը զուգորդուած պիտի լինի ոյժով։ 1940-ի Յունիս 22-ին, երբ սկսուեց Հիտլերի արշաւանքը Ռուսիոյ վրայ, Իրանը մի անգամ ևս հաստատեց իր չեզոք լինելու հանգամանքը։

Գերմանիոյ ծաւալուն յարձակումը Խորհրդային Միութեան վրայ, ակնյայտ դարձրեց այն իրողութիւնը, որ Ռուսիոյ գոյութիւնը հնարաւոր է պահպանել միայն անգլիացիների ու ամերիկացիների արագ օգնութեան շնորհիւ։ Աշխարհի քարտէզը ուշադրութեամբ ուսումնասիրելիս, պարզւում է դաշնակիցների դժուարութիւնները տւեալ օգնութիւնները հասցնելու խնդրում։ Այսպէս։ Վլադիվոստոկն ու Խորհրդային միւս նաւահանգիստները Ծայրագոյն Արեւելքում գտնւում էին Ճապոնիայի նաւատորմիղի

անմիջական և ուժեղ հակողութեան ներքոյ։ Ճապոնիան թէև չէր մտել պատերազմի մէջ, սակայն 1940 թւի Սեպտեմբերին գործնականապէս դարձել էր Գերմանիոյ դաշնակից։ Իսկ յիշեալ նաւահանգիստների տարածութիւնը արևմտեան ճակատից շատ հեռու էր։ Դաշնակիցները Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսում գտնուող Մուրմանսկ նաւահանգստից որոշ օգնութիւններ էին մատակարարում ռուսներին։ Մովային այս ճանապարհը նմանապէս վտանգաւոր էր, որովհետև ռազմամթերքով բեռնաւորուած նաւերը հեշտութեամբ ենթարկուում էին Նորվեգիայի ափերում դարան մտած գերմանական ընդծովեանների յարձակմանը։ Մուրմանսկի երկաթուղային հնարաւորութիւնները իրենց հերթին սահմանափակ էին և հազիւ թէ պատեհութիւն ընձեռնէր կարճ ժամանակամիջոցում ստեղծելու անհրաժեշտ միջոցառումները օգնութիւնների գծով։ Տեսականօրէն թւում էր հնարաւոր էր օգտագործել Միջերկրական-Սև ծով ճանապարհը։ Սակայն Միջերկրականի նաւարկութիւնը դաշնակիցների համար օր-աւուր դառնում էր աւելի վտանգաւոր։ Միւս կողմից Իրանի չէզոքութիւնը պահելցանկացող Թիւրքիան փակել էր Դարդանելը։ Դարդանելի լայնքը շատ կէտերում մէկ մայլի հասնելու հետևանքով, ոյժով մտնելու դէպքում դաշնակիցները պիտի հանդիպէին Թիւրքիայի դիմադրութեան և մեծ հաւանականութեամբ Գերմանիոյ միջամտութեանը, որը իր ձեռքի տակ ունէր օկուպացած Յունաստանն ու Բուլգարիան։ Վերոյիշեալ խոչընդոտները պատճառ դարձան, որ դաշնակիցները հարկադրաբար կանգ առնեն մէկ գործնական ուղու վրայ, այն էր՝ Պարսից ծոցն ու Իրանի ընդհանուր երկաթուղագիծը, որ այնքան մօտ էր նրա սրտին և դեռ նոր էր աւարտուել դրա կառուցումը, հոգեկան անմխիթար հարուածներ հասցրին նրան։

Անգլիական և ռուսական քարոզչութիւնը ճգնում էր դաշնակիցների մուտքը բացատրել նրանով, որ հայրս դրժել է չէզոքութեան խոստումն ու չի համաձայնել երկրից արտաքսելու Իրանում բնակուող գերմանացիներին։ Սակայն այդ պատճառը կարող է թւալ մակերեսային ու երեխայական, որովհետև նախ այդ օրերին ոչ միայն գերմանացի մասնակի մասնագէտներ կային Իրանում, այլև մեծ թւով դաշնակիցների հպատակներից ապրում էին մեր երկրում և վայելում Իրանի օրինական հովանաւորութիւնը։ Երկրորդ, այլև այն ամենից, ինչ ասուեց վերևում, դաշնակիցներին սպառնացող վտանգը շատ աւելի մեծ էր, քան դա կարող էին յարուցել Իրանում բնակուող մի բուռ գերմանացիները։ Այսօր բոլորն են պաշտպանում իմ այն համոզումը, որ եթէ դաշնակիցները Իրանում ճանապարհները անհրաժեշտ չհամարէին իրենց ծրագիրների համար, ապա Բ. աշխարհամարտին երբևէ Իրանը չէր ընկնի օտար ոյժերի իշխանութեան տակ։ Պիտի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ եթէ Գերմանիան յաջողէր պատռելու Ռուսիոյ դիմադրական գիծը Կովկասում, մի երևոյթ, որ մօտ էր իրականանալու 1942 թւին, անկասկած

պիտի շարունակէր իր առաջխաղացումը նաև Իրանի տերիտորիայում, քանզի համաձայն Ռոզենբերգի հանրածանօթ նախագծի՝ նացիստների նպատակն էր իրենց յաղթութիւնների շղթան ձգելու Մերձաւոր Արևելքում՝ մինչև Պարսից ծոցի ափերը, որտեղից հնարաւոր պիտի դառնար մօտենալու Հնդկաստանին։ Դրանից բացի կային և այլ շարժառիթներ, որ նրանց մղում էին տիրանալու Պարսից Ծոցին։ Կովկասի նաւթը զաւթելու և ռուսներին դրանից զրկելու ցանկութեան հետ միաժամանակ, նրանք երազում էին գրաւել Իրանի նաւթն ու նաւթազտարանները և խլել դրանք անգլիացիների ձեռքից։ Գերմանացիները քաջ գիտէին, որ Անգլիոյ ծովոյժն ու դաշնակիցների աւիացիան ուհետևակը իրենց վառելիքը հայթայթում են Իրանի նաւթից. դա էր, որ նրանց հարկադրում էր խորտակելու դաշնակիցների կողմից ռուսներին հասնող օգնութեան միակ ճանապարհը։

Արդ, պիտի նկատի ունենալ դէպքերի յարաբերականութիւնն ու յաջորդականութիւնը։ Եթէ դաշնակիցները Իրանի գծով այնքան ռազմամթերք ու պարէն չհայթայթէին ռուսներին, հաւանական էր, որ Գերմանիոյ յարձակումը 1942 թ-ին պսակուէր յաղթութեամբ և իմ երկիրը ևս օկուպացուէր նրանց կողմից։ Թերևս, որոշ հայրենակիցներ ընդառաջէին այս յաղթութեանը, որը ինքնըստինքեան պատճառ էր դառնում ռուս-անգլիական ազդեցութեան չեզոքացմանը, այնուամենայնիւ ուշ թէ շուտ նրանք չպիտի կարողանային հանդուրժել հիտլերեան իշխանութիւնը։

Ինչևէ, երբ շշուկներ տարածուեցին Ռուսաստանի և Գերմանիայի գաղտնի դաշնագրի մասին, որի հիման վրայ ռուսները ստանում էին Իրանը տիրապետելու իրաւունքը, բոլորը փոխեցին իրենց տեսակէտները, որովհետև տեսալ դաշնագիրը աւելի վտանգաւոր էր ու վնասակար, քան 1907 թ-ի ռուս-անգլիական միատեղ համաձայնագիրը։ 1941 թ-ին, գերմանական բանակների յաղթութիւնները Ռուսաստանում և նրանց յառաջխաղացման հաւանականութիւնը Կովկասից դէպի հարաւ, մտահոգութեան տեղիք տուեց անգլիացիներին, այն առումով, որ յանկարծ չվտանգուի Հնդկաստանի, Սուէզի Ջրանցքի և Միջին Արևելքի նաւթային շրջանների ապահովութիւնը։

Նոյն թ-ի վերջերին, ռուսները ծաւալեցին մեծ հակագրոհներ, որով խափանուեց գերմանական կայծակնային յարձակման ծրագիրը։ Մի քանի ամիսանց խորտակուեց նաև գերմանացիների գարնանային յարձակումը և կասեցուեց նրանց յառաջխաղացումը։ Այդ բոլորով հանդերձ դաշնակիցները վստահ չէին վերջնական արդիւնքի վրայ, ընդ որում Չրչիլը «Երկրորդ Պատերազմի Յուշերը» գրքի մէջ գրում է.

«...Նոյնիսկ 1942 թ-ի Օգոստոսին, Մոսկվա գնալուց և այնտեղ դումարուած կոնֆերանսին մասնակցելուց յետոյ, ինձ ընկերակցող գեներալ Բրուքը այն կարծիքի էր, որ գերմանական ոյժերը անցնելով Կովկասի լեռնաշղթան գրաւելու են Կասպից ծովի աւազանը։ Այդ պատճառով Սուրիայում ձեռնարկեցինք կատարեալ պատրաստութիւնների՝ պաշտպանական պա-

տերազմի համար...»։

Դաշնակիցները ճիշտ թէ սխալ համոզուած էին, որ Իրանի և Գերմանիոյ բարեկամական ու մեղմ յարաբերութիւնները հանդիսանում են Իրանի օկուպացման նախաբանը, որովհետև գերմանացիները Եւրոպայի յաղթանակներից կուտակած փորձառութեամբ սովորել էին զանազան երկրներում իրենց ազդեցութիւնը տարածելու և ներքին ուժերի պառակտման եղանակները։ Կայծակնային յարձակումը, ընդհանրապէս, հանդէս էր գալիս երկրների վերջնական կործանման ճանապարհին։ Դաշնակիցների համար ծածկուած չէր մնում գերմանական քարոզչութեան ազդեցութիւնը, նրանք ենթադրում էին, որ գերմանական դիւերսանտները հեշտութեամբ կարող են գրաւել Իրանի երկաթուղագիծը և նոյնիսկ անհրաժեշտութիւնից մղուած պայթեցնել մեծ կամուրջներն ու թունելները, չէ՞ որ իւրաքանչիւր կամուրջի կամ թունելի խորտակումով մի քանի ամսով երկաթուղագիծը պիտի դառնար անօգտագործելի։ Նաւթի հաստատութիւնները ու զտարանները նմանապէս լաւ օբեկտներ կարող էին համարուել ռմբակոծումների համար, հետևաբար դաշնակիցները այն կարծիքին էին, որ Իրանի հարաւի նաւթը կարող է գրգռել գերմանացիների ախորժակը։ Թերևս տեղին է նշել, որ Շահփուր նաւահանգստում կալանքի տակ էին առնուած վեց գերմանակ և իտալական բեռնանաւեր, թէև դրանք յարատևօրէն գտնուում էին Իրանեան երկու ռազմանաւերի հսկողութեան տակ, բայց ելնելով

հանգամանքներից, որ նացիստները ազատ էին մնացել նաւերի մէջ ամեն տեսակ գործողութիւնների համար, դաշնակիցները վախենում էին, որ պատեհ առիթից օգտուելով կարող են դիտաւորեալ կերպով նաւերից մէկը խորասուզել Եփրատ և Տիգրիս գետերի դելտայում, փակելով Աբադանի հսկայ նաւթազտարանին սպասարկող նաւակայանների մուտքը։ Թերևս անհիմն չէր դաշնակիցների այս մտահոգութիւնը, որովհետև ենթադրուում էր դրանցից ոմանք բեռնաւորուած լինեն պայթուցիկ նիւթերով և անսպասելի չէին նման դիտումները։ Այնպէս, ինչպէս երբ անգլիական ոյժերը մուտք գործեցին Իրանի հարաւային շրջանները, գերմանական երկու նաւի անձնակազմը պայթեցրեց նաւերը, սակայն տեսալ դէպքը տեղի ունեցաւ գետաբերանի այնպիսի կէտում, որ չխափանեց երթևեկը։

1940 թ-ի կէսերին աւելանում է անգլիացիների մտահոգութիւնը Իրանում հետզհետէ աճող գերմանական ազդեցութեան նկատմամբ։ Նրանք այս մասին մի քանի անգամ բարեկամաբար ազդարարեցին Իրանի կառավարութեան և առաջարկեցին սահմանափակել գերմանացի և այլ հպատակութիւնների պատկանող մասնագէտների թիւը մեր երկրում։ Բայց հայրս յայտարարեց, որ գերմանացի մասնագէտների փոփոխումը կապուած է դժուարութեան հետ և դա գերմանացիների կողմից պիտի մեկնաբանուի որպէս Իրանի չեզոքութեան խախտում։ Ի դէպ հայրս վստահեցնում էր, որ ենթակայ կառավարութիւնը լիովին ի զօրու

է զսպելու գերմանացիների որևէ անվայել արարքը։

Այսօր, երբ աւարտել է Համաշխարհային Բ. Պատերազմը, և նայում եմ անցեալին, տեղին է նշել այն իրողութիւնը, որ ինչքան տեղեակ եմ, պատերազմի ընթացքին նշանակալից և ոչ մէկ սաբոտաժային դէպք տեղի չունեցաւ երկաթուղային հաստատութիւններում և Իրանի նաւթային արդիւնաբերական կենտրոններում։ Յաւակնութիւն չունեմ պնդելու, որ այս յաջողութիւնը պիտի վերագրել հօրս, իմ կամ մեր կառավարութիւնների թափած ջանքերին, այսուամենայնիւ դա ըստինքեան փայլուն և խօսուն անցեալ կարող է համարուել։ Ի դէպ՝ արդարութիւնը պահանջում է շեշտելու, որ մինչև դաշնակիցների մուտքը Իրան, հաւանական է, գերմանացիները յետաձգել էին իրենց խափանարարական ծրագրերը այն յոյսով, որ թերևս յաջողեն առաջին անցնել Կովկասից և տիրանալ Իրանի հաղորդակցութեան և նաւթային արդիւնաբերութեան կենտրոններին։

1941 թ-ի Յունիսի 26-ին՝ Խորհրդային Միութեան վրայ հիտլերեան ոյժերի յարձակումից ճիշտ չորս ամիս յետոյ, ռուսներն ևս ձայնակցելով անգլիացիներին, բոլոր ներկայացրին Իրանի կառավարութեան և գերմանական մասնագէտների ներկայութեան մասին իրենց մտահոգութիւնը յայտնելու հետ միաժամանակ, յայտարարեցին, որ համաձայն ճշգրիտ տուեալների՝ գերմանական կառավարութեան պաշտօնեաները Իրանում զբաղուած են պետական հաւուած

կազմակերպելու գործով։

Նոյն թ-ի Յուլիս 19-ին, ռուս-անգլիական կառավարութիւնները Իրանի պետական շրջանակներին ներկայացրին միատեղ ծանուցագիր։ Աւելի խստատոհ ծանուցագիր ներկայացուեց Օգոստոս 16-ին։ Սակայ Իրանի կառավարութեան կողմից նրանց տրուող պատասխանները ինչ-որ գոհացուցիչ ու վերջնական չէին, որովհետև Նախարարաց Խորհուրդը դժբախտաբար չէր համարձակւում հօրս տեղեկացնել այն մասին, որ դաշնակիցների ազդարարութիւններն աստիճանաբար ստանում են սուր բնոյթ։

Օգոստոս 25-ին, Անգլիան և Ռուսիան նոր ծանուցագիր ներկացնելով Իրանի կառավարութեան, ընդգծում էին, որ այլևս ստիպուած են կիրարկելու խիստ ու կտրական միջոցառումներ։ Նոյն օրերին մեր երկիրը ենթարկուեց ռուսական ոյժերի ոտնձգութիւններին հիւսիսից և անգլիական ոյժերի յարձակմանը հարաւից։

Ծաւալուող իրադարձութիւններից մի քանի ժամ անց, հայրս ռուսական և ագնլիական քաղաքական պատւիրակութիւններին յայտնեց, որ պատրաստ է ընդառաջելու պատկան պետութիւնների առաջարկներին։ Սակայն պատասխանեցին, որ երկու երկրների ոյժերը շարունակում են իրենց առաջխաղացումը։

Իրանի զօրաբանակը, ինչ խօսք, յանկարծակի եկաւ։ Զինուորութիւնը զօրանոցներում ընդունեց թշնամու ռմբակոծումները։ Հսկայ վնասներ կրեց մեր

փոքրիկ ծովոյժը, որը նոյնպէս նախապատրաստուած չէր որևէ դիմադրութեան։ Պէտք է զարմանալ, եթէ հայրս և իրանցիները ասեն, որ դաշնակիցները չարաչար խաբեցին ու դաւաճանեցին մեզ։ Իրօք, հայրս երբևէ չէր կարող երևակայել, որ դաշնակիցները այնքան ուխտադրուժօրէն ու օրը ցերեկով ոտնակոխեն մեր երկիրն ու հողային ամբողջականութիւնը։ Նա, անշուշտ, տեղեակ էր, որ դաշնակիցները օժտուած լինելով ռազմական հարուստ միջոցներով, ընդունակ են ամեն տեսակի օրինազանցութիւնների ու ոտնձգութիւնների՝ իր սիրելի հայրենիքի դէմ, այնուամենայնիւ մինչև վերջին վայրկեանը համոզուած էր, որ միջազգային օրէնքների ու ըմբռնումների նկատմամբ ընդհանուր յարգանքը նրանց յետ կը պահի վրճռական գործողութիւններից։ Յիշեալ յարձակումների դէմ Իրանի զօրաբանակի դիմադրութիւնը, բացի մի քանի կէտերից, միանգամայն ապարդիւն էր։ Յարձակման առաջին ալիքը անցնելուց յետոյ, մեր զօրքերը զգացին, որ թշնամին շատ աւելի զօրեղ է, քան ենթադրուում էր դիմադրաւել նրան։ Իրականութիւնն այն էր, որ մեր զինուորները հիւսիսային ճակատում օժտուած էին միայն հասարակ հրացաններով։

Երեք օր անց, վարչապետը հրաժարուեց իր փոստից և նրա յաջորդը իրանական ուժերին հրամայեց դադարեցնել դիմադրութիւնը, թէև իրականում նախքան հրամանի արձակումը վերջացել էր որևէ դիմադրութիւն։

Սեպտեմբեր 9-ին, նոր վարչապետը յաջողեց

ստանալ պարլամենտի համաձայնութիւնը՝ դաշնակիցների պահանջները ընդունելու մասին։ Իսկ դաշնակիցները, որ այդ օրերին իրենց ոյժերը տեղադրել էին մայրաքաղաքից հեռու տարածութեան վրայ, պատրաստակ ունենալով այն հանգամանքը, որ Իրանի կառավարութիւնը թերանում է կատարել իր տուած խոստումները, յայտնեցին, որ Սեպտեմբերի 17-ին նրանց ոյժերը պիտի մուտք գործեն Թեհրանի արուարձանները։

Սեպտեմբեր 16-ի առաւօտեան, Իրանի Ազգային Խորհրդարանում յայտարարուեց, որ հայրս հրաժարուել է թագաւորութիւնից, նոյն օրը ես հեռացուեցի որպէս նրա յաջորդը և Իրանի թագաւորութեան ժառանգորդը։ Այսպիսով դաշնակիցները հասնելով իրենց նպատակներին, հօրս հեռացրին հրապարակից և հարթեցին Իրանի վրայով Ռուսիային ռազմամթերք ու պարէն հայթայթող ճանապարհը։ Անվերապահօրէն պիտի ասեմ, որ նրանց արարմունքը անչափ պախարակելի էր և նրանք էին, որ ցանեցին թշնամութեան ու հետագայ բարդութիւնների սերմերը։

Այժմ, յետադարձ հայեացք եմ ձգում անցեալի վրայ, տեղին է պարզել, որ դաշնակիցները յիշեալ գործողութիւնների փոխարէն ուրիշ ի՞նչ կերպ կարող էին իրագործել իրենց նպատակները։ Ըստ իս պատասխանը շատ պարզ է։ Այս առթիւ նախ բերում եմ Մր. Չրչիլի նշումները, որ արտացոլուած են Բ. պատերազմի պատմութեան մէջ և համառօտակիօրէն

լոյս են սփռում դաշնակիցների հայեացքների վրայ։

«Ռուսիայի հետ լրիւ հաղորդակցութիւն ունենալու համար, անհրաժեշտ է ճանապարհ բացել Իրանից, և դա ունէր վիթխարի կարևորութիւն, որովհետև նախ դժւարին էր դառնում Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսի գծով Ռուսիայի մատակարարող ռազմամթերքի փոխադրութիւնը և երկրորդ՝ անհրաժեշտ էր նկատի ունենալ հետագայի ստրատեգիական հնարաւորութիւնները։ Ես առանց մտահոգութեան չէի կարող վերաբերել Միջին Արևելքում զօրաշարժեր կատարելու խնդրին, սակայն առկայ փաստարկները կրում էին ստիպողական բնոյթ։ Իրանի նաւթահորերը հիմնական և կարևոր շարժառիթ կարող էին համարուել պատերազմի համար։ Ռուսիան պարտւելու դէպքում մենք պատրաստ պիտի լինէինք դրանց տիրանալու։ Կար նաև Հնդկաստանի սպառնալիքը։

Անգլիական և ֆրանսիական ոյժերի կողմից Իրաքի ապստամբութեան ճնշումը և Սուրիայի գրաւումը, որ գլուխ եկան մեծ նեղութիւնների ու ծանր վնասների գնով, խափանեցին Հիտլերի բոլոր ծրագրերը Միջին Արևելքում, սակայն եթէ ռուսները պարտւէին՝ հաւանական էր նրանք կազմէին նոր ծրագրեր։ Թեհրանում հաստատւել էին մի խումբ գերմանացիներ, որոնց թիւն ու գործունէութիւնը մասամբ ընդարձակ էր։ Մեծ էր գերմանացիների համարում ու յարգանքը իրանցիների մօտ։ Նախ քան Փլասենտիա ուղևորուելս (Փլասենտիա ծոցը գտնւում է Նյուֆաունդլանդում և այստեղ էր, որ Չրչիլը

առաջին անգամ 1941-ի Օգոստոս 9-ին հանդիպում ունեցաւ Ռուզուելտի հետ։ Ծ.Հ.) կազմեցի մի յատուկ խորհուրդ, որին յանձնարարւում էր նախագծելու Իրանի դէմ զինւորական գործողութիւնների ծրագրերն ու դրանց յաջողականութեան դասաւորումը։ Իմ բացակայութեան ընթացքին խորհուրդը հեռագրով զեկուցելու էր ինձ կատարուած աշխատանքների արդիւնքի մասին։ Ցիշեալ գործողութիւնը կատարուեց և զեկուցումը ռազմական կաբինետում վաւերացւելուց յետոյ հասաւ ինձ։ Պարզուեց, որ Իրանի կառավարութիւնը չի համաձայնում արտաքսելու Իրանում բնակւող գերմանացի հպատակներին ու լրտեսներին. հետևաբար մնում էր դիմելու բռնութեան։ Օգոստոս 13-ին Մր. Իդենը Արտաքին Գործոց նախարարութեան մէջ ընդունելով պրն. Մայսկիի, քննեցին երկու պետութիւնների կողմից Իրանին ներկայացւելիք առանձին ծանուցագրերի կէտերը և հասան ընդհանուր համաձայնութեան։ Օգոստոս 17-ին ռուս և անգլիական պետութիւնների կողմից միատեղ ծանուցագիր յանձնուեց Իրանին։ Դրական պատասխան չստանալով Օգոստոսի 25-ին անգլիական և ռուսական ոյժերը մուտք գործեցին Իրան»։

Ես համաձայն չեմ Չրչիլի արտայայտութեան որոշ կէտերին, որ ասւում է իբրև ճշմարտութիւն։ Այսուամենայնիւ, կարևորն այն է, որ եթէ Չրչիլի բոլոր խօսքերը լինեն ճշմարիտ, ապա սխալ ու անարդար էր դաշնակիցների որդեգրած ուղին։

Առաջին հերթին դաշնակիցները աւելի անկեղծ

վերաբերմունք պիտի դրսևորէին հօրս նկատմամբ։ Վերջերս վերանայելի դաշնակիցների բողոքաշունչ ծանուցագրերը, որ այն օրերին ներկայացրել էին հօրս և զգացի, որ երեխայական են ու կապուում են մանրուքների։ Նրանց ընդհանուր մօտեցումը համարեա սահմանափակուում էր գերմանացի հպատակների ներկայութեամբ Իրանում։ Ոչինչ չի ասուել աւելի ծանրակշիռ նպատակների, այն է՝ Ռուսիային ռազմամթերք հայթայթելու գծով ճանապարհ բացելու, գերմանական ոյժերի մուտքը դէպի Միջին Արեւելքի նաւթառատ շրջանները՝ կամ դէպի Հնդկաստան կանխելու և նման հարցերի մասին։

Հայրս ուշիմ անձնաւորութիւն լինելու հետ միաժամանակ, ծանօթ էր ստրատեգիտական արուեստին։ Երբ անգլիացիներն ու ռուսները բացայայտօրէն էին արտայայտում իրենց իրական նպատակները, հայրս կարողանում էր թափանցել իրերի խորքը։ Սակայն դաշնակիցներն այս անգամ հիմնուում էին միայն Իրանում բնակուող գերմանացիների վտարման խնդրի վրայ, ընդ որում դա կրկնում էին յամառօրէն ու անընդմէջ։ Ինչպէս նշեցի վերը գերմանացիների մեծագոյն մասը Իրանում զբաղուած էր արդիւնաբերական աշխատանքներով։ Առկայ վիճակագրական տուեալների համաձայն, նրանց քանակը իրենց ընտանիքներով հասնում էր սոսկ 470 հոգու։

Ենթադրենք, որ դիցուք թէ դրանցից ոմանք զուրկ էին անցագրից և առանց իրաւունքի էին բնակուում մեր երկրում, այսպիսով արդարացուում է

հօրս զայրոյթը դաշնակիցների ցուցաբերած յամառ պնդումների նկատմամբ։ Դաշնակիցները գիտէին, որ հայրս անչափ զգայուն է այս խնդրում և ըստ իս, նրանց ծանուցագրերը փոխադարձ համաձայնութեան ձգտելու փոխարէն, կեղծութեան շղարշի տակ քողարկում էին հիմնական նպատակը, այն է՝ ունենալ որևէ պատրուակ Իրանի տերիտորիան ներխուժելու համար։

Ռեզաշահն իրաւամբ գիտակցելով, որ դաշնակիցները բացորոշ կերպով չեն արտայայտում իրենց միտումները, ճարահատեալ, հակառակ արքայական սովորութիւններին, Լոնդոնում բնակուող իր լիազօր գործակալից պահանջեց հետաքրքրուել դաշնակիցների իրական նպատակների և նրանց պահանջների մասին, բայց այլևս շատ ուշ էր։ Հայրս Թեհրանի Գերմանական դեսպանին յայտնել էր, որ Իրանի կառավարութիւնը որոշել է արտաքսել Իրանում բնակուող մնացորդ գերմանացիներին, նոյնիսկ ձևակերպել էր դրանց մեկնումը Թիւրքիայի վրայով, սակայն դա ևս խափանուեց դաշնակիների շտապ գործողութիւնների հետևանքով։

Դաշնակիցները ոչ միայն հօրս հետ պիտի վերաբերուէին պարզութեամբ ու անկեղծօրէին, այլև նրան պիտի ներկայացնէին քաղաքական պատուաւոր միասնութեան առաջարկ։ Գուցէ ոմանք հերքեն այս տեսութիւնը ասելով, որ Ռեզաշահի քաղաքական հայեացքները չէին կարող հանդուրժել նման միասնութեան ստեղծումը։ Սակայն դա դաշնակիցների պարտականութիւնն էր, որ մեր երկրի ամբողջակա-

նութիւնն ու անկախութիւնը ոտնակոխելուց առաջ, առնւազն դիմէին նման միջոցառման։ Համոզուած եմ, որ Ռեզաշահը կամ կ'ընդունէր դաշնակիցների առաջարկը, կամ ինձ յանձնելով արքայական գահն ու գայիսոնը, կը թոյլատրէր, որ դա արուի իմ ձեռքով։

Այստեղ բացայայտում եմ մի խնդիր, որ թերևս ցայժմ ոչ ոք տեղեակ չէ դրանից։ Հայրս իր պաշտօնական հրաժարականը ներկայացնելուց մի քանի տարի առաջ նպատակադրել էր յօգուտ ինձ անձամբ յետ քաշուել թագաւորութիւնից։ Ի հարկէ այս մասին նա երբէք չէր խօսել ինձ հետ, բայց հետագային դրա առթիւ տեղեկացայ նրա մօտիկ խորհրդատուներից մէկից։ Նրա նպատակն է եղել ինձ յանձնելով թագաւորութիւնը, անհրաժեշտ պարագային խորհուրդներով և ուղղութիւններով հանդէս գալ որպէս աւագ և փորձառու դիւանագէտ։ Այսպէս թէ այնպէս, դեռ այժմ էլ չեմ կարողանում հաշտուել այդ մտքի հետ, որովհետև նրա նման մի կարող Շահնշահից այսպիսի մի քայլ թւում է անհաւանական։ Ինչևէ իմ կարծիքով նա որոշել էր 1940 թուին, կամ դրանից շատ չանցած հրաժարուել թագաւորութիւնից։

Չեմ ասում, թէ դաշնակիցները ստիպուած էին տեղեակ լինելու հօրս մտքերին ու գաղտնիքներին, նպատակս այն է, որ դաշնակիցները նախ քան այն, որ հիտլերեան եղանակով բռնագրաւէին Իրանի հողը և ոտնակոխէին հէնց այն սկզբունքները, որոնց համար պատերազմում էին, պարտաւոր էին համագործակցական ոգով Ռեզաշահի հետ կնքել միասնութեան

պատաւոր դաշինք։

Ամեն դէպքում, քանի որ նրանց յարձակումից յետոյ էլ պիտի կնքուէր նման համաձայնագիր ապա ցանկալի էր դա արուէր նախապէս, որով նախ՝ արիւն չէր թափուի և երկրորդ՝ իմ ժողովրդի, ռուսների և անգլիացիների միջև չէր առաջանայ քէն ու ատելութիւն։

Դեռ աւելին. եթէ գերմանական ոյժերի մուտքը Իրան՝ իրօք մտահոգում էր դաշնակիցներին, ապա զինուորական կամ քաղաքական դաշինքների կնքումով՝ ի՞նչու չխնդրեցին մեր զինուորական աջակցութիւնը։ Ոմանք թերևս ենթադրեն, որ նկատի ունենալով Ռեզաշահի շահագրգռութիւնը կատարեալ չեզոքութիւնը պահպանելու խնդրում, այսպիսի առաջարկը խելացի չէր կարող համարուել։ Իմ պատասխանը այն է, որ հայրս լինելով տրամաբան և արդարախոհ անձնաւորութիւն և նմանապէս ամեն ինչից բարձր դասելով իր երկրի երջանկութիւնն ու ժողովրդի բարօրութիւնը, անկասկած պիտի խորհէր դաշնակիցների առաջարկների շուրջ, եթէ դրանք ներկայացուէին պարզօրէն, հեռու որևէ երկբայութիւնից և լոյս սփռէին նրանց ստրատեգիական վիճակի վրայ՝ ընդգրկելով նաև Իրանի շահերը։ Հետևաբար դաշնակիցներն այլևս կարիք չունէին Իրանի դէմ օգտագործելու այն ոյժերը, որոնք անհրաժեշտ էին աւելի զգայուն կէտերի համար։ Մենք ևս մեր հերթին հեռու մնալով երկրի բռնագրաւման հետևանքով առաջացած անարխիայից, աւելի շուտ պիտի մասնակցէինք Հիտլերի չարագոր-

ծութիւնների դէմ մղուող պայքարին։

Քաղաքական կամ զինուորական միասնութեան առաջարկը՝ լինէր դա օգտաւէտ թէ անօգուտ, դաշնակիցները պարտաւոր էին ներդաշնակութիւն ստեղծել ռազմամթերքի փոխադրման և պատերազմից առաջ յայտարարած այն նպատակների միջև, որոնք հանդէս պիտի գային փոքր ազգերի ազատութեան ու անկախութեան օգտին։

Դաշնակիցների պատասխանատու շրջանակները բանակցութեան մէջ մտնելով հօր կամ ինձ հետ, եթէ նրա տեղակալը եղած լինէի, պիտի ասէին.

«Մենք ստիպուած ենք մեծ քանակութեամբ ռազմամթերք հասցնել դժուար կացութեան մէջ գտնուող Ռուսիային, ընդ որում ելնելով աշխարհագրական և տրամաբանական տեսակէտներից, տուեալ նպատակին հասնելու համար միակ ուղին Իրանի տերիտորիան է։ Մենք պատրաստ ենք Իրանի նաւահանգիստներից ու երկաթուղագծից օգտուելու փոխարէն վճարել արդարացի մի գումար և խոստանում ենք չը ոտնակոխել Իրանի չեզոքութիւնն ու անկախութիւնը։ Ոչ մէկ զինուորական ոյժ չենք ուղարկի Իրան և եթէ համաձայնէք՝ Իրան կը գան միայն փոխադրական մասնագէտներ, որպէսզի օժանդակեն ռազմամթերքի փոխադրմանն և նպաստեն ճանապարհների վտանգաւոր կէտերի ապահովութեանը։ Իրանի վրայով ռազմամթերք փոխադրելու հարցը մեզ համար կենսական անհրաժեշտութիւն է և նախընտրում ենք, որ դա արուի բարեկամական համաձայնագրի կնքումով երկրի առաջին անձնաւորութեան, այսինքն շահի հետ»։

Պիտի նկատի ունենալ, որ Հիտլերը այդպիսի համաձայնագրեր էր կնքել Շուեդիայի և Շուեցարիայի կառավարութիւնների հետ. նրա իրական նպատակը ինչ էլ որ լինէր՝ յարգեց յիշեալ երկրների չեզոքութիւնը և մինչև անգամ իրեն զրկեց փոխադրական մասնագէտներ ու պահապաններ ուղարկելու իրաւունքից։ Արդեո՞ք դաշնակիցները չէին կարող այս ձևով յարգել մեր չեզոքութիւնը։

Եթէ այդ օրերին ես հասած լինէի թագաւորութեան, վերոյիշեալ եղանակով կ՚ընդունէի նրանց առաջարկները։ Եւ եթէ Ռեզաշահը հրաժարուած չլինէր գահից, նա ևս կը համաձայնէր, որովհետև ծանօթ լինելով հօր բնութագրին՝ կարծում եմ, որ թէև սրտի խորքում կ՚երկմտէր նման առաջարկներից, բայց համաձայնութիւնը կը գերադասէր Իրանի բռնագրաւումից։ Այս դէպքում պիտի յետաձգուէր իմ թագաւորութիւնը, որ կարևորութիւն չունէր ինձ համար, որովհետև իմ երկիրը կ՚ազատուէր մեծ դժուարութիւններից ու անհանգստութիւններից։ Միւս կողմից կ՚ապահովէր դաշնակիցների շահերը և նրանք ստիպուած չէին լինի հսկայ ոյժեր զբաղեցնել մեր երկրում։

Սակայն դէպքերը դասաւորուեցին այլ կերպ։ Երբեմն ասուում է, որ հօր գահից հրաժարուելու շարժառիթը կայանում էր երկրի թագաւորութիւնը իր զաւակի օգտին պահպանելու խնդրում։ Բայց դա ճիշտ չէ, որովհետև ելնելով այն խնամքից ու հոգա-

տարութիւնից, որ տածում էր հայրս իմ դաստիարակութեան ու կրթութեան խնդրին, լաւագոյնս վկայում է այն մասին, որ իմ տեղակալութեան խնդիրը միշտ էլ զբաղեցրել է նրա միտքը, և չէր կապւում որոշ ժամանակի հետ։ Հօրս հրաժարումի իրական պատճառը պիտի փնտռել նրա էութեան մէջ. նա մէկը չէր, որ ճնար և դիտէր իր հայրենիքի բռնագրաւումը օտար ոյժերի ձեռքով և հանդուրժէր նրանց միջամտութիւնը երկրի ներքին խնդիրների մէջ։ Այս մասին նա հետևեալ բառերով, որոնք վկայում էին նրա բուռն սիրոյ և զգացումների մասին, ինձ ասաց.

«Ժողովուրդը ինձ ճանաչել է որպէս անկախ, կամքի տէր, իրենց շահերը պաշտպանող և կարող Շահնշահ։ Ժողովուրդի իմ հանդէպ տածած այս վստահութեամբ, ակնածանքով ու յարգանքով, չեմ կարող լինել մի բռնագրաւուած երկրի անուանական թագաւորը և ենթարկուել ռուս կամ անգլիացի մի սպայի կարգադրութիւններին»։

Այստեղ անհրաժեշտ եմ համարում նշել, որ երբ հասայ թագաւորութեան, բացի դաշնակիցների կառավարական պետերից ու լիազօր դեսպաններից, երբևէ շփման մէջ չմտայ նրանց ներկայացուցիչների հետ, և չընդունեցի որևէ մէկին։

Ամեն դէպքում օտարները լաւ գիտէին, որ նրանց համար անհնարին է համագործակցութիւն ստեղծել հօրս հետ, այնպէս հայրս չէր կարող համագործակցել նրանց հետ։ Ճիշտ է, նրանք ճնշում գործադրեցին հօրս վրայ՝ թագաւորութիւնից հրաժարուելու և հայրենի հողը թողնելու ուղղութեամբ, բայց հետաքրքրականն այն է, որ նրա ցանկութիւնն էլ նոյնն էր։ Հետևաբար կարելի է ասել, որ հանդուցեալ արքան հայրենիքից հեռացաւ իր և դաշնակիցների փոխադարձ համաձայնութեամբ։

Մորիս կղզին ուղևորուող անգլիական մի նաւի տախտակամածի վրայից հայրս վերջին հայեացքը գցեց իր սիրեցեալ հայրենիքի հողի վրայ։ Սկզբում որոշուած էր, որ նա ուղևորուի Հարաւային Ամերիկա, բայց դասաւորուեց այնպէս, որ նա մեկնեց Մադագասկարի արևելքում գտնուող անգլիական գաղութատիրութեան վերոյիշեալ կղզին։ Այստեղից նա տեղափոխուեց Աֆրիկայի Եօհաննէսբուրգ քաղաքը և երեք տարի անց (1322 թ.) եօթանասուն տարեկան հասակում կնքեց իր մահկանացուն։

Ոմանք կարծիք են յայտնել, որ հայրս աքսորի օրերին եղել է ընկճուած ու տխուր։ Սակայն ես ասում եմ, որ տեսալ ասէկոսէները անհիմն են։ Այդ օրերին մեր միջև գոյութիւն ունէր կանոնաւոր նամակագրութիւն, հետևաբար ես աւելի՝ քան որևէ անձնաւորութիւն, տեղեակ էի նրա հոգեկան վիճակի մասին։

Հայրս իր նամակներում չէր անդրադառնում երկրի մասնաւոր խնդիրներին, և մեծ մասամբ ինձ ոգևորում ու ներշնչում էր, որպէսզի համարձակօրէն և անձնուրացօրէն յաղթահարեմ իմ դժուարին ուղու խոչընդոտները։

Մի քանի անգամ նրան առաջարկեցի գրել իր յուշերը Իրանի ներկայ պատմութեան մէջ արձանագրելու համար, բայց նա միշտ էլ մերժում էր այս առաջարկը, որովհետև կարծում էր որ հաւանական է պատահականօրէն կամ դրդելով հայրենասիրական զգացումներից՝ գրի նիւթեր, որոնք թերևս վնասակար լինեն հայրենիքի համար։

Ըստ իս, հայրս եկել էր այն եզրակացութեան, որ ես և խորհրդականներս Իրանի ներքին և արտաքին քաղաքականութիւնը վարելու խնդրում թոյլ չենք տալիս ամենափոքրիկ զլացում։ Այդ իսկ պատճառով, նա չէր կամենում մեզ յետ կանգնեցնել այն ուղուց, որը համարել էինք ձեռնտու և այսպիսով խորտակել մեր յաջողութեան յոյսերը։ Իր կեանքի մինչև վերջին րոպէներն ու վայրկեանները հօրս սրտում և հոգում եռում էր հայրենիքի նկատմամբ ունեցած մեծ սէրը և չունէր այլ նպատակ՝ բացի նրա երջանկութիւնից։

Ինչպէս, երբ քսաներկու տարեկան հասակում ստանձնեցի Իրանի գահն ու դայիսոնի պատասխանատուութիւնը, ինձ կանգնած տեսայ բազմաթիւ դժուարութիւնների առջև։ Իմ առաջին քայլն եղաւ որոշել Իրանի արտաքին նոր քաղաքականութիւնը։ Հօրս նախաձեռնած չեզոք քաղաքականութիւնը անցել էր ապարդիւն և համարւում էր պարտած քաղաքականութիւն։ Ես պարզօրէն գիտակցում էի, որ դաշնակիցների հետ համագործակցումը ոչ միայն անխուսափելի է, այլև այդպիսի մի քաղաքականութեան

կիրարկումը անհրաժեշտ և օգտակար է երկրի համար։ Բարեբախտաբար իմ նոր վարչապետ՝ Մոհամադ Ալի Ֆորուղին, որն Իրանի ճանաչած քաղաքագէտներից ու գիտնականներից մէկն էր, լիովին համակարծիք էր իմ տեսակէտների հետ և նրա օգնութեամբ էր, որ 1942 թ-ի Յունուար 29-ին մի շարք բանակցութիւններից յետոյ ստորագրուեց Անգլիայի, Ռուսիայի և Իրանի միատեղ համաձայնագիրը։ Երկու դաշնակից պետութիւնները տուեալ դաշնագրով պարզաբանեցին, որ նրանց զինուորների գոյութիւնը մեր հայրենիքում երբէք չի կրելու ռազմական բռնագրաւման (օկուպացումի) բնոյթ, (թէև բոլոր իրանցիները առդոյ վիճակը համարում էին զինուորական օկուպացում)։ Ի դէպ, նրանք խոստանում էին յարգել մեր երկրի հողային ամբողջականութիւնը և քաղաքական անկախութիւնը և Գերմանիայի հետ պատերազմը աւարտելուց վեց ամիս յետոյ՝ յետ քաշել իրենց ոյժերը Իրանից։ Խոստանում էին նաև դիւրացնել պատերազմի հետևանքով Իրանում ստեղծած տնտեսական դժուարութիւնները։ Մենք ևս մեր հերթին ստեղծեցինք պահանջած բոլոր հնարաւորութիւնները՝ Իրանի ճանապարհներով Ռուսիային տրուող ռազմական օգնութիւնների փոխադրումը աւելի դիւրին վիճակի մէջ դնելու համար։ Խզեցինք մեր քաղաքական յարաբերութիւնները Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի հետ և 1943 թ-ի Սեպտեմբեր 9-ին պատերազմ յայտարարեցինք նացիական Գերմանիայի դէմ։

Իրանի բռնագրաւումը դաշնակիցների կողմից և հօրս դիկտատորական ռեժիմի յանկարծակի ոչնչացումը նոր տագնապներ ու անհանգստութիւններ առաջացրին իրկրում։ Դաշնակիցները երևութապէս որոշել էին թուլացնել իմ իրաւունքները, որովհետև կարծում էին, դա կը նպաստի իրենց իշխանութեան ամրացմանը։

Դաշնակիցների աննընդմէջ միջամտութիւնները երկրի ներքին քաղաքականութեան մէջ, խորը ատելութիւն սերմանեց իմ և Իրանի ժողովրդի սրտերում։ Խնդիրը աւելի պարզաբանելու համար բաւական է նշել հետևեալ իրադարձութիւնը որպէս օրինակ։—Դեռ չհաշուած այդ օրերին առաջ եկած դրամի կուտակումը, դաշնակիցները յայտարարեցին որ իրենց ոյժերի պահանջները հոգալու և ծախսերը վճարելու նպատակով պիտի հրատարակեն մեծ գումարների՝ Իրանեան ընթացիկ թղթադրամներ, և քանի որ այդ խնդիրը հակասում էր երկրի օրէնսդրութեան, դաշնակիցները պահանջեցին ժամանակի վարչապետ Ղաւամից, առանց նկատի ունենալու օրինական հաշուեկշիռները և կանգ չառնելով որևէ միջոցի առջև, իրագործի նրանց պահանջը։ Ղաւամի այն խօսքին թէ դա անհնարին է, նրանք ճնշում գործադրեցին Խորհրդարանից անցկացնելու նոր օրինագիծ։ Նա պատասխանել էր որ Խորհրդարանը անհաւանական է վաւերացնի այսպիսի մի կանոն։ Ի հետևանս այս բանակցութիւնների, մի օր անգլիական լիազօր դեսպանը ներկայացաւ ինձ և նշեց, որ նա պատկան,

ինչպէս նաև Խորհրդային Միութեան և Ամերիկայի կառավարութիւնների կողմից եկել է յայտնելու, որ թէև վստահում են Ղաւամին, սակայն նա ներկայ խորհրդարանով չի կարող որևէ աշխատանք տանել։ Ապա ինձ խնդրեց հրատարակել Խորհրդարանի լուծման հրամանագիրը։ Սա մի տարօրինակ առաջարկ էր, որ արւում էր մի օտար կառավարութեան ներկայացուցչի կողմից։ Նրան ասացի, որ ես և Իրանի ժողովուրդն ենք որ պիտի վստահենք որևէ կառավարութեան և ոչ դուք, և թէև իրար հետ բարեկամ ենք ու դաշնակից, այդուամենայնիւ դարձեալ ես և Իրանի ժողովուրդը կարող ենք Խորհրդարանի լուծման մասին կայացնել մեր որոշումը։ Ես թոյլ չպիտի տամ, որ օտարները այսպիսի մի խնդրի կապակցութեամբ լինեն կարգադրող։ Այդպիսով կտրականապէս մերժեցի տւեալ առաջարկը։ Շատ չանցած, նոյն թւին, Թեհրանում երևան եկան մի խումբ խռովարարներ, որոնց գործունէութիւնը ի դերև հանելու պատրւակով Թեհրանից հեռացած անգլիական զօրքերը նորից մուտք գործեցին մայրաքաղաք և այսպիսով սպառնացին Խորհրդարանին՝ համաձայնելու նրանց առաջարկի հետ։

Այս միջոցին, մի շարք լեռնաբնակներ, որոնք ժամանակին զինաթափւել էին հօրս կարգադրութամբ, մաքսանենգութեամբ զէնք գնելով դասալիքներից, զօրաբանակի պաշտօնեաներից ու պահեստներից վերսկսեցին գիւղերի կողոպուտը։ Բրինձը, շաքարը և բնակչութեան անհրաժեշտ մթերքները տրւում էին քարտերով։

Դաշնակիցները լեռնաբնակների քարտերը յանձնում էին պետերին, որոնք դրանք վաճառելով հասարակ բնակչութեան, ստացած եկամուտը օգտագործում էին իրենց զինուորական նպատակների համար։ Երևան եկան կրօնական ծայրայեղ տարրերը, որոնք անյայտացել էին հօրս իշխանութեան օրօք։ Թերևս անգլիական քաղաքական դէտերից ոմանք այն կարծիքի էին, որ վերոյիշեալ տարրերը կարող են արգելք հանդիսանալ կոմունիզմի տարածմանը։ Բացի նշուած հանգամանքներից, անգլիական զօրքերի կեցուածքը ընդհանուր առմամբ վատ չէր կարող համարուել։ Միւս կողմից ռուսները հիմնում էին քաղաքական կուսակցութիւններ, բանուորական խմբաւորումներ, որոնք ղեկավարում էին կոմունիստների միջոցով և սունկի պէս արագօրէն Երևան էին գալիս ամենուրեք։ Դրանցից ամենավտանգաւորն էր «Թուդէ» կուսակցութիւնը։

Իրանի հիւսիսային նահանգներում ռուսները խուսափում էին համագործակցել տեղական պաշտօնեաների հետ և այս շրջանները գործնականապէս առել էին զինուորական ու քաղաքական իշխանութեան տակ։ Այսպիսով ռուսական մասը համարեա՛ վերածուել էր մի առանձին երկրի։ Ինչպէս հետագայ իրադարձութիւնները ցոյց տուին, ռուսների նպատակն այն էր, որ տեսալ շրջանների մեծ մասը ունենան իրենց ձեռքի տակ։

Ազգային Խորհրդարանը դարձել էր անվայել ամբաստանութիւնների փոխանցման կենտրոն և չունէր

կանոնաւոր ծրագիր։ Օրէնսդրական մարմինը միջամտում էր, գործադիր և արդարադատական օրգանների աշխատանքերին՝ խանգարելով օրէնքի գործադրումը։ Պետական պաշտօնէութեան ոգին ևս ծայր աստիճանի թոյլ էր։

Թագաւորութեան սկզբում իմ կիրարկած քայլերից առաջինն էր սահմանադրական դեմոկրատիայի վերականգնումը։ Այդ օրերին մեր երկրում տիրում էր այնպիսի անարխիա, որ եթէ յուսահատէի դեմոկրատիա սահմանելու մտքից՝ չպիտի զարմանալ։ Սակայն քաղաքական հայեացքներս ամրապնդել էին այնքան, որ սպառնացող տագնապներն ու իրադարձութիւնները չէին կարող ինձ յետ կոչել այն հիմունքներից ու սկզբունքներից, որոնք ժամանակին ընդունել էին աշխարհի մեծերը, օրինակ՝ Ջեֆերսոնը, և որոնց համար ես ևս որոշել էի պայքարել։

Տնտեսական առումով, մեր երկրում, գները սկսել էին բարձրանալ գլխապտոյտ արագութեամբ։ 1940-ից մինչև 1942 թիւը դրամի կուտակումը հասնում էր վտանգաւոր փուլի։ Կենցաղային ծախսերը բարձրացել էին 400 տոկոսով։ Դաշնակիցների կողմից Իրանում արուող ծախսերը պատճառ էին դարձել դրամի արագ շրջանառութեան, որի հետևանքով հազարագիւտ ապրանքների գինը բարձանում էր յա-

բակցօրէն։ Հիւսիսային նահանգներին բընձի և ցո-
րենի արդիւնաբերութիւնը թերևս բաւական էր Ի-
րանի այլ կէտերի համար, սակայն ռուսները ար-
գիլում էին դրանց փոխադրութիւնը և դա օգտագոր-
ծում էին իրենց սպառումների համար։

Ե. ՄԱՍ

ՀԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԵՒ ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Մի քանի տարի առաջ, Իրանի ժամանակակից պատմութեան մէջ որևէ իրանցուց աւելի՝ ամերիկեան ու անգլիական լրագրների յօդուածների նիւթն էր դարձել Դոքտոր Մոհամմադէ Մոսադեղ անունով մէկը, և դժբախտաբար Իրանից դուրս՝ ոմանք նրա չափանիշով էին դատում Իրանի և Իրանցիների մասին։

Սոյն գրքում անհրաժեշտ եմ համարում հաստատացնել ընթերցողներին, որ Մոսադեղը երբէք չի եղել Իրանի և մեր ժողովրդի ազգային ուրոյն գծերի իրական տիպարն ու օրինակը։

Անցնող գլխում ասեց, որ հայրս 1319 թ-ին քանտարկեց Մոսադեղին, և որ իմ բարեխօսութեան շնորհիւ ազատեց։

1332 թ-ին կրկին անգամ բանտարկուեց երկրի իշխանութեան դէմ նիւթած դաւերի մեղադրանքով, որն ինքնըստինքեան ակնյայտ դաւաճանութիւն է համարուում։ Դատարանին ուղղուած մի նամակով յայտնեցի, որ նրան ներում եմ իմ անձի հանդէպ ունեցած յանցանքների համար։ Հէնց այդ նամակի և բարձր տարիքի շնորհիւ, նա ազատուեց՝ Իրանում և այլ երկրներում նման մեղադրանքով դատապարտուած անձանց համար սահմանուած պատժից՝ կախաղանից, դատապարտուելով միայն երեք տարուայ մենախուցի։ Այսպիսով մի անգամ ևս, իմ միջնորդութեան շնորհիւ, նա ազատուեց ստոյգ մահից։

1335 թ-ին դուրս գալով բանտից քաշուեց Թեհրանի շրջակայքում գտնուող իր անձնական կալուածը և այժմ երբ հրատարակուում է այս գիրքը, լինելով հարուստ մէկը, իր ընտանիքի գրկում վարում է հանգիստ ու բարօր կեանք։

Ես տարբեր շարժառիթներով ստիպուած եմ եղել ուսումնասիրել Մոսադեղի անհատականութիւնը, բնորոշել նրա իմացական ու բարոյական արժանիքները՝ համեմատելով դրանք իր ճառերի ու գործերի հետ և ճշգրտօրէն պարզել նրա խօսքի ու գործի ազդեցութիւնը երկրի կեանքից ներս։ Իր վարչապետութեան ժամանակաշրջանը պատեհ առիթ էր աւելի հանդամանօրէն ուսումնասիրելու։ Նրա հասարակական կեանքը խօսքի և թղթի աշխարհում առաջին հայեացքից թուում է նոյնիսկ պատուաւոր։ Մոսադեղը ծնուել է 1260 թ-ին, շատերի ասելով մի քանի տարի դրանից աւելի

վաղ, կալուածատէր ու հեղինակաւոր մի ընտանիքում։ Ֆրանսիայում և Շուեյցարիայում սովորել է իրաւագիտութիւն և յարակից նիւթեր և ապա անցել է պետական ծառայութեան։ Վարել է ելևմտական նախարարի, Արդարադատութեան նախարարի, Արտաքին գործոց նախարարի կարևոր և պատասխանատու պոստերը։ Անգլիացիների ընձեռած դիւրութիւնների շնորհիւ ընտրուել է Ատրպատականի նահանգապետ։ 1294 թ-ին առաջին անգամ լինելով ընտրուեց Իրանի Ազգային Խորհրդարանի պատգամաւոր և դա պահեց մինչև իր անկումը։ Մոսադեղի վարչապետութեան ժամանակաշրջանը սկսուեց 1330 թ-ի Օրդիբեհեշտից և տևեց մինչև 1332 թ-ի Մորդադ ամիսը։ Տուեալ ժամանակաշրջանի ընթացքին էր, որ ի յայտ եկան Մոսադեղի բարոյական ու հոգեկան իսկական բնութագծերը։ Շատերն են վկայում, որ նա անհատապէս շիտակ անձնաւորութիւն էր (ինչպէս պիտի նշենք՝ դրա ընդունումը կապուած է այն բանի հետ թէ ո՛վ ինչպէս է բացատրում շիտակութիւնը) և կոմունիստ չէր։ Եթէ նա առերեսաբար խուսափում էր կոմունիստներից, ապա իրականութեան մէջ յենուում էր նրանց օգնութիւնների վրայ՝ նրանցից պատրաստելով իր վերելքի աստիճանները։

Մոսադեղի երիտասարդութեան շրջանից, Ղաջարների օրօք,— երբ Խորասան նահանգի ելևմտական հիմնարկութեան կառավարիչն էր,— պատմում են, որ կեղծուած դոկումենտներով տիրացել էր շատերի հողերին և նոյն մեղադրանքով դատապարտուել իսլա-

մական երկրներում ընդունած պատժին՝ և որ գործադրվում է այսօր Սաուդական Արաբիայում՝ ձեռքի հատման։ Տվեալ մեղադրանքի իսկությունը ճշտող շարժառիթների մասին ոչինչ չեմ լսել և պարզ է որ նման մի պատիժ չի գործադրվել, որովհետև բոլորն էլ յիշում են նրա երկու ձեռքերի շարժումներով զուգորդված հրաշունչ ճառերը։ Հաւանական է, որ իր երիտասարդական շրջանում մասնակցել է դրամական անմաքուր արարքների, սակայն դրանց տխուր հետևանքները ազդարարելի դասեր են եղել իր համար։

Պէտք է տեսնել, որ Մոսադեղը ինչ բաներ պակաս ունէր իրաւ մի քաղաքագէտի անհրաժեշտ բնութագծերից։ Առաջինը՝ նրա ընդհանուր զարգացումը խիստ սահմանափակ էր, մի խնդիր, որ զարմանք էր պատճառում ինձ։ Եւրոպական երկրներում կրթված լինելով հանդերձ, նա գրեթէ ոչինչ չգիտէր աշխարհի միւս երկրների մասին։ Մասնաւորաբար թոյլ էր տնտեսագիտութիւնից։ Ես երբեմն չեմ յաւակնում, որ մասնագէտ եմ տնտեսագիտութեան մէջ, բայց այսպէս թէ այնպէս կարողացել եմ իրացնել ազգային և համաշխարհային էկոնոմիկայի ընդհանուր գծերը, և թագաւորութեանս բերումով շփվել եմ քաղաքական ու տնտեսական գաղափարներով օժտված մեծ թվով պետական պաշտօնեաների հետ։ Ամենայն անաչառութեամբ պիտի ասեմ, քչերին եմ հանդիպել, որ լինելով որևէ պատասխանատու գիրքի տէր, Մոսադեղի չափ անգիտակ լինէին առևտրի և երկրի տնտեսութեան առընչվող ամենատարրական խնդիրների մասին։ Այս հանգամանքը ճիշտ որ զարմացնում էր ինձ, որովհետև Մոսադեղը յիմար մէկը չէր և նոյնիսկ համարվում էր խելամիտ անձնաւորութիւն։ Դրա բուն պատճառը կայանում էր նրանում, որ Մոսադեղը ընդհանրապէս գերի լինելով իր սանձարձակ ոգու մոլուցքին, երբեմն չէր կարողանում գործնականապէս ու տրամաբանօրէն վերլուծել տընտեսական խնդիրները։

Աւելի վատթարագոյնը նրա յոռետեսութիւնն էր։ Օրինակ եթէ ուզենք Հիտլերին համեմատել Մոսադեղի հետ, պիտի ասենք, որ Հիտլերը պարսաւում և հայհոյում էր Վերսայի համաձայնագիրը, սակայն որոշակի ու կանոնաւոր էին նրա թէև անմիտ ու անտրամաբանական ծրագրերը։ Ընդհակառակը, եթէ Մոսադեղի առաջադրած ծրագրերն ու նպատակները ժամանակաւորապէս գոհունակութիւն էին պատճառում հանրութեան, ապա ոչ այլ ինչ էին, եթէ ոչ բացասական բնոյթներ կրող միտումներ։

Իրականում Մոսադեղը դաւանում էր այնպիսի հիմունքներ, որոնց հէնց ինքը կոչել էր «Հակակշռութեան քաղաքականութիւն»։

Առհասարակ նրա ճառերի նախաբանը, — որ նոյնիսկ տրամաբանական էր, — սկսւում էր նրանով, որ Իրանը օտար ներթափանցումների հետևանքով, տարիներ շարունակ կրել է ճնշում ու զրկանք այստեղ անմիջապէս յաջորդում էր եզրակացութիւնը, թէ Իրանի լաւագոյն քաղաքականութիւնը կայանում է օտարներին առաւելութիւններ չշնորհելու և նրան-

ցից ոչ մի օժանդակութիւն չակնկալելու մէջ։ Առաջին հայեացքից տեսալ մօտեցումը նմանում է համաշխարհային Բ. Պատերազմից առաջ Ամերիկայի զանազան շրջաններում տարածւած ոչ միջամտական քաղաքականութեանը։ Սակայն Մոսադեղի բացասական ընթացքը չէր սահմանափակւում սոսկ սրանով և ընդդրկում էր ոչ միայն արտաքին քաղաքականութիւնը, այլև երկրի ներքին խնդիրները։

Նրա տածած ծայրայեղ ընդդիմադրութիւնը՝ Իրանում երկաթուղագիծ հիմնելու ուղղութեամբ, նրա մտածելակերպի լաւագոյն օրինակն է։ Յիշում եմ մի օր ամենայն համարձակութեամբ իմ ներկայութեամբ արտայայտւեց, որ հայրս այս խնդրում (երկաթուղագիծ հիմնելու խնդրում) կատարել է դաւաճանութիւն։ Երբ հարցրի պատճառը, պատասխանեց, որ հայրս Իրանի ընդհանուր երկաթուղագիծը հիմնել է շահելու համար անգլիացիների բարեացակամութիւնը, որոնք ցանկանում էին յարձակւել Ռուսիայի վրայ։ Հարցրի, թէ իր տեսակէտով հայրս երկաթուղագիծ պիտի հիմնէր մի՞յլ ուղղութեամբ։ Պատասխանեց որ հայրս ամենևին չպիտի հիմնէր որևէ երկաթուղագիծ, քանի որ Իրանը պէտք չունէր դրան և մարդիկ առանց դրան էլ հանգիստ էին։ Աւելի ոգևորելով նա եզրակացրեց, որ նախքան հօրս իշխանութիւնը, երբ Իրանը զուրկ էր երկաթուղագծից, նաւահանգիստներից, երբ չկային ասֆալտապատ խճուղիներ, և մարդիկ մինչև ծնկները քայլում էին ջրի ու ցեխի մէջ, գոնէ Իրանը անկախ էր։ Իր խօսքերի

անկապ լինելն ապացուցելու համար յիշեցրի նրան, որ հօրս թագաւորութիւնից առաջ Իրանը հեծում էր կապիտուլասիոնի՝ ասել է օտարների իրաւական ազատութեան և իշխանութեան շրջանների մէջ. որ երկրի մէկ մասը դտնւում էր ռուսների և միւս մասը անգլիացիների թաթի տակ, և երկրի ապահովութիւնն ու օրէնքների գործադրումը հասել էին մի այնպիսի անմխիթար վիճակի, որ խելացի մարդիկ գողերի վախից խուսափում էին իրիկնամուտին յայտնւել Թեհրանի պողոտաներում։ Արդեօք սրա անունը կարելի է դնել անկախութի՞ւն։ Մոսադեղը, հարկաւ, այս անժխտելի փաստերի առջև ոչինչ ունէր ասելու, բայց զգում էի որ իմ տրամաբանական մօտեցումները չէին ազդում նրա յամառ ու շեղած մտածելակերպի արդասիքն հանդիսացող անկապ եզրակացութիւնների վրայ։

Եւս մի ուրիշ օրինակ նրա իւրովի աշխարհահայեացքից։ Մէկ օր, ինչ որ առիթով Ռամսար մեկնած և վերադարձած բժշկական ֆակուլտետի վարիչից հարցնում է նրա ճանապարհորդութեան մասին։ Յիշեալը պատասխանում է, որ թէև ճամբորդութիւնը հաճելի է անցել, սակայն ճանապարհների վիճակը անչափ վատ է և կարիք է զգացւում անյապաղ ու հիմնական նորոգութեան։ Մոսադեղը զայրացած այս արտայայտութիւնից սկսում է պնդել, որ ամենևին անհրաժեշտ չեն նման ճամբորդութիւնները և աւելի լաւ է մարդ տանը հանգստանայ և բնաւ չճամբորդի...

Ոմանք Մոսադեղի անտրամաբանական մտածելակերպին ծանօթ լինելով, փայփայում են այն կարծիքը, որ թերևս տարուած լինելով արևմտեան նորագոյն գիտութիւնների ու տեխնիկայի հետևանքով դեռևս չկերպարանափոխուած նախկին երանելի ժամանակներով, նա իր ցնորական ուղեղով խորհել է հետ դարձնել Իրանի յառաջադիմութեան ժամացոյցի սլաքները։ Սակայն դա չի կարող համարուել Մոսադեղի բռնած բացասական ընթացքի ճշմարտացի վկայութիւնը, քանի որ որքան անվնաս է նման մտածելակերպի առկայութիւնը մի կղզիացած փիլիսոփայի մօտ, ապա նոյնքան վտանգաւոր է, երբ դա ծնուում է ներկայ դարաշրջանում որևէ ժողովրդի ղեկավարութիւնը ստանձնող քաղաքական և պատասխանատու անհատի գլխում։ Բացի դրանից Մոսադեղը յոռետես էր ոչ միայն արևմտեան նորագոյն գիւտերի ու գիտութիւնների նկատմամբ, այլև նրա յոռետեսութիւնը երբեմն ներծծուում էր գրեթէ բոլոր խնդիրների մէջ։ Օրինակ, վարչապետ դառնալուց յետոյ նա խափանեց աղքատ գիւղացիութեան մէջ արքունական կալուածները բաժանելու իմ ծրագիրը, թէպէտև դա մի առանձին նշանակութիւն պիտի ունենար երկրի ստորին խաւերի կենսական մակարդակը բարձրացնելու խնդրում։ Պատճառն այն էր, որ Մոսադեղի քիմքին նախ ախորժելի չէր նման մի օգտակար և դրական քայլի կիրարկումը, և գիտակցելով որ յիշեալ ծրագիրը ժողովրդի մէջ առաջ է բերել խանդավառութիւն, լցուում էր բուռն նախանձով։ Երկրորդ՝ Մոսադեղն ինքը, խոշոր կալուածատէր էր և ամօթով էր մտածում այն մասին, որ արքունական կալուածների բաժանման պրոցեսի նախաձեռնութիւնը պատկանում է ինձ և ոչ նրան։ Բարեբախտաբար նախքան այն, որ Մոսադեղը կործանելու հասցնէր տեսալ ծրագիրը՝ խորտակուեց ինքը։ Յաջորդ գլխում կը պատմի այն մասին թէ Մոսադեղի անկումից յետոյ, ինչպէս վերատին կենսագործուեց վերոյիշեալ ծրագիրը և թէ ինչպէս աստիճանաբար աճեցին դրան կապուող կէտերը։

Մոսադեղի յոռետեսութիւնը թափանցել էր նաև երկրի պաշտպանութեան և ներքին ապահովութեան բնագաւառներում։ Անգամներ ինձ ասել էր, որ առանձնապէս հարկաւոր չէ զօրացնելու երկրի պաշտպանութիւնը, քանի որ իրանցին առհասարակ տուժել է օտար ոյժերի դէմ մղած պայքարներում։ Նա չէր ցանկանում, որ տեսալ խնդիրը դրսևորի երկրից դուրս, ցանկանում էր միայն, երկրից ներս ամրանայ այն համոզումը, թէ անհրաժեշտ չէ դիմադրաւելու օտար մի երկրի յարձակումը...

Նա ոչ միայն քարոզում էր այս գաղափարը, այլև ներքին խռովութիւնների ժամանակ գործնականապէս հետևում էր դրան։

Իր վարչապետութեան օրօք, 1331 և 1332 թուերին, երբ թուդէականներն ու այլ խռովարար տարրերը աշխատում էին խափանել մայրաքաղաքի և այլ քաղաքների ապահովութիւնը, Մոսադեղը չդիմեց որևէ քայլի, նրանց կասեցնելու ուղղութեամբ։

Բաւարարուեց լոկ նրանով, որ մի քանի հրասայլեր և զինուած զինուորներով լեցուն բեռնատարներ ուղարկեց խռովութեան կենտրոնները, սակայն արգիլեց ամեն տեսակի միջամտութիւնները։ Հետևաբար եղաւ այն, որ փողոցային քաշքշուկներն ու թալանը տեղի էին ունենում կարգապահ ուժերի աչքի առջև և նրանք ակամայ հանդիսատեսներ էին...

Վերջապէս Մոսադեղի հետևորդներից ոմանք չկարողանալով հանդուրժել նրա անտարբերութիւնը օր աւուր ծաւալող խռովութիւնների հանդէպ, հասան այն եզրակացութեան, որ Մոսադեղը դիտմամբ, կամ պարզապէս տգիտութիւնից՝ երկիրը առաջնորդում է դէպի կոմունիզմ։

Ոմանք էլ մտածում էին, որ երկրի պաշտպանութեան խնդրում, նրա որդեգրած բացասական քաղաքականութիւնը բխում է խաղաղասիրութեան վրա հիմնուած նրա փիլիսոփայութիւնից, կամ կրօնական դաւանանքից։

Ըստ իս, դա ճիշտ մօտեցում չէ և չի համապատասխանում ճշմարտութեան, որովհետև նրա յաւակնած խաղաղասիրութիւնը չէր ընդգրկում կեանքի բոլոր ուղիները և ինքը հեռու էր «Գանդի» լինելուց։ Նրա կամ իր կողմնակիցների ձեռքի տակ գտնուող արկածախնդիրներն ու բախտախնդիրները, սանձարձակօրէն ոտնակոխում էին անմեղ մարդկանց ամենատարրական իրաւունքները։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Գանդիի հետևորդները Հնդկաստանի ազատագրումից յետոյ, խաղաղութիւնը չմեկնաբանեցին անկարգութամբ և երկրի ապահովութեան խախտումով։ Հնդկաստանը օժտուած է հետևակ, ծովային և օդային ուժեղ զօրքերով, որոնք Բամբէյում կամ Հնդկաստանի այլ մարդաշատ քաղաքներում խռովութիւններ ծագելիս հանդէս են գալիս վճռական և արագ գործողութիւններով, յանուն ընդհանուր ապահովութեան վերականգնմանը։

Մոսադեղի ոչ տրամաբանական բնաւորութիւնը, առհասարակ, նրան դրդում էր թոյլ տալու արտառոց արարքներ։ Առաջին անգամ այս մասին անդրադարձայ համաշխարհային Բ. պատերազմին՝ դաշնակիցների կողմից Իրանը բռնագրաւելու օրերին։ Այն ժամանակ ինձ վրդովում էր դաշնակիցների միջամտութիւնը ընտրութիւնների մէջ, ընդ որում նրանց պաշտօնեաները նախապէս պատրաստում էին ընտրողների ցուցակը և յանձնելով ժամանակի վարչապետին, ստիպում էին նրան հանդէս գալու իրենց թեկնածուների օգտին։ Չկարողանալով հանդուրժել նման խայտառակ վիճակը և դրա առաջն առնելու համար նպատակայարմար գտայ խորհրդակցելու Մոսադեղի հետ։ Այդ օրերին իմ յարաբերութիւնները նրա հետ լաւ էին, քանի որ Մոսադեղը համարում էր երկրին հաւատարիմ անձնաւորութիւն և սաստիկ դէմ էր օտար ներթափանցումներին, ուստի խորհեցի որ համաձայն երկրի կանոնադրութեան, նրան վարչապետ նշանակելու դէպքում, հաւանական է նրա կողմից փոփոխութեան ենթարկուի ընտրութեանց օրէնքները և առաջարկուի օտար ազդեցութիւններից

զերծ մի նոր կանոնագիր։ Նրան կանչեցի և բացատրեցի նպատակս։ Մոսադեղն ի պատասխան նշեց, թէ երկու պայմանով կարող է ընդունել առաջարկս։ Իմ հարցին թէ որոնք են դրանք, պատասխանեց, թէ նախ ցանկանում է իր անձի պաշտպանութեան համար ունենալ զինուած պահակներ։ Անմիջապէս ընդունեցի նրա առաջին պայմանը։ Յետոյ ասաց, որ անգլիացիները պիտի տեղեակ լինեն և համաձայնուեն տուեալ ծրագրին։ Երկրորդ պայմանը յարուցեց իմ զարմանքը։ Հարցրի. «Իսկ ռուսներն ինչպէ՞ս»։ «Դա նշանակութիւն չունի,—ասաց նա,—որովհետև մեր երկրում որոշում կայացնողները մեծ մասամբ անգլիացիներն են»։ Ուստի զայրանալով փորձեցի նրան ապացուցել, որ հայրս սովորութիւն չունէր իր որոշումները գործադրելիս, ստանալ անգլիացիների համաձայնութիւնը։ Դա հարկաւ չազդեց Մոսադեղի վրայ, նոյնիսկ շեշտեց, որ դեռևս երիտասարդ եմ և զուրկ եմ քաղաքական հոտառութիւնից։ Ապա պնդեց, որ միայն անգլիացիների համաձայնութեան դէպքում, կարող է համագործակցել ինձ հետ։

Նրա այս մտածելակերպը դատայ վտանգաւոր, այդուհանդերձ զգում էի, որ պիտի նկատի ունենալ նաև երկրի ճգնաժամային դրութիւնը. յիրաւի ամեն առիթով բռնագրաւիչ ուժերը ի վիճակի էին միջամտելու երկրի ներքին խնդիրներին և տուեալ դրութեամբ, Մոսադեղի հայրենասիրութիւնն ու ժողովրդականութիւնը անգնահատելի արժանիքներ էին։ Հետևաբար դժկամութեամբ ասացի, որ մարդ պիտի

ուղարկեմ անգլիական դեսպանի մօտ և նրան յայտնեմ նպատակս։ Սակայն որպէսզի ընդունած չլինեմ Մոսադեղի առաջարկը՝ անգլիական դեսպանի հետ միայն խորհրդակցելու մասին, նշեցի, որ մարդիկ պիտի ուղարկեմ նաև ռուսական և միւս բռնագրաւիչ երկրների դեսպանատները և բոլորին տեղեակ պահեմ կատարուածի մասին։ Հետևեալ օրը ուղարկուած անձինք զեկուցեցին իրենց տրուած առաջադրանքի մասին։ Անգլիական դեսպանը այդ օրերին Սըր Ռիդեր Բոլարդն էր։ Նա յայտնել էր, որ դէմ է վերոյիշեալ ծրագրին և նոյնիսկ կարծիք էր յայտնել, որ նոր ընտրութիւնները կարող են յարուցել խռովութիւններ։ Սակայն պիտի ասել, որ ռուսական դեսպանը ամենևին դէմ չէր եղել այս խնդրին, որով նրա վերաբերմունքը ռուսների հետագային ցոյց տուած քաղաքականութեան համեմատութեամբ, մինչև իսկ ուրախալի էր։

Երկու երկրների դեսպանների կարծիքների մասին տեղեկանալով, հեռախօսեցի Մոսադեղին և յայտնեցի բանակցութեանց արդիւնքը։ Նա յայտնեց իր երախտագիտութիւնը և այսպիսով աւարտեց թէ մեր խօսակցութիւնը և թէ նոր ընտրութիւնների գծով նրա ցուցաբերած շահագրգռութիւնը։ Հարկաւ, առկախ մնաց նաև, նրան վարչապետ նշանակելու իմ մտադրութիւնը։

Մի քանի ամիս յետոյ տեղի ունեցաւ մի այլ միջադէպ, որը լիովին հակասում էր օտարների դէմ ունեցած Մոսադեղի՝ առերես հակառակութեանը։ Այդ

օրերին, համաձայն Ազգային Խորհրդարանի օրէնսդրութեան, հարկադիր էր պատգամաւորների երկու երրորդի ներկայութիւնը խորհրդակցութեան, և երեք քառորդի ներկայութիւնը քւէարկութեան համար։ Խորհրդարանի փոքրամասնութիւնը՝ հազիւ քառասուն հոգի, շահագործելով յիշեալ օրէնքը, շարունակաբար խուսափում էր մասնակցելու նիստերին, որով խախտւում էր մեծամասնութիւնը։ Այդ խմբակի պարագլուխն էր Մոսադեղը։ Այլևս չկարողանալով տանել այդ ոչ հայրենասիրական վերաբերմունքը, կանչեցի Մոսադեղին և իր խմբակի անդամներին և հարցրի պետութեան գործունէութիւնը խանգարելու նրանց շարժառիթը։ Իմ հարցին Մոսադեղի տուած պատասխանը, թէ՝ ռուսները համաձայն չեն ներկայ վարչապետի հետ, շշմեցրեց ինձ։ Հարցրի թէ ինչու նա ճգնում է շահելու ռուսների համակրանքը և եթէ մի այլ փոքրիկ պետութիւն մերժելու լինէր վարչապետին, արդեօք նա դարձեալ պիտի դիմէ՞ր նման արարքի։ Մոսադեղը իմ այս հարցին պատասխան չունէր։

Վերոյիշեալ դէպքերին համընթաց, ամերիկեան և անգլիական նաւթային ընկերութիւնները շահագրգռուած էին առաւել մենաշնորհներ ձեռք բերելու հարաւի նաւթի արդիւնաբերութեան մէջ։ Խորհրդային Միութիւնն ևս մենաշնորհներ էր ակնկալում հիւսիսային շրջաններից։ Տեւալ հանգամանքը բարձրացրեց Մոսադեղի ազգայնութեան վարկը, որովհետև 1323 թւին նրա կողմից առաջարկուած և Ազգային Խորհրդարանի միջոցով վաւերացուած մի նախագծի համաձայն, կառավարութիւնը առանց Ազգային Խորհրդարանի տեղեկութեան ու թոյլտւութեան, իրաւունք չունէր մենաշնորհ տալու որևէ երկրի։

Այս նախագիծը թէև տեղին, բայց և փաստացի մի նմոյշ էր Մոսադեղի բացասական գծերից։ Պատերազմն աւարտելուց յետոյ, Մոսադեղը աշխատեց ծայրայեղական տարրերից, որոնք հանդէս էին գալիս նացիոնալիստ անուան տակ, կազմել ազգային ճակատ։ Հետզհետէ նրա շուրջ ժողովուեցին կրօնական ծայրայեղականներ, համալսարանականներ, շուկայի մանր առևտրականներ և սոցիալիստներ։ Առերևոյթաբար նրանց իրար կապող ազգակն ու համագործակցութեան ոգին օտարների և նրանց ներթափանցումների դէմ առաջացած խորին նողկանքն էր, սակայն շատ չանցած, երբ ակնյայտ դարձաւ Իրանի ժողովրդի դրական քայլեր վերցնելու անհրաժեշտութիւնը, վերոյիշեալ տարրերը դատապարտուեցին անկումի ու կործանման։

1327 թւին, ինչպէս նշել եմ նախօրօք, մահափորձ կատարուեց իմ դէմ։ Դէպքի մասին տեղեկանալով, երկրի ողջ ժողովուրդը, մէկ հոգի և մէկ մարմին դարձած, նեցուկ կանգնեց ինձ և դրան յաջորդեց Թուդէ կուսակցութիւնը անօրինական յայտարարելու ակտը։ Ժողովրդի հաւատարմութեան շնորհիւ, այսպիսով ի վիճակի եղայ ամրապնդելու իմ օրինական կացութիւնը։

Իրանի՝ 1324 թւին վաւերացուած Օրէնսդրու-

թեան մէջ, Ազգային Խորհրդարանի հետ միասին, նախատեսուած է նաև Սենատի հիմնադրումը։ Սակայն մինչև 1329 թիւը, Ազգային Խորհրդարանի կողմից յարուցուած արգելքների հետևանքով, դեռևս չէր կազմուել Սենատը։ Սենատը բացուեց սոյն թուին և կազմուեց նրա առաջին պաշտօնական նիստը։ Համարեա նոյն օրերին, Խորհրդարանի առաջարկութեամբ ու վաւերացումով, սահմանադրական այլ պետութիւնների պարագլուխների պէս, ինձ ևս փոխանցուեց զոյգ խորհրդարանների կազմալուծման և նոր ընտրութիւնների հրամանի հրատարակման լիազօրութիւնը։

1328 թուի վերջերին, Իրանի տնտեսական և զինուորական օգնութիւնների ծաւալը ընդլայնելու նպատակով ուղևորուեցի Միացեալ Նահանգները, ուր թէև արժանացայ ջերմ ու բարեկամական ընդունելութեան, այնուամենայնիւ վերադարձայ դատարկաձեռն որովհետև հակառակ այն իրողութեան, որ պրեզիդենտ Թրումանը 1326 թուին կոմունիզմի դէմ պայքարելու նպատակով հրատարակել էր որոշ հիմունքներ և դրանց սահմաններում օգնութիւն էր ցուցաբերել Թուրքիային և Յունաստանին, որոնք յաջողել էին պահպանելու և ամրապնդելու իրանց անկախութիւնն ու հողային ամբողջականութիւնը, սակայն դեռևս ճշտուած չէր ամերիկեան քաղաքականութիւնը Միջին Արևելքի խնդրում։

Այս առաքելութեան անյաջողութեան մէջ, անկասկած, առաջին հերթին մեղաւոր էինք մենք, որովհետև ամերիկացիները վաղուց զգացել էին, որ լրջորէն և հանգամանօրէն չենք վերաբերուում երկրի ներքին խնդիրների բարելաւմանը։ Ազգային Զինուոյժի պարտութիւնն ու անկումն ևս, որը տեղի էր ունեցել նոյն թուի սկիզբներին, ինքնըստինքեան յարուցել էր Միացեալ Նահանգների խորին անհանգստութիւնը և նրանց դրդել էր օգնութիւն ցուցաբերելու լոկ այն երկրներին, որոնք շահագրգռուած լինեն իրենց ներքին խնդիրների կարգաւորմամբ ու մաքրագարդմամբ։ Դա էր, որ հայրենիք վերադառնալուց յետոյ, լրջօրէն զբաղուեցի ներքին բարեփոխութիւններով։ Առաջին հերթին պաշտօնագրկեցի տարիներ շարունակ պետական ապարատում աշխատող անյուսալի և անճշտապահ տարրերին, և ապա սկսեցի գործադրել արքունական կալուածների բաժանման ծրագիրը, որը նախապէս ուսումնասիրուել էր ըստ կարելոյն։

Նոյն օրերին էր, որ Ամերիկայի Միացեալ Նահանգները, աշխարհի զանազան երկրներում, կիրառեց Թրումանի «Զորրորդ Կէտ»-ի ծրագիրը։

1329 թուին զօրահրամանատար Ռազմարային նշանակեցի երկրի վարչապետ, որը ամերիկացիների հետ կնքեց մի պայմանագիր, ըստ որի Ամերիկեան կառավարութիւնը փոքրիկ օգնութիւններ սկսեց հայթայթել Իրանին։ Կազմեցի նաև անարդարութեան և հասարակական նեխածութեան դէմ պայքարող մի յանձնախումբ, որը սակայն ներքին անհամաձայնութիւնների հետևանքով չյաջողեց իր առաքելութեան մէջ։

1327 թ-ին երկրի տնտեսությունը զարգացնելու և ընդլայնելու նպատակով, հունի մտել մտաամերիկեան մասնագէտների օժանդակութեամբ կազմուած և ազգային Խորհրդարանի կողմից վաւերացուած՝ Առաջին Եօթնամեայ Ծրագիրը։ Որոշում ունէի Ամերիկային և աշխարհին ապացուցելու, որ Իրանը շահաբեր կերպով է օգտագործում դրսից ստացուած ամեն տեսակի օգնութիւնները։

Այս բոլորով հանդերձ անհետևանք մնացին մեծ օգնութիւններ ստանալու մեր պահանջները։ Ամերիկեան կառավարութիւնը Իրանին վերապահելիք բաժնի փոխարէն, բաւարարուեց «Զորբորդ Կէտ»-ի վարկերից հայթայթուող փոքրիկ գումարներով։ Իր հերթին Ուաշինգթընի «Արտածումների ու Ներմուծումների Դրամատուն»-ը ևս համաձայնեց բաց թողնել 25 միլիոն դոլարի նպաստ, որը նկատի ունենալով երկրի զինուորական բռնագրաւման հետևանքով ստեղծուած տնտեսական անմխիթար դրութիւնը, թւում էր աննշան ու չնչին։

Ամերիկեան օգնութիւններից յոյսը կտրելով, երկրի ժողովուրդը յոռետեսութեամբ տրամադրուեց Ամերիկայի Միացեալ Նահանգների նկատմամբ։ Հետզհետէ ուժեղացան հակաամերիկեան հոսանքները, որոնք նպաստեցին ազգային ճակատի զօրանալուն։ Աստիճանաբար նուազեց «Եօթնամեայ Ծրագիր»-ի գործունէութեան թափը՝ դրամի պակասութեան հետևանքով, ընդ որում ամերիկեան մասնագէտներն ևս սկսեցին մէկը միւսի յետևից թողնել Իրանը։

Այն օրերին, Իրանի շահաբաժինը անգլիացիներին պատկանող հարաւային շրջանների Նաւթի Ընկերութիւնից աւելացնելու նպատակով, անօգուտ բանակցութիւններ էին գնում մեր և «Իրանօ-Բրիտանական Նաւթի Ընկերութեան» ներկայացուցչութիւնների միջև։ Ի վերջոյ Ամերիկայի անբաւարար օգնութիւնների հետևանքով առաջացած դրամի բացը և վերոյիշեալ հանգամանքները ստիպեցին մեզ՝ 1329 թ-ին, 25 միլիոն դոլարի առևտրական պայմանագիր կնքելու ռուսների հետ։ Բնականաբար դա յանգեց Մոսադեղի և նրա նպատակների ծաւալման օգտին, որի մասին կը պատմի մանրամասնօրէն։

Նաւթի արդիւնաբերութեան ազգայնացումից մի քանի տարի առաջ, «Իրանօ-Բրիտանական Նաւթային Ընկերութիւնը» խորը անտարբերութիւն և արհամարհանք դրսևորեց Իրանի հասարակական կարծիքի դէմ, սակայն դէպքերի հետագայ ընթացքը եկաւ ապացուցելու, որ տեսալ վերաբերմունքը հակառակ էր յիշեալ ընկերութեան շահերին, այնպէս ինչպէս Մոսադեղի բռնած ուղին իր հերթին, իր վարչապետութեան օրօք, վտանգեց թէ՛ իր և թէ՛ երկրի շահերը։

Նաւթային Ընկերութիւնը, հարկաւ, քաջատեղեակ էր այն իրողութեան, որ Սաուդական Արաբիայի և Հարաւային ու Կենտրոնական Ամերիկայի երկրների շահաբաժինները, արևմտեան խոշոր այլ ընկերութիւնների հետ կնքուած պայմանագրերով, հա-

մեմատաբար շատ աւելին է այն շահաբաժնից, որ սահմանուել էր նաւթային Ընկերութեան հետ կնքուած մեր պայմանագրի մէջ։ Դեռ աւելին, Նրանք լաւ գիտէին, որ դժգոհ ենք Անգլիայի կառավարութեանը տրուող նաւթի եկամուտներից գոյացած անբնական ու ծանր տուրքերի նկատմամբ, որոնք համեմատաբար աւելի էին, քան մեր շահաբաժինը։ Նոյնպէս գիտէին, որ չենք կարող սառնարիւնութեամբ դիտել Իրանի նաւթի եկամուտների միջոցով, օտար երկրներում նաւթի արտահանման իրաւունքներ ձեռք բերելու նրանց տմարդի արարքը։ Այնուամենայնիւ, Նաւթային Ընկերութիւնը անտեսելով մեր դժգոհանքը, վտանգում էր Իրանի նաւթային արդիւնաբերութեան մէջ ներդրած վիթխարի կապիտալը։ Անգլիայի կառավարութիւնն ևս, որ ընդունակ էր կասեցնելու Նաւթային Ընկերութեան որդեգրած սանձարձակ ընթացքն ու նրան հրաւիրելու աւելի արդարացի ու խելամիտ գործունէութեան, ոչնչով չմիջամտեց տեսալ խնդրին։ Հետևանքը եղաւ այն, որ հետզհետէ լցւեց Իրանի ժողովրդի համբերութեան բաժակը և դա դուրս յորդեց նաւթի արդիւնաբերութիւնը ազգայնացնելու ուժգին պահանջի և ցանկութեան տեսքով։ Ժամանակի վարչապետ Ռազմարան համամիտ չլինելով աւելորդ բարդութիւնների հետ, փայփայում էր այն յոյսը, որ հնարաւոր է Նաւթային Ընկերութեան հետ բանակցութիւնների մէջ մտնելով, հասնել ցանկալի արդիւնքի։ Սակայն Մոսադեղն ու իր հետևորդները, վարչապետի դէմ հանդէս

եկան աղմկարար ու մեծ ցոյցերով։ Ի վերջոյ 1329 թ-ի էսֆանդ 16-ին, իսլամական ֆեդայիների խմբակին պատկանող ֆանատիկ անդամներից մէկը, Շահ Մզկիթի նախամուտքում, տմարդօրէն սպանեց վարչապետին, որ եկել էր մասնակցելու ինչ-որ մի հոգևորականի թաղման հանդիսութեանը։

Այս դէպքից մի քանի օր յետոյ, Ազգային Խորհրդարանը իմ լիակատար համաձայնութեամբ ստորագրեց նաւթի արդիւնաբերութեան ազգայնացման օրինագիծը։ Զօրահրամանատար Ռազմարայի փոխարէն, վարչապետ նշանակեցի յարգւած քաղաքագէտ Հոսէյն Ալային։ Ալան հակւած էր խնդրի խաղաղասիրական լուծումը գտնելուն, ասել է, նաւթի արդիւնաբերութեան ազգայնացմանը զուգընթաց, նաւթի հաստատութիւններն ու արտահանման աշխատանքները, կառավարուեն օտարազգի մասնագէտների անմիջական հսկողութեան տակ։ Սակայն ծայրայեղականներն ընդդիմացան նաև այս մօտեցմանը։ Հարաւի նաւթային շրջանները ուղարկուեցին խռովարար տարրեր, որոնք ատելութիւն և խռովութիւն պիտի սերմանէին բանւորութեան մէջ։ Անօրինական յայտարարւած Թուդէ կուսակցութիւնն իր հերթին օժանդակում էր տեսալ տարրերին։ Սպանուեցին որոշ իրանցիներ և անգլիացիներ։ Նաւթային Ընկերութեան կողմից դադարեցուեցին արտահանման աշխատանքները և դրա հետ միասին՝ նրանց վճարումները Իրանի կառավարութեան։

Մոսադեղը խոստանում էր ժողովրդին, որ

մօտենում են լիութեան ու առատութեան ժամանակները, որ երկրի բոլոր ծախսերը պիտի հոգացեն նաւթի եկամուտներից, որը Իրանի օրինական իրաւունքն է, որ օրական երեք հարիւր հազար փաունդ ստերլինգ պիտի գանձի Նաւթային Ընկերութիւնից, որի հետևանքով պիտի բարձրանայ իւրաքանչիւր իրանցու եկամուտը և պիտի ապահովեն Իրանի շահերը...: Հետևաբար զարմանալի չէ, որ խանդավառուած Մոսադեղի խոստումներից՝ աստիճանաբար նրա շուրջը խմբւէին ժողովրդի զանազան խաւերը, լինեն դրանք համալսարանականներ, առևտրականներ թէ բանուորներ:

Մոսադեղը այսպիսի խոստումներով ձեռք բերեց մասնաւոր հեղինակութիւն, և երբ Ալան հազիւ երկու ամսւայ վարչապետութիւնից յետոյ, հրաժարուեց՝ Մոսադեղին նշանակեցի երկրի վարչապետ: Այդ օրերին չկար մէկը, որ հաւասարուէր նրան կամ կարողանար մրցակցել նրա հետ այս կոչմանն արժանանալու ուղղութեամբ: Հիմա արդէն Մոսադեղի համար ստեղծուել էր մեծ պատեհութիւն, որովհետև սպասածից աւելի շուտ հասնելով իր և իր հետևորդների յուսավառ երազների իրականացմանն ու նպատակների կենսագործմանը, և ամբողջ երկու տարի ունենալով իր առջև, ի վիճակի էր առաւելագոյն չափով օգտուել դիւրութեամբ սեպուած առիթից, ընդորում վայելելով նաև իմ հովանաւորութիւնը, թէև մի այդպիսի հովանաւորութիւնը, նողկալի պիտի դառնար ինձ համար:

Արդ, պէտք է ճշտել, ի՞նչ արեց Մոսադեղը և

թէ ի՞նչ մեծ պատուհաս հասցրեց մեր երկրի ժողովրդին:

Նոյն օրերին անգլիական կառավարութիւնը յայտարարել էր, որ անկարգելաւորների ջոկատ է իջեցնելու Կիպրոսում, այն ինչ շշուկներ տարածուեցին, որ յիշեալ ոյժը պատրաստւում է շարժուելու դէպի Իրան: Անգլիական Մորիտոս անուանակիր ռազմանաւն ևս խարիսխ էր ձգել Աբադանի դիմաց և ասւում էր նոյնպէս, որ անգլիական նաւատորմիղի մի այլ միաւոր ևս ընդհուպ առաջանում է դէպի Իրանի ջրերը:

Կանչելով անգլիական լիազօր դեսպանին՝ յայտնեցի, որ եթէ Անգլիան կամենայ ոտնահարել մեր հողային ամբողջականութիւնը, ապա ես ինքս անձամբ ստանձնելով Իրանի զինուած ոյժերի հրամանատարութիւնը, պիտի կանգնեմ ամեն տեսակի ոտնձգութիւնների դէմ: Ինչևէ, իմ այս ուղղակի արտայայտութեան՝ թէ այլևայլ պատճառներով, վերոյիշեալ շշուկները երբևէ չիրականացան:

Նաւթի խնդրի լուծման դրական պատասխանը գտնելու համար, Մոսադեղը նմանապէս ընդունակ պիտի լինէր կիրարկելու նման պարզ և կտրուկ քաղաքականութիւն, բայց գործելու նախաձեռնութիւնը թողնելով նաւթային ընկերութեան, նա իր ժամանակի մեծագոյն մասը տրամադրեց նախկին Նաւթային Ընկերութեան դէմ անկազմակերպ պայքար մղելուն, դրանով իսկ անտարբեր մնալով, իր անհաշուենկատ գործունէութեան հետևանքով, երկրում ա-

ռաջացող երևույթներին։ Հետևանքը եղաւ այն, որ մինչև իր պաշտօնից հեռացումը, առաջին օրւայ համեմատութեամբ, նա մէկ քայլով անգամ չէր մօտեցել խնդրի լուծմանը։

Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Ապահովութեան Խորհրդի, Միջազգային դրամատան, պրեզիդենտ Թրումընի և նրանից յետոյ պրեզիդենտ Այզենհաուրի, ինչպէս նաև միջազգային մի քանի այլ հաստատութիւնների և դրանց կողմից գործուղուած պաշտօնեաների ջանքերը, տեւել խնդրի համար մի խելամիտ լուծում գտնելու ուղղութեամբ՝ անցան ապարդիւն, որովհետև Մոսադեղը դառնալով թէ իր խորհրդակիցների և թէ իր սեպհական կամակոր ու յամառ մտքերի դերին, որդեգրել էր բացասական ընթացք, որ ըստինքեան չէզոքացնում էր ամեն տեսակի համաձայնութեան հնարաւորութիւնը։ Դեռ աւելին, երկրի բարեկարգմանն ու վերելքին զարկ տալու փոխարէն, Մոսադեղը իր ժամանակը չարաշահում էր վայրահաչութիւններով և ինչպէս պիտի ասի՝ կ'երեւայ, թէ նա իր գոյութիւնը պահպանելու նպատակով, թոյլ էր տալիս ինչպիսի արարքներ։

Անգլիայի կառավարութեան և նախկին Նաւթային Ընկերութեան խնդրում որդեգրած իր քաղաքականութեան մէջ, Մոսադեղը գործեց երկու անները՝ սխալ։ Նախ, համոզուած լինելով, որ միջազգային արդիւնաբերութիւնն ու էկոնոմիկան առանց Իրանի նաւթի, ենթակայ է կործանման, դալիս էր այն եզրակացութեան, որ նախկին Նաւթային Ընկերութիւնն ու դրա հովանաւորեալներն ի վերջոյ ծնկի գալով՝ անձնատուր պիտի լինեն նրա առջև։ բայց երբ դադարեց Իրանի նաւթի թողարկումը, նաւթարդիւնաբերող այլ երկրները առաջացած բացը լրացնելու նպատակով՝ անմիջապէս բարձրացրին նաւթի արտահանումը։ Բնական է, որ ներկայ ժամանակներում, երբ բազմաթիւ են նաւթառատ երկրները, հնարաւոր չէ և ոչ մէկ երկրի համար մենաշնորհ դարձնելու նաւթի թողարկումը։ իրականում նաւթի թողարկման պրոբլեմը ճիշտ հակառակն է այն բանի, ինչ-որ երևակայում էին Մոսադեղն ու իր ընկերակիցները, որովհետև երբ Մոսադեղի անկումից յետոյ, Իրանի նաւթը նորից սկսեց հոսել դէպի միջազգային շուկաները, դրանք առանց այդ էլ ենթարկւել էին կուտակումի, այնպէս որ մի քանի երկրներ ստիպւած եղան պահանջքի և մատակարարման միջև հաւասարակշռութիւն պահպանելու նպատակով իջեցնել իրենց նաւթի թողարկումը։ Մոսադեղի և իր ընկերակիցների այս անհեռատես գործողութիւնների բուն պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այն թիւր կարծիքը, թէ նաւթի թողարկումը Իրանի մենաշնորհն է։

Մոսադեղի երկրորդ սխալը կայանում էր նրանում, որ կարծում էր թէ կարող է առանց օտարների օգնութեան Իրանի նաւթը հանել միջազգային շուկաներ։ Այդ օրերին Իրանը զուրկ էր նոյնիսկ նաւթատար բեռնանաւերից և չունէր նաւթի վա-

ճառքի միջազգային կազմակերպութիւն։ Յաջորդ գլխում կը պատմուի իմ և կառավարութեան ջանքերի շնորհիւ նաւթատար նաւերի կարաւանի և նաւթի վաճառքի համար ստեղծուած արդիական միջոցների մասին. Մոսադեղը մի կողմից իր յարաբերութիւնները խզելով նաւթային մեծ ընկերութիւնների և պատկառելի հաստատութիւնների հետ, և միւս կողմից զուրկ լինելով տրանսպորտային ազդեցիկ միջոցներից՝ կանգնել էր անելանելի դրութեան առջև։

Երբ նաւթարդիւնաբերութիւնը Իրանում յայտարարուեց ազգայնացուած և Մոսադեղը նշանակուեց վարչապետ, Անգլիայի կառավարութիւնն ու Նաւթային Ընկերութիւնը անմիջապէս հեռատեսօրէն փոխեցին իրեց նախկին քաղաքականութիւնը և պաշտօնապէս ընդունեցին ազգայնացման պրոցեսը։ Շատ չանցած, նրանք Իրան գործուղեցին Ստոքսի Յանձնախումբը։ Դրանից յետոյ Անգլիայի կառավարութիւնը համաձայնեց նաւթի բոլոր եկամուտները բաժնել երկու երկրների միջև հաւասարապէս ու արդարօրէն (յիսուն-յիսուն)։ Արդ, եթէ Մոսադեղն այդ ժամանակ համաձայնուէր խելամիտ ու մտածուած բանակցութիւնների մէջ մտնելուն, ապա իմ հայրենակիցները զերծ պիտի մնային տնտեսական զրկանքներից և դրանից առաջացող վտանգներից։ Հիմա էլ ենթադրում եմ, որ Մոսադեղ-անհատը իր բոլոր յամառութեամբ՝ ու վտանգաւոր դոգմատիկականութեամբ որոշ չափով հակուած էր կողմերի միջև փոխադարձ համաձայնութիւն ստեղծելու օգտին,

սակայն անվերապահօրէն կասկածում եմ նրա խորհրդակիցներից, որոնցից շատերը կարծում եմ, լիայոյս էին, որ ամենափոքրիկ ելքը չգտնելով՝ երկիրը ենթարկուի տնտեսական անկման և հետևաբար ընկնի օտար տիրապետութեան իշխանութեան տակ։ Այս տեսակի շեղուած նացիոնալիզմի մասին խօսելու եմ յաջորդ գլխում։

Երբ Մոսադեղը մերժեց Ստոքսի յանձնախմբի առաջարկները, Նաւթային նախկին ընկերութիւնն ու Անգլիայի կառավարութիւնը առանձին-առանձին բողոքագրեր ներկայացրին Լահէի Միջազգային Դատարանին. երկու բողոքագրերի մէջ էլ նշուել էր 1312 թուականին հօրս կողմից նաւթային նախկին ընկերութեան հետ կնքուած պայմանագրի մասին, որ իր ոյժի մէջ էր մինչև նաւթի ազգայնացումը։ Յիշեալ պայմանագրի բերումով, Իրանի և Նաւթի Ընկերութեան միջև անհամաձայնութիւն լինելու դէպքում, կողմերը պիտի դիմէին դատի։ Այդ իսկ պատճառով Լահէի Դիւանից՝ պայմանագրի տեսալ կէտի հիման վրայ՝ պահանջուել էր մէկ հոգի դատաւոր։

Սակայն Մոսադեղը Միջազգային դատարանը համարեց ոչ իրաւասու, որով Անգլիայի կառավարութիւնը խնդիրը արծարծեց Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Ապահովութեան Խորհրդում։ Երկար խորհրդակցութիւններից յետոյ յիշեալ խորհուրդը 1330 թ-ի Մեհր ամսին, որոշեց խնդիրը թողնել առկախ, մինչև որ Լահէի Միջազգային Դատարանը յայտնի իր իրաւասու կամ ոչ իրաւասու լինելու հանգա-

մանքը։ Երբ Մոսադեղը որպէս Ապահովութեան Խորհրդի Իրանեան ներկայացուցիչը գտնուում էր Նիւ-Եորքում, քաջալերական հեռագիր յղեցի նրան և ստացայ ներքոյ յիշեալ պատասխանը։

«Նիւ-Եորքից, 21 Հոկտեմբեր, 1951 թ.

«Նորին Կայսերական Մեծութիւն Շահն Շահին,

Թեհրան,

«Ձերդ Գերազանցութեան հեռագրական գիրը ստացուեց և սպասածից աւելի պատճառեց հպարտութիւն և շնորհակալութիւն։ Ամենակարող բարձրեալից միշտ էլ հայցել եմ Նորին Կայսերական Մեծութիւն Շահնշահի ողջութիւնը, երկարակեցութիւնն ու յաջողութիւնը և այսու յայտնում եմ, որ ամեն վայրում և ամեն առիթով ձեռք բերուած ամեն մի յաջողութեան համար պարտական ենք Արքայական Սրբազնագոյն Անձի շնորհներին և ուշադրութեանը, որ յարատևօրէն ոգեշնչել ու առաջնորդել և կառավարութեան։ Պալատական պատուարժան պարոն Նախարարի միջոցով, ինչպէս յայտնել ենք Ձերդ Մեծութեան՝ երկուշաբթի օր պիտի մեկնեմ Ֆիլադելֆիա և երեքշաբթի առաւօտեան Վաշինգթոն, որտեղից պիտի անմիջապէս զեկուցեմ դէպքերի դասաւորման մասին։ Թոյլ տուէք մի անգամ ևս խորին երախտագիտութիւն յայտնել՝ երիտասարդ Շահնշահի յատուկ ուշադրութեան և շնորհների համար»։

Դոկտ. Մոսադեղ

Նկատի ունենալով հետագային տեղի ունեցած իրադրութիւնները, թէ որքան անկեղծ պիտի համարել սոյն հեռագրի բովանդակութիւնը՝ դա թողնում ենք ընթերցողների հայեցողութեան։

1330 թ-ի վերջերին, Շինարարական և բարգաւաճման Միջազգային Դրամատունը, որպէս Բարեկամ միջնորդ, ձեռնարկեց լուծելու առկայ տարաձայնութիւնները։ Առաջին հայեացքից թւում էր, որ բանակցութիւնները պիտի յանգեն բարենպաստ արդիւնքի։ Նոյնիսկ ինքը՝ Մոսադեղը համակարծիք էր Դրամատան առաջարկած պայմանների հետ, սակայն նրա խորհրդակիցները, սոսկ իրենց յայտնի պատճառներով, ստիպեցին հրաժարուել ընդունելու տեսալ առաջարկները, որով աւարտուեցին սկսած բանակցութիւնները։ Նոյն օրերին Մոսադեղը կարգադրեց փակել անգլիական բոլոր կոնսուլթները։

Ազգային խորհրդարանի 17-րդ նստաշրջանի բացումից յետոյ, դեռևս ժողովրդականութիւն վայելող Մոսադեղը, նորից ընտրուեց վարչապետութեան թեկնածու։ Նա, 1331 թ-ի ամառուայ սկզբին յայտարարեց, որ միայն արտակարգ լիազօրութիւններ ստանալու պայմանով ի վիճակի պիտի լինի ստանձնելու իր փոստը։ Եւ որովհետև մտահոգուած էր Ազգային Խորհրդարանի պատգամաւորութեան և ժողովրդի հակառակութեան մասին իր որդեգրած քաղաքականութեան խնդրում, պահանջեց, որ վեց ամիս շարունակ ցանկանում է աշխատել անկախ, առանց դիմելու Ազգային Խորհրդարանին։ Նոյնպէս պահանջեց, որ

Պատերազմական Նախարարությունն էլ դրի նրա անմիջական տրամադրության տակ։ Թերևս նա փայփայում էր այն յոյսը, որ այսպիսով կը չեզոքացնի՝ յանուն օրէնսդրութեան՝ ինձ յանձնուած Իրանի զինուած ոյժերի գերագոյն հրամանատարությունը։

Մերժեցի նրա առաջարկները, որովհետև համոզուած էի թէ տեսալ լիազօրությունները լոկ պիտի ծառայեն այն բանին, որ կոմունիստները աւելի պիտի թափանցեն երկրի ներքին խնդիրների մէջ։ Հետագայ իրադարձությունները՝ ինչպէս կը նկատի ընթերցողը՝ վկայեցին իմ համոզումների ճշտությունը։

Մոսադեղը թիր ամսոյ 25-ին հրաժարուեց վարչապետությունից և ես՝ հակառակ իմ ներքին մօտեցման՝ Ահմադ Ղաւամին, որ անցեալում մի անգամ ևս զբաղեցրել էր վարչապետական պաշտօնը, նրա փոխարէն հռչակեցի երկրի վարչապետ, որովհետև, ի հեճուկս շատերի, կարող էր հաստատակամօրէն դիմադրել ձախ հոսանքների ներթափանցումներին։

Ղաւամ Սալթանէի նշանակումից անմիջապէս յետոյ, Թուդէ կուսակցությունը միանալով Մոսադեղի համախոհներին, հանդէս եկաւ խուճապային ցոյցերով։ Խախտուեց ոչ միայն կարգն ու կանոնը, այլև Ղաւամի կառավարությունը անզօր գտնուեց զսպելու խռովարարներին։ Ի դէպ, Ղաւամը ռադիոյով արտասանած իր ճառով, որի մէջ խստօրէն դատապարտեց ժողովրդի դրսևորած զգացումները նաւթի ազգայնացման խնդրում, աւելի փչացրեց ստեղծուած կացությունը։

Ղաւամը, տարիքի բերումով, դարձել էր հիւանդագին ու անզօր, նոյնիսկ քաղաքական կարևոր խորհրդակցությունների ընթացքում յաճախ ննջում էր։ Թէև իրօք՝ խնդիրների լուծման մէջ նա դրսևորում էր ոյժ և երբեմն բռնություն, այդուամենայնիւ, խղճով ասած, ես չէի կարող այդպիսի մի ընթացք թոյլատրել նրա պէս անզօր անհատի։ Հետևաբար, նա չորս օր յետոյ, իմ գիտությամբ հրաժարուեց վարչապետությունից, որով աւելի ևս շեշտուեց այն տխուր իրականությունը, թէ ոչ ոք այդ օրերին ի վիճակի չէր մրցակցելու Մոսադեղի հետ։ Այսպիսով, ստիպողաբար և ներքին պատերազմից խուսափած լինելու նպատակով, ընդունեցի Մոսադեղի առաջարկները և Թիր ամսի 30-ին, նրան նշանակեցի երկրի վարչապետ։

Համարեա նոյն օրերին, Լահէի Միջազգային Դատարանը, Անգլիոյ ներկայացրած բողոքը Իրանի դէմ քննելու խնդրում իրեն յայտարարեց ոչ իրաւասու։ Դատարանի անգլիացի դատաւորը քէէարկեց Իրանի օգտին, իսկ Ռուսիոյ պատուիրակը իրականում բացակայ էր Դատարանի բոլոր նիստերից, մնաց ձեռնպահ։

Լահէի Դատարանի արձակած վճիռը մեծ ուրախություն և գոհունակություն պատճառեց իրանցիներին, թէև դա պարզապէս ոչինչ չփոխեց առկայ իրադրության մէջ, բացի այն, որ Մոսադեղը դա համարեց իր բացասական ընթացքի նաւճումներից մէկը։ Ժողովուրդը ցնծում էր. իսկ Մոսադեղը բաց

էր տեսնում դէպի իր վերջնական նպատակներն ա-
յաջնորդող ճանապարհը։

Ամերիկեան կառավարութիւնը մեծապէս մտա-
հոգուած և երկմտած լինելով Իրանի քաղաքական և
տնտեսական վարիվերոյ կացութիւնից, Շահրիվար
ամսոյ 8-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգների
պրեզիդենտ Թրումանի և Անգլիոյ վարչապետ Չըր-
չիլի ստորագրութեամբ մի յուշագիր ներկայացրեց
Մոսադեղին, որի մէջ խօսւում էր նաւթի տարաձայ-
նութիւնների լուծման մասին։ Սակայն Մոսադեղը
մերժեց այդ առաջարկն ևս, և դեռ աւելին, Մեհր
ամսի 30-ին, խզեց իր յարաբերութիւններն Անգլիոյ
կառավարութեան հետ։

Այս բոլոր իրադարձութիւնների ընթացքում,
Աբադանի նաւթային վիթխարի հաստատութիւնները,
որ դեռևս դասւում են աշխարհի մեծագոյն գտարան-
ների շարքին, մնացել էին միանգամայն անօգտա-
գործելի և զուրկ՝ ամենաչնչին եկամուտից՝ Իրանի հա-
մար։

Մոսադեղը փորձեց նաւթ վաճառել օտարազգի
մանր ընկերութիւնների, որոնք պատրաստ էին իրենց
վտանգել՝ պայքարի մէջ մտնելու իրաւասու տէրերի՝
Նաւթային նախկին Ընկերութեան դէմ, սակայն ընդ-
հանուր առմամբ յիշեալ վաճառքից գոյացած եկա-
մուտը, աւելի քիչ էր գտարանի անցեալի գործու-
նէութեան մէկ օրւայ եկամուտից։

Ծաւալւող իրադրութիւններին համընթաց,
Ամերկայի Միացեալ Նահանգների հանրապետութեան

նախագահ ընտրեց Այզընհաուրը, որ Մր. Չրչիլի
ընկերակցութեամբ բազմիցս, միացեալ առաջարկու-
թիւններով, հանդէս եկան Իրանի նաւթի տարաձայ-
նութիւնների լուծման օգտին. այս բոլոր առաջար-
կութիւններն ևս նախորդների պէս մերժուեցին Մո-
սադեղի կողմից։ Այս իրադարձութիւններին հետևեց
Մոսադեղի բացասական նաճու�ներից մի քանիսն ևս։
Դեռ երկու շաբաթ չանցած այն օրից, որ ես բացեցի
Սենատը, նա հարկադրեց Ազգային Խորհրդարանին
լուծարքի ենթարկել դա։ Անձեռնմխելի մնաց Ազգա-
յին Խորհրդարանը շնորհիւ այն բանի, որ դրան
դարձրել էր իր գործողութիւնների կամակատարն ու
նեցուկը։

1331 թ-ի Դէյ ամսին, Ազգային Խորհրդարանը
իմ համաձայնութեամբ և ձայների մեծամասնու-
թեամբ երկարաձգեց Մոսադեղի լիազօրութիւնները։
Իմ համաձայնութեան շարժառիթն այն էր, որ ցան-
կանում էի նրան շնորհել՝ նաւթի խնդրում դրական
մի քաղաքականութիւն վարելու պատեհութիւն, սա-
կայն ցաւօք սրտի՝ Մոսադեղը տւեալ լիազօրութիւն-
ները չարաշահեց իր անձնական ձգտումների էլ աւելի
արագ իրականացման ուղղութեամբ, ընդ որում ձեր-
բակալելով որոշ թերթերի խմբագիրներին, նախ սեղ-
մեց պարբերական մամուլը և ապա ձեռնարկեց Ազ-
գային Խորհրդարանի ստիճանական քայքայմանը,
քանի որ խորհրդարանականներից ոմանք, քաջաբար
ընդվզելով նրա դէմ, սպառնում էին մերժել նրա որո-
շումները։ Մոսադեղի հրահրմամբ և դիտաւորեալ բա-

ցակայությամբ, նրա կողմնակիցները Խորհրդարանում խանդարում էին նիստերի գումարումը և ի լրացումն դրա, հանրային վայրերում կամ հենց բնակարաններում, սպառնում և նեղում էին դեմ պատգամավորներին։

Մեկը, որ յարատևօրէն ժողովրդին զերծ էր պահում դրամի արժէքազրկման վտանգից, անտպասելիօրէն ինքը ձեռնարկեց նման մի խնդրի։ Հրատարակեց միլիարդներ ըիալի թղթադրամ, ըստ որում առանց նկատի ունենալու դրամի համարժէք ոսկու կամ սակերի քանակութիւնը։ Զինուորական և հսկիչ ոյժերի հրամանատար կարգուեցին նրան հաւատարիմ անձիք և Թուդէ կուսակցութեան կոմունիստներին թոյլտուութիւն շնորհուեց,—շատերի կարծիքով, նոյնիսկ քաջալերեց նրանց, — թափանցելու զօրաբանակի մէջ։ Երկարաձգուեց նաև զինուորական իշխանութիւնը, որից յետոյ Ազգային Խորհրդարանին հրամայուեց կազմելու եօթ հոգուց բաղկացած մի յանձնախումբ, որն պիտի քննարկէր նրա հետ՝ զինուորական ոյժերի ընդհանուր հրամանատարութեան գծով իմ ունեցած իրաւունքների սահմանափակման հնարաւորութիւնները։ Ցիշեալ յանձնախումբը կազմեց մանրամասն մի զեկուցում, որն Մոսադեղի պահանջով արծարծուեց Խորհրդարանում։ Սակայն Ազգային Խորհրդարանը, անտարբեր մնաց տուեալ խնդրի նկատմամբ և Խորհրդարանի նախկին համակիրները, մինչև իսկ Քաշանին, ոչ մէկ գնով ընդառաջեցին Մոսադեղի պահանջին։

Մոսադեղը լուծարքի ենթարկեց Երկրի Բարձրագոյն Ատեանը և Ազգային Խորհրդարանի ընտրութիւնները, որովհետև յանդուգն պատգամաւորներից ոմանք ընդվզել էին նրա դէմ, ընդ որում յայտարարեց։ որ Ազգային Խորհրդարանի լուծարքի խնդիրը պէտք է յանձնել հանրային քուէարկութեան տնօրինութեանը։

Պատգամաւորները յիշում էին, որ Ազգային Խորհրդարանի նոյն նստաշրջանի բացման ընթացքին ելոյթ ունեցած համառօտ ճառով Մոսադեղը հաւաստիացրել էր, որ պատգամաւորութեան ութսուն տոկոսը ժողովրդի իրաւ ընտրեալներն են։ Սակայն իրեն ազատ ընտրութիւնների պաշտպան և կողմնակից յայտարարող Մոսադեղը, վերոյիշեալ հանրաքուէն (ռեֆերենդում) կազմակերպեց այնպէս, որ Խորհրդարանի լուծարքին թեր անհատները, իրենց քուէները դցեն գոյնով միանգամայն զատորոշած քուէատուփերի, իսկ դէմերը՝ տարբեր քուէատուփերի մէջ։ Այսպիսով ովքեր համարձակութիւն ունենային հանդէս գալու դէմ քուէարկութեամբ, անկասկածօրէն պիտի ենթարկուէին Մոսադեղի կողմնակից բանդաների, սպեկուլեանտների և թուդէականների անողոք դատավճռին։ Հանրաքուէի արդիւնքը եղաւ այն, ինչ որ փափագում էր Մոսադեղը և ինչ որ ժամանակին ստացել էր նաև Հիթլերի մօտ։ Ձայների 99 տոկոսը տրուած էր Ազգային Խորհրդարանը լուծարքի ենթարկելու օգտին. Երկրի քաղաքներից մէկում, որի բնակչութիւնը հաշուում էր 3000 հոգի, տրուել էր 18000 թեր քուէ

Ազգային Խորհրդարանի լուծարքի օգտին։ Ըստ երեւոյթին այդ և շատ ուրիշ քաղաքներում, հանդերձեալները դուրս գալով դերեզմանից՝ իրենց քէֆերն էին գցել քէֆատուփերի մէջ...։ Սակայն այլ առումով, իրօք, մեռելներն ևս մասնակցել էին Մոսադեղի այս և նման շինծու ընտրապայքարներին, որովհետև հարիւրաւոր անձինք տալով իրենց իսկական և սրտաբուխ քէֆն՝ դիտապաստ աւանդել էին իրենց հոգին...

Երկար տարիներ շարունակ, երբ դեռևս Մոսադեղը պատգամաւոր էր Ազգային Խորհրդարանում, ստեղծուել էր այն տպաւորութիւնը, որ նա մոլեռանդ սահմանադրական է, յարգում է օրէնքը, համամիտ է պատգամաւորութեան մեծամասնութիւնը վայելող կառավարութեան հետ, դէմ է զինուորական կառավարութեանը և դրսատում է ազատ ընտրութիւններն ու մամուլի ազատութիւնը։

Նոյն Մոսադեղը մի քանի ամսուայ ընթացքում, լուծարքի ենթարկեց Սենատը, երկրի արդարադատական բարձրագոյն ատեանը և ժողովրդին հրահրեց լուծարքի ենթարկելու Ազգային Խորհրդարանը։ Ճնշեց մամուլը, վերացրեց ազատ ընտրութիւնները, երկարաձգեց զինուորական կառավարութեան ժամանակաշրջանը, և ճիգ չխնայեց թուլացնելու սահմանադրութեան հիմունքների համաձայն ինձ շնորհուած իրաւունքները, որով ոտնահարեց հսկայ ջանքերով ձեռք բերուած երկրի յիսնամեայ կանոնադրութիւնը, սակայն այդուհանդերձ նա չհասաւ

երկրում միակ դիկտատորը լինելու իր երազանքին, քանի որ դեռ չէր կազմակերպել երկրի թագաւորին գցելու միջոցները։

Թէև ես փրկել էի նրա կեանքը մահից և իր գործունէութեան սկզբնական շրջանում՝ վայելում էր իմ օժանդակութիւնն ու հովանաւորութիւնը, այնուամենայնիւ վարչապետ դառնալու օրից ինձ համար պարզ դարձաւ այն իրողութիւնը, որ Մոսադեղի բուն նպատակն է, ոչնչացնել իմ դինաստիան։ Առկայ էին բազմաթիւ փաստեր տւեալ իրողութիւնը վկայող, որովհետև Մոսադեղը սերում էր Կաջարներից և եթէ ժամանակին մեծապէս դէմ էր եղել հօրս իշխանութեան հասնելուն, ապա ներկայում իր քաղաքականութիւնը կայանում էր այն բանի մէջ, որ հնարաւորութեան սահմաններում, գցի Փահլաւի դինաստիայի հեղինակութիւնն ու աստիճանաբար նրան տանի դէպի վերջնական փլուզում։ Եթէ ինձ հարց տրւի թէ՝ տեղեակ լինելով Փահլաւի դերդաստանի նկատմամբ նրա ունեցած թշնամութեանը, ըստ այնմ ինչո՞ւ չեմ կասեցրել նրան, կը պատասխանեմ որ ուզել եմ նրան պատեհութիւն ընձեռել՝ իրանցիների ազգային նուիրական ձգտումների ու նպատակների իրագործմանն ի խնդիր։ Սակայն որքան աճում էին նրա սպառնալիքները՝ Փահլաւի դինաստիայի դէմ, զգում էի, որ Մոսադեղը նոյնքան աւելի շատ յանձնւում էր մի գաղափարի, որի սկզբնաղբիւրը գտնւում էր արտասահմանում. դա մեծապէս վրդովում ու յուզում էր իմ սիրտը։

1331 թ-ի էսֆանդ ամսի 9-ին, Մոսադեղը խորհուրդ տուեց ինձ ժամանակաւորապէս հեռանալ երկրից։ Նրան իր որդեգրած քաղաքականութեան հետ ազատ թողնելու և որոշ չափով էլ նրա նիւթած դաւերից ու խարդաւանքներից հեռու մնալու նպատակով՝ տուի իմ համաձայնութիւնը։ Մոսադեղն առաջարկեց, որ ճանապարհորդութեան ծրագիրը մնայ ծածուկ և նշեց, որ ժամանակի արտաքին գործոց նախարար՝ Ֆաթեմիին կարգադրելու է անձնապէս կարգադրել իմ, կնոջս և ուղեկիցներիս անցագրերը։

Հետաքրքիր էր այն, որ Մոսադեղը յատուկ շահագրգռածութեամբ պնդում էր, օդանաւով չմեկնել Իրանից, որովհետև գիտէր, որ ժողովուրդը դէմ լինելով այս որոշմանը՝ պիտի խռնի օդանաւակայանում և խանգարի իմ երթը։

Հետևաբար առաջարկեց, որ մինչև Իրաքի սահմանն ու այնտեղից Բէյրութ հասնելս, ճանապարհեմ ծպտուած։ Համաձայնեցի նաև այս առաջարկին, բայց հակառակ բոլոր զգուշութիւնների՝ բացայայտուեց գաղտնիքը։ Ժողովուրդը հանդէս եկաւ մասսայական ցոյցերով, որոնց ընթացքին այնքան հարազատօրէն ու անկեղծօրէն ապացուցեց Շահի հանդէպ ունեցած իր դարաւոր հաւատարմութիւնը, որ բեկանեցի որշումս և մնացի երկրում։ Նոյն օրերին Թուդէ կուսակցութիւնը —անժխտելիօրէն Մոսադեղի համախոհների խորհրդով — կազմեց միացեալ ճակատ թագաւորութեան դէմ։ Սակայն դրա հետևանքը եղաւ այն, որ Իրանի քաջարի ժողովուրդը աւելի ևս համախմբուեց իմ շուրջ՝ հովանաւորելու և պաշտպանելու ինձ և գահն ու գայիսոնը։

Այսու՝ երբ յետադարձ հայեացք եմ ձգում անցեալին. գալիս եմ այն եզրակացութեան, որ թէև երկրից հեռանալու իմ վճիռը կայացրել էի շուտափոյտ կերպով և իրականում դա մի սխալ քայլ էր իմ կողմից, յամենայն դէպս Ամենակարող և Բարձրեալ Աստուծոյ կամեցողութեամբ այն աւարտուեց յօգուտ ինձ։

1332 թ-ի ամռանը, զգալի փոփոխութիւններ նկատուեցին Իրանի ժողովրդի տրամադրութեան մէջ՝ Մոսադեղի գործողութիւնների նկատմամբ։ Նրա համախոհներից ու ընկերներից շատերը լքեցին նրան, որովհետև անդրադարձան, որ նրա հակաարտասահմանեան քաղաքականութիւնն ատիճանաբար ընդունում է ընտրութեան բնոյթ և նրա բուն նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ դուրս վռնդել անգլիացիներին Իրանից և ներգրաւել համայնավարներին։ Դէպքերի յաջորդականութիւնը ժողովրդին ապացուցեց այն մասին, որ երկիրը լրիւ ընթացքով գնում է դէպի քաղաքական ու տնտեսական կործանում։ Նոյնիսկ Մոսադեղի կողմից՝ Ազգային Խորհրդարանը լուծարքի ենթարկելու ակտը չկարողացաւ խեղդել հանրային կարծիքը, որ միանգամայն ծառացել էր նրա դէմ։ Լրագրողները չվախենալով Մոսադեղին դեռև սկզբնակից խուլիգանների և Թուդէ կուսակցութեան սպառնալիքներից ու արարքներից, շարունակում էին լուսաբանել ու մեկնաբանել նրա

բուն քաղաքականութիւնը ժողովրդի լայն զանգուածների համար։

Հոգևորականութեան և ուսանողութեան ստուար խմբերը նմանապէս, որ նախապէս համաբուում էին նրա հետևորդները, երես թեքելով ընդվզեցին նրա դէմ։ Սակայն այս բոլորով հանդերձ պարզ էր, որ նրան վերջնականապէս չեզոքացնելու համար անհրաժեշտ է դիմել ոյժի։

Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքականութիւնը. Մոսադեղի իշխանութեան ժամանակաշրջանում, վկայում էր այն մասին, որ ամերիկեան կառավարութիւնը Իրանում տիրող կացութեան նկատմամբ օր-աւուր աճող մտահոգութեան հետ միաժամանակ, տատանման մէջ էր ձեռնարկելու հիմնական և ազդեցիկ քայլերի՝ բարուքելու համար Իրանի քաղաքական և տնտեսական գոյավիճակը։ 1328—29 ֆինանսական տարեայ ընթացքում, Ամերիկան համաձայն «4-րդ կէտի» ծրագրի, միայն 500·000 դոլարով օգնեց Իրանին։ 1329—30 ֆինանսական տարում, յիշեալ նպաստը աճեց 1·600·000 դոլարով,— իսկ Մոսադեղի իշխանութեան օրօք դա հասաւ 23·400·000 դոլարի, որի մեծագոյն մասը յատկացուեց նաւթի տարաձայնութիւնների հետևանքով երկրում առաջացած արտասահմանեան սակերի բացը լրացնելու խնդրին։

1332 թ-ի Խորդադ ամսին, Այզընհաուրը ազդարարեց Մոսադեղին, որ նաւթի տարաձայնութիւնները չլուծելու դէպքում, Միացեալ Նահանգները

չպիտի աւելացնի իր նիւթական օժանդակութիւնների գումարը, ընդ սմին համաձայնել էր որ դրանք կը շարունակեն անցեալ տարիների չափով։ Ի դէպ՝ նա յորդորել էր յետ կանգնել Իրանի բնական վիթխարի հարստութիւնները չշահագործելու քաղաքականութիւնից։ Ինչևէ 1331—32 թ-երին Ամերիկայի օգնութիւնների մակարդակը իջաւ 22·100.000 դոլարի։ Տեսալ երևոյթը վկայում էր այն մասին, որ թէև ամերիկացիները այնքան էլ շահագրգռուած չէին լրացնելու Մոսադեղի սխալների հետևանքով երկրում առաջ եկած բացերն ու վնասները, այդուամենայնիւ վախենում էին, որ վերջնականապէս կտրելով յիշեալ նպաստները՝ Իրանը պիտի նետեն կոմունիզմի գիրկը։

Ամերիկեան օգնութիւնների բնագաւառում, Մոսադեղի բռնած ուղին կրում էր զաւեշտական բնոյթ, որովհետև 1330 թ-ին, եթէ նա հրաժարուեց Ամերիկայի լիազօր դեսպանի հետ միասին ստորագրել՝ ամերիկացիների օգնութիւնների գծով և համաձայն այլ երկրներում գործադրուող կէտերի հիման վրայ, ներկայացուած պայմանագիրը, ապա դրա փոխարէն Իրանի Ամերիկեան Օգնութիւնների Տեխնիկական Հիմնարկութեան կառավարչից, մի խնդրագրով պահանջեց շարունակել տարեկան նպաստները։ Նա ևս իր հերթին գրաւոր կերպով յայտնեց իր համաձայնութիւնն և ինչպէս նշեցինք վերը, շարունակեցին տարեկան ֆինանսական օգնութիւնները։

1332 թ-ին, երբ մեծ թւով իր համախոհներից աստիճանաբար սկսեցին լքել նրան, նա անընդ-

հատ պոռոտախօսում էր, որ Ամերիկան հովանաւորում է իր որդեգրած ռեժիմը, ընդ որում ազդարարում էր ամերիկացիներին, որ եթէ նրան չօժանդակեն առաջանից աւելի, Իրանը պիտի ընկնի կոմունիզմի գիրկը։ Այդուհանդերձ՝ մնալով անտարբեր, թոյլ էր տալիս, որ թուդէ կուսակցութիւնն ուժեղանայ և կազմակերպւի օր-աւուր։ Ըստ իս, ամերիկացիները պարզ տեսնում էին նրա քաղաքականութեան հակասական գծերը, սակայն բնականաբար խորհում էին, որ Իրանի ժողովուրդը ինքը պիտի տնօրինի իր երկրի քաղաքական խնդիրները, ինչպէս մենք ևս վերջապէս բռնեցինք այդ ուղին։

Իշխանութեան վերջին օրերին, Մոսադեղը զօրացրեց իր տան հսկիչ զրահապատ ջոկատը և գաղտնի սպասարկութիւնը, դրա հակառակ նւազեցնելով իմ և Սորայա թագուհու բնակատեղիի՝ Սաադաբադ ամառային պալատի, ապահովութեան պատասխանատու ոյժերի՝ հրասահլերի քանակը։ Իրականութեան մէջ ամերիկեան միջակ մեծութեան 12 տանկ հսկում էին նրա բնակարանին և միայն չորս տանկ՝ Սաադաբադ ընդարձակ պալատի շրջակայքը։ Պարզ էր, որ դրանք չէին կարող դիմադրաւել թուդէականների անսպասելի յարձակումներին։

Այս գործողութիւնների հետևանքով, ես և կինս մեկնեցինք Ռամսարի պալատը, մեր ժամանակը անցկացնելով մերթ հօր կառուցած առափնեայ ապարանքում, մերթ Քալարդաշտի,—որի գեղեցկութեան ու հրաշալիքների մասին պատմել է նախապէս,—

ամառային փոքրիկ կացարանում։

1332 թ-ի Մորդադ 22-ին, ստորադրեցի Մոսադեղի՝ վարչապետութիւնից հեռացման և զօրավար Զահեդիի՝ նոյն փոստում նշանակման զոյգ հրամանագրերը։ Ապա արքայական դրանիկ գնդի պետ՝ գնդապետ Նեմաթօլլահ Նասիրիին յանձնեցի յիշեալ հրամանագրերի ծանուցման մանրամասն առաջադրանքը։

Յիշեալ առաջադրանքը կատարելու ընթացքին, գնդապետ Նասիրիի հետ պատահած արկածների նկարագրութիւնն ինձ յիշեցնում է Ալեքսանդր Դումայի՝ «Երեք հրացանակիրներ» վէպը, այն տարբերութեամբ միայն, որ Դումայի վէպը եթէ սոսկ մի առասպել է, ապա գնդապետ Նասիրիի արկածները, կարող են դասւել մեր ներկայ պատմութեան դէպքերի ու իրադարձութիւնների շարքին։

Թողնելով Ռամսարը և հասնելով Սաադաբադ պալատը, Նասիրին նախ պատրաստւեց յանձնելու իմ հրամանագիրն ուղղուած զօրավար Զահեդիին։ Պէտք է շեշտել, որ Զահեդին ժամանակին եղել էր Մոսադեղի մօտիկ համախոհներից մէկը և նրա ներքին գործոց նախարարը։ Ռազմարայի իշխանութեան առաջին օրերին, վարել էր երկրի ոստիկանական ընդհանուր ոյժերի պետի պաշտօնը և օգնել էր Մոսադեղին վերստին ընտրւել Ազգային Խորհրդարանի պատգամաւորութեան մէջ։ Այդ օրերին Զահեդին գտնւում էր Թեհրանի շրջակայքում, անընդհատ փոխելով իր բնակատեղին, որոնց մասին քաջի մի քանի

իր հաւատարիմ բարեկամներից, չգիտէր ոչ-ոք։ Նա անվախօրէն քննադատում էր Մոսադեղի քաղաքականութեան յոռի կողմերը և այդ իսկ պատճառով մի անգամ նոյնիսկ բանտարկուել էր և հիմա ազատ լինելով, սակայն չունենալով կեանքի ապահովութիւն, ապրում էր քօղարկուած։

Գնդապետ Նասիրին զանազան անձանց կողմից տրուած ուղղութիւններով և օգնութեամբ, գտնելով զօրավար Զահեդիին, նրան յանձնեց իմ հրամանագիրն և նա անմիջապէս պատրաստակամութիւն յայտնեց, սիրով ստանձնելու տրուած առաքելութիւնը։

Այժմ հասել էր այն պահը, որ յանձնուէր Մոսադեղի պաշտօնազրկման հրամանագիրը։ Զահեդիի կարգադրութեամբ գնդապետ Նասիրին նախ ձերբակալեց Մոսադեղի մերձաւոր խորհրդականներից երեք հոգու՝ նրանց միջոցով շօշափելու Մոսադեղի տրամադրութիւնն ու հետագայ դիրքորոշումը։

Զահեդին գնդապետ Նասիրիին կարգադրել էր նաև, որ ամենաչնչին պատեհութեան դէպքում, ջանք չխնայի իմ հրամանագիրն յանձնելու անձամբ Մոսադեղի ձեռքը և պահանջելու ստացական, որպէսզի հետագային նա չկարողանայ հերքել դրա ստացումը։ Ի դէպ՝ ես ևս Նասիրիին խստիւ պատուիրել էի, լինել զգոյշ՝ ոչ մէկ վնաս չպատճառելու Մոսադեղին։

Մարդադ 25-ի գիշերուայ ժամը 11-ին, գնդապետ Նասիրին իր երկու թիկնապահ սպաների ուղեկցութեամբ, շարժուեց դէպի Մոսադեղի բնակարանը, նոյն օրն առաւօտեան համայնավար մամուլի կողմից

մեծ տառերով թերթերի ճակատներին հրատարակուած այն լուրը, թէ պետական հարուած է սպասուում գնդապետ Նասիրիի կողմից, նրանց երեքին էլ ստիպում էր լինել շրջահայեաց ու վերապահ։

Հասնելով Մոսադեղի տան շրջակայքին, նրանք նկատեցին, որ բնակավայրը շրջապատուած է բազմաթիւ զինուորներով և ծանր հրասայլերով, որոնց կարգադրուած է և ոչ ոքու, մասնաւորաբար արքայական դրանիկ գնդի զինուորներին, թոյլ չտալ մտնելու շրջափակի մէջ։ Անտեսելով այս հրամանը, գնդապետ Նասիրին և երկու թիկնապահ սպաները սառնասրտօրէն անցան հրասայլերի գնդացիրների բաց խողովակների առջևից և մօտեցան Մոսադեղի տան գլխաւոր մուտքին։ Նախապէս գնդապետ Նասիրին ճշտօրէն նախատեսել էր այն հանգամանքը, որ շարքային և հրասայլերի պատասխանատու ջոկատների զինուորները ճանաչելով և յարգելով նրան, չպիտի դիմեն հրացանաձգութեանց։ Գնդապետ Նասիրին Մոսադեղի տան հսկիչ սպաներից մէկին յայտնեց, որ ցանկութիւն ունի հանդիպելու անձամբ Մոսադեղի հետ, բայց շատ չանցած մերժեցին նրա ցանկութիւնը։ Ճարահատեալ, դիմելով վստահելի մի սպայի նա խնդրեց, որ հրամանագիրը յանձնի Մոսադեղին և դրա ստացականը վերադարձի իրեն։ Մէկ և կէս ժամ սպասումից յետոյ, որի պատճառը ինչպէս յայտնուեց հետագային՝ Մոսադեղի հեռախօսային խօսակցութիւնն է եղել իր գործակիցների ու խորհրդականների հետ, վերջապէս գնդապետ Նասիրիին յանձ-

նեցին Մոսադեղի ձեռագիրը կրող ստացականը։ Ծանոթ լինելով Մոսադեղի ձեռագրին և համոզելով, որ դա կեղծված չէ, գնդապետ Նասիրին մեկ ժամ կէս գիշերից անց, պատրաստեց թողնելու Մոսադեղի բնակարանը։

Բայց նախքան շրջափակից հեռանալը, նրան յայտնեցին, որ Մոսադեղի զօրաբանակի գլխաւոր ոյժերի հրամանատար զօրավար Ռիային, կարգադրել է անյապաղ անցնել կենտրոնական շտաբ։ Ենթադրելով, որ հանդիպման ընթացքին պատեհութիւն պիտի ստեղծի զօրավար Ռիահին ևս տեղեակ պահելու իմ հրամանագրի մասին, Նասիրին անմիջապէս մեկնում է պատերազմական նախարարութիւն, ուր նրան առաջնորդում են շտաբի պետի մօտ։ Դուռը բացելուն պէս, Նասիրին նկատում է, որ զօրավար Ռիահին գրրոցից հանելով եօթհարուածանի ատրճանակը, թաղցնում է այն իր գոգում, թերևս նրան մտահոգում էր Նասիրիի կողմից մահափորձի ենթարկելու հաւանականութիւնը։

Շտաբի պետը, Նասիրիին մեղադրում է պետական հարուած նախապատրաստելու և ոչ օրինական վերաբերմունք դրսևորելու մէջ։ Սակայն գնդապետը ի պատասխան նշում է, որ միայն իմ հրամանագիրն է յանձնել Մոսադեղին և պետական հարուածի խօսքն անգամ չկայ, ընդ որում ներկայացնում է Մոսադեղի ձեռքով գրված ստացականը։ Ռիային տարակուսանք է յայտնում այն առումով, թէ որտե՞ղ է տեսնուել, որ հրամանագրերը առաքուեն կէս գիշերին։

Նասիրին ևս իր հերթին հարց է տալիս՝ թէ զինուորական ո՞ր կանոնագրութեան կամ նոյնիսկ քաղաքավարական ո՞ր հիմունքի համաձայն են հրաւիրում գիշերային տարաժամին, ինչ-որ բանակցութիւնների։ Վրդովուած Ռիահին յայտնում է, որ երբեք չպիտի ների Նասիրիին իր անվայել սանձարձակութեան համար և անմիջապէս հանել տալով նրա զինուորական համազգեստը, հրամայում է բանտարկել։

Քիչ անց, Նասիրիի եղբայրը, տեղեկանալով նրա ձերբակալութեան մասին, նրա գիշերանոցն ուայլ իրերից մի քանի կտոր վարպետօրէն փաթաթելով՝ իմ հրամանները լոյս ընծայած օրաթերթի մէջ, հասցնում է գնդապետին։ Յաջորդ օրն, առաւօտեան, զինուորական դատախազը, որ բնականօրէն նշանակուած էր Մոսադեղի կողմից, հարցաքննելով նրան, յաւակնում է պնդել, թէ պաշտօնազրկման հրամանագիրն իմ կողմից չէ և ինքը գնդապետն է կեղծել դա՝ պետական հարուած կազմակերպելու մտադրութեամբ։ Գնդապետը ներկայացնում է եղբօր միջոցով ստացուած օրաթերթը և սրանով աւարտւում է նրա հարցաքննութիւնն ու կրկին առաջնորդուում է բանտախուց։

Յաջորդ օրը, Նասիրին դրսից բերուած մի փոքրիկ ռադիօընդունիչի շնորհիւ տեղեկանում է, որ քաղաքի բնակչութիւնն ապստամբել է Մոսադեղի դէմ։ Ի դէպ, դրսից լսւում է նաև ճիչերի ու բացագանչութեան, թոհ ու բոհի և գնդակոծութեան խուլ ձայներ։ Շատ չանցած ներս է մտնում բանտապետը և

յանձնելով նրա զինուորական հագուստները, կարգադրում է հեռանալ բանտից։ Դրա շարժառիթը կայանում էր նրանում, որ որոշել էին դատարկել բանտը։

Դուրս գալով խցիկից, Նասիրին տեղեկանում է, որ քաղաքի բնակչութիւնը զինուած փայտերով, յարձակուելով բանտի վրայ և անտեսելով բանտի հսկիչ ոյժերի «կանգ-ա՛ռ» ազդարարութիւնը, ենթարկուել են գնդակոծութեան, որի հետեւանքով փոշու ու արեան մէջ դիտապաստ իրենց հոգին են աւանդել մի տարիքաւոր կին, մի քանի երիտասարդներ և վիրաւորուել են շատերը։ Սակայն միւսները շարունակել են աւելի սաստկացած գրոհը և փախուստի մատնելով հսկիչ ոյժերին, վերջապէս գրաւել են բանտը։

Նոյն պահին բանտի բակը վերածւում է ուրախութեան ու ցնծութեան կենտրոնի։ Հարիւրաւոր բանտարկեալներ, որոնք Մոսադեղի կարգադրութեամբ ձերբակալուել ու բանտարկուել էին, ինձ հաւատարիմ մնալու մեղադրանքով, ազատութիւն են ստանում հասարակ բնակչութեան ջանքերով։ Ժողովրդի խանդավառութիւնն հասնում է իր գագաթնակէտին, երբ բանտարկեալների մէջ յայտնւում է շտաբի նախկին պետը, որը նոյնպէս բանտարկուել էր Մոսադեղի կարգադրութեամբ։ Նրան ուսամբարձ տանում են դէպի շտաբի գրասենեակը։

Այսպիսով ժողովուրդը մի անգամ ևս, ոչ միայն իր հաւատարմութիւնն է դրսևորում հանդէպ իմ անձը, այնքան հարազատօրէն ու առինքնող այլ

նաև յայտնում է իր ուրախութիւնը՝ Մոսադեղի ռեժիմի կործանման և թուդէական տեռորիստներից ազատուելու առիթով։ Բիահին դիմում է փախուստի, իսկ գնդապետ Նասիրին, ազատութիւն ստացած այլ սպաների ուղեկցութեամբ, շարժւում են դէպի Թեհրանի արևելեան կայազօրի կենտրոնը, ուր բանտարկուած էին արքայական դրանիկ գնդի անդամներից մի խումբ։ Առանց նախապէս ծրագրուած լինելու, ինչ որ դրա հակառակը իւրայատուկ էր Մոսադեղի գործելակերպին, ճանապարհին ժողովուրդը նրանց դիմաւորում է օվացիայով և խանդավառութեամբ։ Այդ օր, շոգը սաստիկ էր և կանայք կրնկի վրայ բացելով տան դռները, ցուցարարներին հիւրասիրում էին սառն օշարակով և ուտելեղէնով։

Նոյն օրն առաւօտեան սպայական համալսարանում տեղի է ունենում մի այլ արտառոց դէպք։ Այս մասին պատմում է արքայական դրանիկ գնդերի հրամանատար՝ զօրավար Նասիրի թիկնապահ՝ մայոր Խոսրովդատը, որ այդ օրերին վաշտապետի աստիճանով ծառայում էր սպայական համալսարանում, որպէս ուսուցիչ։ Դասարանում ներկայ գտնուելու սովորութեան համաձայն, երբ այդ օրն առաւօտեան, նա մեկնում է համալսարան, տեղեկանում է, որ զօրավար Բիահիի կողմից հրամայուած է համալսարանի բոլոր ուսուցիչներին և ուսանողութեան, ժամը 10-ին ներկայ գտնուելու համալսարանի սրահում, ունկնդրելու նրա ճառը՝ «օրուայ կարևոր իրադարձութիւններն ու արքան» թեմայով։ Այս հրամանը խռովում է թէ ուսուցչութեան և

թէ ուսանողութեան հոգիներն և նրանց մօտ 90 տոկոսը, որոնք հակառակ էին Մոսադեղին, հաստատապէս վըճռում են, որ եթէ շտաբի պետն իր ճառի մէջ փորձէ վարկաբեկել իմ անհատականութիւնը, ապա տեղն ու տեղը ոչնչացնեն նրան։ Նրանք բաժանում են այն ընդհանուր գաղափարը, որ Իրանի զօրաբանակն իմ հովանու ներքոյ և զերծ այս կամ այն ուղղութիւններից, կը կատարէ իր պարտականութիւնները սոսկ այն դէպքում, երբ լիովին մաքրագարդուեն բոլոր տմարդի անձնաւորութիւնները։

Ռիահիի լաւ բախտից, մայրաքաղաքում ծաւալուող իրադարձութիւններն և թերևս ուսանողութեան կայացրած վճռի մասին նրան հասած լուրը, պատճառ են դառնում, որ նա հրաժարւում է համալսարան գնալուց, որի հետևանքով ուսանողութիւնը դուրս է գալիս փողոց և համալսարանը գոցւում է։

Մայոր Խոսրովդատը թողնելով սպայական համալսարանը, ճանապարհւում է տուն։ Հասնելով քաղաքի մեծ հրապարակներից մէկին, նկատում է, որ Մոսադեղի գինուած ոյժերը, աւտոմատային կրակ են բացել դէպի նրանց կողմը յորձանք տուող մարդկային անզէն զանգուածների վրայ, որոնք անտարբեր իրենց ճակատագրին, անընդմէջ մօտենում են Մոսադեղի գինուած ջոկատների դիրքերին, որի հետևանքով զոհւում են շատերը։ Վարձելով մի սակակառք, նա իրեն գցում է տուն և վերցնելով իր զէնքերը, նորից դուրս է գալիս փողոց, ուր նրա ուշադրութիւնն է գրաւում դէպի հրապարակը տանող պողոտաներից մէկի երկարութեամբ կանգնած հրասայլերի երկար շարքը։ Աւելի մօտիկ գնալով նկատում է, որ հրասայլերից իջնելով՝ իրար հետ վէճի են բռնուել վաշտի ընդհանուր՝ և ջոկերից մէկի հրամանատարը։ Ջոկի հրամանատարը ուզելիս է եղել հրասայլերը մօտեցնելով հրապարակին, կրակ բացել Մոսադեղի ոյժերի վրայ, իսկ հրամանատարը պնդել է, որ դրանք յետ պիտի վերադարձուեն իրենց կայանը։ Գնալով վէճը աւելի է սրւում և վաշտապետը սպառնում է սպանել ջոկի հրամանատարին՝ սակայն նոյն մոմենտին անըսպասելիօրէն վրայ է տալիս հասարակ ամբոխը և խլելով վաշտի հրամանատարի զէնքերը՝ նրան մատնում է փախուստի, իսկ ջոկը սկսում է իր յարձակումը Մոսադեղի ոյժերի վրայ։

Աստիճանաբար պայքարը կենտրոնանում է Մոսադեղի տան շուրջը, որն ինչպէս նշեց՝ պաշտպանւած էր հրասայլերով, հակատանկային հրետանիով, բազուկներով զինուած հետևակ ոյժերով։ Դրանք դիրք էին գրաւել ոչ միայն բնակարանի շուրջ բոլորը, այլ նաև մերձակայ տների բաց պատուհաններում և կտուրներում, որոնք գրաւել էին Մոսադեղի ոյժերից կողմից։ Մոսադեղի բնակարանը շրջապատած ստւար ժողովուրդը կազմւած էր տարբեր խաւերից՝ ուսանողներից, արհեստաւորներից, բանուորներից, ոստիկանական և ժանդարմերիայի ոյժերից, սպաներից ու զինուորներից։

Զինուորական համազգեստ կրող անձանց մեծագոյն մասը ապստամբել էր Մոսադեղի կողմից նշանակւած պետերի դէմ, իմանալով հանդերձ, որ բռնը-

ւելու դէպքում, անմիջապէս պիտի ենթարկուեն դատավարութեան ու կախաղանի։ Ժողովրդի այլ խաւերի ներկայացուցիչների նման, նրանք նոյնպէս մեծ մասամբ զինուած էին փայտերով ու քարերով՝ իրենց խիտ շարքերի մէջ ունենալով մինչեւիսկ կանայք և երեխաներ։ Մոսադեղի ոյժերը ենթադրելով, որ արքայական դրանիկ գնդի բոլոր զինուորները բռնուած են ու բանտարկուած, մոռացութեան էին մատնել դրանիկ գնդի մի այլ խմբին, որոնք Մոսադեղի պաշտօնանկ արուելու լուրը լսելուն պէս, միացել էին ընդհանուր ապստամբութեան և հակառակ այն պարագայի, որ զինուած էին լոկ թեթեւ զէնքերով, գրոհեցին Մոսադեղի տան շուրջը կենտրոնացած հրասայլերի վրայ։ Դրանիկ գնդի զինուորներից մի այլ խումբ ևս, որոնք ազատութիւն էին ստացել գնդապետ Նասիրիի միջամտութեան շնորհիւ, գրոհեցին Մոսադեղի տան վրայ, ընդ որում նռնակներ նետելով, ստիպեցին հրասայլերին, փակելու տանկային դրոնակները։ Արքայական գնդերի համարձակ և անվեհեր գրոհը Մոսադեղի հրասայլերի վրայ կատարուեց հերոսաբար և ճիշտ ժամանակին, որովհետև դրանք այլևս պատեհութիւն չունեցան մասնակցելու Մոսադեղի բնակարանի յետևում ծաւալուող գործողութիւններին։ Բնակարանի պահակախմբի հրամանատարը ժողովրդի յարձակումը կասեցնելու նպատակով, ծանր հրասայլերն ու հակատանկային հրետանին և հրանօթները տեղադրել էր տան առջևից ձգուող պողոտայի երկարութեամբ, իսկ բնակարանի յետնամասի պողոտան և Մուսադեղի ապարանքը յարակից շէնքերից բաժանող նեղ փողոցը պաշտպանուում էր հետևակ զինուորներով։ Ժողովրդի գրոհը արևելեան այս պողոտայում պայթեց յանկարծակիօրէն։ Դա ղեկավարում ու ոգևորում էր մի քաջ կին։ Հակառակ տւած մեծ թւով զոհերի ու վիրաւորների, ամբոխը յամառօրէն շարունակում էր մասսայական յառաջխաղացումը, որի հետևանքով բնակարանը պաշտպանող զինուորութեան շարքերում առաջ եկաւ խառնաշփոթութիւն։ Ճիշտ նոյն պահին հրասայլերից մէկը մտնելով նեղ փողոցը և հասնելով վերջին, ծանր հարուած հասցրեց Մոսադեղի ոյժերին։ Հրասայլի հրամանատարը անցեալում եղել էր Մոսադեղի կողմնակիցներից, բայց հետագային ժողովրդի ուրիշ տասնեակ հազարաւոր անհատների նման՝ զգալով, որ Մոսադեղը անձնատուր է եղել կոմունիստներին և մտադրել է խորտակելու թագաւորութիւնը, փոխել էր իր կարծիքը և հրասայլով մտել էր մարտի ամենաթէժ գոտին։ Չհանդիպելով լուրջ դիմադրութեան, նա ուղղութիւն բռնեց դէպի Մոսադեղի բնակարանը և առաջին իսկ ոմբաձգութեամբ որոշեց մարտի ելքը, որովհետև ռումբը աւերեց Մոսադեղի բնակարանի մի մասը, իսկ ինքը Մոսադեղը այդու դռնով փախաւ դուրս և քառասունևութ ժամ յետոյ ձերբակալուեց։

Զահեդին նախօրօք ծրագրել էր, որ գնալով Իսֆահան և պատրաստելով այդ շրջանի զօրաբանակը, շարժւի դէպի Թեհրան։ Կարգադրուած էր նաև Քերմանշահի հաւատարիմ զօրաբանակին, լինելու կազմ

ու պատրաստ՝ անհրաժեշտ պարագային շարժելու դէպի Թեհրան։ Սակայն հասարակ ժողովուրդը նախ Ռեշտում և յետոյ այլ քաղաքներում, սրտաբխօրէն և միակամ բարձրացրին ապստամբութեան դրօշ, որի հետևանքով Զահեդին փոխելով մտադրութիւնը, իր գործողութիւնները ծաւալեց Թեհրանում։ Նստելով յեղափոխականների կողմից նրա տունը ուղարկուած տանկի մէջ, նա ուղղուեց դէպի Թեհրանի ռադիոկայանը, որն արդէն գրաւուել էր ժողովրդի կողմից։ Թէև Մոսադեղի զինուորները, նախ քան փախուստը փչացրել էին ռադիոյի սարքաւորումները, այդուամենայնիւ դրանք նորոգուեցին ամենակարճ ժամանակում և նոր վարչապետը մի կուռ պատգամով աւետեց՝ Իրանի ժողովրդի պատմական յաղթանակը։

Սակայն ես և Թագուհին այս յաջողութեան մասին տեղեկանալուց առաջ, արդէն հեռացել էինք Թեհրանից, որովհետև որոշուած էր, որ եթէ Մոսադեղը չենթարկուի պաշտօնանկ լինելու հրամանին և դիմի ոյժի, ես և Թագուհին ժամանակաւորապէս հեռանանք Իրանից։

Տեսալ ծրագիրը կազմելիս՝ հիմք էին ծառայել երկու էական պատճառներ. նախ, որ իմ մեկնումով պէտք է բացայայտուէր Մոսադեղի և իր գործակիցների բուն մտադրութիւնը և հասարակական կարծիքը պիտի ծառանար նրանց դէմ։ Դա իրականում նման էր մի ռեֆրանդումի, որի մէջ հակառակ Մոսադեղի կողմից առաջարկուած հանրաքւէների՝ մեռելները մասնակցութիւն չպիտի ունենային։ Երկրորդ՝

պիտի նուազէր ներքին պատերազմի և անպաշտպան ժողովրդի անխուսափելի կոտորածի վտանգը, որի չէզոքացումն իմ սրտագին ցանկութիւնն էր։ Այս ծրագիրն ի կատար ածելու համար ռադիոկապ էր հաստատուել Սաադաբադի և Ռամսարի արքայական ապարանքի միջև։ Նասիրիի ձերբակալման և բանտարկութեան լուրը նրա վարորդի միջոցով հասել էր Սաադաբադ և այնտեղից փոխանցուել էր Քլարդաշտի կենտրոնին, բայց անյայտ պատճառներով դա ինձ յայտնեցին շատ ուշ։ Յիշում եմ, որ երկու դիշեր չկարողացայ քնել. երրորդ օրն առաւօտեան Մոսադեղի կողմնակից ռադիոյից լսեցինք, որ խորտակուել է նրան պաշտօնանկ անելու իմ ծրագիրը և դրանից շատ չանցած ռադիոկապի վրայով ստացուեց նաև Նասիրիի ուղարկած լուրը, իր բանտարկութեան մասին։

Քլարդաշտի օդանաւակայանը լինելով փոքր՝ նախ մէկ մոտորանի մի ինքնաթիռով, քսան րոպէ տևողութեամբ թռիչքից յետոյ, բարեյաջող հասանք Ռամսար և այնտեղից երկու մոտորով օժտուած յատուկ ինքնաթիռով, որը վարում էի անձամբ, ուղղութիւն վերցրինք դէպի Բաղդադ։ Իրաքի պաշտօնեաները սկզբում թէև շշմեցին մեր անսպասելի ժամանումից, այնուամենայնիւ ցուցաբերեցին ջերմ և բարեկամական ընդունելութիւն։ Սակայն Իրանի լիազօր դեսպանը Բաղդադում, մինչև անգամ փորձեց ձերբակալել ինձ։ Նոյն անձնաւորութիւնը մի քանի օր յետոյ, երբ վերադառնում էի Թեհրան՝ առաջին մարդն էր Բաղդադի օդանաւակայանում, որ մօտեցաւ

ու սեղմեց իմ ձեռքը...

Երկու օր Բաղդադում մնալուց յետոյ, ճանապարհուեցինք Հռոմ։ Այստեղ երբ ցանկութիւն յայտնեցի օգտուելու իմ անձնական ինքնաշարժից, Իրանի դեսպանատան գործավարը, մերժեց յանձնելու ինքնաշարժի բալանիները։ Ի վերջոյ դեսպանատան հին և վստահելի պաշտօնեաներից մէկը, դրանք գաղտնաբար տուեց ինձ։

Հռոմում ևս երկար չմնացինք։ Մարդադ 30-ին, Զահեդիի վարչապետութեան երրորդ օրը, վերադարձայ Իրան, ուր արժանացայ ժողովրդի զանազան խաւերի միահամուռ և ջերմ ընդունելութեանը։ Դժուար է նկարագրել այն բնական խանդավառութիւնն ու համընդհանուր ոգևորութիւնը, որով յագեցած էր մթնոլորտն այդ օրը։ Ներքուստ դա համեմատելով Մոսադեղի և Թուդէականների շինծու և կարգադրողական ովացիաներին, սիրտս լցուում էր բերկրութեամբ ու յուզումով։

Մոսադեղի և իր գործակիցների դատավարութեամբ, մերկացուեցին նրանց երբեմնի կասկածելի գործողութիւնները։

Երբ Մոսադեղը ռազմական նախարար էր, Թուդէական սպաների թիւը զօրաբանակում չէր անցնում հարիւր հոգուց. բայց հազիւ մէկ տարի անց, նախ քան նրա վերջնական անկումը, դրանց թիւը անցաւ վեց հարիւր հոգուց։ Նոյնիս Արքայական Դրանիկ գնդի հրամանատարներից մէկը, որին ի դէպ վստահում էի անչափ, դուրս եկաւ շարքային կոմունիստ...

Դատավարութեան ընթացքին նրանք խոստովանեցին, որ մտադիր են եղել Մոսադեղի ձեռքով փեհլևի Դինաստիան ոչնչացուելուց յետոյ, պետական հաւածով վերջ տալ նրա կեանքին և ինչպէս ընդունուած է այլ երկրներում, Իրանում նմանապէս հաստատել կոմունիստական իշխանութիւն։

Սակայն Իրանի ժողովրդի բուռն հաւատարմութիւնը հանդէպ իմ անձը, խորտակել էր Թուդէականների հոգու արիութիւնը և ջլատել էր նրանց դիմադրականութեան ոգին, մասսայական ապստամբութիւնը չէզոքացնելու ուղղութեամբ։ Այսպիսով Մոսադեղի համախոհների վերջին ռասան ևս, (որոնց նա շատ պարզ պատճառներով մերժում էր ճանաչել պաշտօնապէս) վերջնականապէս լքում էր նրան։

Թերևս տարօրինակ ընկալի այն ճշմարտութիւնը, որ ժողովրդի ուժեղ և շեշտուած, հէնց նոյն հակասութիւնը, Մոսադեղի հանդէպ՝ փրկեց նրա կեանքը ստոյգ մահից։

Դատարանին ներկայացուած՝ Մոսադեղի և իր համախոհները չարագործութիւնները վկայող բազմաթիւ փաստաթղթերից բացի, անցկացուեցին նաև մանրամասն ու բծախնդիր ստուգութիւններ և հետաքննութիւններ, որոնց ընթացքին երևան եկան կուսակցակցականների կողմից գաղտնաբար կուտակուած զէնքերի ու զինամթերքի մի քանի պահեստներ, որոնք պիտի շահագործուէին նրանց վերջնական դիտաւորութիւնների կիրարկմանը։

Ներքին և արտաքին թղթակցութիւնները

հրատարակեցին զէնքերից վերցուած նկարները և լրագրութիւնները, որոց շնորհիւ աշխարհի և Իրանի ժողովուրդները, տեղեակ դարձան դաւադիրների գործողութիւնների մանրամասն կէտերին։ Ձեռք բերուեցին նաև լայն տեղեկութիւններ թուդէականների գործունէութեան մեթոդների՝ Իրանի ազգային նացիոնալիզմի բնական երթը կասեցնելու և այն դէպի իրենց գաղափարները և դէպի օտար տէրերը շեղելու մասին։

Ձերբակալուեց Մոսադեղի արտաքին գործոց նախարար Հոսէյն Ֆաթեմին, որը դիմել էր փախուստի և թուդէականների օգնութեամբ թաղնուած էր մնացել այստեղ ու այնտեղ՝ մօտ եօթը ամիս։ Եթէ չլինէր իմ խիստ կարգադրութիւնը, ժողովուրդը նրան սպանելու էր հէնց ձերբակալութեան պահին։ Հետագային դատուելով՝ համաձայն դատարանի վճռին, նա դատապարտուեց մահուան։

Դատավարութեան ենթարկուեցին նաև Մոսադեղն ու իր համախոհները, որոնցից շատերը դատապարտուեցին բանտարկութեան, սակայն ներկայումս բոլորն անխտիր ազատ են։

Թուդէ կուսակցութեան պատկանող մի խումբ սպաներ ու հասարակ շարքայիններ, որոնք մասնակցութիւն էին ունեցել՝ դէմ տարրերի տանջանքի ու սպանութեան մէջ, արժանացան մահապատժի կամ բանտարկուեցին։ Իսկ շատերը, որ զղջացել էին և ի սրտէ, հաւատարմութիւն էին խոստացել հայրենիքին ու թագաւորութեան, իմ կողմից արժանացան ներումի։ Ճիշտ է, այս անձինք իրաւունք չունեն գրաւելու պետական պաշտօններ, սակայն կառավարութիւնը, անուղղակիօրէն օժանդակում է նրանց՝ գործի անցնելու ազատ զբաղումների մէջ։ Օրինակ, նրանցից ոմանք ծառայում են Սազմանէ Բարնամէում (ծրագրա-մեթոդային կազմակերպութիւն), որն այնուամենայնիւ կցուած է պետական ապարատին։

Մոսադեղի և թուդէ կուսակցութեան անկումից առաջ, ազատ աշխարհը մտահոգուած էր իմ երկրի տագնապալի կացութեամբ։ Այդ պատճառով երբեմն առաջ է գալիս այն հարցը, թէ արդեօ՞ք ամերիկեան և անգլիական կառավարութիւնները նիւթապէս օժանդակել են Մորդադ 28-ի ազգային և պատմական ընդվզման, թէ ոչ։ Հարկաւ բոլորն իրազեկ են, որ թուդէ կուսակցութիւնը Իրանում հիմնուել էր արտասահմանեան մի տէրութեան օգնութեամբ և հրահրումով։ Թերևս դա ստեղծում է այն տպաւորութիւնը, որ Մոսադեղի և թուդէականների դէմ գործող տարրերը նմանապէս համախմբուել են օտարների նիւթական օգնութիւնների շնորհիւ։ Իմ երկրում շշուկները տարածուում են արագութեամբ։ Օրինակ՝ ասուում էր այն մասին, որ Մորդադ 28-ի պատմական ընդվզումը կերտող հասարակ ժողովրդին տրուած է եղել մեծ գումարներով ամերիկեան դոլար (և անգլիական փաունդ ստերլինգ)։

Թէև ընդվզման օրերին ես գտնուում էի երկրից դուրս, այդուամենայնիւ, տեղեակ էի ծաւալուող իրադարձութիւնների ամենաչնչին մանրամասներին, իսկ Իրան վերադառնալուց յետոյ հանգամանօրէն հե-

տևում էի անց ու դարձերին։ Չեմ հերքում, թերևս յեղափոխութեան մարմնաւորումը արագացնելու նպատակով, որոշ գումարներ է ծախսել իմ հայրենակիցների միջոցով, սակայն այդ ուղղութեամբ առկայ չէ որոշակի ու ճշգրիտ որևէ փաստարկ։

Այն ինչ դրսևորեցին իմ հաւատարիմ հայրենակիցները յեղափոխութեան օրերին, հնարաւոր չէ պահանջել դրամով։ Մոսադեղին և թուդէականներին չէզոքացնելու համար մղւող մասսայական պայքարին խթան հանդիսացան իրանցիների միասնականութեան ոգին, հայրենասիրութիւնն ու այս երկրամասին իւրայատուկ նացիոնալիզմը։ Ինչպէս ասւեց հասարակ և անզէն ժողովուրդը գրոհում էր Մոսադեղի հրասայլերի ու հրանօթների վրայ, ընդ որում զոհւում էին նաև անմեղ կանայք ու երեխաներ։ Չեմ կարող երբեւիցէ նոյնիսկ մտածել այն մասին, որ այս մարդիկ նիւթական ակնկալութիւններից դրդւած էին դրսևորում այդպիսի հոյակապ հայրենասիրութիւն։ Նրանց խթանող ազդակները շատ աւելի զօրեղ էին, բարձր ու մարդկային։

Դրանից բացի բոլոր նրանք, ովքեր շիկանում են օտար օգնութիւնների փայլից՝ լռում են, երբ այդ օգնութիւնները հոսում են կոմունիստական աղբիւրներից և յայտնի չէ ի՞նչն է այդ կեղծիքի շարժառիթը, ո՞ւմ են ուզում այդ ձևով խաբել ու մանևրել...

Անցնելով գործի՝ Զահեդին անմիջապէս ձեռնարկեց երկրի անկարգ վիճակի բարելաւան աշխատանքներին։ Այդ օրերին կառավարութիւնը իրօք սնանկացել էր, սակայն ամերիկեան օգնութիւնների նկատմամբ ունեցած մեր յոռետեսութիւնը Մոսադեղի անկումով, տեղի էր տւել լաւատեսութեան. համոզւած էինք, որ տւեալ դրութեամբ նրանք մենակ չպիտի թողնեն մեզ։

1332 թւի Շահրիվար ամսին, Ամերիկայի Միացեալ Նահանգների հանրապետութեան նախագահ՝ Էյզենհաուէր, 45 միլիոն դոլարի (ի հարկէ «Զորրորդ Կէտ»-ի գծով տրւող օգնութիւններից բացի) անմիջական օգնութիւն տրամադրեց երկրի բիւդջէի բացը լրացնելու նպատակով։ Մոսադեղի անկումից յետոյ մինչև երեք տարի, այս դրամական օգնութիւնը շրջունակւեց ամսական հինգ միլիոն դոլարով։ Երկու տարով շարունակւեց նաև «Զորրորդ Կէտ»-ի գծով տրւող օգնութիւնները՝ Մոսադեղի ժամանակաշրջանի մասշտաբով։ Սակայն 1335 թւից յետոյ, նաւթից գոյացած եկամուտների շնորհիւ, օգնութիւնների գումարը նւազեց մեծ չափանիշերով։ Յաջորդ գլխում մանրամասնօրէն խօսելու եմ ամերիկեան օգնութիւնների և դրանց ունեցած ազդեցութիւնների մասին՝ Իրանում։

Իրանի բիւդջէի անմխիթար վիճակը անշուշտ պիտի վերագրել Մոսադեղի իշխանութեան ժամանակաշրջանում նաւթի արդիւնաբերութեան ամուլ դրութեանը։ Զահեդին նաւթի արդիւնաբերութեանը զարկ տալու նպատակով, հակառակ ծայրահեղ որոշ տարրերի ներհակութեան, նախ քաղաքական փոխյա-

բաբերութիւնները սկսեց Անգլիոյ կառավարութեան հետ և ապա Իրանօ-անգլիական նաւթային նախկին ընկերութեան փոխարէն, միջազգային մի կոնսերցիում ստեղծելու գծով, կառավարութիւնը մտաւ բանակցութիւնների մէջ։ Կեանքի կոչուեց ամերիկեան, անգլիական, ֆրանսիական և հոլանդական ընկերութիւններից կազմուած կոնսերցիում, 1332 թ. Շահրիվար ամսին, ստորագրուեց վաւերական վերջնագիր, ըստ որի նաւթի երկրախուզական և պեղման աշխատանքները, ինչպէս նաև դրա վաճառքը ստանձնում էր կոնսերցիումը։ Յաջորդ ամսին Ազգային Խորհրդարանը վաւերացրեց համաձայնագիրը և իմ կողմից օրինապէս ստորագրուելուց յետոյ, յանձնուեց գործադրութեան, որով անմիջապէս սկսուեց նաւթի արտահանումը. Աբադանի վիթխարի նաւթազտարանից թողարկուող նաւթը սկսեց բեռնաւորուել հարաւային նաւահանգիստներում խարիսխ ձգած հսկայ նաւթատար նաւերի վրայ։

Նաւթի վաճառքից գոյացած եկամուտների և ամերիկեան տեխնիկական ու տնտեսական օգնութիւնների շնորհիւ, որոնց մասին նշեցի վերը, նորից գործադրման փուլի մէջ մտան երկրի շինարարական ծրագիրները։ Սակայն դրանցից աւելի կարևորը քաղաքական ու մտային կեանքի վերածնունդն էր։ Ոչնչացուեց մոնոպոլիստականութիւնը և Իրանը ամենայն անկեղծութեամբ իր համակրանքի ու անվիճելի վստահութեան մասին, յայտարարեց ազատ աշխարհի բոլոր երկրներին։

Հետագային, իմ մտքում առաջացել է այն հարցը, թէ Մոսադեղն իր վարչապետութեան շրջանում, իրօք դրական և օգտակար ի՞նչ քայլ է վերցրել յանուն իր հայրենակիցների շահերի։ Այս հարցին պատասխան գտնելու համար, իսկապէս ճգնել եմ աւելին և միակ դրական գործը, որ անցել է մտքովս դա հողատէրերի մասնաբաժնի մասին հրատարակած նրա օրէնքն էր, որի շուրջ, ի դէպ նա վարում էր մեծ քարոզչականութիւն։ Նա սահմանել էր, որ երկրագործական արդիւնաբերութեան եկամուտներից երկրագործներին հասանելիք մասնաբաժնից բացի, հողատէրերն ևս իրենց տերունական շահերի հարիւրին առ քսան տոկոսը, բաշխեն երկրագործներին։ Տուեալ քսան տոկոսից, տաս տոկոսը տրուում էր երկրագործներին և միւս տաս տոկոսը յատկացուում էր գիւղական վարչութիւններին, որոնք պարտաւոր էին հոգ տանել գիւղերի և երկրագործական բնակավայրերի շինարարական ու բարգաւաճման աշխատանքներին։ Անհրաժեշտ է նշել, որ վերոյիշեալ օրէնքը քաղել ու պատրաստել էր 1325 թ.-ին Ղաւամի վարչապետութեան շրջանում գոյութիւն ունեցող նման մի օրէնքի հիման վրայ։ Նկատի ունենալով հողատէրերի և երկրագործների փոխյարաբերութիւնների տարատեսակները Իրանում և այն, որ կնքուած պայմանները յաճախ բանաւոր էին, ակնյայտ էր, որ Մոսադեղի օրէնքի գործադրումը հեռու էր հեշտ լինելուց, այնպէս որ գործնականում երբեմն դրա կիրարկումը ստանում էր եպերելի ընթացք։

Դեռ աւելին. այս ձեռնարկումից առաջ, 1329 թւի Մեհր ամսին, ժամանակի վարչապետ՝ հանգուցեալ Ռազմարան «Զորրորդ կէտ»-ի համագործակցութեամբ, կազմել էր գիւղական բարենորոգչական ծրագիր, որն ուղղակիօրէն ազդեցութիւն պիտի ունենար գիւղացիութեան կենցաղի վրայ։ Պատրաստուել և գործադրութեան էր յանձուել նաև գիւղական առողջապահութեան և արդի գիւղատնտեսութեան առնչութեամբ նախագծեր։ Իրականում, մինչև այժմ «Զորրորդ կէտ»-ի կողմից վերցուած քայլերի մեծագոյն մասը հիմնուած է նախկին ծրագրերի վրայ։

Մոսադեղի իշխանութեան սկզբից մինչև նրա անկումից որոշ ժամանակ անց՝ Իրանում «Զորրորդ կէտ»-ի նախագահ՝ Վիլիամ Վարնը, պատմել է մի իրողութիւն, որը լաւագոյն կերպով բնորոշում է Մոսադեղի բնութագծերը։ Նրա ասութեամբ, Մոսադեղը վարչապետութեան հասնելու հէնց առաջին օրուանից, չէր համաձայնում գիւղերի բարենորոգչութեան գծով՝ նախկին կառավարութեան և «Զորրորդ կէտ»-ի միջև կնքուած համաձայնագրի գոյութեան հետ։ Ըստ երևոյթին նա չէր փափագում այդ օգտակար ձեռնարկը վերագրուած տեսնել իր նախորդի անուան։ Հետևաբար «Զորրորդ կէտ»-ը հարկադրաբար կազմում է մի նոր ծրագիր, նախորդի բովանդակութեամբ, որը Մոսադեղի կողմից ստորագրելուց յետոյ, շարունակւում է գործադրել մինչև Զահեդիի վարչապետութիւնը։ Զօր. Զահեդին վերանայեց և պաշտօնապէս ճանաչեց բոլոր նախկին համաձայնագրերը, որոնց թւում՝ Ռազմարայի համաձայնագիրը»։

Թերևս մտքերը խաղաղել են այնքան, որ Աշխարհի ժողովուրդները կարողանան արդարամտօրէն դատել Մոսադեղի գործունէութեան մասին։

Մոսադեղն ընկել էր մի այնպիսի դրութեան մէջ, որի ծաւալն ու մեծութիւնը հեռու էր մինչևիսկ նրա երևակայութեան սահմաններից։ Եթէ նա հմուտ դերասան էր և իր խաղը իւրացրած լինելով՝ կատարում էր հուժկու ձայնով ու ազդեցիկ միմիկայով, ապա չէր հասկանում իր իսկ ասածների իմաստը, այր և նման կամազուրկ մեքենայի, որ շարժւում է մղիչ ոյժի շնորհիւ, արտաբերում է որոշ ձայներ, սակայն անտեղեակ է մղիչ ոյժի ինչպիսին լինելուց։

Այս բոլորով հանդերձ, ասենք թէ Մոսադեղը մեր երկրում վերացրեց մի ժամանակաւոր պահանջ։ Համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ, երբ օտար բռնագրաւիչները ներխուժեցին Իրան և օր աւուր սրուեց տիրող անարխիան, ժամանակն ու դրութիւնը պահանջում էին, որ հանդէս գայ ոչ տրամաբանական և զգացմունքային մի իշխանաւոր։ Զգում էի, որ երկրորդ աշխարհամարտի և Իրանի բռնագրաւման հետևանքով երկրում երևան եկած խուճապային կացութիւնը հարկադրում է Իրանի ժողովրդի ջլատուած ոգու մէջ առաջացնել նացիոնալիստական խանդավառութիւն։ Քանզի այդ օրերին Իրանը գտնուում էր նացիոնալիզմի այն փուլի մէջ, երբ մտայնութիւնն ու սառը դատողութիւնը դեռ անհրա-

ժեշտ չեն այնքան, որքան զգացմունքները։ Իրականության մէջ մեր երկիրը գտնուում էր հէնց այն փուլում, ինչ որ այսօր թևակոխում են որոշ երկրներ։ Հետևաբար, այդ երկրներում նացիոնալիստական ներկայ վերածնունդի ինչպիսին լինելը բնորոշելու համար, բաւական է ուսումնասիրել Մոսադեղի օրօք Իրանում տիրող կացութիւնն ու իրադրութիւնները։

Թէև Մոսադեղը անվերապահօրէն ընդունեց ժամանակի բերումով իրեն վիճակուած դերը, այդուամենայնիւ հասնելով վարչապետութեան աստիճանին, չխուսափեց արտայայտչական բոլոր միջոցներից, նոյնիսկ լացից ու ուշաթափութիւնից։ Երբեմն նա յայտնուում էր հանրային վայրերում ննջարանային հագուստով և յաճախ ամենաչնչին առիթով, պատրաստակամ բերելով տկարութիւնը, ապաւինում էր անկողնուն։ Յիշում եմ մէկ օր Խորհրդարանում ճառ ասելիս, նա ուշաթափուեց. երբ բժիշկը հանում էր նրա հագուստները, Մոսադեղն ակամայից ձեռքը տարաւ դէպի իր դրամապանակը, որով պարզուեց նրա ուշաթափութեան ինչպիսի լինելը և այն, որ դա ևս լոկ մի խաղ է նրա կողմից, ընդհանուրի համակրանքը շահելու իզուր մտադրութեամբ։

Շատերի ներկայութեամբ տեղի ունցած այս դէպքը վկայում էր նրա երկերեսանութեան և անկեղծութեան պակասի մասին։ Անհրաժեշտ է նշել, որ Մոսադեղը այնպէս էլ չկարողացաւ շահել, նրա մասին շիտակ ու անկեղծ տպաւորութիւն ունեցող անհատների վստահութիւնը, քանզի անկեղծութեան պակասը անհատին դրսևորում է որպէս անտարբեր ու անվստահելի տարր։ Բոլոր նրանք, ովքեր ինձ պէս մօտիկից են ճանչում նրան, ցաւով պիտի յիշեն մի անհատի մասին, որը ոչ միայն զուրկ էր առնականութիւնից, մտային ու բարոյական հաստատակամութիւնից և անհատականութիւնից, այլև նրա բնութագծերի բնորոշ կողմերն էին կազմում՝ յոռետեսութիւնը, խորամանկութիւնն ու եսապաշտութիւնը։

Ճիշտ է նա իր կեանքի վաղ ժամանակներում մոռանալով անձնական շահը, որոշ ծառայութիւններ էր մատուցել և ապա իր բացասական կողմնորոշմամբ հրահրել էր ժողովրդի զգացմունքները ընդդէմ օտարների, որով օգտակար էր եղել իր հայրենիքին, սակայն զարմանալին այն է, որ վարչապետ դառնալու օրուանից իսպառ վերացաւ նրա «օգտակարութիւնը»։

Իւրաքանչիւր երկրում, եթէ կառավարութեան պարագլուխը փափագում է իր ազդեցութիւնը տարածուած տեսնել ժողովրդի վրայ, ստիպուած է որդեգրելու դրական ընթացք։ Բայց Մոսադեղը գուցէ և անկախ իրենից, դաւաճանեց իր ժողովրդին. քանզի լուսաւառ ապագայի խոստումներով երկար ժամանակ զբաղեցրեց ժողովրդին և երբէք չկատարեց իր խոստումները։ Ժողովուրդը զգաց, որ սոսկ խոստումներով հնարաւոր չէ լցնել իր և իր զաւակի ստամոքսը։ Դեռ աւելին. պարզ դարձաւ այն դառն իրականութիւնը, որ սխալ քաղաքականութիւնների հետևանքով, աչքի ա-

ռաջ ձեռքից դնում է սիրելի հայրենիքը։ Դա էր, որ նոյն հասարակ ժողովուրդը ընդվզելով նրա դէմ՝ վերջ տուեց նրա իշխանութեանը։

Երբ Մոսադեղը վարչապետ էր, այլ երկրների պարագլուխները՝ իմա նրա կոլեգաները, լաւագոյն կերպով շահագործում էին նաւթից գոյացած եկամուտները ի խնդիր երկրի բարեկարգութեան ու բարօրութեանը։ Սակայն Մոսադեղը շնորհիւ իր բնածին յամառութեան, չկատարեց և ոչ մէկ նպաստաւոր աշխատանք։ Դրանից առաջ, էլ բոլորը զգացել էին, որ նրա փառասիրական ձգտումները պիտի վերջանան ի վնաս երկրի և ազնիւ աշխատաւորների։

Մոսադեղից յետոյ, նաւթի խնդրում կայացած համաձայնութիւնը, լիովին համընկնում էր նաւթի ազգայնացման պրոցեսին։

Թէև Մոսադեղի կողմնակիցներից ոմանք հերքում էին այս իրողութիւնը, սակայն անժխտելի է, որ մեր համաձայնագիրը կոնսերցիումի հետ, հիմնուած էր դեռ Մոսադեղի իշխանութիւնից առաջ զոյդ խորհրդարանների վաւերացումից և իմ ստորագրութիւնից անցած, հէնց նոյն նաւթի ազգայնացման օրէնքի վրայ։

Դրանից յետոյ կնքուեցին նոր պայմանագրեր, որոնք նոր դարագլուխներ բացեցին նաւթարդիւնաբերող և սպառող երկրների յարաբերութիւնների մէջ։ Ինչպէս ասուեց, յաջորդ գլխում մանրամասնօրէն խօսելու է դրանց մասին։

Ոյժն ու կարողութիւնը մարդուս դնում են

փորձութեան անօթի մէջ։ Ոմանք հասնելով ոյժի և ընկալելով նոր իրադրութեան բարոյական ողջ պատասխանատուութիւնը, աւելի ևս մեծանում են ու վսեմանում։ Ոմանք ընդհակառակը, ոյժի հետևանքով աւելի նուաստանում են ու փոքրանում։ Արդ, երբ խօսում ենք Մոսադեղին վիճակուած ոյժի և հնարաւորութիւնների արդիւնքների մասին, գալիս ենք այն եզրակացութեան, որ նա փոքրացած ու նուաստացած դուրս եկաւ փորձանօթի միջից։

Սխալներ լինում են ամեն մի երկրի պատմութեան մէջ, հետևաբար եթէ խորհելու լինենք այն մասին, որ Մոսադեղի իշխանութեան դառն փորձը մեզ ցոյց է տուել երկիրը կառավարելու ճշմարիտ ուղին, ապա հարկ է շեշտել, որ տեսալ փորձը ապարդիւն չի անցել։

Իմ երկրի ժողովուրդը ամեն տարի, Մարդադ 28-ին, տօնում է Մոսադեղի անկման, բռնագրաւիչ ոյժերի պարտութեան և այն պանծալի օրը, երբ մօտ էր մարելու մեր դարաւոր ազատութեան ու անկախութեան կերոնը։ Ի սրտէ ցանկանում եմ, որ երբէք չմոռանանք այդ նշանակալից օրւայ դէպքերի բերումով պատմութեան աւանդած մեծագոյն դասը։

Զ. ՄԱՍ

ԻՄ ԴՐԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ

Մոսադեղի անկումից և մասնաւորաբար 1335 թւից յետոյ, երբ այցելեցի Մոսկուա, Ռուսաստանի կիրարկած քաղաքականութիւնը իմ երկրի հանդէպ, ժամանակաւորապէս զոհացուցիչ էր։ Բայց 1337 թւից ի վեր, երևանեկան մի շարք շարունակական տարաձայնութիւններ, և այսու երբ գրում է այս գիրքը, յուսով եմ, որ Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան կանոնադրութեան ոգու և համաշխարհային կարծիքի ազդեցութեան շնորհիւ, հարթեն բոլոր տարաձայնութիւնները։

Երկրորդ մեծ պետութիւն՝ Բրիտանիայի քաղաքականութիւնը, որ անցեալում յատկորոշւում էր մեր ներքին խնդիրներում ունեցած միջամտութիւններով, 1333 թւից այս կողմ, եղել է ճիշտ և տանելի։

Մեր ներկայ պատմութեան վերջին յիսունկամ

վաթսուն տարիների ընթացքին, վերոյիշեալ երկու մեծ պետութիւնների իմպերիալիստական գործունէութիւնը բազմաթիւ դժբարութիւններ ու արգելքներ է յարուցել իրանցիներիս համար։ Սակայն իրական և ոչ իրական նացիոնալիզմի իմաստը ըմբռնելու ուղղութեամբ, մեզ տուել է միաժամանակ անգնահատելի դաս։ Մեր ժողովրդի լուսամիտ զանգուածները հիմա դիւրին են զատորոշում իսկական և անբասիր հայրենասէրներին՝ նրանցից, ովքեր առերեսաբար իրենց դրսևորում են որպէս հայրենասէրներ։ Ըստ իս, արդէն իսկ բացայայտուել է իմպերիալիստական դիւանագիտութեան ինչպիսին լինելը, դրա դէմ պայքարելու և ընդդիմանալու ուղին։

Անցնող դլուխների մէջ յապաւումներով խօսուել է Անգլիոյ և Ռուսիոյ առևտրական ու քաղաքաներթափանցումների հետևանքների և այն մասին, թէ ինչպէս հայրս կտրուկ և ազդեցիկ միջոցառումներով զսպեց օտարների ագրեսիւ գործողութիւնները մեր ներքին խնդիրներից ներս։

Իրականում, հայրս գործնականապէս փաստեց, որ օտար ներթափանցումների և օր աւուր աճող միջամտութիւնների գլխաւոր և էական շարժառիթը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ թերացումը իրանցիների, որոնք ընկնելով օտարների կողմից նիւթուած դաւերի ու ազդեցութեան տակ, ակամայից օժանդակում էին օտար իշխանութիւնների աստիճանական հզօրացմանը Իրանում։ Նա լաւագոյնս ապացուցեց, որ եթէ ամուր ու հաստատուն լինի Իրանի ժողովրդի կամքը, ապա

և ոչ մէկ գործօն ի վիճակի չպիտի լինի հարկադրելու նրան, կատարել իր ցանկութիւններին ու շահերին հակառակ որևէ գործ։

Անգլիայի քաղաքական, զինուորական և տնտեսական իմպերիալիզմի առաջին փուլը, գործնականապէս չեղոքացուեց 1297 թ-ի պայմանագրի լուծարքով։ Այնուհետև ինչպէս Անգլիայի, այնպէս էլ այլ երկրների պետութիւնները, կարճ ժամանակով կառչեցին կապիտուլասիոնից և շահագործեցին նախապէս ապահովուած առևտրական բոլոր մենաշնորհները։ Սակայն ի վերջոյ, հայրս լուծարքի ենթարկեց կապիտուլասիոնը, չեղեալ յայտարարեց բոլոր մենաշնորհները և կամ դրանք թոյլատրեց՝ լոկ Իրանի կառավարութեան խիստ հսկողութեամբ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին, անգլիացիները նորից միջամտեցին մեր ներքին խնդիրներին, սակայն 1321 թ-ի եռակողմանի պայմանագրի համաձայն, Անգլիայի զինուորական ոյժերը, որոշեալ ժամկէտին հեռացան Իրանից, որով աւարտուեցին յիշեալ պետութեան ուղղակի միջամտութիւնները և եթէ դեռևս գոյութիւն ունէին անուղղակի միջամտութիւններ, ապա դրանք բոլորն էլ առընչուում էին նաւթի խնդրին, կամ դրանից բղխող քաղաքական ու տնտեսական բնոյթներին։ Ինչպէս ասել է նախապէս, հայրս 1312 թ-ին նոր պայմանագիր կնքեց Իրանս-Բրիտանական նաւթային նախկին ընկերութեան հետ, որի բերմամբ Իրանը նաւթում ձեռք բերեց աւելի մեծ շահեր և լաւ վե-

բահկողութեան իրաւունք։ 1330 թուին, նաւթի ազգայնացման օրէնքի շնորհիւ, է՛լ աւելի ամրապնդուեց ու հզօրացաւ Իրանի պետութեան՝ նաւթարդիւնաբերութեան խնդրի վրայ ունեցած իշխանութիւնը։

Իրադրութիւնների հակասական բնոյթներից կարելի է թուել Մոսադեղի դիւանագիտական այն պրոցէսը, որ նրա բացասական քաղաքականութեան և օտարների դէմ արտասանած խստաշունչ ճառերով հանդերձ, հետզհետէ աւելացաւ անգլիացիների ազդեցութիւնը Իրանում։ Դրա շարժառիթը կայանում էր նրանում, որ Մոսադեղի բացասական քաղաքականութիւնը գործի նախաձեռնութիւնը ընձեռեց անգլիացիներին, հակառակ այն հանգամանքի, որ իր իշխանութեան առաջին իսկ օրուանից մինչև իր անկումը, նրա դիւանագիտութիւնը սահմանափակւում էր անգլիացիների առաջարկներին կտրուկ մերժումներ տալու ուղեգծով։

Մոսադեղը իրօք նման էր սկսնակ բռնցքամարտիկի, որ վախից մղւած, կոյր և աննպատակ հարուածներ է տեղում իր հակառակորդի վրայ և բացարձակապէս անկարող է շահագործելու նախաձեռնութեան ոյժը, որը միակ ազդակն է առաւելութեան ու յաղթանակի։

Այսպիսով անգլիացիները կամայ թէ ակամայ Մոսադեղին հարկադրել էին ինչ-որ բուռն ոգեւորութեամբ, լոկ հակազդել նրանց կողմից ծրագրուած գործողութիւններին։

Այդուամենայնիւ, Մոսադեղի քաղաքականութեան ինչպիսի լինելը բացայայտելուց և նրա վերջնական փլուզումից յետոյ, ստորագրուեց 1333 թուի նաւթի համաձայնագիրը, որը նոր դարագլուխ բացեց Իրանի և Անգլիոյ յարաբերութիւնների մէջ։ Իրանի կառավարութեան ձեռք բերած լայն իրաւասութիւններից բացի, տուեալ պայմանագիրը նշանակալից էր նաև նրանով, որ ընդմիշտ վերացաւ անգլիացիների միահեծան տիրապետութիւնը Իրանի նաւթարդիւնաբերութեան մէջ։ Այլևս, մասնաւոր մեծ ընկերութիւնների կամ անգլիական կառավարութեան հովանաւորութեան ներքոյ գործող ընկերութիւնների համար, նոյնիսկ հնարաւորութիւն չէր ընձեռնւում փայփայելու մեր էկոնոմիկայի խոշորագոյն մասի վրայ բացարձակ իշխանութիւն ունենալու երազանքը։ Յիշեալ պայմանագիրը իր մէջ պարփակում է այն ճշմարտացի խորհուրդը, որ այսուհետև Իրանը և Անգլիան համահաւասար իրաւունքներով են առևտուր անելու իրար հետ և աւելի հարթ է լինելու երկու երկրների խաղաղ համակեցութեան և բարեկամական յարաբերութիւնների ընդլայնման ուղին։

Թերևս որոշ իրադարձութիւնների հետևանքով, որոնց կանխատեսումը թւում է անհնարին, դարձեալ տարաձայնութիւններ ծագեն իմ և բրիտանական պետութիւնների միջև, սակայն եթէ առկայ լինի համահաւասարութեան հիմունքների վրայ կառուցած իրատես և ճշմարիտ մի քաղաքականութիւն, ապա պատճառ չեմ տեսնում մթագնւած տեսնել երկու երկրների յարաբերութիւնների մթ-

նոլորտը։

Երկար տարիներից ի վեր, մենք բարեկամական յարաբերութիւններ ենք ունեցել Ֆրանսիայի հետ։ Ֆրանսիական կառավարութիւնը, ոչ միայն գաղութատիրական ձգտումներ չի դրսևորել մեր նկատմամբ, այլև մեծ մասնակցութիւն է ունեցել մեր մշակոյթի և տնտեսութեան վերելքի մէջ։ Իրանի մտաւորականութեան մեծագոյն մասը լոյս ու գիտութիւն է ուսանել Ֆրանսիայում և մեր գիտնականներից շատերը տիրապետում են ֆրանսերէն լեզուին։ Իրանում հրատարակւում է ֆրանսերէն լեզուով օրաթերթ։ Ֆրանսերէն գրքերով ու հրատարակութիւններով լեցուն են մեր գրադարանները։ Թեհրանում գործում է Իրանո-Ֆրանսիական մշակութային կապի կազմակերպութիւնը, որի գործունէութեան նպատակն է Իրանի ժողովրդին մօտիկից ծանօթացնել Ֆրանսիայի փայլուն կուլտուրայի հետ։ 1338 թւին Թեհրանում բացուեց Ֆրանսիայի գիտական ու տեխնիկական ցուցահանդէսը. հետագային ցուցահանդէսի գիտական սարքաւորումների մեծ տոկոսը նուիրուեց Թեհրանի համալսարանին։ Ֆրանսիացի ճարտարագէտներն ու պայմանագրական ընկերութիւններն ևս շօշափելի յաջողութիւններ արձանագրեցին Իրանում. նրանք ժամկէտից շուտ աւարտեցին ու յանձնեցին մեր կողմից առաջարկուած շինարարական բոլոր նախագծերը։

Մենք մշակութային և բարեկամական յարաբերութիւններ ունենք նաև ազատ աշխարհի շատ երկրների հետ։ Ամերիկեան տեխնիկական օգնութիւնների մասին կը խօսուի իր հերթին, իսկ յաջորդ գլխում նկարագրելու է իտալական ընկերութիւնների Իրանի նաւթարդիւնաբերութեան մէջ ունեցած մասնակցութեան ինչպիսին լինելու մասին։ 1337 թւին իտալացիները Թեհրանում բացեցին իրենց ազգային ճարտարարուեստի ցուցահանդէսը։ Նոյն թւին ես պաշտօնապէս այցելեցի Իտալիա։

Յարատեւօրէն զարգանում են մեր առևտրական յարաբերութիւնները՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների, Իտալիայի, Անգլիայի, Շուեցարիայի և այլ շատ երկրների հետ։ Սակայն բարդ ու խրթին են եղել մեր յարաբերութիւնները Խորհրդային Ռուսիայի հետ։ Երբ 1917 թւին սկսուեց Ռուսաստանի յեղափոխութիւնը, ժողովրդի լայն խաւերի մէջ առաջացաւ այն համոզումը, որ վերջացել է Ռուսաստանի իմպերիալիստական ժամանակաշրջանը։ Իրանը եղաւ առաջին երկիրը, որ պաշտօնապէս ճանաչեց Խորհրդային ռեժիմը։ Լենինը յայտարարել էր, որ բոլոր փոքր պետութիւնները պէտք է լինեն լիովին ազատ ու անկախ։ 1921 թւին Իրանի և Ռուսաստանի միջև կնքուած բարեկամական պայմանագիրը եթէ առերեւոյթաբար վարկաւորում էր յիշեալ խօսքը, ապա տեսանք ինչպէս մեր յոյսն ու երազանքը տեղի տուեց յուսահատութեան։

Տարիներ շարունակ մեր երկրի վրայ աչք ունեցած ռուսների հետ հարևան լինելու հանգամանքը, նպաստաւոր ասպարէզ էր Խորհրդային Ռուսիայի

համար իրենց տակտիկան ու գործելակերպը փոփոխելու մեր հողային տարածութիւններում։ Ինչպէս ասուեց 1920 թ-ից ի վեր բանակցութիւններ էին գնում Իրանի և Ռուսաստանի միջև բարեկամական և առևտրական պայմանագրեր կնքելու ուղղութեամբ, մինչև հօրս պետական հարուածից մէկ տարի անց, երբ ստորագրուեց յիշեալ պայմանագիրը։ Մեր բարեկամական խորհրդակցութիւնները յուսատու ընթացքի մէջ եղած օրերին, մի զարմանալի ապրեսիա կազմակերպուեց ռուսների կողմից։ Իրանցի ապստամբ և վտարանդի՝ Միրզա Քուչէք Խանէ Ջանգալիին հովանաւորելու պատրուակով, ռուսները զինուորական ոյժ իջեցրին Անզալի նաւահանգստում, (որը հետագային հօրս կարգադրութեամբ անուանուեց Բանդար-Փահլաւի)։ Յիշեալ ապստամբը նրանց օգնութեամբ մեր երկրի մէջ կազմեց մի բացարձակ պետութիւն, Խորհրդային Գիլանի հանրապետութիւն անուան տակ։

Սա կոմունիստական իմպերիալիզմի առաջին փորձարկումն էր մեր հողային ամբողջականութեան դէմ։ Ապարդիւն անցան տուեալ խնդրի համար տուած մեր բողոքները։ Այնուամենայնիւ, հակառակ այս ամօթալի իրողութեան, մենք շարունակեցինք բանակցութիւնները բարեկամական պայմանագիր կնքելու ուղղութեամբ։ Պայմանագիրն ստորագրելուց անմիջապէս յետոյ, ռուսները մերժեցին հովանաւորել Միրզա Քուչէք Խանին և հետևաբար հայրս առանց դժուարութեան ջախջախեց ու պարտութեան մատնեց Միրզա Քուչէք Խանին, որով ամուլ մնաց Խորհրդա-

յին Ռուսիայի ճիգը՝ մեր երկրի շրջաններից մէկը գրաւելու խնդրում։

Կոմունիստների բնորոշ կողմերից մէկն այն է, որ անմիջապէս ընկալում են իրենց կիրարկած սխալ քաղաքականութիւնը կամ անյաջող գործելակերպը։ Թերևս դա էր, որ նախ Լենինը և յետոյ Ստալինը հասան այն եզրակացութեան, որ Գիլանի հանրապետութեան հիմնումը եթէ ոչ տղայական՝ հէնց այնպէս փորձարկուած մի քայլ է։ Նրանց մօտեցումով աւելի ճիշտ պիտի լինէր շահեր ապահովել բարեկամական և առևտրական պայմանագրի կնքումով։ Հետևաբար, հօրս իշխանութեան օրօք, ռուսները երբէք չշեղուեցին պայմանագրի կէտերից, ըստ որում երբէք բացարձակօրէն չոտնակոխեցին մեր հողային տարածութիւնները։

Քսանևհինգ տարի յետոյ, համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին կրկնուեց նոյն փորձարկումը։ Այս անգամ ռուսները յոյս դնելով թուդէ կուսակցութեան քայքայիչ գործունէութեան վրայ, որը պիտի խախտէր մեր ազգայնականութիւնն ու ցեղային տուեալները, նորից խուժեցին մեր երկիրը։ 1324 թ-ին ռուսների հովանաւորութեամբ մեր հայրենի հողի վրայ կազմուեց երկու ինքնիշխան պետութիւն։ Մէկը՝ Քիւրդիստանի հանրապետութիւնը, որի կենտրոնը դարձաւ Մահաբադ քաղաքը, ուր խմբուել էին Իրանի հիւսիս-արևմտեան շրջանի քիւրդերը և երկրորդը՝ Ատրպատականի ինքնագլուխ պետութիւնը, ռուսների հարևանութեան մէջ։ 1324 թ-ի Ազար

ամսին յիշեալ պետութիւնները յայտարարեցին իրենց կազմաւորման մասին և մէկ տարի անց դատապարտուեցին չգոյութեան ու ոչնչացման...։ Այնուամենայնիւ, նրանց կազմաւորման և ոչնչացման միջեւ ընկած կարճ ժամանակաշրջանը համարւում է Իրանի ներկայ պատմութեան ամենատագնապալի, կարևոր և վտանգաւոր շրջաններից մէկը, որի ընթացքին սակայն օգտակար տեղեկութիւններ քաղեցինք կոմունիստների դիւանագիտական տակտիկայի մասին։

Այն, ինչ նրանք յորջորջել էին քիւրդերի հանրապետութիւն՝ կապւում էր քիւրդ ցեղերի ազգային ընդվզումին, որը հրահրւել էր անգլիացիների կողմից Ա. Աշխարհամարտին և կենսագործւել ռուսների կողմից Բ. Աշխարհամարտի ընթացքին։ Քիւրդերը բնակւում են թէ Իրանում և թէ հարևան երկրներում. նրանք լեզուով և ցեղայնականութեամբ բնիկ և զուտ իրանցիներ են։ Ռուսները թափանցելով քիւրդերի մէջ փայփայում էին Իրանի հիւսիս - արևմտեան շրջանները գրաւելու յոյսը։ Հարկաւ, Քիւրդիստանի Հանրապետութեան հիմնումը նրանց նպատակների իրագործման ազդակներից մէկն էր։ Ռուսիան յոյս ուներ նաև, որ հետագային աւելի ընդլայնելով յիշեալ պետութեան սահմանները, դրան կցեն Թիւրքիայում և Իրաքում բնակւող քիւրդերին, որով ճանապարհ պիտի բացւէր դէպի արաբական և աֆրիկեան երկրները։

Քիւրդիստանի ապստամբները հրապարակօրէն մերժեցին ընդունել Իրանի կենտրոնական կառավարութեան հրահանգները և ենթարկւեցի դրսից տրւող կարգադրութիւններին։ Խորհրդային կառավարութեան հովանաւորութեամբ և ուղղութիւններով հիմնւեց իշխանութեան ապարատ և կառավարչական սիստեմ։ Թէև քիւրդ ցեղերի մեծամասնութիւնը կասկածանքով ու թերահաւատութեամբ էին լցած նոր իշխանութեան հանդէպ, սակայն օտար ոյժերի առկայութիւնը զսպում էր նրանց զգացումները, որոնք ի վերջոյ ազատօրէն հանդէս եկան կենտրոնական կառավարութեան օգտին՝ տւեալ շրջանները ազատագրելու օրերին։

Սակայն Ատրպատականի տագնապի վերջնական լուծումը՝ այն է Խորհրդային Ռուսիայի արբանեակ պետութեան լիկւիդացումը մեզ համար շատ աւելի անհրաժեշտ և միաժամանակ դժւար էր։

Ինչպէս ասւեց, խորհրդային կառավարութիւնը, որը մէկն էր եռակողմանի դաշնագրի ստորագրողներից, հաւաստիացրել և խոստացել էր, որ պատերազմի աւարտելուց վեց ամիս անց իր ոյժերը յետ պիտի կանչի Իրանի տերիտորիայից։ Աւելին, Թեհրանի Յայտագրի մէջ, որի մէկ մասը արտագրել եմ նախորդ գլխում, նշւել էր թէ, Ամերիկայի Միացեալ Նահանգների, Ռուսիայի և Անգլիոյ պետութիւնները խոստանում են յարգել Իրանի անկախութիւնն ու հողային ամբողջականութիւնը։ Ըստ իս Իրանի բովանդակ ժողովուրդը համոզւած էր, որ Ստալինը հաւատարիմ կը մնայ Յայտագրի կէտերին և իր խոստմանը։ 1324 թւի Խորդատ ամսոյ 11-ը վեցամսեայ

ժամկէտի վերջին օրն էր։ Սպասուում էր՝ այդ օրուայ մէջ Իրանը վերջնականապէս պարպուի դաշնակից ոյժերից. յիրաւի ամերիկեան և անգլիական ոյժերը արդէն թողել էին Իրանը։ Սակայն մեծ զարմանքով և երկմտանքով տեսանք, որ Ստալինը ոչ միայն հաւատարիմ չի մնացել իր խոստմանը, այլ նաև բռնել է դիւանագիտական մի այնպիսի ուղի, որը տառացիօրէն ցնցել է ազատ աշխարհը։

1324 թ-ի Մարդաղ ամսին, թուդէ կուսակցութեան գործոնները խռովութեամբ և բռնութեամբ գրաւեցին Ատրպատականի կենտրոնը հանդիսացող Թաւրիզ քաղաքի պետական կալուածներից մի քանիսը, ընդ որում խորհրդային ոյժերը բանտարկեցին տեղական զինուորութեան։

Մեր կողմից Ատրպատական առաքուած օգնական ոյժերը Թաւրիզից չորս հարիւր կիլոմետրի վրայ՝ Ղազվինում հանդիպեցին Կարմիր բանակի լուրջ դիմադրութեան, որով կասեցուեց նրանց յառաջխաղացումը դէպի Թաւրիզ։

Նորից կազմակերպուեց թուդէ կուսակցութիւնը և իրեն անուանելով դեմոկրատ կուսակցութիւն Աբան ամսուայ ընթացքին լիովին տիրացաւ Ատրպատական շրջանին։ Կազմուեց խորհրդարան, որն Ազար 21-ին յայտարարեց Ատրպատականի ինքիշխան հանրապետութեան կազմաւորումը։ Նոյն խորհրդարանը Ատրպատականի ինքնիշխան հանրապետութեան կառավարութեան նախարարապետ նշանակեց կոմունիստների գործոններից և երկար ժամանակ Խորհրդային Միութեան մէջ բնակուած Ջաֆար Փիշաւարի անունով մէկին։ Խորհրդային զինուորութեան, զէնքի ու պարենի օգնութեամբ նա կազմեց յեղափոխական մի իշխանութիւն։ որն իրականութեան մէջ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ սարսափի և տերորի կազմակերպութիւն։

Ելնելով այն հանգամանքից, որ ռուսները կասեցրել էին Ատրպատականի խառնակ դրութիւնը դրրստելու գծով մեր կողմից առաքուած ոյժերի յառաջխաղացումը և դրանով բացարձակապէս ոտնահարել էին մեր երկրի հողային ամբողջականութիւնը, խստաշունչ բողոքագրեր ուղարկուեց Մոսկուա ինչպէս մեր, այնպէս էլ Ամերիկայի Միացեալ Նահանգների և Անգլիայի կողմից։ 1324 թ-ին Մոսկուայում կայացած Արտաքին Գործոց նախարարների ժողովին արծարծուեց տեսալ խնդիրը և այլ բողոքագիր ներկայացուեց նաև Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Ապահովութեան Խորհրդին, որը հիմնուել էր հէնց այդ օրերին։ Դա առաջին բողոքագիրն էր, որ ներկայացուել էր ասուած Խորհրդին։ Այնուամենայնիւ ռուսները անտարբեր էին, սակայն չգիտէին, որ ուրիշները անկարևոր չեն համարում Ատրպատականի հարցը։

1324 թ-ի Էսֆանդ 12-ի երեկոյեան, խորհրդային ոյժերը դուրս գալով Թաւրիզից՝ դէպի ռուսական սահմանը ուղղութիւն վերցնելու փոխարէն, երեք շարասիւներով շարժուեցին դէպի Թեհրան, Իրաքի և Թիւրքիայի սահմանագծերը։ Յաջորդ շաբաթների ընթացքին Ռուսիայից դէպի Իրան ուղղուեցին հարիւրաւոր տանկեր, պահեստի և հետևակ միաւորներ։

Սրանք ևս յիշած երեք ճանապարհներով հետևեցին նախորդ ոյժերին։ Ռուսական մի այլ զօրաբանակ ևս դիրքաւորուեց Թիւրքիայի եւրոպական սահմանագծի երկարութեամբ։ Սկսեց դիւանագիտական և պրոպագանդային ծաւալուն գործունէութիւն, որը հետապընդում էր Թիւրքիային ահաբեկելու նպատակը։

Տեսալ դրութեամբ, Իրանի վարչապետ Ղաւամը խոստացաւ ռուսներին, որ խորհրդային ոյժերը Իրանից յետ կանչելու պարագային, կարժանանան մի շարք մենաշնորհների։ Դրանց թւում նա խօսք տուեց՝ Իրանի Ազգային Խորհրդարանից պահանջել վաւերացնելու Իրանի և Ռուսաստանի նաւթային միատեղ ընկերութեան կազմակերպումը (մասնաբաժինների յիսունհամէկ տոկոսը պիտի պատկանէր ռուսներին), որը պիտի ստանձնէր Իրանի հիւսիսային շրջանի նաւթի հետազօտման և արդիւնաւորման իրաւունքը։ Իր կաբինետում տեղ տալ թուդէ կուսակցութեան անդամներից երեք հոգու, պաշտօնապէս ճանաչել Ատրպատականի հանրապետութիւնը և Միաւորուած Ազգերի Կազմակերպութիւնից յետ վերցնել Իրանի կողմից տրուած բողոքագիրը։

Ներկայիս պալատական նախարար պրն. Ալան, որ այն ժամանակ Շահենշահական պետութեան լիազօր դեսպանն էր Ուաշինգթոնում և միաժամանակ Իրանի ներկայացուցիչն էր Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Ապահովութեան Խորհրդում, վճռեց չանսալ վարչապետի կարգադրութիւններին և հրաժարուել Ապահովութեան Խորհրդից յետ վերցնելու

Իրանի բողոքագիրը։ Նա տեղեակ էր, որ ես անձնապէս համաձայն չեմ եղել Իրանի բողոքը Ապահովութեան Խորհրդից յետ վերցնելու խնդրի հետ և Ղաւամն էլ ռուսների ճնշման հետևանքով է կայացրել այդ որոշումը։

Ապահովութեան Խորհրդի առաջին նստաշրջանի ընթացքին, որ տեղի ունեցաւ Մարտ 21-ին, պրն. Ալան ազդեցիկ և յուզիչ մի ճառով, որը ամենագեղեցիկ ճառն է համարուել Ապահովութեան Խորհրդի պատմութեան մէջ, արծարծեց Իրանի բողոքը։

Հինգ օր անց, Ապահովութեան Խորհրդի յաջորդ նիստերի ընթացքին, ներկաների զարմանքի մէջ խորհրդային պատուիրակ պրն. Գրոմիկոն յայտարարեց, որ հինգից վեց շաբաթուայ ընթացքում խորհրդային ոյժերը պիտի թողնեն Իրանի տերիտորիան։

Վերջապէս Օրդիբեհեշտ ամսոյ 19-ին, խորհրդային զինուած ոյժերը հեռացան Իրանից։

Այս օրերին, Ղաւամը հանդէս եկաւ ինչ-որ տարօրինակ և արտասովոր գործելակերպով։ Թւում էր, թէ նա ընկել է ռուսների ազդեցութեան ներքոյ և ի հետևանս դրա, մի օր ինձ առաջարկեց, որ բոլոր խնդիրների մասին որոշում կայացնողը լինեմ կամ ես, և կամ նրան ազատ թողնեմ երկիրը կառավարելու աշխատանքի մէջ։ Հարկաւ նրա բուն նպատակը վերջինն էր։ Սակայն ժողովուրդը այնքան էլ գոհ չէր նրա միապաղաղ և կենակցական մեղմ քաղաքականութիւնից, և միաժանակ Իրանի հարաւային

շրջանների ցեղերը աստիճանաբար գլուխ բարձրացնելով պահանջում էին թուրքական նախարարների անյապաղ արտաքսումը։

Ղաւամը որոշել էր վերստին ծառայութեան կանչել այն բոլոր դաւաճան սպաներին, որոնք փախչելով Իրանի զօրաբանակից, միացել էին Փիշաւարիի ջոկատներին և աւելին զօրաբանակի մէջ մտցնել Փիշաւարիի օրօք աստիճան ստացած զինուորականներին։ Նա ընկնելով իմ ոտքը թախանձեց, որ տամ իմ համաձայնութիւնը, սակայն ես հաւաստիացրի, որ նախընտրում եմ կտրել տալ ձեռքս, որպէսզի չստորագրեմ նման մի գործ։ Ղաւամը միամտօրէն հակած էր կարծելու, որ նման բարեխորհուրդ քայլով պիտի պահպանի թէ իր գրաւած պաշտօնը և թէ Իրանի ամբողջականութիւնը։ Տեսալ շարժառիթներից ելնելով կանչեցի նրան և հրամայեցի լուծարքի ենթարկել պետական կաբինետը և անմիջապէս կազմել նորը՝ զերծ թուրքական տարրերից։ Հրատարակեցի նաև նոր ընտրութիւնների հրովարտակը։ Դա ընդգրկելով Իրանի ողջ տերիտորիան, որոշակիօրէն ակնարկում էր նաև Ատրպատականի մասին, որն անշուշտ դուրեկան չէր կարող համարուել Ատրպատականի ինքնագլուխ իշխանութեանը։

Ռուսներն իրենց հերթին ընկել էին դժուար կացութեան մէջ։ Նրանք մի կողմից ցանկանում էին պաշտպանել իրենց արբանեակ պետութեան շահերը և միւս կողմից ճգնում էին նաւթի գծով բարեկամական յարաբերութիւններ ունենալ Թեհրանի հետ։

Այս ճակատագրական պահերին անսալով խրոխտ ձայնին հրամայեցի զինուորական ոյժ փոխադրել Ատրպատական և անյապաղ ճնշել ապստամբներին։ Միաժամանակ անձամբ օգնաւով պտտեցի ապստամբների ամրութիւնների վրայ, որպէսզի տեղեակ լինեմ նրանց ոյժերի դասաւորման մասին։ Ռուսները հիմնականում հրաժարուեցին օժանդակելու իրենց արբանեակ պետութեանը և 1325 թ-ի Ազար 21-ին մեր ուժերը յաղթականօրէն մուտք գործեցին Թաւրիզ քաղաք։

Խորտակուեց ապստամբների իշխանութիւնը, իսկ ապստամբ ղեկավարներն ու մեծերը դիմեցին փախուստի՝ ապաւինելով Ռուսիայի ապաստանութեանը։

Թաւրիզի և Ռեզայիէի ազատասէր բնակչութիւնը, որ հռչակուած են մեր հայրենիքի պատմութեան մէջ իրենց ազատատենչ ոգով, իրականում քիչ դեր չունեցան Ատրպատականի խամաճիկ Հանրապետութեան անկման խնդրում։ Երկու քաղաքի բնակչութիւնը հերոսաբար ոչնչացրին մեծ թուով կոմունիստ զինուորների և եթէ չլինէր Իրանի զինուած ոյժերի միջամտութիւնը, նրանք պիտի թափանցէին բանտերը և մահուան դատապարտէին ձերբակալուած կոմունիստներին։ Նոյն օրերին Իրանի զօրաբանակը քիւրդ ցեղերի օգնութեամբ չէզոքացրին նաև Քիւրդիստանի խամաճիկ իշխանութիւնը։

Երբէք չեմ կարող մոռանալ այդ արկածներով յղի օրերին պատահած մի դիպուած։

Մի օր Խորհրդային Միութեան լիազօր դեսպանը անյապաղ տեսակցութիւն խնդրեց և ես ընդունեցի նրան։ Տեսակցութեան ընթացքին սպառնալից տոնով բողոքելով այն բանի դէմ, որ զինուած ոյժեր ենք ուղարկել Ատրպատական, նա յաւակնեց թէ՝ այս աքտով մենք վտանգում ենք աշխարհի խաղաղութիւնը։ Խօսքի վերջում իր պատկան կառավարութեան կողմից պահանջեց ինձանից՝ որպէս Շահենշահ և Իրանի Զինուած Ոյժերի Գերագոյն Հրամանատար, յետ կանչել ուղարկուած ոյժերին։ Նրան ասացի, որ խնդիրը ճիշտ ընդհակառակն է, և ցայժմ Ատրպատականում թագաւորող կացութիւնն էր վտանգել աշխարհի խաղաղութիւնը։ Ապա կտրականապէս մերժեցի ընդունել նրա առաջարկը և ներկայացրի քիչ առաջ Ատրպատականի խամաճիկ իշխանութեան նահանգապետի հեռագիրը, որի մէջ ասւում էր ապստամբների անձնատուր լինելու մասին։ Լիազօր դեսպանը, որ այլևս բան չունէր աւելացնելու և շշմել էր, թոյլտուութիւն խնդրեց հեռանալու համար։

Խորհրդային կառավարութիւնը դեռևս յոյս ունէր, որ Իրանի Ազգային Խորհրդարանը կը վաւերացնի Ղաւամի նախագիծը։ Սակայն նորաբաց Խորհրդարանը, որ այնքան էլ շահագրգռուած չէր նման մի նախագծի վաւերացումով, վերջապէս 1326 թվի Մեհր 3-ին միաձայնութեամբ մերժեց տւեալ պայմանագիրը։

Ատրպատականի անցքը յիրաւի մէկն է Միջին Արևելքի ժամանակակից պատմութեան ամենանշանակալից դէպքերից և իրադարձութիւններից։ Քանզի Ստալինեան Ռուսիայի դիւանագիտական միտումները՝ պատերազմից յետոյ առաջին անգամ բացայայտուեցին Ատրպատականում։ Խորհրդային Ռուսիայի կիրարկած գործունէութիւնը, որի մանրամասնութիւնները քննարկուեց Ազահովութեան Խորհրդի նիստերում ցնցեց բովանդակ աշխարհը և առաջին անգամ մտրակելով աշխարհի ժողովուրդների գիտակցութիւնը՝ ճանաչել տւեց կոմունիստական իմպերիալիզմը։

Ըստ իս աշխարհի ապագայ պատմագիրները կը վկայեն, որ իրականում և առաջին անգամ սառը պատերազմը սկսւեց Իրանում։ Թէև դրա նշանները արդէն իսկ երևացել էին աշխարհի տարբեր կէտերում, այնուամենայնիւ Իրանը հանդիսացաւ սառը՝ չքողարկուած և բացարձակ պայքարի առաջին օջախը։

Ատրպատականի դէպքերին զուգընթաց, ամերիկեան կառավարութիւնը պատմութեան մէջ առաջին անգամ լինելով, Միջին Արևելքում կիրարկեց նախաձեռնական տակտիկա։ Ատրպատականի իրադարձութիւնները պատճառ հանդիսացան, որ Թրումենի օրէնքները, որոնց շնորհիւ Յունաստանը և Թուրքիան արդէն զերծ էին կացուցել իմպերիալիզմի վտանգից, գործարկելով նաև Ատրպատականում՝ ճանապարհ հարթեն Էյզենհաւուէրի տեսակէտների և թեզերի իրագործման համար։

Յիշեալ իրադարձութիւնների կարևորութիւնը ակնյայտ է այնքան, որ Իրանի ժողովուրդը, իր հայ-

ընիքի գլխին կախված վտանգի չեզոքացման օրը անվանելով Ատրպատականի Օր, յայտարարեց ազգային փառատօն, և 1325 թվից մինչև այսօր ամեն տարի նոյն օրվայ մէջ, տօնում է Ատրպատականի ազատագրումն ու մեր իրաւունքների վերականգնումն։ Իմ կարծիքով, ոչ միայն իրանցիների համար անհրաժեշտ է յիշեալ այդ օրը, այլ նաև բոլոր ազատ ժողովուրդները իրենց գիտակցութեան մէջ դրոշմեն այս պատմական իրադարձութիւնը։

Ատրպատականի պայքարից յետոյ, վերածնուեց ու բոցավառուեց Իրանի ժողովրդի նացիոնալիստական ոգին։ Ժողովրդական մասսաները դաս առնելով այս դէպքից՝ բոլոր հնարաւոր միջոցներով և ամենուր յայտնեցին իրենց սրտագին հաւատարմութիւնը հանդէպ ինձ։ Սակայն տեղական կոմունիստները զինուելով համբերութեամբ սպասում էին առիթի, որպէսզի օգտուելով սպասուելիք անարխիայից կամ կացութեան խախուտացումից վերստին բորբոքեն ապստամբութեան կրակը և դա շահագործեն յօգուտ իրենց։ Ի հարկէ ապարդիւն անցաւ նրանց համբերութիւնը, որովհետև եթէ Մոսադեղի իշխանութեան օրօք իրոք հանդիսացաւ այդ անկրկնելի առիթը, ապա ինչպէս ասուեց՝ ամենակարող Աստծոյ կամեցողութեամբ և թերևս հրաշքով, ազատուեցինք մեզ սպառնող այդ մեծ վտանգից։

1331 թվի էսֆանդ 14-ին։ վախճանուեց Ստալինը և 1332 թվի Մորդադ 28-ին ընկաւ Մոսադեղը։

Ստալինի մահով,նոր դարագլուխ բացուեց Ռուսիայի պատմութեան մէջ և Մոսադեղի անկումով Իրանում սկսուեց նոր կեանք։ Այսպիսով, ինչպէս ասուեց, աստիճանաբար բարելաւեցինք մեր յարաբերութիւնները Ռուսիայի հետ։ Ռուսական քարոզչականութիւնը դադարեց հովանաւորել անօրինական հռչակուած Թուդէ կուսակցութեանը և Ռուսիայի կառավարութիւնը հանդէս եկաւ իմ և նոր կառավարութեան հետ ամեն տեսակի համագործակցութիւններ սկսելու առաջարկներով։

1335 թվին, Խորհրդային Միութեան հրաւէրով ես և Սորայա Թագուհին պաշտօնապէս այցելութիւն տուինք Ռուսիային։ Մեզ դիմաւորեցին արժանավայել կերպով և պատեհութիւն ստեղծուեց մօտիկից տեսնելու այդ երկրի բազմաթիւ կէտերը։ Պարզ և անվարագոյր բանակցութիւններ ունեցանք Խրուշչևի և նրա գործակիցների՝ Վորոշիլովի, Բուլգանինի, Միկոյեանի և Վեշիլովի հետ։

Ռուսները պնդում էին, որ իրենց դիւանագիտութեան հիմքն են կազմում խաղաղ կենակցութիւնը և օտար երկրների ներքին խնդիրներին չմիջամտելու պրոցէսը։ Նրանք հետաքրքրուում էին այն բանով, թէ ինչո՞ւ միացանք Բաղդադի ուխտին։ Ի պատասխան ասացի, դրա բուն պատճառը պիտի գտնել Իրանի և Ռուսիայի յարաբերութիւնների վերլուծութեամբ։ Յիշեցրի նրանց, որ դարեր շարունակ ռուսները ձգնել են Իրանի վրայով հասնել Իրանի հարաւային շրջանները։ 1907 թվին նրանք մուտք գործեցին Իրան՝ խափանելու ժողովրդի սահմանադրական ձգտումները։

Համաշխարհային առաջին պատերազմին, խուժեցին մեր երկիրը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին, հակառակ գոյութիւն ունեցող բարեկամական պայմանագրերի՝ յարձակում գործեցին Իրանի վրայ և նոյնիսկ 1324 թուին հիմնեցին ստորադրեալ մի պետութիւն, որի միջոցով հնարաւոր պիտի դառնար Ատրպատական բերրի և արդաւանդ նահանգի մեկուսացումը Իրանից։ Խրուշչևը և իր գործակիցները իրենց պատասխանատու չզգալով կատարած ոտնձգութիւնների խնդրում, նշեցին, որ տեսալ դէպքերը տեղի են ունեցել իրենց իշխանութիւնից առաջ։

Խրուշչևը խոստովանեց, որ իր երկիրը անցեալում թոյլ է տուել մի շարք սխալներ, ապա աւելացրեց, որ Իրանի ժողովուրդը կարող է հաւատ ընծայել իր և Ռուսիայի այլ պարագլուխների, որ ներկայ էին այնտեղ, բարիացակամութեանը։ Ես հաւաստիացրի Խրուշչևին, որ խորն է իրանցիների բարեկամական զգացումները նրա և ռուս ժողովրդի նկատմամբ. սակայն նշեցի, որ եթէ մարդ արարածը դաս չառնի անցեալի փորձառութիւններից՝ կապացուցի իր ծայրահեղ յիմար լինելու հանգամանքը...

Խրուշչևը ցանկանում էր իմանալ, թէ Իրանի կառավարութիւնը ինչպէս կարող էր ընդունել Բաղդադի Ուխտի անդամակցութիւնը, երբ անգլիացիներն ևս կային յիշեալ Ուխտի մէջ և նոյն անգլիացիները երկրորդ պատերազմին ներխուժել էին Իրանի տերիտորիան, և մինչև իսկ ադրեսիայի առաջարկութիւնը տուել էր նրանց կողմից։ Պատասխան խօսքիս մէջ

նշեցի, որ համենայն դէպս անգլիացիները գոնէ ժամանակին՝ հաւատարիմ մնալով իրենց խոստմանը, պարպեցին Իրանը, սակայն ռուսները նոյնիսկ այս խնդրում եղան ուխտադրուժ։

Խրուշչևը ընդհանրապէս խօսում էր Բաղդադի Ուխտի իր կարծիքով ագրեսիւ և պատերազմական բնոյթների մասին։ Խնդրի սկզբնական շրջանում, նշում էր նա, նրան թւացել է, որ յիշեալ Ուխտը հեռու է պատերազմական նպատակներ հետապնդելու մտադրութիւնից։ Բայց հետագային անդրադարձալ է, որ սխալ են իր մօտեցումները։ Բացատրեցի նրան, որ Ուխտի համաժողովներում խօսել է միայն Ալբորզ և Ալանդ լեռնաշղթաների ապահովութեան մասին, որոնք հեռու են Ռուսիայից և գտնւում են Իրանի հողում։

Վերջապէս Խրուշչևը ընդունեց, որ Իրանը երբևէ չի ձգտում զաւթողական գործողութիւններ ձեռնարկել Ռուսիայի դէմ։ Սակայն յայտնեց, որ թերևս որևէ մեծ պետութեան թելադրանքով, կատարւի այն, ինչ որ հակառակ է մեր ցանկութեանը։ Ասել է թէ Իրանի տերիտորիան շահագործւի Ռուսիայի դէմ ագրեսիա կազմակերպելու ուղղութեամբ։ Ես կտրականապէս նշեցի, որ Իրանը իր իսկ կամքով և համահաւասար իրաւունքներով է մասնակցել Բաղդադի Ուխտին և ոչ ոք մեզ չի ստիպել վերցնելու այդ քայլը։ Եւ եթէ նոյնիսկ ճնշում գործադրւէր մեր վրայ, մենք անպատճառ պիտի դիմադրէինք։ Աւելացրի նաև, որ մենք երբևէ թոյլ չպիտի տանք,

որ մեր երկիրը օգտագործի յարձակողական նկատառումներով՝ ընդդէմ Ռուսիայի։ Ապա գինուորական խօսք տուեցի Խրուշչևին, որ քանի ես եմ նստած Իրանի թագաւորական գահին, իմ երկիրը չի հանդուրժի և չի ընկերակցի Ռուսիայի դէմ ագրեսիւ և պատերազմական և ոչ մէկ քաղաքականութեան հետ։

Խրուշչևն ու իր գործակիցները սրտբացօրէն ասացին, որ լիովին հաւատում և վստահում են ինձ և ապա նրանց առաջարկութեամբ հրատարակեցինք մի վերջնագիր, որի մէջ խօսւում էր այն մասին թէ կողմերը բանակցել են բարեկամական մթնոլորտում և որոշել են ամրապնդել երկու երկրների միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւններն ու համագործակցութիւնը։

Խորհրդային պարագլուխների հետ ունեցած բանակցութիւնների շնորհիւ, ճանապարհ հարթուեց մի շարք նոր պայմանագրերի կնքումի համար։ Փոխադարձ շահերով հարթուեցին նաև մեր և Ռուսիայի միջև գոյութիւն ունեցող սահմանային կնճռոտ տարաձայնութիւնները։ Կնքուեցին տրանզիտի և փոխադրական պայմանագրեր, որոնք հանդէս եկան՝ մեր արտածումներն ու ներածումները Ռուսիայի վրայով դէպի արևմտեան Եւրոպայի երկրները և ընդհակառակը փոխադրելու օգտին։ Համաձայնութիւն կայացաւ հաւասարապէս օգտագործել Ռուսիայի և Իրանի սահմանագիծը հանդիսացող Արաքս և Աթրաք գետերը, որոնց ջրով կարելի է ոռոգել աւելի քան երկու հազար քառակուսի կիլոմետր խոպան հողեր։ Աճեց ու

զարգացաւ առևտուրը Խորհրդային Միութեան հետ։ Կազմակերպուեցին մարզական հանդիպումներ։ Մեր երկիրը եկան ռուս պատգամաւորներ և Ռուսիա այցելեցին Իրանի Խորհրդարանի անդամներից ոմանք։ Երկու երկրների մշակութային կապի զարգացման ուղղութեամբ տարուեց ծաւալուն գործունէութիւն։

Թերևս 1917 թուից ի վեր, իմա Ռուսաստանի յեղափոխութիւնից յետոյ, երկու երկրների յարաբերութիւնները այս աստիճան բարենպաստ չէին եղել։

Նոյնանման քայլերով բարեկամական յարաբերութիւններ ստեղծեցինք համայնավար բլոկի այլ երկրների հետ։

Այնուամենայնիւ, երկու տարի անց ռուսները վերսկսեցին իրենց գրգռիչ քաղաքականութիւնը։ Օրինակ ռուս մարշալ Վերոշինինը մի յայտագրով ըսպառնաց Թիւրքիային և Իրանին այն առումով, որ հաւանական է հրթիռներով կործանի երկու երկրները... Պարզ էր, որ այսպիսով կասկածի տակ առնուեց խորհրդային արտաքին քաղաքականութեան մասին տրուած Խրուշչևի հաւաստիացման խօսքը, ըստ որի նոր դարագլուխ պիտի բացուէր Ռուսիայի դիւանագիտութեան պատմութեան մէջ։

Հարկաւ, երբ ռուսները թոյլ են տալիս իրենց պատասխանատու պաշտօնեաներին հանդէս գալ նման յայտարարութիւններով, ապա ինչպէ՞ս են ակնկալում մեզանից, որ հաւատք ընծայենք նրանց քաղցր ու մեղցր խօսքերին՝ ասուած խաղաղ կենակցութեան ու բարեկամութեան մասին։

Աւելի համարձակ դառնալով, ռուսները բողոքեցին Թեհրան—Մեշհեդ երկաթուղագծի կառուցման դէմ, դրան տալով ստրատեգիկական բնոյթ։ Ապա, կարծէք լինեն աշխարհի տէրերը՝ սկսեցին բուռն կերպով քննադատել մեր երկրում կառուցուող օդանաւակայանները, թէ դրանք շահագործելու են պատերազմական ինքնաթիռների համար։ Ծովային յենակներ յորջորջեցին նորակառոյց նաւահանգիստները՝ խստիւ բողոքելով դրանց դէմ։

Այս և նման սուտ ու անհիմն արտայայտութիւնները խախտում էին նոյնիսկ քաղաքավարական հիմունքները, և երևան էին գալիս մեր իշխանութեան իրաւունքների և անկախութեան դէմ բացարձակ ագրեսիայի լոյսի տակ։

Մենք լաւ գիտենք, որ ռուսները իրենց երկրի ներսում և դրսում զբաղուած են երկաթուղագծերի, օդանաւակայանների և նաւահանգիստների կառուցմամբ։ սակայն արդե՞օք երբևէ բողոքել ենք դրանց դէմ։ Արդե՞օք ռուսները կարծում են, որ աշխարհի այս մասում, լոկ իրենց է վերապահուած երթևեկի նորագոյն միջոցներ ունենալու իրաւունքը։ Թէ նրանց ցանկութիւնն է մեզ վերադարձած տեսնել միջնադարեան ժամանակներին...

Ասենք ճիշտ է նրանց մտածումը, թէ մեր երկաթուղագծերը, օդանաւակայաններն ու նաւահանգիստները անհրաժեշտ պարագային պիտի օգտագործուեն պատերազմական շարժառիթներով։ Միթէ՞ նոյնը չի համընկնում ռուսների ստրատեգիկական նկատառումների մէջ։ Սակայն, արդեօք այն ինչ ընդունելի՞ է մի կողմի մօտ, հանդուրժելի չէ՞, երբ դա կատարուում է միւս կողմում...։

Իրաքի պետական հարուածից յետոյ, որ տեղի ունեցաւ 1337 թ-ին, «Բաղդադի Ուխտ»-ին անդամակից երկրները կազմելով մի նիստ, առաջարկեցին Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութեանը՝ ընդունել յիշեալ Ուխտի անդամակցութիւնը։ Ամերիկեան կառավարութիւնը հակառակ այն իրողութեան, որ մասնակից էր «Բաղդադի Ուխտ»-ի կոմիտէների մեծ մասին, առայժմ խուսափեց միանալու յիշեալ Ուխտին և դրա փոխարէն պատրաստակամութիւն յայտնեց զինուորական երկկողմանի պայմանագրեր կնքել Թիւրքիայի, Փաքեստանի և Իրանի հետ։ Համաձայն պայմանագրերի՝ Ամերիկան պարտաւորուում էր օգնութիւն ցուցաբերել յիշեալ երեք երկրներին՝ համայնավարների կողմից ագրեսիա լինելու դէպքում։

Թիւրք և փաքեստանցի մեր ընկերների հետ, որոշում կայացրինք ընդունել և ստորագրել Ամերիկայի կողմից առաջարկուած պայմանագիրը։

Տեղեկանալով այս մասին, ռուսները խստաշունչ մի բողոքագիր առաքեցին մեզ և հակառակ դիւանագիտութեան մէջ ընդունուած օրէնքների և ձեւերի՝ բողոքագիրը պաշտօնապէս յանձնելուց առաջ, դրա բովանդակութիւնը սփռեցին ռադիօներից և կարդացրեցին Թեհրանի լիազօր դեսպանին, որ բողոքագրի յօդուածների մասին անձամբ տեղեկացնի զոյգ

խորհրդարանների պատգամաւորութեանը։ Այդ ժամանակ մենք անկեղծօրէն ասացինք ռուսներին, որ նրանց կիրարկած քայլը յղի է անցեալի սխալները կրկնելու վտանգով, սխալներ, որոնք պատճառ դարձան երկու երկրների յարաբերութիւնների վատթարանալուն։ Մատնանշեցինք նաև, որ նկատի ունենալով նրանց զինուած ուժերի վիթխարի ծաւալն ու ոյժը, խելամիտ չի թուում ինչ որ սոսկալ մեր զինուորական փոքրիկ կազմակերպութիւններից։ Հետևաբար երկուստէք շահը պահանջում է, այնուամենայնիւ, շարունակել երկու երկրների միջև գոյութիւն ունեցող՝ նախկին բարեկամական և առևտրական քաղաքականութիւնը։

Երկկողմանի պայմանագրի ստորագրումը խանգարելու նպատակով, ռուսները դիմեցին նաև այլ միջոցառումների։ Քաղաքական միջնորդների միջոցով, նրանք հանդէս եկան ոչ ագրեսիւ քաղաքականութեան երկարատև պայմանագրերի ստորագրման, ինչպէս նաև տնտեսական վիթխարի օգնութիւններ ընձեռելու առաջարկութեամբ և խոստումներով։

Միևնոյն ժամանակ, երկկողմանի պայմանագիրը կորցրել էր իր նախկին իմաստը և չունէր մեր պահանջած նշանակութիւնն ու երաշխիքները։Իրան առաքուող ռազմական անհրաժեշտութիւնները նմանապէս չէին բաւարարում մեր պահանջները։ Հետևաբար զինուորական առումով մեզ անչափ թոյլ գտնելով և նկատի ունենալով այն իրողութիւնը, որ մենք զուրկ էինք ՆԱԹՕ-ի անդամ երկրներին տրուող երաշխիքներից, մեզ թոյլ տուինք բանակցութիւններ սկսել ռուսների հետ, ոչ ագրեսիւ քաղաքականութեան պայմանագիր կնքելու ուղղութեամբ։

Սակայն ռուսները թոյլ տուին մի սխալ։ Նրանց պատուիրակութիւնը ուշացաւ երկու շաբաթով, որի ընթացքին երկկողմանի պայմանագրի սևագրութիւնը դրստուեց յօգուտ մեր պահանջների և ցանկութիւնների։ Հասնելով Իրան, ռուս պատուիրակութիւնը գործեց մի այլ սխալ ևս, այն առումով, որ բանակցութիւնները սկսելու համար պահանջեց մեզանից՝ հրաժարուել «Բաղդադի Ուխտ»-ի անդամակցութիւնից։ Հանդիպելով մեր խիստ հակառակութեանը, նրանք թէպէտ յետ դարձան իրենց իսկ պայմանից, սակայն այս անգամ էլ սկսեցին պնդել, որ խուսափենք ստորագրելու երկկողմանի պայմանագիրը։ Ակնյայտ էր, որ ռուսները ոչ ագրեսիւ քաղաքականութեան պայմանագիրը ստորագրելու անուան տակ, հետապնդում էին մեզ՝ մեր դաշնակիցներից բաժանելու նպատակը։ Նրանք ոչ միայն պնդում էին, որ հրաժարուենք ամերիկացիների հետ պայմանագիր կնքելու մտադրութիւնից, այլև՝ ոչ ագրեսիւ քաղաքականութեան պայմանագրի սևագրութեան որոշ յօդուածների համաձայն, պիտի թուլանար մեր բարեկամների հետ ապահոված փոխադարձ յարաբերութիւնները։

Հաստատապէս որոշեցինք, հակառակ այն հանգամանքի, որ գոհ չէինք մեր զինուած ոյժերից և մեր դաշնակիցների օգնութիւններից, երբեք չխախտենք

մեր յարաբերությունները մեր բարեկամների հետ և չյանձնենք մի խնդրի, որը սպառնում էր մեր անկախության ու հողային ամբողջականությանը։ Վերոյիշեալ պատճառներով ամուլ մնաց ռուսների հետ պայմանագիրը կնքելու խնդիրը և նրանց պատիրակությունը, առանց մեզ տեղեկացնելու, հեռացավ Իրանից։

Այսպիսով շարունակվեց Ռուսաստանի որդեգրած ուղին մեր ազատությունը վտանգելու ուղղությամբ։ Նախ նրանց պետական ռադիոն ընդունեց յարձակողական բնույթ և շատ չանցած նույն ռադիոից սկսեց սփռվել պարսկերէն լեզուով մի ծրագիր, որի մէջ նրանք չզլացան սուտ և պատիր խօսքերով նշաւակել ոչ միայն Իրանի կառավարությանն ու ժողովրդին, այլև ինձ և իմ ընտանիքին։ Մի քանի ամիս անց, երևան եկաւ մի այլ ռադիոկայան, որ «Իրանի Ազգային Ձայն» անուան տակ սկսեց ձայնասփռել ամօթալի հաղորդումներ։ Մենք լաւ գիտենք, որ տեսալ կայանը գտնվում է Ռուսիայի հարաւային շրջաններում և նրանք էլ անտարակոյս իմանում են, որ մենք քաջատեղեակ ենք դրա ուր լինելուն... Զը բաւականանալով խայտառակ, կեղտոտ և լպիրշ արտայայտություններով ու քարոզչականությամբ, յիշեալ կայանը սկսեց հրահրել ժողովրդին, ապստամբելու կառավարության դէմ։ Յուռետես և Թուլական որոշ անձիք հակված էին կարծելու, որ տեսալ քարոզչականությունը պիտի ընկճի Իրանի ժողովրդի ոգին։ Սակայն խնդիրը ճիշտ ընդհակառակն էր։ Հակառակ պրոպագանդան էլ աւելի ամրապնդեց ու մօտեցրեց ժողովրդի միասնականությունը, ոգին և սրտերը։ Եղաւ այնպէս, որ կարդադրեցի ռուսների խօսքերը նույնությամբ ձայնասփռել Ռադիո-Իրանից, որպէսզի ժողովրդի լայն զանգվածները ունկնդրեն իրենց հայրենիքի դէմ ասող կեղծ ու պարսաւելի արտայայտությունները։

Զուլֆա սահմանային քաղաքում ռուսները դիմեցին ադրեսիւ քարոզչականության մի այլ ձևի։ Սահմանի երկարությամբ տեղադրելով բարձրախօսներ, նրանք վերսկսեցին իրենց պրոպագանդան, որը նույնպէս տեսաւ հակառակ արդիւնք։ Որովհետև մենք ևս, փոխադարձաբար բարձրախօսներ տեղադրեցինք մեր սահմանում և դառն ու տխուր իրականության մասին պատմեցինք ռուս սահմանապահներին։

Ռուսիայի պարագլուխները արգիլում են ժողովրդին ունկնդրելու արտասահմանեան կայաններից սփռող լուրերը կամ այլ հաղորդումները։ Ծախսում են հսկայ գումարներ, ռադիոընդունիչների մէջ պարազիտներ ստեղծելու նպատակով, որպէսզի ժողովուրդը չկարողանայ բռնել օտար ալիքների վրայ սփռող հաղորդումները։ Սակայն մեր բարձրախօսների ձայնը լսվում էր ամենուր։ Ազատության վայելքը իրենց կեանքում երբեք չճաշակած մարդիկ լսում էին մեզ։ Հարկաւ դա հակառակ էր ռուս պարագլուխների ցանկությանը, դա էր, որ նրանք հաւա-

քեցին իրենց բարձրախօսները և շատ չանցած լիովին հրաժարուեցին պայքարի այդ ձևից։ Մենք եւս մեր հերթին հանգցրինք մեր բարձրախօսները։

Ինչո՞ւ Խորհրդային Ռուսիան մեր դէմ ձեռնարկեց նման գործողութիւնների։

(ՎԵՐՋ Ա. ՀԱՏՈՐԻ)